# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2017 թվականի N 122 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների հիմնավորումները՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գերակա խնդիրների հիմնավորումները՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. փետրվարի 15
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 12-ի N 122 - Ն որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը | Հղումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն** | | | | | | | |
| 1. | «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Կսահմանվեն էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող միջոցառումներ և դրանց կատարման կոնկրետ ժամկետներ, որոնց իրականացումը թույլ կտա ազատականացնել ներքին էլեկտրաէներգետիկ շուկան և խթանել փոխշահավետ միջսահմանային առևտուրը Վրաստանի հետ, ինչը կնպաստի ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ բաժնի 1-ին ենթակետ<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի N 29 արձանագրության 11-րդ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կետով հավանության արժանացած արձանագրային որոշում |
| 2. | «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Կստեղծվեն ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող իրավական պայմաններ և դրա հետ կապված կհստակեցվեն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և այլ պետական մարմինների գործառույթները, որոնց իրականացումը թույլ կտա ազատականացնել ներքին էլեկտրաէներգետիկ շուկան և խթանել փոխշահավետ միջսահմանային առևտուրը Վրաստանի հետ: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ բաժնի 1-ին ենթակետ<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի N 29 արձանագրության 11-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշում |
| 3. | «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման միջոցառումների պլան-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավա- | Կմշակվի ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման միջոցառումների պլան-ժամանակացույցը, որով կհստակեցվեն շահագրգիռ գերատեսչությունների համատեղ կատարվող աշխատանքները, կսահմանվեն միջոցառումների իրա- | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060–Ա որոշման հավելվածի 1.2 –րդ կետի Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ բաժնի 7-րդ ենթա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | րության աշխատակազմ ներկայացնելը | կանացման ժամկետները և պատասխանատու կատարողները: | | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | | | կետ<br>ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 2-րդ կետ |
| 4. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի<br>մայիսի 26-ի N 313 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Կսահմանվեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների ստացման օբյեկտների (արևային ֆոտովոլտային, երկրաջերմային, հողմային և այլ տեղակայանքների) բնականոն գործունեությունը, քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգությունն ու գույքի պաշտպանությունն ապահովող գոտիները: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-<br>վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ բաժնի 9-րդ և 10-րդ ենթակետեր<br>ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետեր |
| 5. | «Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների (մինչև ներառյալ 150 կՎտ դրվածքային հզորություն) մասսայականացմանն ուղղված խթանիչ ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Կսահմանվեն խթանիչ միջոցառումներ վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացման համար: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ բաժնի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն |
| 6. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Հաշվի առնելով 2014-2016 թվականների ընթացքում էներգետիկ համակարգում կատարված աշխատանքները և արձանագրված զարգացումները՝ կվերանայվեն ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | 2013 թվականի հոկտեմբերի 23-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-182-Ն կարգադրության 73-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումները և իրականացման ժամկետները՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ էներգետիկ անվտանգության պահանջների կատարման արդյունավետությունը: | | | | | |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | | | | | | | |
| 7. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | պարբերական սպառման բնույթ և միանման տեխնիկական բնութագիր ունեցող որոշ ապրանքների ու ծառայությունների գնումների կենտրոնացված կարգով իրականացման, գնումների պայմանագրերի կատարման արդյունքների էլեկտրոնային եղանակով ընդունման համար իրավական հիմքերի ապահովում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | ապրիլի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Պետական գնումներ» բաժնի 1-ին կետի «ա» և «դ» ենթակետեր |
| 8. | «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգը և դրանց առանձնահատկությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման | «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշման 15-րդ քաղվածքով հաստատված ՊՖԿՀ բարեփո- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | | | | | | խումների վերանայված ռազմավարության N 3 հավելվածի 3.5-րդ կետ ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Պետական գնումներ» բաժնի 1-ին կետի «ա» ենթակետ |
| 9. | «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերի սահմանում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշման 15-րդ քաղվածքով հաստատված ՊՖԿՀ բարեփոխումների վերանայված ռազմավարության N 3 հավելվածի 3.5-րդ կետ |
| 10. | «Բողոքարկման վճարը վերադարձնելու կարգը հաստատելու | բողոքարկման վճարը վերադարձնելու կարգի սահմանում | ՀՀ ֆինանսների նախարարությու | | հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի | ՀՀ կառավարության 2016 թվականի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | | ն | | | պահանջվում: | փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշման 15-րդ քաղվածքով հաստատված ՊՖԿՀ բարեփոխումների վերանայված ռազմավարության N 3 հավելվածի 3.5-րդ կետ |
| 11. | «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ծրագրային բյուջետավորման ներդրման համար իրավական դաշտի ձևավորում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշում (1-ին մասի 1.1-ին կետի 10-րդ ենթակետ) և ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի N 38-12 արձանագրային որոշում (N 1 հավելվածի աղյուսակի 1.1-ին կետ) |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12. | «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ամբողջական ուժի մեջ մտնելը գործող հարկային օրենսդրության կատարելագործում, մասնավորապես, ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգի կատարելագործում, մասնավորապես, սահմանել, որ 2016 և 2017 թվականների համար ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումները հարկ վճարողի ընտրությամբ կարող են կատարվել ոչ միայն խմբային մեթոդով, այլ նաև գծային մեթոդով: | ՀՀ ֆինանսների նախարարություն | | փետրվարի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գործարարության զարգացում և խրախուսում» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետ |
| 13. | «ՀՀ կառավարության 2000 թվականի ապրիլի 11-ի N 161 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխա- | մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ամբողջական ուժի մեջ մտնելը գործող հարկային օրենսդրության կատարելագործում, մասնավորապես, հիմնական միջոցների վրա կատարվող | ՀՀ ֆինանսների նախարարություն | | փետրվարի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գործարարության զարգացում և խրա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | տակազմ ներկայացնելը | ծախսումները որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) սահմանված մոտեցումների հետ համապատասխանեցում | | | | | խուսում» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետ |
| 14. | «Հաշվապահական հաշվառման (բացառությամբ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման) և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականության վերանայման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | - հաշվապահական հաշվառման (բացառությամբ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման) և աուդիտորական գործունեության ոլորտում կարգավորման գործառույթն օրենքով ստեղծված ինքնակարգավորվող մարմնին պատվիրակելու և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերահսկողական գործառույթի սահմանում,<br>- տարեկան աուդիտի պարտադիր իրավական պահանջի ներդնում ԵՄ-ի դիրեկտիվներով ներկայացված չափանիշներին համապատասխանեցված կազմակերպությունների | ՀՀ ֆինանսների նախարարություն | | հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Պետական կառավարման համակարգի օպտիմալացում» բաժին, 5-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համար,<br>- աուդիտորական կազմակեր-պությունների լիցենզավորման գործընթացի վերանայում՝ աուդիտորական կազմակեր-պությունների ռեեստրի ներդնում<br>- գերփոքր կազմակերպություն-ներում հաշվապահական հաշվառման աշխատանքների պարզեցում | | | | | |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** | | | | | | | |
| 15. | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | իրավասու մարմնի գործառույթների հստակեցում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության նախապատրաստական շրջանում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավել-վածի 1.2. «Ոլորտային տնտեսական զար-գացում» կետի՝ «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 2-րդ կետ |
| 16. | «Ռադիոհեռարձակող սարքավո-րումների տեխնիկական վերահսկո-ղության մասին» ՀՀ օրենքի նախա-գիծը ՀՀ կառավարության աշխատա-կազմ ներկայացնելը | ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ռադիոհեռարձակման սարքավորումների հայտնաբերման և հետագա շահագործման գործընթացի | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների | | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավել-վածի 1.2. «Ոլորտային տնտեսական |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կարգավորում | նախարարությու<br>ն | | | | զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 2-րդ կետ |
| 17. | «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման գործընթացների կանոնակարգում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվակա<br>ն տեխնոլոգիանե<br>րի նախարարությու<br>ն | | հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտեսական զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 6-րդ կետ |
| 18. | «Խելացի քաղաքի» ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | «Խելացի քաղաքի» ստեղծման հայեցակարգի մշակում, որով կսահմանվեն «Խելացի քաղաքի» ստեղծման հիմնական ուղղությունները և մեխանիզմները, ինչպես նաև անհրաժեշտ գործողությունների ցանկը և ժամկետները | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվակա<br>ն տեխնոլոգիանե<br>րի նախարարությու | | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտեսական զարգացում» կետի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ն | | | | «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «գ» ենթակետ |
| 19. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառա-վարության աշխատակազմ ներկայացնելը | «Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգի մշակում, որով կսահմանվեն «Ինժեներական քաղաքի» ստեղծման հիմնական ուղղությունները և մեխանիզմները, ինչպես նաև անհրաժեշտ գործողությունների ցանկը և ժամկետները | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաներ ի նախարարություն | | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտե-սական զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 4-րդ կետի «դ» ենթակետ |
| 20. | «Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից իրականացվող վերահսկո-ղական մեխանիզմների կատարելագործում, ինչպես նաև տեսչության իրավունքների և պարտա-կանությունների հստակեցում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվակա ն տեխնոլոգիանե րի նախարարությու ն | | հուլիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Տեսչական մար-մինների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված |
| 21. | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետու-թյան օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքում փոփոխություն- | Ավտոտրանսպորտի տեխնիկական զննման նոր կանոնակարգերի մշակման, տեխնիկական զննման կտրոնների փոխարինման էլեկտրոնային համակարգով | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվակա ն տեխնոլոգիանե | | ապրիլի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտե- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | և տեխնիկական զննման փաստացի իրականացման վերահսկողական մեխանիզմների ներդրում | րի նախարարություն | | | | սական զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 4-րդ կետի «ե» ենթակետ |
| 22. | «Կիբեռանվտանգության կենտրոնի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | կիբեռանվտանգության ոլորտի կայուն զարգացման և այդ ոլորտում մասնագետների պատրաստման աջակցում կիբեռանվտանգության գլոբալ ինդեքսի բարելավում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտեսական զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 4-րդ կետի «դ» ենթակետ |
| 23. | «Կիբեռանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | կիբեռանվտանգության ռազմավարության մշակում, որով կսահմանվեն կիբերանվտանգության ոլորտի կայուն զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտեսական զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 4-րդ կետի «դ» ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 24. | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | տաքսամոտորային փոխադրումները կանոնակարգող օրենսդրական դաշտի վերանայում (օրենսդրական փաթեթի մշակում՝ հավասար մրցակցային պայմաններ սահմանելով տաքսա-մոտորային ծառայություններ մատուցողների միջև՝ անկախ պատվերի ձևից) | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | | հուլիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2. «Ոլորտային տնտե-սական զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 4-րդ կետի «գ» ենթակետ |
| | **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** | | | | | | |
| 25. | «Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի բարեփոխում-ների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախա-գիծը ՀՀ կառավարության աշխա-տակազմ ներկայացնելը | - կուղենշվեն ՀՀ գյուղատնտեսու-թյան նախարարության իրավա-սությանը վերապահված անտառ-ների պահպանության, պաշտ-պանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի բարե-փոխման և կատարելագործման ճանապարհները,<br>- բարենպաստ պայմաններ կստեղծվեն անտառների պահ-պանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործ-ման վիճակի բարելավման համար,<br>- հստակ կուրվագծվեն առաջիկա տարիների համար անտառային ոլորտի զարգացման ուղիները | ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ բնապահ-պանության նախարարություն | հունվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | Հայաստանի Հանրա-պետության կառավա-րության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գյուղատնտեսու-թյուն» բաժնի 1-ին կետի «բ» ենթակետ |
| 26. | «Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող | հայեցակարգի ընդունմամբ ակնկալվում է՝ | ՀՀ գյուղատնտե- | ՀՀ արտակարգ իրավիճակների | հունվարի 3-րդ | Ֆինանսա-վորում չի | Հայաստանի Հանրապետության |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վնասների կանխարգելման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | - բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելման նախադրյալների ստեղծում,<br>- բնակլիմայական աղետներից վնասների կրճատման նախադրյալների ստեղծում,<br>- գյուղացիական տնտեսությունների երաշխավորված եկամուտների ապահովման միջոցառումների ձեռնարկման նախադրյալների ստեղծում | սության նախարարություն | նախարարություն | տասնօրյակ | պահանջվում: | կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գյուղատնտեսություն» բաժնի 1-ին կետի «գ» ենթակետ |
| 27. | «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում կսահմանվեն պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպությունների ստուգման համար պահանջվող ստուգաթերթերը: | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>(ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպ-ման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մաս |
| 28. | «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունմամբ կսահմանվի գինեգործական արտադրանքի ըստ իզոտոպային բաղադրության փորձաքննությունների արդյունքների մակնշման պահանջը: | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>(ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի ան- | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գյուղա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | վտանգության պետական ծառայություն) | | | | տնտեսություն» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետ |
| 29. | «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքում փոփո-խություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունմամբ կկատարվեն սննդամթերքի անվտանգության բարձրացման նպատակով սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյու-նավետության բարձրացման վերաբերյալ հայեցակարգից բխող համապատասխան փոփո-խություններ և լրացումներ: | ՀՀ գյուղա-տնտեսության նախարարու-թյուն (ՀՀ գյուղա-տնտեսության նախարարությա ն սննդամթերքի ան-վտանգության պետական ծառայություն) | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | Հայաստանի Հանրա-պետության կառավա-րության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գյուղա-տնտեսություն» բաժնի 1-ին կետի «ա» ենթակետ |
| 30. | «Հայաստանի Հանրապետությու-նում անասնաբուժության բնագա-վառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթո-դաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավա-րության աշխատակազմ ներկա-յացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունմամբ անասնաբուժության բնագավառում կվերանայվեն, կվերլուծվեն և կդասակարգվեն ստուգման ենթակա օբյեկտներն ըստ ռիսկայնության, որն իր հեր-թին կնպաստի ստուգումների կազմակերպման արդյունա-վետությանը: | ՀՀ գյուղա-տնտեսության նախարարու-թյուն (ՀՀ գյուղա-տնտեսության նախարարությա ն սննդամթերքի անվտանգությա նպետական ծառայություն) | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Հայաստանի Հանրա-պետությունում ստու-գումների կազմա-կերպ-ման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում կսահմանվեն հանրակրթական ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ստուգման համար պահանջվող ստուգաթերթերը: | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության նպետական ծառայություն) | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մաս |
| 32. | «Գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Հայաստանում արտադրվող գինեգործական արտադրանքի համար կսահմանվեն միասնական` միջազգային պրակտիկայում ընդունված անվտանգության, տեխնոլոգիական և որակական պահանջներ, որոնք կնպաստեն արտադրանքի անվտանգության ապահովմանը, արտահանման խթանմանը և սպառողների շահերի պաշտպանությանը: | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գյուղատնտեսություն» բաժնի 7-րդ կետի «գ» ենթակետ |
| **Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | | | | | | | |
| 33. | «Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումներին հավանություն տալու մասին» | Կսահմանվեն միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում հնարավոր կլինի մեղմել հանքարդյունաբերության ոլորտում տեղի ունեցող գնային տատանումների բացասական | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի Էներգետիկ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ազդեցությունը երկրի տնտեսության վրա: | | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | | | ենթակառուցվածքներ և բնական պաշարներ բաժնի 2-րդ ենթակետի «գ» պարբերություն |
| 34. | «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և առնչվող այլ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Օրենքների նախագծերի փաթեթն ուղղվելու է զբոսաշրջության ոլորտում վարչական ռեգիստրի ներդրմանը, ծառայությունների որակավորման համակարգերի ներդրմանը, գործարար ներդրումային դաշտի բարելավմանը: | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե | - | փետրվարի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Զբոսաշրջության զարգացում» բաժնի 1-ին և 2-րդ կետեր, 3/ա ենթակետ |
| 35. | «Զբոսաշրջային ծառայությունների որակավորման կարգերն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Նախագծերն ուղղվելու են զբոսաշրջային ծառայությունների որակի ամրապնդմանն ու բարձրացմանը, սպառողի՝ զբոսաշրջային ծառայությունների ընտրությանն աջակցելուն, համաշխարհային ու ներքին շուկայում Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի դրական նկարագրի ամրապնդմանն ու շարունակական բարձրացմանը: | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե | | «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուն հաջորդող ամսվա 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Զբոսաշրջության զարգացում» բաժնի 3-րդ կետի «ա» ենթակետ |
| 36. | «Ներդրումային ֆոնդ ստեղծելու | Ներդրումային ֆոնդի ձևավոր- | ՀՀ | - | մարտի 2-րդ | Լրացուցիչ | ՀՀ կառավարության |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մասին» ՀՀ կառավարության որոշ-ման նախագիծը ՀՀ կառավարու-թյան աշխատակազմ ներկայացնելը | մամբ ակնկալվում է երկրում հեռանկարային ներդրումային ծրագրերի իրականացմանը ֆինանսական աջակցության միջոցով խթանել ներդրումային ակտիվությունն ու ապահովել մասնավորի հետ փոխվստահելի գործընկերային հարթակ ձևա-վորելու համար անհրաժեշտ իրավական ու գործառնական հիմքեր: | տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությու ն | | տասնօրյակ | ֆինանսա-վորում չի պահանջվում: | 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Ներդրումների խրախուսում և պաշտպանություն» բաժնի 2/ա ենթակետ |
| 37. | «Ուխտագնացություն դեպի առա-ջին քրիստոնյա երկիր» ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխա-տակազմ ներկայացնելը | Նախագիծն ուղղվելու է Հայաստանում կրոնական, ուխտագնացության և միջոցառումային (MICE) զբոսաշրջության զարգացմանը, հայկական զբոսաշրջային արդ-յունքի դիվերսիֆիկացմանն ու մրցունակության բարձրացմանը, զբոսաշրջային սեզոնի երկա-րաձգմանը, մշակութային բազմազանությանն ու միջմշակութային երկխոսությանը, աշխարհում հայկական մշակույթի ներկա-յացմանն ու խթանմանը: | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությա ն զբոսաշրջությա ն պետական կոմիտե | - | ապրիլի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Զբոսաշրջության զարգացում» բաժնի 3-րդ կետի «դ» ենթակետ |
| 38. | «Որոշակի գումարից ավելի ներդրում կատարած օտարերկրացիներին | Հայեցակարգի ընդունմամբ կխրախուսվի խոշոր օտարերկրյա ներդրումների | ՀՀ տնտեսական | ՀՀ արտաքին գոր-ծերի նախարարություն | մայիսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա- | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | քաղաքացիություն շնորհելու հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ներգրավումը և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը, կընդլայնվեն օտարերկրյա ներդրողներին առաջարկվող հնարավորությունները, կստեղծվեն լրացուցիչ երաշխիքներ: | զարգացման և ներդրումների նախարարությու ն | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախա-րարության միգրացիոն պետա-կան ծառայություն | | վորում չի պահանջվում: | տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Ներդրումների խրախուսում և պաշտպանություն» բաժնի 2/ե ենթակետ |
| 39. | «Բիզնես հաշտարարի ինստի-տուտի ներդրման հայեցա-կարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Հայեցակարգը հիմք կհանդի-սանա հետագա օրենսդրական կարգա-վորման համար, ինչն ուղղված կլինի ՀՀ-ում գործա-րարների շահերի առավել պաշտպանվածության ապահովմանը, երաշխիք կհանդիսանա երկրում նոր ներդրումների ներգրավման համար, կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, կբարելավի պետություն-մասնավոր հատված երկխոսությունը: | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությու ն | - | մայիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գործարարության զարգացում և խրա-խուսում» բաժնի 4/դ ենթակետ |
| 40. | «Զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների (լեռնագնացություն, հեծանվորդու-թյուն, էքստրեմալ տուրիզմ, էկոտու-րիզմ, առողջապահական տուրիզմ, | Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների | - | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կրոնական, գինու և այլն)՝ արդեն իսկ գործող մասնավոր նախաձեռնություններին աջակցության և զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում, այդ թվում՝ հիմնվելով առանձնահատուկ ուղղություններով մասնավոր նախաձեռնությունների վրա: | նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե | | | | հավելվածի «Զբոսաշրջության զարգացում» բաժնի 4/ա ենթակետ |
| 41. | «Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Ծրագրի իրականացումը կնպաստի պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանը` խթանելով նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորումը և ապակենտրոնացումը դեպի ՀՀ մարզեր և Արցախ: | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Զբոսաշրջության զարգացում» բաժնի 4/դ ենթակետ |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | | | | | | |
| 42. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | պետական անշարժ գույքի օտարման գործընթացի վարչարարության պարզեցում, օտարման գործընթացի օպերատիվ և արագ իրականացում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | - | ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին մասի 1.2-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերություն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 43. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկներին, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը վարձակալության տրամադրման ընթացակարգերի պարզեցում | ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | - | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին մասի 1.1-ին կետի 7-րդ ենթակետ |
| 44. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացի պարզեցում, աշխատանքների արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացում | ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | - | հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին մասի 1.1-ին կետի 7-րդ ենթակետ |
| 45. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացում անշարժ գույքի վաճառքի պարզեցում | ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | - | հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին մասի 1.2-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերություն |
| 46. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավա- | նվիրատվություն ստանալու իրավունք ունեցող անձանց առաջարկվող բնակելի տարածքների տրամադրման գործընթացի պարզեցում, աշխատանքների արագ, | ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | - | հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին մասի 1.1-ին կետի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | րության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | օպերատիվ և արդյունավետ իրականացում, բնակչության սպասարկման որակի բարձրացում | | | | | 3-րդ ենթակետ |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | | | | | | |
| 47. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | համապատասխանեցում ԵԿԱԿ-ի Դոկ.30 փաստաթղթով սահմանված անվտանգության չափորոշիչներին<br>համապատասխանեցում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) 17-րդ «Անվտանգություն» հավելվածի չափորոշիչներին | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | համապատասխանեցում Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանս (ԵԿԱԿ) Դոկ. 30 փաստաթղթով սահմանված չափորոշիչներին<br>համապատասխանեցում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) 17-րդ «Անվտանգություն» հավելվածի չափորոշիչներին |
| 48. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի N 843-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման | համապատասխանեցում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև ծառայողական ու քաղաքացիական զենքը տեղափոխելու մասին համաձայնագրին | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | | ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | համապատասխանեցում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև ծառայողական ու քաղաքացիական |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | | | | | | զենքը տեղափոխելու մասին համաձայնագրին |
| 49. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1005-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի պարզեցում, թույլտվությունների տրամադրման նպատակով ներկայացվող փաստաթղթերի կրճատում, հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդնում | ՀՀ կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | - | հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիր |
| 50. | «Հայաստանի | Հայաստանի | ՀՀ կառավարու- | - | հունիսի | Լրացուցիչ | ՀՀ կառավարության |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն-ներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատա-կազմ ներկայացնելը | Հանրապետության օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետու-թյան տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի պարզեցում թույլտվությունների տրամադրման նպատակով ներկայացվող փաստաթղթերի կրճատում, հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդնում | թյանն առընթեր քաղաքացիակա ն ավիացիայի գլխավոր վարչություն | | 3-րդ տասնօրյակ | ֆինանսա-վորում չի պահանջվում: | 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաս-տանի Հանրապետու-թյան կառավարու-թյան գործունեու-թյան ծրագիր |
| 51. | «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Քաղաքացիական ավիացիայի ոլորտը կարգավորող բազմաթիվ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում առկա են իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և ազա-տությունների | ՀՀ կառավարու-թյանն առընթեր քաղաքացիակա ն ավիացիայի գլխավոր վարչություն | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ հոդված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սահմանափակումներ, որոնցով սահմանվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց պարտականությունները: Փոփոխությունների արդյունքում ակնկալվում է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքի և դրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցում 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրա-պետության Սահմանադրության դրույթներին: Կատարվող փոփոխությունների արդյունքում կհստակեցվեն նաև քաղաքացիական ավիացիայի ոլորտի պետական լիազոր մարմինների լիազորությունները | | | | | |
| **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ** | | | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 52. | «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի և դրանով պայմանավորված այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | արժեթղթավորման խոչընդոտների վերացում և ոլորտի զարգացում | ՀՀ կենտրոնական բանկ | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-<br><br>վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմ-բերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Գործարարության զարգացում և խրախու-սում» ենթաբաժնի 4-րդ կետի «ե» ենթակետ |
| 53. | Չաշխատող ակտիվների (այդ թվում՝ նաև ֆինանսական հաստատու-թյուններում գրավադրված) վերա-գործարկումը խթանող մեխա-նիզմների ներդրման վերաբերյալ հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | չաշխատող ակտիվների վերա-գործարկումը խթանող մեխանիզմների ներդնում | ՀՀ կենտրոնական բանկ | | հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմ-բերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Ներդրումների խրա-խուսում և պաշտպա-նություն» 2-րդ ենթա-կետի «գ» ենթակետ |
| 54. | «Ապահովագրության և ապահո-վագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և (կամ) վերահսկվող անձանց գործունեությունը կարգավորող այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ֆինանսական հաստատություններ հանգագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մուտքը կանխարգելող անհրաժեշտ կարգավորման միջոցների ձեռնարկում | ՀՀ կենտրոնական բանկ | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-<br><br>վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «անվտանգություն և հասարակական կարգ» |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 55. | «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխա-տակազմ ներկայացնելը | ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի և ֆինանսական համակարգում վեճերի լուծման գործընթացների կատարելագործում | ՀՀ կենտրոնական բանկ | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Ներդրումների խրա-խուսում և պաշտպա-նություն» |
| 56. | ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | երաշխավորության ինստիտուտի կատարելագործում, երաշխա-վորների իրավունքների պաշտպանություն | ՀՀ կենտրոնական բանկ | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Ներդրումների խրախուսում և պաշտպանություն» |
| **ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն** | | | | | | | |
| 57. | «Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն-ներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Մարզային 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունների իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>1. 2025 թվականի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70 տոկոսից ցածր | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությու ն | | մարտի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.1-ին կետ<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած N 29 արձանագրային |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կգտնվի մարզերի բնակչության ոչ ավելի, քան 30 տոկոսը:<br>2. 2025 թվականի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թիվը կաճի առնվազն 10 տոկոսով՝ համեմատած 2014 թվականի հետ: | | | | | որոշում |
| 58. | «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման միասնական կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ կառավարության որոշման ընդունումը կապահովի Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի, համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նկատմամբ առավել արդյունավետ ձևերի և մեթոդների ներդրումը և օգտագործումը, այդ փաստաթղթերի երաշխավորված և անվտանգ պահպանության ապահովումը: | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | | փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած N 4 արձանագրային որոշման N 1 հավելվածի 30-րդ կետի 2-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 59. | «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավա-րությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարության աշխատակազմ ներկայացնելը | առավելագույնի հասցնել միգրացիայի դրական ազդեցությունը և նվազագույնի հասցնել դրա բացասական հետևանքներն ու ռիսկերը | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | | մարտի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060–Ա որոշման հավելվածի 1.3-րդ բաժնի «Արտաքին քաղաքականություն» մասի 6-րդ, 13-րդ և 22-րդ կետեր և 1.2-րդ բաժին |
| 60. | «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատար-ված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների վերանայում | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | | մարտի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկ-տեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.1-ին կետի 8-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| 61. | «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | 18 համայնքային փնջերի խոշորացման գործընթացի կիրարկման ապահովում, ինչը կնպաստի համայնքների կողմից ֆինանսական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը: | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | | մայիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.1-ին բաժնի «Տեղական ինքնակառավարում» գլխի 3-րդ կետ |
| | 122. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մասնագիտացված մանկատներ) ծառայությունների դասակարգում | 1) նախարարության համակարգի մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների կարիքների դասակարգում՝ ըստ առողջական վիճակի և խնամքի ցուցանիշների | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 5-րդ ենթակետ |
| | | 2) ըստ գնահատված կարիքների՝ չափորոշիչների մշակում՝ խնամքի տարանջատման նպատակով | հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) հաստատություններում տրամադրվող ծառայություններին համապատասխան հաստիքների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 4) հաստատություններում տրամադրվող ծառայություն-ների համապատասխան աշխատողների վերապատ-րաստման, վերաորակավորման միջոցառումների իրականացում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 123. Ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպա-նության այլընտրանքային ծառա-յությունների նոր մոդելների ներդրման համար նախադրյալների ստեղծում | 1) իրավական հիմքի ապահովում՝ ծերացման հետևանք-ների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության ու դրա իրակա-նացման 2017-2021 թթ. միջոցառումների ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | մարտի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվա-կանի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Սոցիալա-կան քաղաքականության» բաժնի 1-ին ենթակետ |
| | | 2) «Ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով միջգերա-տեսչական հանձնաժողովի ստեղծման մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում | ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| | | ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված միջոցա-ռումների ծրագրի՝ 2017 թվականի համար նախատես-ված միջոցառումների իրականացում, մասնավորապես՝<br>3) ակտիվ ծերացումն ապահովող այլընտրանքային ծառայությունների նոր մոդելների (ծրագրերի) մշակում | մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4) մշակված մոդելների քննարկում տարեցների սոցիա-լական պաշտպանության ցանցում՝ ակնկալելով ցանցի անդամների մասնագիտական ներուժը և ռեսուրսները՝ նշված ծրագրերը համատեղ իրականացնելու համար | հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 5) տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտի որոշ ծրագրեր և ծառայություններ մրցակցային սկզբուն-քով պատվիրակման միջոցով իրականացնելու համար անհրաժեշտ իրավական դաշտի ապահովում (մրցույթի անցկացման կարգի և պայմանների, անհրաժեշտ ձևերի հաստատում) | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 6) ռազմավարության միջոցառումների ծրագրի իրա-կանացման և ընթացիկ աշխատանքների իրազեկման նպատակով բնակչությանը ԶԼՄ-ների միջոցով տեղե-կատվության տրամադրում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 124. Սոցիալական պաշտպանու-թյան ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառա-յությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ամբողջական ներդրման համար նախադրյալների ստեղծում | սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող թվով 41 ծրագրի՝<br><br>1) ՄԳ-ի գործընթացում մշակված քանակական և որակական ցուցանիշներին համապատասխան տվյալների հավաքագրում | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվա-կանի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականու-թյուն» բաժնի 7-րդ ենթակետ |
| | | 2) հավաքագրված տվյալների վերլուծություն, ծրագրերի գնահատում | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) ՄԳ-ի ամփոփ հաշվետվությունների կազմում, առաջարկությունների ներկայացում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4) ՄԳ-ի արդյունքների հրապարակում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 5) սոցիալական պաշտպանության ոլորտում իրակա-նացվող մնացած 41 ծրագրի՝ ՄԳ-ի իրականացման գործիքակազմի մշակում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 6) ՄԳ-ի էլեկտրոնային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքի մշակում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 125. Սոցիալական պաշտպանու-թյան ոլորտի միասնական տեղե-կատվական համակարգի («Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվա-կան համակարգ) ներդրում | 1) ԱՄՆ ՄԶԳ-ի հատկացրած դրամաշնորհի շրջա-նակներում համապատասխան պայմանագրի կնքում «Այ-Բի-Էմ» ընկերության հետ և համապատասխան ուսումնասիրության (վերլուծության) իրականացում | հունվարի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվա-կանի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.1-ին կետի «Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում» բաժնի 1-ին ենթակետ |
| | | 2) «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղե-կատվական համակարգի կառուցվածքային-գործառու-թային մոդելի նկարագրություն, ներառյալ՝ տեղեկատվա-կան համակարգի միջոցով ծառայությունների մատուց-ման բիզնես-գործընթացների նկարագրությունը (հաշվի առնելով «Այ-Բի-Էմ» ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները) | հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի տեխնիկական առա-ջադրանքի մշակում, ներառյալ՝ անհրաժեշտ տեխնի-կական միջոցների ցանկն ու նվազագույն պարամետ-րերը, ծրագրային միջոցների ցանկը, դրանց արժեք- | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | ները, համակարգի շահագործման և սպասարկման ծախսերը կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկա-րաժամկետ կտրվածքով և այլն | | |
| ՀՀ արդարադատության նախարարություն | 126. Դատական գործընթացներում էլեկտրոնային եղանակով ծառա-յությունների մատուցման համա-կարգի զարգացում | 1) ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրում և, անհրաժեշտության դեպքում, իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների կատարում՝ ապահովելու համար դատական գործընթացներում էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման իրավական հիմքերը | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 2) էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու և էլեկտրոնային դատական գործ ստեղծելու համար էլեկտրոնային ծրագրային ապահովման ներդրում, որը հնարավորություն կտա՝<br>ա. էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացնել հայցադիմումներ, դիմումներ, գրավոր ապացույցներ, միջնորդություններ,<br>բ. առցանց եղանակով ծանոթանալ դատական գործի նյութերին և ստանալ դրանց պատճենները,<br>գ. առցանց եղանակով հետևել դատական նիստերին և մասնակցել դատավարությանը | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 127. Դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի բարելավում | 1) հարկադիր կատարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց վերացմանն ուղղված բարեփոխումների իրականացում, մասնավորապես, համապատասխան ուսումնասիրությունների իրակա-նացում հարկադիր և հարկադիր էլեկտրոնային աճուրդների կազմակերպման հարցում հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների (աճուրդի ենթակա գույքի հերթականության որոշում, գույքի գնահատում, աճուրդի իրականացման ժամկետների որոշում) վերաբերյալ | մարտի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվա-կանի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Մարդու իրավունքներ, արդարադատու-թյուն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի «Մարդու իրավունքներ և արդարադատություն» ենթա-բաժնի 2-րդ կետի «գ» ենթակետ |
| | | 2) համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում | մարտի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 128. Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմանների բարելավում | 1) քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության ծրագրի իրականացում և նոր էներգետիկ կայանների գործարկում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ու ևս 10 քրեակատարողական հիմնարկում | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա ՀՀ կառավարության որոշման հավելվածի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժին |
| | | 2) 11 քրեակատարողական հիմնարկում ջերմային և հիգիենիկ պայմանների ապահովում, մասնավորապես, 11 քրեակատարողական հիմնարկում ջեռուցման ապահովում, հիմնարկում պահվող անձանց կենցաղային տաք ջրի ապահովում՝ արևային ջրատաքացուցիչների միջոցով, պատերի և ծածկի ջերմամեկուսացում, գազատարների և կաթսայատների կառուցում ու վերազինում, ներքին և արտաքին ջերմային ցանցերի կառուցում, արտաքին լուսատուների փոխարինում էներգաարդյունավետ լուսատուներով | ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| | 129. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացում (շարունակական) | 1) քրեակատարողական հիմնարկների բուժմասերի նյութատեխնիկական պայմանների բարեփոխում, առողջության առաջնային պահպանման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ապահովում (մասնավորապես, տոնոմետր, ֆոնենդոսկոպ, ԷՍԳ, օտոսկոպ, օֆտալմոսկոպ, գլյուկոմետր, մանրէազերծիչ լամպ, ՔԿԱ-ի գործիքների հավաքածու, վիրաբուժական գործիքների հավաքածու, ատամնաբուժական հավաքածու, մանրէազերծիչ, ավտոկլավ) | ապրիլի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա ՀՀ կառավարության որոշման հավելվածի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժին<br>ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշման հավելվածի 3-րդ կետ |
| | | 2) 11 քրեակատարողական հիմնարկի բժշկական ամբողջ անձնակազմի վերապատրաստում | հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) քրեակատարողական ծառայությունում բժշկական ծառայողների անկախության երաշխիքների ստեղծում՝ մշակելով համապատասխան իրավական ակտ | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| | 130. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի պետական ծառայության գործառույթների ամբողջական կիրառման ապահովում | 1) պրոբացիայի շահառուի մասնագիտական վերապատրաստման համար կահավորված 3 սենյակի ստեղծում | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժին |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 2) պրոբացիայի պետական ծառայության կողմից իրականացվող էլեկտրոնային հսկողության համակարգի փորձարկում Վանաձորում և Երևանի Շենգավիթ վարչական շրջանում, ընդ որում յուրաքանչյուրում փորձարկվելու են էլեկտրոնային հսկողության 25-ական միջոցներ | նոյեմբեր 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) պրոբացիայի ծառայողների առնվազն մեկ երրորդի վերապատրաստումների իրականացում | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | 131. Իրավաբանական անձանց պետական գրանցման բնագավառում մատուցվող ծառայությունների բարելավում | 1) հասարակական միավորումների, հիմնադրամների և վերակազմակերպումների (բացառությամբ՝ վերակազմավորման եղանակով վերակազմակերպման) գրանցման վերաբերյալ նմուշային փաստաթղթերի կազմում ու հրապարակում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 2) հասարակական միավորումների, հիմնադրամների և վերակազմակերպումների (բացառությամբ՝ վերակազմավորման եղանակով վերակազմակերպման) էլեկտրոնային դիմումների ընդունում և գրանցում | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 132. Ռազմավարական զսպման համակարգի զարգացում | 1) ՀՀ զինված ուժերի հարվածային և կրակային խոցման հնարավորությունների ավելացում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 17-ի ՆՀ-188-ՆՀԳ հրամանագրի պահանջներ<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.3-րդ բաժնի «Պաշտպանություն» գլխի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր |
| | | 2) հետախուզական հնարավորությունների ավելացմամբ վաղ հայտնաբերման համակարգի ընդլայնում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) պետական և ռազմական կառավարման համակարգի կատարելագործում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 4) միջազգային դաշնակցային, գործընկերային և իրավապայմանագրային հարաբերությունների զարգացում, պաշտպանության ոլորտի օրենսդրական ակտերի վերանայում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>սեպտեմբերի 1-ին տասնօրյակում ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | |
| ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 133. Կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի հիմնում | 1) ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժայի և ՀՀ Սյունիքի մարզի Գորիսայքի համայնքներում հենակետերի ստեղծման նպատակով համապատասխան տարածքների ու շենքերի տրամադրում | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 42 նիստի 5-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշում |
| | | 2) նշված հենակետերը և այնտեղ գործունեություն իրականացնող կամավորական հրշեջ-փրկարարներին անհրաժեշտ տեխնիկայով, սարքավորումներով և համդերձանքով ապահովում (հաշվետվություն) | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) կամավորական հրշեջ-փրկարարների ներգրավում և ուսուցման կազմակերպում նշված հենակետերում՝ ծառայություն իրականացնելու նպատակով (հաշվետվություն) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 134. Աղետների բժշկության կրեդիտավորման ուսումնական կենտրոնի հիմնում՝ առողջապահության բնագավառի ավագ և միջին խմբի բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման նպատակով | 1) աղետների բժշկության կրեդիտավորման ուսումնական կենտրոնի չափորոշիչների մշակում և հաստատում | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության ու Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության միջև 2016 թվականի ապրիլի 1-ին կնքված «Բժշկական ստորաբաժանումներ» համաձայնագիր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 2) ՀՀ ԱԻՆ-ի «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի աղետների բժշկության կրեդիտավորման ուսումնական կենտրոնի ճանաչում ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ որպես աղետների բժշկության կրեդիտավորվող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներ իրականացնելու թույլտվություն ունեցող կենտրոն | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 135. Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացում | 1) 10 համայնքի ուսումնասիրություն՝ ազդարարման սարքավորումների տեղակայման դիրքի որոշման և ազդարարման համակարգի ընտրության նպատակով (հաշվետվություն) | ապրիլի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Արտակարգ իրավիճակներ» բաժնի 1-ին ենթակետ |
| | | 2) աղետների վաղ ազդարարման համակարգերի տեղադրում և շահագործում՝<br>ա. Երևանի փոքր կենտրոնում, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի և ՀՀ Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքներում,<br><br>բ. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքում և Հաղարծինի, Թեղուտի, Գոշի, Աղավնավանքի, Խաչարձանի, Հովքի գյուղական համայնքներում | ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| | | 3) ազդարարման համակարգերի մոնտաժում, կենտրոնական կառավարման համակարգում ներբեռնում, թեստավորում, օպերատիվ հերթապահության հանձնում (հաշվետվություն) | ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| | 136. Համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի փուլային ներդրում | 1) 10 համայնքի ընտրություն և համայնքների խոցելիության ու կարողությունների բացահայտում և գնահատում (հաշվետվություն) | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Արտակարգ իրավիճակներ» բաժնի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն |
| | | 2) աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի ներդրում 10 համայնքում | հունիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 3) 10 համայնքում ներդրված համակարգի հիման վրա համայնքներին սպառնացող աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանավորման մեխանիզմների կիրառման արդյունքների վերլուծություն (հաշվետվություն) | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4) համայնքներում բացահայտված և գնահատված աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում՝ համայնքների զարգացման ծրագրերում ներառելու նպատակով | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 137. Սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի փորձնական ներդրում | 1) 2 համայնքում մասնագիտական ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների իրականացում (հաշվետվություն) | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Արտակարգ իրավիճակներ» բաժնի 2-րդ ենթակետի «բ» պարբերություն |
| | | 2) իրական ռեժիմում սողանքային մարմնի շարժի մոնիթորինգի համակարգի ներդրում | հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) ներդրված համակարգի փորձարկում՝ հորիզոնական դրենաժների հորատումների եղանակով՝ ստորգետնյա ջրերի հեռացման, լանջերի բեռնաթափման միջոցով | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 138. Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում թվային կապի ամբողջական համակարգի ներդրում | 1) միասնական թվային ռադիոկապի սարքավորումների՝ դիսպետչերական կետի, վերահաղորդակների, դրանց տեղադրման վայրերի, ստացիոնար և շարժական, դյուրակիր կայանների, ալեհավաքների, ռադիո հաճախականությունների ուսումնասիրություն և ընտրություն (հաշվետվություն) | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Արտակարգ իրավիճակներ» բաժնի 2-րդ ենթակետի «գ» պարբերություն |
| | | 2) թվային ռադիոկապի դիսպետչերական կետի ստեղծում | հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) վերահաղորդակների, ալեհավաքների, ստացիոնար և շարժական կայանների տեղադրում և ՀՀ ԱԻՆ-ի հեռահաղորդակցության ցանցին համակցում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 139. Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնում | 1) համայնքային ոստիկանության 2 նոր հենակետի (Երևան քաղաքի Նոր Նորք և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում) ստեղծման նպատակով կապիտալ շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների, կապիտալ շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների և կապիտալ շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթների հայտարարում | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 871-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին կետ<br><br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.3-րդ բաժնի «Անվտանգություն և հասարակական կարգ» գլխի 9-րդ կետ |
| | | 2) շինարարական աշխատանքների իրականացում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) հենակետերի համար անհրաժեշտ գույքի և տեխնիկական միջոցների ձեռքբերում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4) համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 140. ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման ոլորտում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում | 1) ՀՀ Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման նոր վարչական շենքի հիմքերի կառուցում | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 871-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ կետ |
| | | 2) ՀՀ Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի կառուցման աշխատանքների իրականացում՝ առնվազն կառուցման աշխատանքների ավարտին և վարչական շենքի ներքին հարդարման փուլին հասնելու նպատակով | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 141. Կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ծրագրային ապահովումն ու սպասարկումն իրականացնելու համար համապատասխան ընկերության ընտրության գործընթացի իրականացում | 1) կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի մատակարարման, կենսաչափական համակարգի ծրագրային և տեխնիկական սպասարկման ապահովման համար մրցույթի հայտարարում, կազմակերպում ու անցկացում՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2016 թ. սեպտեմբերի 30-ի N 894-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից համապատասխան համակարգերի հագեցվածության գնահատման, դրանց հետագա վերազինման, արդիականացման և (կամ) նոր համակարգերով փոխարինելու վերաբերյալ առաջարկություններն ու ներկայացված տեխնիկական առաջադրանքը | հունիսի 3-րդ տասնօրյակ | «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներ |
| | | 2) մրցույթի արդյունքների ամփոփում, կապալառու կազմակերպության ընտրություն | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի շահագործման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ նոր պայմանագրի կնքում ու աշխատանքների մեկնարկ | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 142. ՀՀ Նախագահի կողմից ուրվագծած արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և ՀՀ կառավարության ծրագրի կատարում | ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակելու է արտաքին անվտանգության հետագա ամրապնդման, զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ապահովման, համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում առավել ընդգրկման, բարեկամ և գործընկեր երկրների հետ երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների զարգացման ու ամրապնդման, միջազգային կազմակերպություններում գործուն մասնակցության ապահովման արտաքին քաղաքական ուղեգիծը՝ առաջնահերթ քայլերը նպատակաուղղելով՝ | | ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի 2-րդ (արտաքին հարաբերություններ և անվտանգություն) և 3-րդ (մրցակցային, նորամուծական տնտեսություն) գլուխներ<br><br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060- Ա որոշման հավելվածի 1.3-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | • ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի, մասնավորապես, ժողովրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա<br>• արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը<br>• Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, դատապարտմանը և ցեղասպանության հանցագործության կանխարգելմանը նպաստելուն<br>• Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցության և ռազմավարական հարաբերությունների առավել խորացմանն ու ընդլայնմանը<br>• Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության ամրապնդմանը<br>• Եվրոպական երկրների հետ երկկողմ համագործա-կցության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը<br>• անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների խորացմանը<br>• հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորմանը<br>• փոխշահավետ համագործակցության ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկող ԱՊՀ-ի մասնակից պետությունների հետ հարաբերությունների խորացմանը<br>• Չինաստանի և Ասիայի այլ երկրների, Աֆրիկայի պետությունների հետ համագործակցության հարաբերությունների զարգացմանը | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | • Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության շարունակմանը<br>• Ամերիկայի մայրցամաքի երկրների հետ համագործակցության զարգացմանը<br>• Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համագործակցության ակտիվ մասնակցությանը<br>• ՀԱՊԿ-ի շրջանակում համագործակցության շարունակական խորացմանը<br>• Եվրոպական միության հետ գործընկերության ընդլայնմանը, համագործակցության իրավական նոր շրջանակի ձևավորմանը<br>• ԱՊՀ-ի շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցությանը<br>• ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներգրավվածությանը և ՀՀ շահերի պաշտպանությանը<br>• Ֆրանկաֆոնիայի միջազգային կազմակերպությանը ՀՀ ներգրավվածության խորացմանը<br>• ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակմանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը<br>• միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացմանը<br>• Հայաստանի տնտեսական կայուն զարգացման ապահովմանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու դիվերսիֆիկացմանը, հայրենական արտադրանքի արտահանմանը, նոր շուկաների բացահայտմանը, արտաքին ներդրումների և դեպի Հայաստան զբոսաշրջիկների քանակի ավելացման խրախուսմանը | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | • օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը<br>• արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին, այդ թվում՝ սիրիահայերին աջակցության ցուցաբերմանը<br>• օտարերկրյա պետություններում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանմանը<br>• միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն առավել ընկալելի դարձնելուն, բարենպաստ միջազգային հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողությունների իրականացմանը | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 12-ի N 122 - Ն որոշման

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN п/կ | Հիմնավորումներ |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն** |
| 1. | **«Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին » ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 29 արձանագրային որոշման 11-րդ կետի հանձնարարականի համաձայն, համագործակցելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ, պետք է մշակվի և մինչև 2017 թվականի մայիսի 31-ը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվի ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի նախագիծ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ էներգետիկայի միջպետական առևտուրը հնարավոր դարձնելու և ավելի լայն մրցակցություն խրախուսելու նպատակով նախատեսվում է մշակել ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույց՝ այն ներդաշնակեցնելով էներգետիկայի միջպետական առևտրի հետ կապված Եվրամիության պահանջներին՝ չհակասելով ԵԱՏՄ-ի շրջանակներում ՀՀ-ի ստանձնած պարտավորություններին:<br>Հայաստանում նոր, ժամանակակից էլեկտրաէներգետիկական շուկային անցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ներքին շուկայի կարիքներով, ինչպես նաև կարևորվում է Վրաստանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելու համար: Միջսահմանային առևտուրն ընձեռում է փոխշահավետ հնարավորություններ և նպաստում Հայաստանի ներքին շուկայի արդյունավետության բարելավմանը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի բացերի վերլուծության նախնական արդյունքները՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնում է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման միջոցառումների իրականացում: |

2. **Կարգավորման առարկան**

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների մշակում

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում

---

2\.

**«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 29 արձանագրային որոշման 11-րդ կետի հանձնարարականի համաձայն, համագործակցելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ, պետք է մշակվի և մինչև 2017 թվականի մայիսի 31-ը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվի ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցից բխող «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ներկայիս կառուցվածքը հիմնականում մշակվել է 2004 թվականին, երբ «Հայէներգո» ФԲԸ-ի՝ «Միակ գնորդ» գործառույթի պատասխանատվությունն անցավ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ФԲԸ-ի բաշխիչ ընկերությանը: «Հայէներգո» ФԲԸ-ի գործունեությունը դադարեցնելը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար քայլ էր արդյունավետ ու թափանցիկ էլեկտրաէներգետիկական շուկա կառուցելու համար:

Հաշվի առնելով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի բացերի վերլուծության արդյունքները՝ նախատեսվում է բարելավել ՀՀ էներգետիկայի ոլորտի օրենսդրական շրջանակը:

Հայաստանում նոր, ժամանակակից էլեկտրաէներգետիկական շուկային անցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ներքին շուկայի կարիքներով, ինչպես նաև կարևորվում է Վրաստանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելու համար: Միջսահմանային առևտուրն ընձեռում է փոխշահավետ հնարավորություններ և նպաստում Հայաստանի ներքին շուկայի արդյունավետության բարելավմանը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող իրավական պայմանների ստեղծման և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և այլ պետական մարմինների գործառույթների հստակեցման նպատակով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների իրականացում

2. **Կարգավորման առարկան**

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող իրավական պայմանների ստեղծում

| | |
|---|---|
| 3. | **«Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման միջոցառումների պլան-ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 7-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի կատարման ապահովում: ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի պլան-ժամանակացույցը կհստակեցնի կատարվելիք աշխատանքների ժամկետները և պատասխանատու մարմինների իրավասությունները, կկարգավորի պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունները:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2009 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման մասին» ՀՀ օրենքը: 2010 թվականին ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրվել է ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համագործակցության մասին համաձայնագիր: Ըստ ստորագրված համաձայնագրի՝ ՌԴ կողմը ներդրող է, և ներդրման չափը հավասար է «ռեակտորային կղզյակի» մատակարարման արժեքին: ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, որի 2-րդ կետով ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի շահագործման հանձնումը նախատեսված է 2026 թվականին:<br>ՀՀ էներգետիկ համակարգի երկարատև (մինչև 2036 թ.) զարգացման ծրագրի համաձայն և ՀՀ էներգահամակարգի կայունության ու հուսալիության կարևորությունը հաշվի առնելով՝ առավել նպատակահարմար է ՀՀ-ում կառուցել մինչև 600 մՎտ հզորությամբ նոր միջուկային էներգաբլոկ (էներգաբլոկներ):<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ-ի պետական երաշխիքով վարկային միջոցների ներգրավման սահմանափակումները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է տվյալ ծրագիրն իրականացնել առավելապես ներդրումային միջոցների հաշվին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Պլան-Ժամանակացույցը կկարգավորի ՀՀ պետական կառավարման մարմինների համագործակցությունը, ինչպես նաև կհստակեցնի կատարվելիք աշխատանքների փուլերը և ժամկետները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պլան-ժամանակացույցի հաստատմամբ կկանոնակարգվեն և կհստակեցվեն ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման աշխատանքները: |
| 4. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 26-ի N 313 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 9-րդ ու 10-րդ ենթակետերի և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 9-րդ ու 10-րդ կետերի կատարման ապահովում |

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2014 թվականի հունիսի 27-ին Կլիմայի ներդրումային հիմնադրամների (Climate Investment Funds կամ ԿՆՀ) Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի (ՎԷԸԾ/SREP) ենթահանձնաժողովը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության վերականգնվող էներգետիկայի ներդրումային պլանին՝ որպես հիմնարար փաստաթղթի, որի համաձայն միջոցներ են տրամադրվում երկրաջերմային էներգետիկայի, ջերմային պոմպերի, արևային ֆոտովոլտային էներգետիկայի և արևային ջրատաքացուցիչների համար՝ ենթակառուցվածքների ստեղծման և (կամ) բարելավման ծրագրերի իրականացման նպատակով:<br>Ըստ 2014 թվականի հուլիսի 31-ին ՀՀ կառավարության N 836-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներեգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցով նախատեսվում է կառուցել արևային ցանցային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայան (էլեկտրակայաններ), ինչպես նաև երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման նպատակով՝ հորատանցքերի հորատման միջոցով առաջնային էներգակրի պարամետրերի որոշում և անհրաժեշտության դեպքում նաև երկրաջերմային էլեկտրակայանի կառուցում:<br>2015 թվականի հուլիսի 21-ին ՀՀ Նախագահի N ՆՀ-467-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապեության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի հունիսի 16-ին ստորագրված համաձայնագիրը՝ 8.55 միլիոն ԱՄՆ-ի դոլար դրամաշնորհի շրջանակներում Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիրն իրականացնելու վերաբերյալ, իսկ ՀՀ Նախագահի 2015 թվականի հուլիսի 23-ի N ՆՀ-471-Ն հրամանագրով հաստատվել է նաև Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի համաձայնագիրը:<br>Արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ առաջին կայանի կառուցումը ՀՀ-ում նախատեսված է 2017 թվականին: Երկրաջերմային հետախուզական հորատման աշխատանքների արդյունքում, ռեսուրսի հաստատման դեպքում, կկառուցվի նաև ՀՀ-ում առաջին երկրաջերմային էլեկտրակայանը: Նախատեսվում է, որ նշված կայանների կառուցումը կխթանի վերականգնվող էներգետիկայի ոլորտում նոր արտադրական հզորությունների ստեղծման գործընթացը:<br>Մինչդեռ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների ստացման օբյեկտների (արևային ֆոտովոլտային, երկրաջերմային և այլ տեղակայանքներ) բնականոն գործունեության, քաղաքացիների ու շահագործող անձնակազմի անվտանգության և գույքի պաշտպանության հետ կապված գործընթացները, ինչն այդ կայանների շահագործման ժամանակ կառաջացնի տարաձայնություններ, տարամեկնաբանություններ և հակասություններ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» N 313 որոշման մեջ լրացումներ կատարելու միջոցով կարգավորել նաև վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների ստացման օբյեկտների բնականոն գործունեության, քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգության ու գույքի պաշտպանության հետ կապված գործընթացները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենսդրորեն կամրագրվեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների ստացման օբյեկտների բնականոն գործունեության, քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգության ու գույքի պաշտպանության հետ կապված նորմերը: |

| | |
|---|---|
| 5. | **«Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների (մինչև ներառյալ 150 կՎտ դրվածքային հզորություն) մասսայականացմանն ուղղված խթանիչ ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 2-րդ ենթակետի «ա» պարբերության կատարման ապահովում<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվեցին «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին», «Էներգետիկայի մասին», «Հարկերի մասին», «Շահութահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում համապատասխան լրացումները և (կամ) փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքները (համապատասխանաբար՝ ՀՕ-67-Ն, ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, այսուհետ՝ օրենքներ): Նախատեսվում է, որ օրենքներով կապահովվեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև էլեկտրաէներգիայի փոխհոսքերը, իսկ կարգավորման դաշտից դուրս կգան վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող՝ էլեկտրական էներգիա արտադրող այն ինքնավար էներգաարտադրողները, որոնց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցի էլեկտրական էներգիայի՝ տեղակայված իրենց սպառիչների ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլոՎատտը: Մինչդեռ, դա բավարար չէ վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացման համար:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների (մինչև ներառյալ 150 կՎտ դրվածքային հզորություն) մասսայականացմանն ուղղված խթանիչ ծրագիր:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միկրոկայանների (մինչև ներառյալ 150 կՎտ դրվածքային հզորություն) մասսայականացմանն ուղղված խթանիչ ծրագրի մշակում<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված խթանիչ ծրագրում կսահմանվեն համապատասխան միջոցառումներ, որոնց իրականացումը ժամանակի ընթացքում կխանգեցնի էներգետիկայի ոլորտում միկրոկայանների (մինչև ներառյալ 150 կՎտ դրվածքային հզորություն) մասսայականացմանը: |
| 6. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2014 **թվականի հուլիսի** 31-ի N 836-Ն **որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ էներգետիկ անվտանգության պահանջների կատարման արդյունավետության բարձրացում<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի առնելով 2014-2016 թթ. ընթացքում էներգետիկ համակարգում կատարված աշխատանքները, արձանագրված զարգացումները, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության խորհրդի կողմից իրականացված էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների ապահովման ծրագրերի իրականացման ընթացքի դիտարկման արդյունքները՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների և իրականացման ժամկետների վերանայում ու հստակեցում<br>**2. Կարգավորման առարկան**<br>Էներգետիկ անվտանգության պահանջների իրականացում<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշվի առնելով 2014-2016 թթ. ընթացքում էներգետիկ համակարգում կատարված աշխատանքները և արձանագրված զարգացումները՝ կվերանայվեն ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումները և իրականացման ժամկետները, ինչը կնպաստի ՀՀ էներգետիկ անվտանգության պահանջների կատարման արդյունավետության բարձրացմանը: |
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | |
| 7. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է պետության կարիքների համար գնումների մասնակի կենտրոնացված համակարգ ներդնելու, գնումների մասին պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացն էլեկտրոնային դարձնելու անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ գնումներն իրականացվում են ապակենտրոնացված կարգով: Այսինքն՝ պատվիրատուներն ինքնուրույն են կազմակերպում գնման ընթացակարգերը: Միաժամանակ, էլեկտրոնային գնումների համակարգն օգտագործող պատվիրատուները պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացն իրականացնում են թղթային եղանակով:<br>ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսվում է վեց ամսվա ընթացքում ներդնել մասնակի կենտրոնացված համակարգ և գնումների մասին պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացը դարձնել էլեկտրոնային:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է՝<br>1) ներդնել գնումների կատարման մասնակի կենտրոնացված համակարգ, որի շրջանակներում ձեռք կբերվեն պարբերական սպառման բնույթ և միանման տեխնիկական բնութագրեր ունեցող որոշ ապրանքներ ու ծառայություններ.<br>2) սահմանել, որ կենտրոնացված գնման ընթացակարգերը կկազմակերպվեն ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի (իրավաբանական անձի) միջոցով՝ համագործակցելով տվյալ ապրանքի գծով համեմատաբար խոշոր գնումներ կատարող հինգ պատվիրատուի հետ.<br>3) սահմանել, որ կնքված պայմանագրերը կվերաբերեն պետական կառավարման համակարգում գործող բոլոր պատվիրատուներին, ՊՈԱԿ-ներին և ՓԲԸ-ներին.<br>4) ներդնել որոշակի ժամանակահատվածում մեկ շուկայում տվյալ ապրանքի համար գործող շուկայական գնի որոշման և դրա հիման վրա գործող պայմանագրերի գների վերանայման մեխանիզմ, որն իր դրական ազդեցությունը կթողնի բյուջեներում այդ ապրանքների նախահաշվային արժեքների որոշման գործընթացի վրա.<br>5) էլեկտրոնային գնումների համակարգն օգտագործող պատվիրատուների համար պայմանագրերի արդյունքների ընդունման գործընթացը դարձնել էլեկտրոնային: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով նախատեսվում է կարգավորել պետության կարիքների համար գնումների մասնակի կենտրոնացված համակարգ ներդնելու և գնումների մասին պայմանագրերի կատարման արդյունք-ների ընդունման գործընթացն էլեկտրոնային դարձնելու հետ կապված հարաբերությունները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ պարբերական սպառման բնույթ և միանման տեխնիկական բնութա-գրեր ունեցող որոշ ապրանքների ու ծառայությունների գնումները կիրականացվեն կենտրոնացված կարգով, գնումների մասին պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացը կդառնա էլեկտրոնային: |
| 8. | **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգը և դրանց առանձնահատկությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ փոփո-խությունների կատարման անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գնումների մասին գործող ՀՀ օրենսդրությամբ սահմանված է գնման ընթացակարգերի (ձևերի) կիրարկման կարգը: Նշված օրենսդրության մեջ իրականացվող փոփոխությունների արդյունքում նվազեցվում են գնումների կատարման ձևերը՝ գնման յոթ ձևի փոխարեն սահմանվում է չորս ձև, ինչը նպատակաուղղված է գնման ձևերի ընտրության պարզեցմանը: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու նաև գնման ընթացակարգերի կիրարկման կարգը և սահմանելու դրանց առանձնահատկությունները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ կատարվող փոփոխություններին համահունչ կսահմանվեն նոր գնման ընթացակարգերի կիրարկման կարգն ու դրանց առանձնահատկությունները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան գնման ընթացակարգերի կիրարկման և դրանց առանձնա-հատկությունների սահմանման գործընթացի հետ կապված հարաբերությունների կանոնա-կարգումն է:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կապահովվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկումը: |
| 9. | **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին միաժամանակյա մասնակցության սահմանափակման դեպքերի սահմանման անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գնումների մասին գործող ՀՀ օրենսդրությամբ չի արգելվում փոխկապակցված անձանց կողմից նույն գնման ընթացակարգերին մասնակցությունը, ինչը կարող է չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների ձեռքբերման առիթ հանդիսանալ: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ իրականացվող փոփոխությունների արդյունքում արգելվում է գնման գործընթացներին փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը՝ սահմանելով այդ անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին միաժամանակյա մասնակցության սահմանափակման դեպքերի նախատեսումն է:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կսահմանվեն փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին միաժամանակյա մասնակցության սահմանափակման դեպքերը: |
| 10. | **«Բողոքարկման վճարը վերադարձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է բողոքարկման վճարը վերադարձնելու կարգի սահմանման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գնումների մասին գործող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է, որ ցանկացած անձ բողոքարկման խորհրդին բողոք ներկայացնելու համար վճարում է 30000 դրամ, որը վերադարձման ենթակա չէ, եթե նույնիսկ տվյալ բողոքը բավարարվում է հօգուտ բողոք ներկայացրած անձի:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ իրականացվող փոփոխությունների արդյունքում նախատեսվում է բողոքը բավարարվելու դեպքում բողոքարկման համար վճարված գումարը (30000 դրամ) վերադարձնել բողոքը ներկայացրած անձին:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան բողոքարկման վճարը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների կանոնակարգումն է:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կսահմանվի բողոքարկման վճարը վերադարձնելու կարգը: |
| 11. | **«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշմամբ (1-ին մասի 1.1-ին կետի 10-րդ ենթակետ) և ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38-12 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետությունում |

ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարության իրագործման գործողությունների 2015-2017 թթ. ծրագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման (այսուհետ՝ ԾԲ) անցնելու համար իրավական հիմքերի ամրապնդման և զարգացման անհրաժեշտությամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ընդունմամբ ԾԲ-ն ամրագրվեց որպես ավանդական ձևով իրականացվող բյուջետավորմանն աջակցող մոտեցում, որը, հանդիսանալով արդյունքի վրա հիմնված բյուջետավորման մոտեցում, ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած՝ նշված ռազմավարության համաձայն պետք է դառնա բյուջետավորման հիմնական մոտեցում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բյուջետավորման ավանդական մոտեցման համեմատությամբ ԾԲ-ն ներդրումն է ապահովում հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանման բարելավումը և հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության, հաշվետվողականության, արդյունավետության և արդյունքայնության բարձրացումը, ինչպես նաև հնարավորություն է տալիս բյուջետային տեղեկատվությունը ներկայացնելու այնպիսի կառուցվածքով, որը հնարավոր կդարձնի առավել արդյունավետ վերահսկել, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականություններն իրականացնելու համար, արդիական է դառնում ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի կառուցվածքի փոփոխման խնդիրը՝ ներկայիս գործող ծախսերի կառուցվածքը ծրագրային դասակարգման հիմքի վրա կազմված կառուցվածքով փոխարինելու և, դրանով պայմանավորված, ՀՀ պետական բյուջեի կազմման գործընթացը վերափոխելու համար, որին հետևելու են նաև դրանից բխող տրամաբանական փոփոխություններ ՀՀ պետական բյուջեի կատարման, հաշվետվությունների կազմման, մոնիթորինգի և արտաքին աուդիտի ոլորտներում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է նշված խնդիրների իրավական լուծումը տալ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման եղանակով:

**2. Կարգավորման առարկան**

Նախագիծը կսահմանի ԾԲ-ի կիրառման հիմնական պահանջները:

**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ կապահովվի ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման համար ամրապնդված իրավական դաշտի առկայությունը:

12.

**«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Նախագծի ընդունումը պայմանավորված է 2016 և 2017 թվականների հաշվետու ժամանակաշրջանների համար ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգերի կատարելագործման անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված ոչ ընթացիկ ակտիվների մասով ամորտիզացիոն մասհանումները կատարվում են խմբային մեթոդի միջոցով: Նշված համակարգի կիրառման անցած տարիների ընթացքում բացահայտվել են մի շարք խնդիրներ (օրինակ, խմբային մեթոդի կիրառման հետևանքով շատ հաճախ ստեղծվում են բարդություններ՝ կապված ապրանքի իրական ինքնարժեքի հաշվարկման

| | |
|---|---|
| | հետ, ինչի հետևանքով հարկային և ֆինանսական հաշվառման միջև առաջանում են էական տարբերություններ), որոնք որոշակիորեն դժվարացնում են ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումների հաշվարկումը: Վերոգրյալով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսվել է վերացնել նշված համակարգը: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքն ուժի մեջ է մտնելու դեռևս 2018 թվականին, 2016 և 2017 թվականների հաշվետու ժամանակաշրջանների համար անհրաժեշտություն է առաջացել անցած տարիների ընթացքում բացահայտված խնդիրների կարգավորման նպատակով որոշակիորեն վերանայել ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման գործող համակարգերը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է որոշակիորեն վերանայել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգը, մասնավորապես, սահմանելով, որ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումները կարող են կատարվել նաև ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման գծային մեթոդով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի առարկան ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գործող համակարգերն են:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում կկատարելագործվեն ոչ ընթացիկ ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգերը: |
| 13. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի ապրիլի 11-ի N 161 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) սահմանված մոտեցումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2000 թվականի ապրիլի 11-ի «Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակելու հայտանիշները և չափերը սահմանելու մասին» N 161 որոշմամբ սահմանված՝ հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումները որոշակիորեն չեն համապատասխանում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) սահմանված մոտեցումներին: Չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով էականորեն պարզեցվել են հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները որպես ընթացիկ կամ կապիտալ ծախսեր որակելու մոտեցումները, այդուհանդերձ, 2016 և 2017 թվականների հաշվետու ժամանակաշրջանների համար անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն վերանայել հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումները, քանի որ գործող մոտեցումները որոշակիորեն շեղվում են ՖՀՄՍ-ներով սահմանված մոտեցումներից՝ այն առումով, որ, ՖՀՄՍ-ների համաձայն, կապիտալ ծախսեր են համարվում: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է համապատասխանեցնել հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) սահման-ված մոտեցումներին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի առարկան հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումներն են:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում հիմնական միջոցների վրա կատարվող ծախսումները հարկման նպատակով որպես ընթացիկ, կապիտալ կամ սպասարկման ծախսումներ դասակարգելու գործող մոտեցումները համադրելի կլինեն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով սահմանված մոտեցումներին: |
| 14. | **«Հաշվապահական հաշվառման (բացառությամբ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման) և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականության վերանայման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանա-գրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Հայեցակարգի ընդունումը պայմանավորված է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտներում բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և արտաքին աուդիտի ոլորտների կարգավորման արդյունավետ համակարգ ձևավորելուն ուղղված բարեփոխումները ՀՀ կառա-վարության 2017 թվականի գերակա խնդիր սահմանելը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով ամրագրված ծրագրային դրույթների իրագործման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, «Պետական կառա-վարման համակարգի օպտիմալացում» բաժնի 5-րդ կետի համաձայն, նախատեսվում է պետական կառավարման ապարատի ծախսերի կրճատում՝ հիմք ընդունելով իրականացվող գործառույթների անհրաժեշտությունն ու փաստացի իրականացումը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և արտաքին աուդիտի ոլորտների կարգավորման արդյունավետ համակարգ ձևավորելուն ուղղված բարեփոխումներով նախատեսվում է մշակել ոլորտը կարգավորող նոր իրավական ակտեր, ինչպես նաև գործող որոշ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ, որի արդյունքում նախատեսվում է՝<br>1) ՀՀ ֆինանսների նախարարությանը կից ստեղծել հանրային վերահսկողության խորհուրդ, որը պատասխանատու կլինի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման համար.<br>2) ստեղծել մասնագիտացված կառույց՝ Հայաստանի հաշվապահների ու աուդիտորների պալատ, որը կիրականացնի հաշվապահության և աուդիտի ոլորտի զարգացման համար անհրաժեշտ գործառույթներ, մասնավորապես, մասնագետների որակավորման և շարունակական |

| | |
|---|---|
| | զարգացման, ՖՀՄՍ-ների և ԱՄՍ-ների ժամանակին թարգմանության, աուդիտի որակի ապահովման համար անհրաժեշտ գործողություններ.<br>3) ներդնել տարեկան աուդիտի պարտադիր պահանջ հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունների համար, որոնց սահմանումը կհամապատասխանեցվի ԵՄ-ի դիրեկտիվներով ներկայացված չափանիշներին.<br>4) վերանայել աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը՝ հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցով (Աուդիտորական կազմակերպությունների ռեեստր).<br>5) գերփոքր կազմակերպությունների համար մշակել հաշվապահական հաշվառման պարզեցված կարգ, որով զգալիորեն կպարզեցվեն նշված կազմակերպությունների համար հաշվառման աշխատանքների իրականացման ու ֆինանսական հաշվետվությունների պատրաստման աշխատանքները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի առարկան հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման համակարգն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում կկատարելագործվի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման համակարգը: |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** | |
| 15. | **«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի օրենսդրական բարեփոխումներին ուղղված գործընթացն իրականացվում է ոլորտում տեղի ունեցող զարգացումներով և բարեփոխումների հիման վրա:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի է առնվում այն հանգամանքը, որ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում լիազոր մարմնի քաղաքականության և լիազորության շրջանակները հստակեցված չեն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտություն է միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, մասնավորապես, փոփոխություններ կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում և մշակել «Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» նոր ՀՀ օրենքի նախագիծ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հստակեցվելու են կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում լիազոր մարմնի քաղաքականության և լիազորության շրջանակները:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա կկատարվեն օրենսդրական փոփոխություններ, որը կհանգեցնի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում օրենսդրական հստակեցման: |

| | |
|---|---|
| 16. | **«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի օրենսդրական բարեփոխումներին ուղղված գործընթացն իրականացվում է ոլորտում տեղի ունեցող զարգացումներով և բարեփոխումների հիման վրա:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի է առնվում այն հանգամանքը, որ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում լիազոր մարմնի քաղաքականության և լիազորության շրջանակները հստակեցված չեն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտություն է միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, մասնավորապես, փոփոխություններ կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում և մշակել «Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» նոր ՀՀ օրենքի նախագիծ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հստակեցվելու են կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում լիազոր մարմնի քաղաքականության և լիազորության շրջանակները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա կկատարվեն օրենսդրական փոփոխություններ, որը կհանգեցնի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում օրենսդրական հստակեցման: |
| 17. | **«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ-ի ոլորտ» բաժնի՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման գործընթացների կանոնակարգման վերաբերյալ 6-րդ կետի պահանջով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը, գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը և բալոնների պարբերական վկայագրման ու գազաբալոնային |

| | |
|---|---|
| | ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների արտադրական բազաներին և բանվորական ու ինժեներատեխնիկական անձնակազմերի գիտելիքներին ներկայացվող պահանջները հաստատված են ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշմամբ, ինչը հակասում է «Տեխնիկական կանոնակարգման մասին» և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների պահանջներին:<br>Գործընթացի իրականացման ընթացքում առաջ են եկել մի շարք խնդիրներ, որոնք օրենսդրական կարգավորման կարիք ունեն, մասնավորապես, գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկումն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից, որոնց մեծամասնությունը չունի համապատասխան արտադրական բազա և ինժեներաբանվորական անձնակազմ, ուստի, տրանսպորտային անվտանգության ապահովման տեսանկյունից պահանջ է առաջացել լիցենզավորելու սույն ոլորտը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն նախագծերով առաջարկվում է լիցենզավորել Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին՝ սպառողների իրավունքների պաշտպանության, ծառայությունների որակի բարձրացման, նրանց նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման նպատակով: Առաջարկվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն օրենքով տալ լիազորություն սահմանելու սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման ու բալոնների պարբերական վկայագրման կարգը և նշված գործունեություններն իրականացնող կազմակերպությունների արտադրական բազաներին ու ինժեներատեխնիկական անձնակազմերի որակավորմանը ներկայացվող պահանջները: Սահմանել վերահսկողական մեխանիզմներ՝ վարչական պատասխանատվության ենթարկելով սահմանված պահանջները խախտողներին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Գազաբալոնային համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության օրենսդրական համալիր լուծում<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի հերմետիկության ստուգման գործընթացների կարգավորում: Այդ աշխատանքները կատարող անձնակազմերի որակավորման և գազավառելիքային համակարգով լրակազմված տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության բարձրացում |
| 18. | **«Խելացի քաղաքի» ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Խելացի քաղաքի» ստեղծման հայեցակարգի մշակման և ՀՀ կառավարության կողմից քննարկման միջոցառումը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի՝ «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «գ» ենթակետը, և դրա նպատակն է բնակչության կենսամակարդակը զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ և խթանել տեղեկատվական հասարակության ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև թվայնացնել ենթակառուցվածքները և ծառայությունները: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ-ում լիարժեք թվայնացված չեն ենթակառուցվածքները և ծառայությունները: Կներդրվեն էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային ծառայություններից օգտվելու հնարավորություններ: Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել համալիր ծրագիր, որը կդյուրացնի էլեկտրոնային համակարգերի միջոցով մատուցվող ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Արդյունքում կմշակվեն միջոցառումներ, որոնք կնպաստեն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և կխթանեն տեղեկատվական հասարակության ձևավորումն ու զարգացումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգը կսահմանի «Խելացի քաղաքի» ստեղծման հիմնական խնդիրները, ուղղությունները, կներառի նաև իրականացվող միջոցառումների ցանկն ու ակնկալվող արդյունքները, այն է՝ ՀՀ տարածքում ստեղծել տարածաշրջանային բարձր տեխնոլոգիաներով հագեցված (թվայնացված) տարածք, որը նախատեսված է խելացի լուծումների նախագծման, լաբորատոր փորձարկումների և արտադրության համար՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցված կենտրոններով՝ զարկ տալով վերականգնվող էներգետիկային, մաքուր տեխնոլոգիաներին, ճշգրիտ տեխնոլոգիաներին և այլ ինովացիաների:<br>«Խելացի քաղաքի» ստեղծումը միտված է նաև ենթակառուցվածքների և ծառայությունների թվայնացմանը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա զբոսաշրջության, հայրենական արտադրության և այլ ծառայությունների զարգացման համար: |
| 19. | **«Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգի մշակման և ՀՀ կառավարության կողմից քննարկման միջոցառումը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի՝ «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «դ» ենթակետը, և դրա նպատակն է փոխակերպել և վերաձևավորել Հայաստանի տնտեսությունը՝ ապահովելով տնտեսական մրցակցություն, բարեկեցության ստեղծում և աշխատանքի հնարավորություններ՝ ինժեներական քաղաքի և Հայաստանում ինժեներական կլաստերի հիմնական միջոցով:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ-ում գործում են շատ տեխնոլոգիական ընկերություններ, կառույցներ և հիմնարկներ, որոնք տեղակայված են ՀՀ տարբեր բնակավայրերում: Քանի որ լիարժեք չէ այդ սուբյեկտների միասնական համագործակցությունը, ուստի, ինժեներական քաղաքի ենթակառուցվածքն ստեղծվում է տեխնոլոգիաները, ընկերությունները և կառույցները մեկ վայրում տեղայնացնելու և կենտրոնացնելու համար՝ խթանելով բարձր տեխնոլոգիական ընկերությունների աճը և ոլորտի զարգացումը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Արդյունքում կմաշկվեն միջոցառումներ, որոնք կնպաստեն ինովացիոն արտադրության զարգացմանը, կկենտրոնացնեն, կնպաստեն մեկ բնակավայրում ընկերությունների և արտադրությունների տեղակայմանը, որն էլ իր հերթին կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և կխթանի տեղական արտադրանքի արտադրությունը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում կզարգանա ինժեներական կլաստերը, կստեղծվի շուրջ 2000 աշխատատեղ, 3 տարում կհիմնվի 20 նորաստեղծ կազմակերպություն և կպատրաստվի 2000 բարձրակարգ ինժեներ: |

| | |
|---|---|
| | Տարածաշրջանը կդառնա առաջատար պետություն՝ ինովացիոն արտադրությամբ, և տարեկան 40 տոկոսով կբարձրանա կազմակերպությունների արդյունավետությունը, տարեկան 30 տոկոսով կավելանա արտահանման ծավալների աճը: |
| 20. | **«Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման նպատակն է ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից իրականացվող տեսչական գործառույթների, լիազորությունների շրջանակի և վայրերի հստակեցումը, տնտեսավարող սուբյեկտների պաշտպանվածությունը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված բարեփոխումներն իրականացնելու նպատակով օրենքի նախագծում հստակեցվել է ՀՀ տրանսպորտային տեսչության վերահսկողական լիազորությունների շրջանակը, մասնավորապես, սպառիչ թվարկվել են այն բնագավառները, որոնց նկատմամբ տեսչությունն իրականացնում է վերահսկողական գործառույթներ: Հնարավորինս սպառիչ թվարկվել են այն վայրերն ու տեղերը, որտեղ տեսչության աշխատողներն իրավունք ունեն իրականացնելու վերահսկողություն, ներկայացվել է նաև վերահսկողության ընթացքում պահանջվող փաստաթղթերի ցանկը:<br>Քանի որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում ներդրվում է իրավախախտումների (առայժմ նախատեսվում է միայն տաքսամոտորային փոխադրումների մասով) նկատմամբ նկարահանման և համակարգչային ծրագրային համակարգի միջոցով վերահսկողական գործառույթների իրականացում, անհրաժեշտություն է առաջացել այն ամրագրել օրենքով:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ներկայումս ՀՀ տարածքում EC տախոգրաֆի համակարգի ներդրման պարագայում դրանց շահագործման նկատմամբ վերահսկողական գործառույթների արդիականացումն ավելի է մեծանում, քանի որ նշված բնագավառում մեծ գումարներ պահանջող համակարգի ներդրման դեպքում իրավակիրառ թույլ մեխանիզմների հետևանքով տեսչության վերահսկողական գործառույթները մնում են անհետևանք:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի նախագծի ընդունման արդյունքում կհստակեցվեն ՀՀ տրանսպորտային տեսչության աշխատողների գործառույթները՝ հնարավորինս բացառելով կրկնորդումները, գործողությունների շրջանակները, տեսչության աշխատողների կողմից վերահսկողության ընթացքում կատարվող գործողությունները, ինչը թույլ կտա պաշտպանել տնտեսավարող սուբյեկտներին տեսչության աշխատողների կողմից իրենց վերապահված լիազորությունների վերազանցումից, ինչպես նաև կնպաստի տեսչական գործունեության արդյունավետության բարձրացմանն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, մասնավորապես, նոր համակարգի ներդրումը կբացառի տեսուչի և վարորդի անմիջական շփման անհրաժեշտությունը: |

| | |
|---|---|
| 21. | **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ-ի ոլորտ» բաժնի 4-րդ կետի՝ ավտոտրանսպորտի տեխնիկական զննման նոր կանոնակարգերի մշակման, տեխնիկական զննման կտրոնների՝ էլեկտրոնային համակարգով փոխարինման և տեխնիկական զննման փաստացի իրականացման վերահսկողական մեխանիզմների ներդրման վերաբերյալ «ե» ենթակետի պահանջով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են տեխնիկական զննության: ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված են տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգը, լիցենզիայի պայմաններն ու պահանջները՝ ներառյալ տվյալ լիցենզիայի հիման վրա շահագործվող հոսքագծերի նվազագույն քանակը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնելու կարգը, տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ տեխնիկական զննության ընթացքում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքներին, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները: Տեխնիկական զննության արդյունքում շահագործման պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոցի համար զննություն իրականացրած լիցենզավորված անձը տրամադրում է սահմանված նմուշի կտրոն, որը պետք է փակցվի տրանսպորտային միջոցի վրա՝ վարորդի կողմից առջևի հողմապակու ներքևի աջ անկյունում, սակայն փաստ է այն, որ ներկայումս տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացումը կրում է ձևական բնույթ, քանի որ տեխնիկական զննության կտրոնը բանկերից ձեռք բերելուց հետո տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ տիրապետողը տրանսպորտային միջոցը չի ներկայացնում տեխնիկական զննության, այսինքն՝ փաստացի չի ստուգվում տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը, որն էլ իր հերթին որոշ դեպքերում հանգեցնում է տրանսպորտային միջոցի տեխնիկապես անսարք վիճակով շահագործմանը՝ սպառնալով ճանապարհային երթևեկության անվտանգությանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրները կարգավորելու և տեխնիկական զննության գործընթացի նկատմամբ վերահսկողությունն ավելացնելու նպատակով առաջարկվում է տեխնիկական զննության կտրոնի տրամադրման պահանջը հանել և վերահսկողությունն իրականացնել էլեկտրոնային շտեմարանի և արատորոշման քարտի միջոցով: Տեխնիկական զննության արատորոշման քարտը ներառում է անհրաժեշտ տեղեկատվություն տրանսպորտային միջոցի, տեխնիկական զննության, ինչպես նաև կրկնակի տեխնիկական զննության անցնելու վայրի, օրվա, ժամի, տեխնիկապես սարքին ճանաչվելու կամ հայտնաբերված թերությունների վերաբերյալ: Ուստի, դրա առկայությունը բավարար է տեխնիկական զննություն անցնելու կամ չանցնելու վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու համար: |

| | |
|---|---|
| | Արատորոշման քարտը լրացվում է էլեկտրոնային եղանակով և պահպանվում է էլեկտրոնային շտեմարանում, ինչը հնարավորություն է տալիս վերահսկողություն իրականացնելու նաև էլեկտրոնային եղանակով՝ առանց տրանսպորտային միջոցը կանգնեցնելու: Միաժամանակ գործող էլեկտրոնային ծրագիրը թույլ է տալիս վերահսկել տեխնիկական զննության փաստացի իրականացումը: Այն արձանագրում է տրանսպորտային միջոցի արգելակային ստենդի վրա բարձրանալը՝ ֆիքսելով տվյալ տրանսպորտային միջոցի քաշը: Համապատասխան տողում «0» թվի առկայությունը փաստում է տեխնիկական զննության կարգի պահանջների չկատարումը կայանի կողմից:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Տեխնիկական զննության գործընթացի նկատմամբ վերահսկողության բարձրացում<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) բացառել տրանսպորտային միջոցների սեփականատերերի կամ տիրապետողների կողմից տեխնիկական զննության կտրոն ձեռք բերելու և առանց տեխնիկական զննության կայան ներկայանալու՝ հողմապակուն փակցնելով տրանսպորտային միջոցների շահագործումը<br>2) վերահսկողություն իրականացնել ոչ թե կտրոնի առկայության կամ բացակայության, այլ տրանսպորտային միջոցի փաստացի տեխնիկական զննություն անցնելու կամ չանցնելու նկատմամբ՝ հիմք ընդունելով արատորոշման քարտի և էլեկտրոնային շտեմարանի տվյալները<br>3) բացի տրանսպորտային միջոցների սեփականատերերին կամ տիրապետողներին վարչական պատասխանատվության ենթարկելուց՝ նաև վարչական պատասխանատվություն սահմանել կայանների նկատմամբ տեխնիկական զննության գործընթացը սահմանված կարգով չիրականացնելու համար |
| 22. | **«Կիրեռանվտանգության կենտրոնի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ապահովել կիբեռանվտանգության ոլորտի կայուն զարգացումը և այդ ոլորտում մասնագետների պատրաստումը<br>Նպաստել մոբայլ և ամպային տեխնոլոգիաների զարգացմանը, այդ ոլորտում սկսնակ ընկերությունների ստեղծմանը և մասնագետների պատրաստմանը<br>Խրախուսել նորարար լուծումների մշակումը և ստարտափերի ստեղծումը, ինչպես նաև համապատասխան աջակցության տրամադրումը նորաստեղծ ընկերություններին<br>Որպես հարթակ ծառայել կիբեռանվտանգության ոլորտում պատահարների բացահայտման և վերլուծման համար, ինչպես նաև համապատասխան լուծումների մշակման համար<br>Նպաստել Հայաստանում ազգային կիբեռանվտանգության ռազմավարության, ինչպես նաև համապատասխան քաղաքականությունների և ստանդարտների մշակմանը<br>Ապահովել պաշտպանական համակարգում բարձր տեխնոլոգիական լուծումների ստեղծումը և դրանց կիրառումը՝ առավել արդյունավետ օգտագործելով զորակոչիկների մասնագիտական կարողությունները պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածում<br>2. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կիբեռանվտանգության, մոբայլ և ամպային տեխնոլոգիաների կլաստերի զարգացում<br>150 նոր աշխատատեղերի ստեղծում (3 տարում)<br>1500 մասնագետի վերապատրաստում՝ մոբայլ, ամպային և կիբեռանվտանգության ոլորտում (3 տարում)<br>40 անվտանգության ոլորտի բարձրակարգ մասնագետների պատրաստում (3 տարում)<br>Ոլորտում 30 սկսնակ ընկերությունների ստեղծում (3 տարում)<br>5 լուծումների մշակում պաշտպանական ոլորտում (3 տարում)<br>10 լուծումների մշակում ամպային և մոբայլ տեխնոլոգիաների ոլորտում (3 տարում)<br>Կիբեռանվտանգության գլոբալ ինդեքսի բարելավում<br>Կիբեռանվտանգության ռազմավարության մշակում |

| | |
|---|---|
| 23. | **«Կիբեռանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կիբեռանվտանգության ռազմավարության նպատակն է կիբեռանվտանգության ոլորտի հիմնական հասկացությունների, պետության պատասխանատվության շրջանակի, խնդիրների և իրավասությունների, կարևոր ենթակառուցվածքների դասակարգումը, այդ ենթակառուցվածքներին ուղղված ռիսկերի գնահատման և ենթակառուցվածքների անվտանգության ապահովման նորմերի, պետական մարմիններում տեղեկատվական անվտանգության չափանիշների կիրառումն է:<br><br>2. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կիբեռանվտանգության ռազմավարության հաստատման արդյունքում կսահմանվեն հստակ միջոցառումներ՝ պաշտպանված համակարգ ներդնելու և գործարկելու համար: |
| 24. | **«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Տաքսամոտորային փոխադրումները կանոնակարգող օրենսդրական դաշտի վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ծրագրի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ-ի ոլորտ» բաժնի 4-րդ կետի «գ» ենթակետի կատարման ապահովմամբ:<br>2. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենսդրական փաթեթով կվերացվեն տաքսամոտորային փոխադրումները կանոնակարգող օրենսդրական դաշտի առկա բացերը, հավասար մրցակցային պայմաններ կսահմանվեն տաքսու ծառայություններ մատուցող իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև, կվերանայվեն պետական տուրքերը և արտոնագրային վճարը՝ այնպես, որպեսզի բոլորի համար սահմանվեն հավասար պահանջներ, կկանոնակարգվի էլեկտրոնային հարթակներով տաքսու ծառայությունների մատուցման գործընթացը: Տաքսու ծառայություններ մատուցողների համար կստեղծվեն հավասար մրցակցային պայմաններ: |
| | **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** |
| 25. | **«Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի բարեփոխմամբ և կատարելագործմամբ:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դեռևս 2004-2005 թվականների ընթացքում մշակվեցին և հաստատվեցին ՀՀ անտառային ոլորտը կարգավորող և ապագա ուղղությունները նախանշող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի N 38 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը, որտեղ, մասնավորապես, նախանշվում են ՀՀ անտառի ազգային քաղաքականության |

| | |
|---|---|
| | ուղղությունները, ռազմավարական նպատակները և միջոցառումները, նշված որոշմամբ հաստատվել է նաև ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը, ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1232-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ անտառի ազգային ծրագիրը և դրանից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը, 2005 թվականին հաստատվել է Հայաստանի Հանրապետության անտառային նոր օրենսգիրքը, մինչև 2016 թվականն ընդունվել են ոլորտը կարգավորող շուրջ երկու տասնյակ իրավական նորմեր:<br>Ներկայումս ՀՀ անտառի ազգային ծրագրի, ռազմավարության վերանայման և քաղաքականության ուղղությունների հստակեցման անհրաժեշտություն է առաջացել: Դրանց վերաիմաստավորման, միջազգային կազմակերպություններում ընդունված կայուն անտառակառավարման ուղենիշներին և քաղաքականությանը համընթաց գործողություններ իրականացնելու առումով գործնական հարթակ կարող է հանդիսանալ ներկայացվող իրավական ակտի ընդունումը:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգի հաստատում<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման ոլորտի բարեփոխումներ<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝<br>1) կուղենշվեն անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի բարեփոխման և կատարելագործման ճանապարհները.<br>2) բարենպաստ պայմաններ կստեղծվեն անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վիճակի բարելավման համար.<br>3) կառավարման համակարգի բարեփոխման արդյունքում վերակազմակերպված կառուցվածքային միավորը (կառավարման մարմինը) կկարողանա լուծել անտառային ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի առջև դրված խնդիրները: |
| 26. | **«Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գյուղատնտեսության առանձնահատկություններով և հանրապետության բնատնտեսական գործոններով պայմանավորված՝ ոլորտը պարբերաբար կրում է էական վնասներ, որոնք խաթարում են գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարողների հետագա գործունեությունը: Այդ վնասների հետևանքների մեղմումը պահանջում է այս բնագավառում քաղաքականության հիմնավորման ուղղությունների հստակեցում և դրան համարժեք միջոցառումների իրականացում: Հետևաբար, անհրաժեշտություն է բնակլիմայական աղետներից հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգային մոտեցումների մշակումը: Վերջինս բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի պահանջներից: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման համակարգը դեռևս անկատար է, և այս բնագավառում միջոցառումների իրականացումը դեռևս համակարգված չէ: Հետևաբար, խնդիր է այս բնագավառում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման բնագավառում հստակ քաղաքականության կիրառման նախադրյալների ստեղծման նպատակով առաջարկվում է մշակել բնակլիմայական աղետներից (երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն) գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման բնագավառում քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանում<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի կիրառման դեպքում կհստակեցվեն բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման քաղաքականության հիմնական ուղղությունները: Դա հիմք կհանդիսանա տվյալ բնագավառում նպատակային ծրագրերի մշակման և իրականացման համար: Նախադրյալներ կստեղծվեն բնակլիմայական աղետներից ռիսկերի նվազեցման համար: |
| 27. | **«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջով:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պեստիցիդների և ագրոքիմիկատների վերաբերյալ ստուգաթերթեր չլինելու պատճառով հնարավոր չէ իրականացնել ստուգումներ, ինչի արդյունքում պետական վերահսկողությունն իրականացվում է ոչ լիարժեք: Ստուգաթերթերի պահանջը սահմանված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասով:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպություններում ստուգում իրականացնելու համար մշակել ստուգաթերթ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտան- |

| | |
|---|---|
| | գության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման միջոցով, որը թույլ կտա վաճառք իրականացնող կազմակերպություններում կատարել ստուգումներ:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կսահմանվեն պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները և ստուգման համար պահանջվող հարցեր:<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումը թույլ կտա պատշաճ կերպով վերահսկողություն իրականացնել պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպություններում, ինչը հնարավորություն կտա իրականացնելու հստակ և հասցեական խնդիրների լուծմանն ուղղված թիրախային ստուգումներ: |
| 28. | **«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետի պահանջով:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են հայկական կոնյակի վարկանիշի բարձրացման միջոցառումներ, որոնք արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է սահմանել գինեգործական արտադրանքի մակնշում՝ ըստ իզոտոպային բաղադրության փորձաքննության արդյունքների:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որի արդյունքում կսահմանվեն գինեգործական արտադրանքի մակնշման նոր պահանջներ:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտով կարգավորվում է գինեգործական արտադրանքի մակնշման պահանջը՝ ըստ իզոտոպային բաղադրության փորձաքննության արդյունքների:<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի նախագծի ընդունմամբ կսահմանվի գինեգործական արտադրանքի՝ ըստ իզոտոպային բաղադրության փորձաքննության արդյունքների մակնշման պահանջ: |
| 29. | **«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի 1-ին կետի «ա» ենթակետի պահանջով:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսվում է մշակել սննդամթերքի անվտանգության բարձրացման նպատակով սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման վերաբերյալ հայեցակարգ: Հաստատված հայեցակարգում սահմանված՝ համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման մեխանիզմների իրագործումը կառաջացնի գործող կարգավորումների փոփոխման՝ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվում են սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, հետևաբար, սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգային գործողությունները կհանգեցնեն օրենքի փոփոխությունների:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել հայեցակարգից բխող փոփոխություններ:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտով կսահմանվեն սննդամթերքի անվտանգության ապահովման առավել արդյունավետ համակարգ և գործիքակազմ:<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունումը թույլ կտա ապահովել հայեցակարգով սահմանված մեխանիզմների իրագործումը: |
| 30. | **«Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության բնագավառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածի պահանջով: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է առանց ռիսկայնությունը որոշող չափանիշների, որի պատճառով վերահսկողական գործողությունները համաչափ և հստակ համակարգված չեն: Նախագծի ընդունմամբ ակնկալվում են անասնաբուժության բնագավառում ստուգումների բարելավում, պարզեցում, թափանցիկություն, ռեսուրսների խնայում, ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծում, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել արդյունավետ և հետևողական վերահսկողություն:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է մշակել անասնաբուժության բնագավառում ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն, որով կսահմանվի անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության որոշման չափանիշները:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Ռիսկայնությունը որոշող չափանիշների սահմանումը նպատակ է հետապնդում դրանց գնահատման համապատասխան տնտեսավարող սուբյեկտներին դասակարգել երեք խմբի՝ բարձր, միջին, ցածր ռիսկայնության:<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է անասնաբուժության բնագավառում արդյունավետ և հետևողական վերահսկողական գործողությունների համապատասխան մակարդակի ապահովում, որը չի խոչընդոտի անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը: |
| 31. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջով:<br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ստուգաթերթերի բացակայության պատճառով ստուգումներն իրականացվում են հանրային սննդի կազմակեր- |

| | |
|---|---|
| | պությունների համար նախատեսված ստուգաթերթերով, ինչի արդյունքում պետական վերահսկողություն իրականացվում է ոչ լիարժեք, ստուգաթերթերի պահանջը սահմանված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասով:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է մշակել հանրակրթական ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ստուգման համար անհրաժեշտ ստուգաթերթեր՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի միջոցով:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կսահմանվեն նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում պատրաստվող ու իրացվող սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող՝ ստուգման համար պահանջվող հարցեր:<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումը թույլ կտա պատշաճ կերպով վերահսկողություն իրականացնել նշված կազմակերպություններում՝ կառավարելով սննդամթերքի անվտանգությանն սպառնացող վտանգները և ռիսկերը: |
| 32. | **«Գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշման «Գյուղատնտեսություն» բաժնի 7-րդ կետի «գ» ենթակետի, «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքի (15.07.2008 թ. ՀՕ-135-Ն) 13-րդ, 22-րդ, 29-րդ և 37-րդ հոդվածների 1-ին մասերի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի N 778-Ա որոշմամբ հաստատված՝ «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի 7-րդ կետի պահանջներով:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համակարգում գործող տնտեսավարող սուբյեկտներն այժմ հիմնականում առաջնորդվում են նախկին Խորհրդային Միության տարիներին հաստատված համապատասխան իրավական ակտերով կամ հրահանգներով սահմանված պահանջներով, որոնք այսօր չեն գործում: «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքով, օրենքի շրջանակներում ընդունված որոշ իրավական ակտերով և հայկական կոնյակների ու հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգով |

| | |
|---|---|
| | կանոնակարգված են գինեգործական արտադրանքի շրջանառությանը, մակնշմանը, տեխնոլոգիական որոշ գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև առանձին տեսակի արտադրանքների անվտանգության, զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները, իսկ թույլատրելի գինեգործական մեթոդները, մշակումներն ու նյութերը դեռևս որևէ իրավական ակտով սահմանված չեն:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն որոշման նախագիծը նպատակ ունի սահմանելու թույլատրելի գինեգործական մեթոդները, մշակումներն ու նյութերը: Որոշման նախագծով սահմանվում են խաղողի հումքով գինեգործական արտադրանքին ներկայացվող անվտանգության, զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները, արտադրության ընթացքում կիրառվող թույլատրելի տեխնոլոգիական գործընթացներն ու նյութերը, արտադրությանը, մակնշմանը, փաթեթավորմանը, իրացմանը, օգտահանմանն ու ոչնչացմանը ներկայացվող պահանջները, համապատասխանության հավաստման և նույնականացման ընթացակարգերը: Նախագծում հիմնականում կներառվեն այդ ոլորտներում կիրառվող դասական տեխնոլոգիաներն ու նյութերը, միաժամանակ հաշվի կառնվեն ինչպես Եվրոպական միության երկրներում, այնպես էլ՝ հայկական գինեգործական արտադրանքի իրացման հիմնական շուկայում՝ Ռուսաստանի Դաշնությունում, ԵԱՏՄ-ի և ԱՊՀ-ի այլ երկրներում ընդունված պահանջները:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Գինեգործական արտադրանքի որակի տեղական չափորոշիչների և չափանիշների համապատասխանեցում միջազգային պահանջներին և ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության ամբողջացում<br><br>5. **Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ Հայաստանում արտադրվող գինեգործական արտադրանքի համար կսահմանվեն միասնական՝ միջազգային պրակտիկայում ընդունված անվտանգության, տեխնոլոգիական և որակական պահանջներ, որոնք կնպաստեն արտադրանքի անվտանգության ապահովմանը, արտահանման խթանմանը և սպառողների շահերի պաշտպանությանը: |
| | **Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** |
| 33. | **«Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 2-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն պետք է մշակվեն հանքարդյունաբերության ոլորտում գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումներ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի տնտեսությունը բավական զգայուն է հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների փոփոխությունների նկատմամբ՝ հատկապես դրանց նվազման պարագայում: Քանի որ հանքարդյունաբերող ձեռնարկությունները Հայաստանում խոշոր հարկատուներ են, և նրանց կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող գումարներն ազդեցություն են ունենում ՀՀ պետա- |

| | |
|---|---|
| | կան բյուջեի ձևավորման վրա, ուստի, անհրաժեշտ է մշակել համապատասխան միջոցառումներ՝ մեղմելու համար հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների բացասական ազդեցությունը երկրի տնտեսության վրա։<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով մետաղների միջազգային գների տատանումների ազդեցության զգայունությունը հանրապետության տնտեսության վրա՝ ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծով կսահմանվեն միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում հնարավոր կլինի մեղմել հանքարդյունաբերության ոլորտում տեղի ունեցող գնային տատանումների բացասական ազդեցությունը երկրի տնտեսության վրա։<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումների մշակում<br><br>3. **Միջոցառման կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցության մեղմում |
| 34. | **«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և առնչվող այլ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Օրենքի նախագծի և առնչվող այլ իրավական ակտերի մշակմամբ նպատակ է դրվում գործող օրենսդրական դաշտի կատարելագործման՝ արդյունքում անհրաժեշտ իրավական հիմքեր ապահովելով զբոսաշրջության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության համար համարժեք տեղեկատվական ռեսուրսների հավաքագրման, ինչպես նաև՝ մատուցվող ծառայությունների որակի ու ներդրումային միջավայրի բարելավման համար:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օրենսդրական փաթեթն ուղղվելու է ոլորտում վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավմանն ու այդ նպատակով նաև վարչական ռեգիստրի ներդրմանը, ծառայությունների որակավորման համակարգերի ներդրմանը, գործարար ներդրումային միջավայրի բարելավմանը:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ ու միջազգային համարժեք փորձի ուսումնասիրության հիման վրա օրենսդրական փաթեթի մշակում:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Զբոսաշրջության բնագավառում վարչական ռեգիստրի և ծառայությունների որակավորման համակարգերի ներդրման, գործարար ներդրումային դաշտի բարելավման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում<br><br>5. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող օրենսդրական կարգավորումները հիմք են հանդիսանալու վարչական ռեգիստրի ներդրմանը՝ ի նպաստ զբոսաշրջության ոլորտում վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացման: |

| | |
|---|---|
| 35. | **«Զբոսաշրջային ծառայությունների որակավորման կարգերն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նոր իրողություններին համարժեք զբոսաշրջության դինամիկ զարգացման երաշխավորմանն ուղղված՝ ոլորտի օրենսդրական դաշտի բարելավման նպատակով նախատեսվում է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որի պահանջով կմշակվի «Զբոսաշրջային ծառայությունների որակավորման կարգերն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Վերջինս ուղղվելու է զբոսաշրջային ծառայությունների որակի ամրապնդմանն ու բարձրացմանը, սպառողի՝ զբոսաշրջային ծառայությունների ընտրությանն աջակցելուն, համաշխարհային ու ներքին շուկայում Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի դրական նկարագրի ամրապնդմանն ու շարունակական բարձրացմանը:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Զբոսաշրջության ոլորտի զարգացմանը համընթաց բնագավառում օգտագործվող մի շարք հասկացությունների արդիականացման և հստակեցման, սպառողի իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու և այդպիսով երկրի զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը բարձրացնելու նպատակով ստանդարտների ներդրման և կամավորության սկզբունքով հյուրանոցային տնտեսության օբյեկտների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների, զբոսավարների, ուղեկցորդների, ռեստորանների և զբոսաշրջային ավտոբուսների որակավորման, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորման, ծառայությունների նկատմամբ պահանջների պահպանման մեխանիզմների ապահովման անհրաժեշտություն է առաջանում:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծից բխող կարգերն ու չափանիշները սահմանող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Զբոսաշրջության բնագավառում մատուցվող ծառայությունների որակավորման կարգերի ու չափանիշների սահմանում<br><br>5. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է համարժեք իրավական կարգավորման միջոցով ապահովել զբոսաշրջային ծառայությունների որակի ամրապնդում ու բարձրացում, զբոսաշրջային ծառայությունների ընտրության գործում սպառողին աջակցություն, համաշխարհային ու ներքին շուկայում Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի դրական նկարագրի ամրապնդում ու շարունակական բարձրացում: |
| 36. | **«Ներդրումային ֆոնդ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներդրումների խրախուսման և գործունակ միջավայրի ապահովման նպատակով պետության ակտիվ քաղաքականությամբ և հաշվեկշռված մասնակցությամբ Հայաստանում հնարավոր է ձևավորել պոտենցիալ ներդրողների և մասնավոր հատվածի հետ փոխվստահելի գործընկերություն՝ ուղղված տնտեսության արագ աճող և զարգացման մեծ պոտենցիալ դրսևորող ոլորտներում հեռանկարային ծրագրերի իրականացմանը ֆինանսապես աջակցելուն: Այս նպատակով ՀՀ կառավարության ծրագրով ամրագրվել է պետության կողմից ներդրումային ֆոնդի ձևավորման դրույթը՝ առաջնորդվելով հետագայում այն պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ գործող ֆոնդի վերածելու ակնկալիքով:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանն աջակցության նպատակով ներդրումային ֆոնդի ստեղծման ճանապարհին առաջին քայլով կսահմանվի տեսլականը, որի հիման վրա արդեն կձևավորվի համապատասխան կառույցի գործունեության մոդելը, կմշակվեն կանոնադրական խնդիրները: Կանոնադրական խնդիրները լուծելու նպատակով կսահմանվեն պետական սեփականություն հանդիսացող գույքի միավորներ, և համապատասխան որոշման նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարություն՝ քննարկման:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի կարգավորման առարկան համապատասխան ներդրումային ֆոնդի ստեղծման համար իրավական հիմքերի ապահովումն է:<br><br>5. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կստեղծվի ներդրումային ֆոնդ, որը հետագայում կվերածվի պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ գործող ֆոնդի: |
| 37. | **«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագիրն ամրագրում է «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարության մշակման հանձնառությունը:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս թիրախավորված և համակարգային գործողություններ այս ուղղությամբ բավարար չափով չեն իրականացվել, և անհրաժեշտություն կա ամրագրելու առավել նպատակային քաղաքականություններ՝ համապատասխան միջոցառումներով: |

| | |
|---|---|
| | 3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համաշխարհային զբոսաշրջային շուկայում և քաղաքակրթական-մշակութային քարտեզի վրա Հայաստանի՝ որպես առաջին քրիստոնյա երկրի համբավի ամրապնդման ու կրոնական զբոսաշրջության զարգացման նպատակով նախատեսվում է մասնավոր հատվածի ու միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ համապատասխան ռազմավարության մշակում:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարության նախագիծն ուղղվելու է Հայաստանում կրոնական, ուխտագնացության և միջոցառումային (MICE) զբոսաշրջության զարգացմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ու մրցունակության բարձրացմանը, զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, մշակութային բազմազանությանն ու միջմշակութային երկխոսությանը, աշխարհում հայկական մշակույթը ներկայացնելուն և խթանելուն:<br><br>5. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ հիմքեր կապահովվեն Հայաստանում կրոնական, ուխտագնացության և միջոցառումային զբոսաշրջության զարգացման, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման ու մրցունակության բարձրացման, զբոսաշրջային սեզոնի երկարաձգման, մշակութային բազմազանության ու միջմշակութային երկխոսության, աշխարհում հայկական մշակույթը ներկայացնելու և խթանելու ուղղությամբ ՀՀ կառավարության հաւցեական քաղաքականության իրականացման համար: |
| 38. | **«Որոշակի գումարից ավելի ներդրում կատարած օտարերկրացիներին քաղաքացիություն շնորհելու հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջազգային փորձը վկայում է, որ աշխարհի բազմաթիվ երկրներ, գիտակցելով օտարերկրյա ներդրումների օգուտը և դերն ազգային տնտեսության զարգացման գործում, ձեռնարկում են տարբեր միջոցներ՝ օտարերկրյա ներդրումները խրախուսելու նպատակով: Այդ միջոցները կարող են ներառել ինչպես հարկային արտոնություններ, այնպես էլ՝ հնարավորություն օտարերկրյա ներդրողին և նրա ընտանիքին ապրել այն երկրում, որտեղ նա ներդրում է իրականացրել, և օգտվել տվյալ երկրի քաղաքացիներին շնորհված առավելություններից (օրինակ, ավելի ցածր անհատական հարկեր, անվճար ուսուցման հնարավորություն, սոցիալական երաշխիքներ և այլն): Վերջինս ապահովելու համար բավական լայն տարածում է ստացել «Քաղաքացիություն ներդրումների դիմաց» մոտեցումը: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներդրումների դիմաց քաղաքացիություն շնորհելու ընթացակարգերը տարբեր են տարբեր երկրներում, մեկ միասնական մոդել չկա: Ներկայումս ներդրումների դիմաց քաղաքացիություն շնորհելու ընթացակարգ Հայաստանում առկա չէ:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քաղաքացիությունը ներդրումների դիմաց առաջարկում է բազմաթիվ առավելություններ՝ ինչպես ներդրումն ընդունող երկրի, այնպես էլ՝ օտարերկրյա ներդրողի համար: Եթե դա արդյունքում երկրի համար նշանակում է նոր ներդրումներ և նոր աշխատատեղեր, ապա ներդրողի համար օգուտը, օրինակ, հող գնելու իրավունքի ձեռքբերումն է, այլ երկրներ մուտքի արտոնագրեր ստանալու անհրաժեշտության վերացումը, առանց թույլտվությունների աշխատանքի իրավունքը և այլն: Միջազգային փորձը վկայում է, որ ներդրումների խթանման արդյունավետ գործիք կարող է դառնալ ներդրումների դիմաց քաղաքացիություն շնորհելը:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Հայեցակարգով կկարգավորվեն ներդրումների դիմաց քաղաքացիություն շնորհելու մոտեցում-ները, սկզբունքները, ինչպես նաև պայմաններն ու ընթացակարգը:<br><br>5. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգը կստեղծի որոշակի գումարից ավելի ներդրումներ կատարելու դեպքում օտարերկրյա ներդրողներին ՀՀ քաղաքացիություն շնորհելու իրավական հիմքեր: Հայեցակարգի ընդունմամբ կխրախուսվեն խոշոր օտարերկրյա ներդրումների ներգրավումը և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը, կընդլայնվեն օտարերկրյա ներդրողներին առաջարկվող հնարավորությունները, կստեղծվեն լրացուցիչ երաշխիքներ: |
| 39. | **«Բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Երկրում գործարարների խախտված իրավունքների պաշտպանության, նրանց բողոքների արդյունավետ և անվճար քննության ապահովման նպատակով նախատեսվում է ներդնել գործարարների շահերի պաշտպանության ինստիտուտ: Գործարարների շահերի պաշտպանի ինստիտուտը կնպաստի գործարար միջավայրի բարելավմանն ու կոռուպցիայի կանխարգելմանը, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության բարձրացմանը՝ պետություն-մասնավոր հատված մշտական երկխոսության ապահովման միջոցով: ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ 2018 թվականին բիզնես հաշտարարի ինստիտուտի գործարկման նպատակով անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական դաշտի ապահովում, ինչի նպատակով կմշակվի հայեցակարգի նախագիծը: |

**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս բիզնես շահերի պաշտպանությամբ առավել ակտիվորեն զբաղվում են բիզնես ասոցիացիաները, միությունները և այլ հասարակական կառույցներ, որոնց հնարավորությունները խիստ սահմանափակ են, և որոնք շատ դեպքերում օժտված չեն բիզնեսի կողմից ներկայացված բողոքները քննելու, խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտ ներուժով: Բիզնես շահերի պաշտպանության առավել մեծ կարիք ունեն հատկապես իրենց շահերը դատական կարգով պաշտպանելու համար համապատասխան ռեսուրսներ չունեցող փոքր բիզնեսի ներկայացուցիչները: Գործարար համայնքի և բիզնես շահերը ներկայացնող հասարակական կառույցների համար նույնպես պահանջ կա այնպիսի կառույցի ձևավորման, որը կամուրջ կհանդիսանա կառավարության և բիզնեսի միջև, կգտնի երկխոսության ճանապարհներ, կարձագանքի պետական մարմինների և բիզնեսի միջև առաջացած խնդիրներին՝ առավել օպերատիվ և արդյունավետ առաջարկություններ ներկայացնելով կառավարություն:

**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բիզնես հաշտարարի ինստիտուտի ձևավորման ու կայացման համար ներկայումս բացակայում է համապատասխան օրենսդրական դաշտը: Ինստիտուտի ներդրման նպատակով հայեցակարգի մշակմամբ կսահմանվեն հետագայում համապատասխան օրենքի նախագծի հիմնական հասկացությունները ու կարգավորման շրջանակը:

**4. Կարգավորման առարկան**

Բիզնես հաշտարարի ինստիտուտի գործարկումն ապահովող հայեցակարգային դրույթների ամրագրում

**5. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**

Բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման հայեցակարգի հաստատմամբ ակնկալվում է ձևավորել 2018 թվականին ինստիտուտի գործարկման համար անհրաժեշտ տեսլական և համապատասխան փոխհարաբերությունների կարգավորման բացահայտված մոտեցումներ: Բիզնես հաշտարարը, որպես ոլորտի հիմնական համակարգող, կապահովի համագործակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի, առկա բողոքարկման հանձնաժողովների, ՀՀ վարչապետին կից գործող խորհուրդների միջև՝ դրանով իսկ նպաստելով բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված ջանքերի համախմբմանը:

40.

**«Զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների (լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, էկոտուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու և այլն)՝ արդեն իսկ գործող մասնավոր նախաձեռնություններին աջակցության և զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Ծրագրի մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից:

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում զբոսաշրջությունը զարգանում և տնտեսությունում գեներացված համախառն ներքին արդյունքի աճին իր նպաստն է ավելացնում բավական դինամիկ տեմպերով: Այդուհանդերձ, զբոսաշրջային արդյունքի ձևավորման գործում և դրա միջոցով զբոսաշրջային այցելությունների թվի աճի տեսանկյունից դեռևս չիրացված մեծ ներուժ կա: Դեռևս լիարժեք չեն օգտագործվել այն հնարավորությունները, որոնք հայկական զբոսաշրջային արդյունքն առավել մրցունակ կդարձնեն տարածաշրջանում:<br><br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված ներուժը լիարժեք բացահայտելու և առկա հնարավորություններն օգտագործելու առումով առաջարկվում է նպատակային ծրագիր իրականացնել առանձնահատուկ զբոսաշրջային նոր, այն է՝ լեռնագնացության, հեծանվորդության, էքստրեմալ տուրիզմի, էկոտուրիզմի, առողջապահական տուրիզմի, կրոնական, գինու և այլ ուղղություններով: Ընդ որում, ծրագիրը հիմնվելու է արդեն իսկ մեկնարկած մասնավոր նախաձեռնությունների վրա, ինչը լուրջ հաջողություններ գրանցելու ակնկալիքներ է առաջացնում:<br><br>**4. Կարգավորման առարկան**<br>Ծրագիրն ուղղվելու է լեռնագնացության, հեծանվորդության, էքստրեմալ տուրիզմի, էկոտուրիզմի, առողջապահական տուրիզմի, կրոնական, գինու և այլ ուղղություններով մասնավոր նախաձեռնություններին աջակցության գործողությունների իրականացմանը և նշված ուղղություններով շոշափելի զարգացումների ապահովմանը:<br><br>**5. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի արդյունավետ իրականացման արդյունքում ակնկալվում է հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում, զբոսաշրջության ապակենտրոնացում դեպի ՀՀ մարզեր և Արցախ, ներգնա և ներքին զբոսաշրջային այցելությունների թվի աճ: |
| 41. | **«Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից:<br><br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի, որպես զբոսաշրջային գրավիչ վայրի, ակնհայտ առանձնահատկություններից և |

| | |
|---|---|
| | համեմատական առավելություններից մեկը, թերևս, պատմամշակութային և բնության հուշարձանների առատությունն է: Զբոսաշրջային գրավչության առումով դրանք նշանակալի հոսքեր ներգրավելու մեծ ներուժ ունեն:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ակնհայտորեն, դեռևս լիարժեք չիրացված ներուժն այս ուղղությամբ պահանջում է նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ մեկտեղելով ռեսուրսները և ջանքերը ոչ միայն զբոսաշրջության զարգացման, այլ նաև՝ բնության և մշակութային արժեքների պահպանության նպատակով:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>Ծրագիրը թիրախավորում է առնվազն 20 պատմամշակութային հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ, որոնք դեռևս ներառված չեն զբոսաշրջային երթուղիներում, քանի որ հագեցված չեն և չեն ներառում զբոսաշրջային վայր դառնալու հավակնության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ:<br><br>5. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի արդյունավետ իրականացման արդյունքում ակնկալվում է նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում, զբոսաշրջության ապակենտրոնացում դեպի ՀՀ մարզեր և Արցախ, պատմամշակութային ժառանգության պահպանություն, զարգացում և դրանք պատշաճ մակարդակով ներկայացնելն ու խթանելը, ներգնա և ներքին զբոսաշրջային այցելությունների թվի աճ, նոր աշխատատեղերի ստեղծում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | |
| 42. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետական կառավարման մարմինների գործունեության ոլորտներում որոշումներ ընդունելու իրավասությունները տվյալ մարմիններին վերապահելու քաղաքականությանը համահունչ՝ առաջարկվում է նախապես սահմանված՝ որոշակի արժեքային մեծություն ունեցող պետական անշարժ գույքի օտարման գործընթացն իրականացնելու իրավասությունը վերապահել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, որի արդյունքում խիստ կկրճատվի ՀՀ կառավարության անհատական որոշումների թիվը, ինչպես նաև կնվազի ՀՀ կառավարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ծանրաբեռնվածությունը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշմամբ հաստատված գործող կարգի համաձայն՝ պետական անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման մասին որոշումներն ընդունվում են ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ներկայացմամբ: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է որոշակի արժեքային մեծություն ունեցող և որոշակի տարածագնահատման գոտիներում գտնվող պետական անշարժ գույքի օտարման գործընթացն իրականացնելու իրավասությունը վերապահել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, որի արդյունքում կպարզեցվի օտարման գործընթացի վարչարարությունը, կկրճատվեն գործարքների կնքման ժամկետները, ինչպես նաև խիստ կկրճատվի ՀՀ կառավարության անհատական որոշումների թիվը, կնվազի ՀՀ կառավարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ծանրաբեռնվածությունը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական անշարժ գույքի օտարման գործընթացի վարչարարության պարզեցում, որոշումների ընդունման, ուստի և՝ գործարքների կնքման ժամկետների կրճատում<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում նախատեսվում է տարածագնահատման 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում գտնվող և 50 մլն դրամ ավելի գնահատված արժեք ունեցող պետական անշարժ գույքի օտարման մասին որոշման ընդունում ՀՀ կառավարության կողմից, իսկ տարածագնահատման 4-րդ և ավելի բարձր գոտիներում գտնվող և մինչև 50 մլն դրամ գնահատված արժեքով պետական անշարժ գույքի օտարման մասին որոշում ընդունվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից (վարչության պետի հրամանով), որի արդյունքում կպարզեցվի օտարման գործընթացի վարչարարությունը, կկրճատվեն գործարքների կնքման ժամկետները, ինչպես նաև խիստ կկրճատվի ՀՀ կառավարության անհատական որոշումների թիվը, կկարգավորվի ոչ լիկվիդային անշարժ գույքի վաճառքը: Արդյունքում կավելանան ՀՀ պետական բյուջեի մուտքերը: |
| 43. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2001 **թվականի փետրվարի** 22-ի N 125 **որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկներին, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի (տարածքի)՝ վարձակալության տրամադրման ընթացակարգերի պարզեցման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը (տարածքները) վարձակալության են տրամադրվում աճուրդի, մրցույթի կազմակերպմամբ: Առաջարկում ենք պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի՝ վարձակալության տրամադրման համար նախատեսել ուղղակի ձև՝ սահմանելով համապատասխան դրույթներ: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Առաջարկվում է պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը մինչև մեկ տարի ժամկետով աճուրդով տրամադրելու դեպքում գույքի վարձակալության մասին պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո, եթե տվյալ գույքի վարձակալը վարձակալական պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարել է բարեխղճորեն և սահմանված ժամկետում, ապա վարձակալը, համաձայնեցնելով կազմակերպության հետ, դիմում է վարչություն՝ վարձակալական պայմանագրով նախատեսված պայմաններով գույքը մինչև մեկ տարի ժամկետով իրեն ուղղակի ձևով վարձակալության տրամադրելու համար, որը կհանգեցնի վարձակալության տրամադրման մասին որոշումներ ընդունելու վարչարարության պարզեցմանը՝ բացառելով ավելորդ համաձայնությունների ձեռքբերումը և դրանց համար անհրաժեշտ լրացուցիչ ժամանակի կորուստը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական գույքի՝ մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացի վարչարարության պարզեցում, որոշումների ընդունման, ուստի, բացառելով ավելորդ համաձայնությունները, և գործարքների կնքման ժամկետների կրճատում<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում կպարզեցվեն պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրելու գործընթացի վարչարարությունը, կազմակերպությունների կողմից ավելորդ ծախսերի կատարումը, կկրճատվեն որոշումների ընդունման ժամկետները, կավելանան ՊՈԱԿ-ների եկամուտները: |
| 44. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է պետական գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացի պարզեցման, աշխատանքների արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացման, ինչպես նաև վարչական խոչընդոտները վերացնելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող որոշմամբ պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության է տրամադրվում աճուրդով, մրցույթով և ուղղակի ձևով՝ որոշմամբ հաստատված կարգերին համապատասխան: Գույքը վարձակալության տրամադրելու մասին որոշումներն ընդունվում են ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ներկայացմամբ, որը հանգեցնում է գործընթացի վարչարարության ձգձգման և լրացուցիչ ժամանակի կորստի:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրման դեպքում, եթե վարձակալը վարձակալական պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարել է բարեխղճորեն և |

| | |
|---|---|
| | սահմանված ժամկետում, ինչպես նաև կատարել է գույքի բարելավման համար համապատասխան ներդրումներ, ապա տվյալ գույքը նախկին վարձակալին մինչև երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրվի ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից (վարչության պետի հրամանով), իսկ երեք տարվանից ավելի ժամկետով՝ ՀՀ կառավարության որոշման համաձայն, որը կհանգեցնի վարձակալության տրամադրելու գործընթացի վարչարարության պարզեցման, ժամկետների կրճատման:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրելու գործընթացի վարչարարության պարզեցում, ժամկետների կրճատում:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում կպարզեցվի գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրելու գործընթացը, աշխատանքների արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացման արդյունքում կավելանան ՀՀ պետական բյուջեի մուտքերը և ըստ վարձակալական պայմանագրերի կապահովեն ներդրումների իրականացումը: |
| 45. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության որոշումներով լուծարվող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) անշարժ գույքի՝ հրապարակային սակարկություններով վաճառքի գործընթացի պարզեցման, աշխատանքներն արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող որոշմամբ լուծարման հանձնաժողովն իրականացնում է կազմակերպության գույքի շուկայական գնահատում: Կազմակերպության գույքն աճուրդով վաճառքի ներկայացվելու դեպքում մեկնարկային գին է ընդունվում գնահատված շուկայական արժեքը (100 տոկոս): Գնահատված արժեքի չափով անշարժ գույքը չվաճառվելու դեպքում գույքի վաճառքի գինը կարող է իջեցվել միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ, այսինքն՝ ամեն անգամ յուրաքանչյուր լուծարվող կազմակերպության անշարժ գույքի վաճառքի գինը 100 տոկոսից իջեցնելու համար պետք է մշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Քանի որ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու գործընթացը ժամանակատար է, արդյունքում՝ անհարկի ձգձգվում է տվյալ կազմակերպության լուծարման գործընթացը, և ավելանում են պարտավորությունները:<br>Լուծարման գործընթացի պարզեցման, աշխատանքներն արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացնելու նպատակով առաջարկվում է լուծարվող կազմակերպությունների անշարժ գույքը գնահատված շուկայական արժեքից ցածր (բայց ոչ ավելի, քան անշարժ գույքի գնահատված արժեքի մինչև 50 տոկոսի չափով) մեկնարկային գնով վաճառքի ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի |

| | |
|---|---|
| | համաձայնությամբ, ինչը կնպաստի ՀՀ կառավարության որոշումների թվի կրճատմանը և սպասարկման որակի բարձրացմանը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Լուծարվող կազմակերպությունների անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառքի ներկայացնելու գործընթացի պարզեցման, աշխատանքներն արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացնելու նպատակով առաջարկվում է լուծարվող կազմակերպությունների անշարժ գույքը գնահատված շուկայական արժեքից ցածր (բայց ոչ ավելի, քան անշարժ գույքի գնահատված արժեքի մինչև 50 տոկոսի չափով) մեկնարկային գնով վաճառքի ներկայացնել՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի համաձայ-նությամբ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Լուծարվող կազմակերպությունների անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառքի ներկայացնելու գործընթացի պարզեցում, ժամկետների կրճատում և սպասարկման որակի բարձրացում<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում կպարզեցվի լուծարվող կազմակերպությունների անշարժ գույքի վաճառքի գործընթացը, կկրճատվեն որոշումների ընդունման ժամկետները, արդյունքում՝ լուծար-ման գործընթացն անհարկի չի ձգձգվի, իսկ լուծարվող կազմակերպության պարտավորու-թյունները չեն աճի: |
| 46. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է որոշմամբ սահմանված կարգով նվիրատվության առաջարկվող բնակելի տարածքների նվիրատվության գործընթացի պարզեցման, աշխատանքների արագ, օպերատիվ և արդյունավետ իրականացման, ինչպես նաև բնակիչների սպասարկման որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող որոշմամբ պետական կառավարչական հիմնարկներին ամրացված բնակելի տարածքները նվիրատվությամբ են տրամադրվում՝ առանձին-առանձին կազմվող և ՀՀ կառա-վարության քննարկմանը ներկայացվող ՀՀ կառավարության որոշումների հիման վրա: Մինչդեռ բնակելի տարածքները նվիրատվությամբ ստանալու իրավունք ունեցող անձանց կողմից ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշմամբ: Արդյունքում՝ անհարկի ծանրաբեռնվում է ՀՀ կառա-վարության գործունեությունը, ինչպես նաև ձգձգվում է առանց այն էլ ՀՀ կառավարության որոշմամբ իրավունք ունեցող անձանց՝ իրենց զբաղեցրած բնակելի տարածքները նվիրելու գործընթացը:<br>Որոշ դեպքերում՝ այդպիսի զարգացումները դժգոհություն են առաջացնում բնակչության շրջանում: |

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Որոշման մեջ կատարվող փոփոխությամբ առաջարկվում է նվիրատվության ենթակա՝ պետական կառավարչական հիմնարկներին ամրացված հանրակացարանային բնակելի տարածք-ների ցանկը հաստատել ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ նվիրատվության գործընթացը կանոնակարգել և իրականացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից: Դրա շնորհիվ էականորեն կարգավորվի նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը, կվերանան անհարկի խոչընդոտներն ու արմատապես կբարելավվի սպասարկման որակը: Կստեղծվեն բոլոր նախադրյալները ՀՀ օրենսդրության պահանջները բավարարող ՀՀ քաղաքացիների համար հնարավորինս կարճ ժամանակա-հատվածում ավարտելու տարիներով չլուծվող նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը:

**2. Կարգավորման առարկան**

Նվիրատվության ենթակա՝ պետական կառավարչական հիմնարկներին ամրացված հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության գործընթացի պարզեցում, ժամկետների կրճատում և բնակչության սպասարկման որակի բարձրացում

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Որոշման ընդունման դեպքում կպարզեցվի նվիրատվության ենթակա՝ պետական կառա-վարչական հիմնարկներին ամրացված հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության գործընթացի վարչարարությունը, էականորեն կարգավորվի նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը, կվերանան անհարկի խոչընդոտներն ու արմատապես կբարելավվի սպասարկման որակը: Կստեղծվեն բոլոր նախադրյալները ՀՀ օրենսդրության պահանջները բավարարող ՀՀ քաղաքացիների համար հնարավորինս կարճ ժամանակա-հատվածում ավարտելու տարիներով չլուծվող նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**

47. **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշման ընդունումը հնարա-վորություն կտա քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի արդյունավետությունն ապահովելու և համապատասխանեցնելու Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) N 17 «Անվտանգություն» հավելվածով և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթով սահմանված չափորոշիչներին:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» N 1307-Ն որոշման վերջին լրացումներն ու փոփոխությունները

| | |
|---|---|
| | կատարվել են ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի N 608-Ն որոշմամբ, և այն ամբողջովին համապատասխանում էր 2011 թ. ԻԿԱՕ-ի կողմից N 17 «Անվտանգություն» հավելվածում կատարված լրացումներին ու փոփոխություններին և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի 12-րդ խմբագրության պահանջներին:<br>2016 թ. ընթացքում (փետրվարին) ԵԿԱԿ-ի կողմից նոր՝ 13-րդ խմբագրությամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել Եվրամիության կողմից «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթում, սահմանվել են նոր չափորոշիչներ՝ կապված ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության, անկարգապահ ուղևորների հետ վարվելու կարգի, կիբեռանվտանգության և ավիացիոն անվտանգության ապահովման նպատակով կիրառվող տեխնիկական սարքավորումների ներդրման հետ:<br>Նշված լրացումների և փոփոխությունների կիրառման ուշացումը կարող է ազդել ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքների որակի վրա, և այսօր ավիացիոն անվտանգության առումով նշված փոփոխությունների ու լրացումների ներդրումն անհրաժեշտ է:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կտա համապատասխանեցնելու Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ԻԿԱՕ) և Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) չափորոշիչներին և ավելի բարձրացնել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում կիրառվող ավիացիոն անվտանգության ապահովման միջոցառումների մակարդակը:<br><br>4. **Կարգավորման նպատակը, բնույթը**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշման ընդունումը հնարավորություն կտա ուսումնասիրելու և գնահատելու Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ներդրված ավիացիոն անվտանգության միջոցառումների արդյունավետության որակը, ապահովելու կիրառվող տեխնիկական սարքավորումների, օդային երթևեկության կառավարման և ուղևորների հաշվառման ծրագրային համակարգերի անվտանգությունը՝ կողմնակի մուտքերից, բարձրացնելու ուղևորների զննման ընթացակարգերի մակարդակը, ինչպես նաև համապատասխանեցնելու ՀՀ քաղաքացիական ավիացիայի համակարգում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումները Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) N 17 «Անվտանգություն» հավելվածով և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթով սահմանված նոր չափորոշիչներին:<br><br>**4. Ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունման դեպքում կիրականացվեն ավիացիոն անվտանգության ոլորտում որակի հսկողության միջոցառումներ՝ ավելի բարձր մակարդակի հասցնելով օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության աշխատանքների, օդային երթևեկության կառավարման և ուղևորների հաշվառման ծրագրային համակարգերի անվտանգության ապահովումը: |
| 48. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2010 **թվականի հունիսի** 17-**ի** N 843-**Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի «Քաղաքացիական ավիացիայի օդանավերով ուղևորների կողմից զենքի և փամփուշտների փոխադրման |

կանոնները հաստատելու մասին» N 843-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից և դեպի Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների օդանավակայաններից ուղևորների կողմից զենքի փոխադրման աշխատանքների կանոնակարգման անհրաժեշտությամբ:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի «Քաղաքացիական ավիացիայի օդանավերով ուղևորների կողմից զենքի և փամփուշտների փոխադրման կանոնները հաստատելու մասին» N 843-Ն որոշումն ամբողջովին համապատասխանում էր ԻԿԱՕ-ի N 17 «Անվտանգություն» հավելվածում կատարված լրացումներին ու փոփոխություններին և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի պահանջներին, սակայն Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո ԵՏՄ-ի երկրներ ուղևորների կողմից արտահանվող և ԵՏՄ-ի երկրներից ներկրվող զենքերը մաքսային ձևակերպում չեն ստանում, և օդանավով զենքի փոխադրման աշխատանքների կանոնակարգման կարիք է առաջացել:

3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության բնագավառում իրականացվող քաղաքականության նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումների համապատասխանությունը ԻԿԱՕ-ի և ԵԿԱԿ-ի չափորոշիչներին, ինչպես նաև՝ այլ միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին: Այդ նպատակով ԻԿԱՕ-ի և ԵԿԱԿ-ի կողմից նոր ընդունված չափորոշիչները և այլ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները ներառվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության աշխատանքները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերում և կիրառվել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում՝ ապահովելով ավիացիոն անվտանգության աշխատանքների անհրաժեշտ մակարդակ:

4. **Կարգավորման նպատակը, բնույթը**

Նշված լրացումների և փոփոխությունների ընդունումը հնարավորություն կտա կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից և դեպի Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների օդանավակայաններից ուղևորների կողմից զենքի փոխադրման աշխատանքները:

5. **Ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունման դեպքում կհստակեցվեն Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից և դեպի Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների օդանավակայաններից ուղևորների կողմից զենքի փոխադրման աշխատանքները և օդանավով զենքի փոխադրման դեպքում ուղևորների սպասարկման ծառայությունների գործառույթները, ինչպես նաև այն կնպաստի օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը:

49.

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1005-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի «Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» N 1005-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է օտարերկրյա օդանավ շահագործողներին կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու ընթացակարգի արդիականացման և պարզեցման անհրաժեշտությամբ:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Ներկայումս օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների ստացման մասին հայտերը թղթային տարբերակով ներկայացվում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, որից հետո հայտը ներկայացվում է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ՝ կարծիքի, և վերջինիս եզրակացության հիման վրա նախարարության կողմից տրվում է թույլտվություն: ՀՀ-ում գործող թույլտվություններ տալու համակարգի ներդրման արդյունքում ոլորտի մասնակիցների, մասնավորապես, մասնավոր հատվածի կողմից մշտապես արտահայտվում են գործողությունների անորոշության հետ կապված բողոքներ, ինչպես նաև առաջանում են մի շարք բարդություններ՝ երկու տարբեր մարմինների կողմից մեկ ոլորտի կարգավորման ընթացքում, ինչն արտահայտվում է ընթացակարգային ձգձգումներով:

Գործող ընթացակարգերի համաձայն միևնույն փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է երկու տարբեր պետական կառավարման լիազորված մարմիններ, ինչի արդյունքում երկու տարբեր պետական կառավարման լիազորված մարմինների կողմից ավիաընկերություններին ներկայացվում են տարբեր պահանջներ, առաջանում են փաստաթղթերի լրացուցիչ շրջանառությամբ պայմանավորված ընթացակարգային լուրջ ձգձգումներ և մասնավոր հատվածի կողմից դժգոհություններ:

**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օդային փոխադրումների կարգավորման ոլորտում խնդրի լուծման նպատակով նախատեսվում է փոփոխություններ կատարել թույլտվությունների տրամադրման համապատասխան կարգերում, որոնց արդյունքում կրճատվում և նվազագույնի է հասցվում ավիաընկերությունների կողմից թույլտվությունների ստացման համար ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը, ներդրվում

| | |
|---|---|
| | է հայտեր ներկայացնելու «մեկ պատուհանի» սկզբունքը, բացի թղթային տարբերակից՝ նախատեսվում է նաև հայտերը ներկայացնելու և թույլտվությունների տրամադրման առցանց (online) համակարգի ներդնում, ինչը նպաստում է հայտերը ներկայացնելու կարգի պարզեցմանը, հստակեցմանը, մասնավոր հատվածի ներկայացուցիչների ժամանակի ու միջոցների խնայմանը և, ի վերջո, վարչարարական բեռի թեթևացմանը:<br><br>4. **Կարգավորման նպատակը, բնույթը**<br>Նոր առցանց համակարգի ներդնումը կանխում է ընթացակարգային ձգձգումների հավանականությունը, իսկ ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը հասցվում է նվազագույնի:<br>Առաջարկվող փոփոխությունները քննարկվել են նաև մի շարք ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնք դրական են արձագանքել հնարավոր նոր ընթացակարգի ներդրմանը:<br><br>5. **Ակնկալվող արդյունքը**<br>Որոշումների ընդունման արդյունքում ակնկալվում է թույլտվություններ տալու գործող ընթացակարգի արդիականացում, պարզեցում, հայտերը ներկայացնելու և թույլտվությունների տրամադրման առցանց համակարգի և «մեկ պատուհանի» սկզբունքի ներդնում: |
| 50. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» N 1006-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է տեղական օդանավ շահագործողներին երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու ընթացակարգի արդիականացման և պարզեցման անհրաժեշտությամբ:<br><br>2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>Ներկայումս տեղական օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների ստացման մասին հայտերը թղթային տարբերակով ներկայացվում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, որից հետո հայտը ներկայացվում է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ՝ կարծիքի, և վերջինիս եզրակացության հիման վրա նախարարության կողմից տրվում է թույլտվություն: ՀՀ-ում գործող թույլտվություններ տալու |

| | |
|---|---|
| | համակարգի ներդրման արդյունքում ոլորտի մասնակիցների, մասնավորապես, մասնավոր հատվածի կողմից մշտապես արտահայտվում են գործողությունների անորոշության հետ կապված բողոքներ, ինչպես նաև առաջանում են մի շարք բարդություններ՝ երկու տարբեր մարմինների կողմից մեկ ոլորտի կարգավորման ընթացքում, ինչն արտահայտվում է ընթացակարգային ձգձգումներով:<br>Գործող ընթացակարգերի համաձայն միևնույն փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է երկու տարբեր պետական կառավարման լիազորված մարմիններ, ինչի արդյունքում երկու տարբեր պետական կառավարման լիազորված մարմինների կողմից ավիաընկերություններին ներկայացվում են տարբեր պահանջներ, առաջանում են փաստաթղթերի լրացուցիչ շրջանառությամբ պայմանավորված ընթացակարգային լուրջ ձգձգումներ և մասնավոր հատվածի կողմից դժգոհություններ:<br><br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օդային փոխադրումների կարգավորման ոլորտում խնդրի լուծման նպատակով նախատեսվում է փոփոխություններ կատարել թույլտվությունների տրամադրման համապատասխան կարգերում, որոնց արդյունքում կրճատվում և նվազագույնի է հասցվում ավիաընկերությունների կողմից թույլտվությունների ստացման համար ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը, ներդրվում է հայտեր ներկայացնելու «մեկ պատուհանի» սկզբունքը, բացի թղթային տարբերակից, նախատեսվում է նաև հայտերը ներկայացնելու և թույլտվությունների տրամադրման առցանց (online) համակարգի ներդնում, ինչը նպաստում է հայտեր ներկայացնելու կարգի պարզեցմանը, հստակեցմանը, մասնավոր հատվածի ներկայացուցիչների ժամանակի ու միջոցների խնայմանը և, ի վերջո, վարչարարական բեռի թեթևացմանը:<br><br>**4. Կարգավորման նպատակը, բնույթը**<br>Նոր առցանց համակարգի ներդնումը կանխում է ընթացակարգային ձգձգումների հավանականությունը, իսկ ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը հասցվում է նվազագույնի:<br>Առաջարկվող փոփոխությունները քննարկվել են նաև մի շարք ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնք դրական են արձագանքել հնարավոր նոր ընթացակարգի ներդրմանը:<br><br>**5. Ակնկալվող արդյունքը**<br>Որոշումների ընդունման արդյունքում ակնկալվում է թույլտվություններ տալու գործող ընթացակարգի արդիականացում, պարզեցում, հայտեր ներկայացնելու և թույլտվությունների տրամադրման առցանց համակարգի և «մեկ պատուհանի» սկզբունքի ներդնում: |
| 51. | **«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**<br>Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետության մի շարք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում առկա են դրույթներ, որոնք առաջացնում են իրավաբանական ու ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումներ, անհրաժեշտություն է առաջացել կատարելու «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում մի շարք փոփոխություններ: |

| | |
|---|---|
| | **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>Քաղաքացիական ավիացիայի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության բազմաթիվ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում առկա են իրավաբանական ու ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումներին, նրանց պարտականություններին վերաբերող դրույթներ, որոնք ՀՀ օրենսդրության մեջ անհրաժեշտ է տեղայնացնել միայն 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը չհակասող կանոններով:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կիրարկելով ու տեղայնացնելով Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ԻԿԱՕ) չափանիշները՝ անհրաժեշտ է քաղաքացիական ավիացիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններից բխող իրավական կարգավորումների համապատասխանեցում 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին:<br><br>4. **Կարգավորման նպատակը, բնույթը**<br>«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումների և փոփոխությունների ընդունումը հնարավորություն կտա կենսագործելու Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները:<br><br>**5. Ակնկալվող արդյունքը**<br>«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջների հետ համապատասխանության: |
| | **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ** |
| 52. | **«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի և դրանով պայմանավորված այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտություն (նպատակը)**<br>Նշված միջոցառման իրականացման անհրաժեշտությունն արժեթղթավորման խոչընդոտների վերացումը և ոլորտի զարգացումն է:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներդրողների և շուկայի մասնակիցների համար արժեթղթավորումը շարունակում է մնալ ոչ գրավիչ, ինչն էլ մեծ խնդիր է ֆինանսական համակարգի համար, քանի որ արժեթղթավորումը ֆինանսական շուկայի զարգացման կարևոր գործիքներից մեկն է: Մասնավորապես, արժեթղթավորումը կազմակերպություններին հնարավորություն է տալիս լրացուցիչ դրամական միջոցներ ներգրավելու, որոշ իրավիճակներում ֆինանսական ընկերություններին օգնում է պահպանել տնտեսական նորմատիվների պահանջները և այլն:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող լուծումներից մեկն օրենսդրական փոփոխությունների իրականացումն է, ինչը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում զարգացնելու արժեթղթավորումը որպես ֆինանսական գործիք՝ ապահովելով ներդրումների ու գործընթացների գրավչությունը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Արժեթղթավորման խոչընդոտների վերացումը և ոլորտի զարգացումը |

| | |
|---|---|
| | 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում զարգացնել արժեթղթավորումը որպես ֆինանսական գործիք՝ ապահովելով ներդրումների ու գործընթացների գրավչությունը: |
| 53. | **Չաշխատող ակտիվների (այդ թվում՝ նաև ֆինանսական հաստատություններում գրավադրված) վերագործարկումը խթանող մեխանիզմների ներդրման վերաբերյալ հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Չաշխատող ակտիվների վերագործարկումը կարևոր է տնտեսության համար, քանի որ չաշխատող ակտիվների վերագործարկման արդյունքում դրանք շահառուներին բերում են եկամուտներ և տնտեսության մեջ ապահովում ակտիվի շրջանառություն: Այն ֆինանսական հաստատություններին նաև հնարավորություն է տալիս իրենց հաշվեկշիռներից հեռացնելու չաշխատող ակտիվները և կենտրոնանալու տնտեսության վարկավորման վրա:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Չաշխատող ակտիվները տնտեսության մեջ չեն բերում եկամուտներ, հանվում են հաստատությունների հաշվեկշիռներից:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման իրականացման ժամանակ առաջարկվում է ուսումնասիրել միջազգային փորձը և մշակել Հայաստանի համար նախընտրելի մոդելը: Տնտեսության տարբեր ճյուղերում, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպություններում առկա ակտիվների վերագործարկման մեխանիզմները պետք է հնարավորություն տան արդյունավետ կերպով իրացնելու ակտիվը կամ առողջացնելու պոտենցիալ կենսունակ կազմակերպությունները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Չաշխատող ակտիվների վերագործարկման մոդելի մշակում<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Չաշխատող ակտիվների վերագործարկման վերաբերյալ հայեցակարգ ներկայացնելը կապահովի հետագա այն գործողությունները, որոնց իրականացմամբ չաշխատող ակտիվները կդառնան աշխատող և կապահովեն այդ ակտիվից բխող բոլոր եկամուտների շրջանառությունը տնտեսության մեջ: |
| 54. | **«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և (կամ) վերահսկվող անձանց գործունեությունը կարգավորող այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ֆինանսական հաստատություններ հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մուտքը կանխարգելող անհրաժեշտ կարգավորման միջոցների ձեռնարկում<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՖԱԹՖ մեթոդաբանության 26-րդ հանձնարարականի 26.3-րդ չափորոշչի համաձայն՝ իրավասու մարմինները կամ ֆինանսական վերահսկողները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ իրավական կամ կարգավորման միջոցներ՝ կանխելու հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսական հաստատության կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը (կամ այդպիսի մասնակցության կամ բաժնեմասի իրական շահառու լինելը), կամ ֆինանսական հաստատությունում կառավարման գործառույթ կատարելը:<br>Որոշ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներ (ապահովա- |

| | |
|---|---|
| | գրական միջնորդներ, վճարահաշվարկային կազմակերպություններ, արժութային դիլերներ, գրավատներ և այլն) ներկայումս չեն նախատեսում նշված պահանջն ապահովող մեխանիզմներ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փոփոխություններ նախատեսել ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներով՝ կանխելու համար հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսական հաստատության կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը (կամ այդպիսի մասնակցության կամ բաժնեմասի իրական շահառու լինելը), կամ ֆինանսական հաստատությունում կառավարման գործառույթ կատարելը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքների փոփոխությունների նախատեսում՝ կանխելու համար հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսական հաստատության կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը (կամ այդպիսի մասնակցության կամ բաժնեմասի իրական շահառու լինելը), կամ ֆինանսական հաստատությունում կառավարման գործառույթ կատարելը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքների փոփոխության արդյունքում ՀՀ կենտրոնական բանկն իրավասություն կունենա կանխարգելելու հանցագործություն կատարած անձանց մուտքը ֆինանսական համակարգ: Բացի դրանից, օրենսդրական փոփոխության արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կհամապատասխանի միջազգային պահանջներին: |
| 55. | **«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ օրենքների փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի և ֆինանսական համակարգում վեճերի լուծման գործընթացների կատարելագործում<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2008 թվականից ի վեր «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի կիրառման ժամանակ ի հայտ եկած խնդիրներն ստիպում են լուծումներ առաջադրել: Այդ խնդիրներն են, մասնավորապես՝<br>1) ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեության սկզբունքների համապատասխանեցում միջազգային սկզբունքներին, մասնավորապես, գրասենյակի օգտին կատարվող վճարումների համակարգի վերանայում, խորհրդի անդամների ընդունման կարգի հստակեցում.<br>2) հաշտարարին դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակի հստակեցում.<br>3) հաշտարարին ներկայացվող գույքային պահանջի հասկացության հստակեցում. քաղաքացիները հաշտարարին հաճախ դիմում են պահանջներով, որոնք կապված են ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ, սակայն չեն պարունակում գույքային պահանջ: Այլ կերպ ասած՝ կազմակերպությունը ոտնահարում է քաղաքացու՝ այս կամ այն օրենքով պահպանվող շահը՝ նրան դնելով անբարենպաստ վիճակի մեջ՝ միևնույն ժամանակ, սակայն, չպատճառելով նրան գույքային վնաս.<br>4) հաշտարարի կողմից բողոքների ընդունման և քննության գործընթացի պարզեցում՝ պահանջների առավել արդյունավետ և արագ քննություն իրականացնելու նպատակով, մասնավորապես՝<br>ա. բողոք-պահանջ ներկայացնելու փուլի պարզեցում՝ հնարավորություն տալով էլեկտրոնային եղանակով հաշտարարի գրասենյակի կողմից հաճախորդի անունից բողոք-պահանջ ներկայացնելու կազմակերպություններին, |

| | |
|---|---|
| | բ. էլեկտրոնային ծանուցումների համակարգի ներդրում,<br>գ. հաշտարարի որոշումն ուժի մեջ մտնելու համար օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի կրճատում. հաշտարարի որոշման կայացումից անմիջապես հետո քաղաքացիները, որպես կանոն, արդեն հստակ դիրքորոշում են ունենում դրա հետ համաձայնվել-չհամաձայնվելու վերաբերյալ, սակայն ստիպված են սպասել 30 օր, ինչը հարուցում է հաճախորդների դժգոհությունը և հակասում է պահանջի քննության արագության սկզբունքին:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքների փոփոխությունների նախատեսում<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական փոփոխություններ<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները կլինեն է՛լ ավելի դյուրին ու պարզ, իսկ հաշտարարին անդամակցող ֆինանսական կազմակերպությունների կողմից կատարվող վճարների վերանայված մեխանիզմները կհամապատասխանեն միջազգային լավագույն փորձին: |
| 56. | **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և այլ օրենքների փոփոխություն-ների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երաշխավորության ինստիտուտի կատարելագործում, երաշխավորների իրավունքների պաշտպանություն<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Խնդրի էությունն այն է, որ ՀՀ-ում երաշխավորների պաշտպանվածությունը չափազանց ցածր մակարդակի վրա է: Որպես օրենսդրական կարգավորումների բացակայության օրինակ կարելի է բերել երաշխավորներին ծանուցումների մեխանիզմների, տեղեկատվության տրամադրման պարտադիր պահանջների բացակայությունը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքների փոփոխությունների իրականացում<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքների փոփոխություններ, որոնցով կներդրվեն երաշխավորների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենսդրական փոփոխությունները հնարավորություն կտան լուծելու այն խնդիրները, որոնք առաջանում են երաշխավորների հետ կապված ֆինանսական համակարգում, և դրա արդյունքում պաշտպանելու երաշխավորների շահերը: |
| | **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն** |
| 57. | **«Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացվածության համատեքստում անհրաժեշտ է Հայաստանում տարածքային զարգացման բոլոր ուղղությունները միավորել և հստակ ճանապարհային քարտեզ ստեղծել տարածքային զարգացման քաղաքականության |

| | |
|---|---|
| | համար: Պետք է կենտրոնացնել տարածքային զարգացման քաղաքականությունը բոլոր մարզերում՝ մրցունակությունը զարգացնելով և տարածքներում աճի ապահովման կենտրոններին աջակցելով, որը հնարավորություն կտա դրական հակակշիռ ստեղծելու Երևանի գերակայությանը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումը կնպաստի բոլոր մարզերում մրցունակության բարձրացմանը՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսություններին, ինչպես նաև կապահովի տարածքներում համաչափության բարձր մակարդակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան մարզերում զբաղվածության ընդլայնումը, մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական ապահովության համակարգի բարելավումը և պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումն է:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մարզային 2017-2025 թթ. զարգացման ռազմավարությունների իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>2025 թվականի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70 տոկոսից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավելի, քան 30 տոկոսը.<br>2025 թվականի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թիվը կաճի առնվազն 10 տոկոսով՝ համեմատած 2014 թվականի հետ: |
| 58. | **«Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման միասնական կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգերը 2004-2005 թթ. հաստատվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներով և պետական լիազորված մարմնի հրամաններով: Ժամանակի ընթացքում, հատկապես, պայմանավորված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կտրուկ աճով, ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի հետ աշխատանքում լուրջ գործնական տեղաշարժեր են եղել, որոնք արտացոլված չեն գործող կարգերում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ ընդունել Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման միասնական կարգ: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ կհստակեցվի և նոր ժամանակի պահանջներին կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը:<br><br>**3. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրարկումը կբարձրացնի Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի, այդ թվում՝ հատկապես էլեկտրոնային, համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նկատմամբ պատասխանատվությունը, կապահովի անցումն էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցմանը: |
| 59. | **«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1515-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի պահանջից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 51 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգով սահմանված միգրացիոն քաղաքականության հիմնորոշ ուղղությունների իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1593-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը: 2016 թվականը ծրագրի եզրափակիչ տարին է:<br>Գործողությունների ծրագիրը, որը բաղկացած էր 14 ուղղությունից և 146 կոնկրետ քայլից, հիմք հանդիսացավ Հայաստանի միգրացիոն կառավարման համակարգը Եվրամիության չափորոշիչներին համահունչ դարձնելու համար: Նկատելի առաջընթաց արձանագրվեց ԵՄ-ի և աշխարհի այլ երկրների հետ օրինական միգրացիայի հենքով համագործակցության և ապօրինի (անօրինական) միգրացիայի դեմ պայքարի ու դրա կանխարգելման հարցերում: Առանձնակի ջանքեր գործադրվեցին Հայաստանի քաղաքացիների վերադարձին աջակցող մեխանիզմների ստեղծման և նրանց վերաինտեգրման, Հայաստան ժամանող փախստականների (հատկապես սիրիահայերի) և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության, նրանց ինտեգրման գործում:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի միգրացիոն իրավիճակի տեսանկյունից հիմնական մարտահրավերը հանրապետության հիմնական բնակչության թվի նվազումն է: Անհրաժեշտ է առանձնակի ջանքեր գործադրել արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների վերադարձի և Հայաստանում նրանց վերաինտեգրման գործընթացին աջակցելու համար: |

| | |
|---|---|
| | Միգրացիայի կարգավորման համատեքստում կարևոր է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որն արդյունավետորեն կօգտագործի էմիգրանտների կարողությունները՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:<br>Միգրացիոն քաղաքականության նպատակային պլանավորման, համակարգման և կիրարկման անկյունաքարային լուծումներից է աշխատաշուկայի առաջարկի ու պահանջարկի պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների հիման վրա որակյալ մասնագիտական կադրերի պատրաստումը և դրանց կանոնակարգված օգտագործման կազմակերպումը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:<br>Մարտահրավերների լուծման շարքում կարևորվում է ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման գործընթացի շարունակականության ապահովումը: Առանձնակի կարևորվում է ԵԱՏՄ-ի անդամ երկրների տարածքում աշխատուժի ազատ տեղաշարժի իրականացումը:<br>Քաղաքացիների ազատ տեղաշարժի կարգավորումը հնարավորություն կտա ընդլայնելու օրինական միգրացիան և դրանով իսկ կանխարգելելու անօրինական միգրացիայի առաջացման ռիսկերն ու սպառնալիքները:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշմամբ հավանության կարժանանա Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը՝ 2017-2021 թվականների համար: Որոշմամբ կհանձնարարվի մշակել այդ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիր՝ կատարման հստակ ժամկետներով և պատասխանատու մարմիններով:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Լուծումների կիրառման դեպքում ակնկալվում է առավելագույնի հասցնել միգրացիայի դրական ազդեցությունը և նվազագույնի հասցնել դրա բացասական հետևանքներն ու ռիսկերը: |
| 60. | **«Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Անհրաժեշտությունը պայմանավորված է կարգով նախատեսված չափորոշիչների, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորների վերանայմամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը հաստատվել է «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ: Առկա չափորիչներով գնահատումը հնարա- |

| | |
|---|---|
| | վորություն չի ընձեռում մարզպետների կատարած աշխատանքներն ամբողջ ծավալով գնահատելու համար:<br><br>2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ մարզպետների կատարած աշխատանքների գնահատման նոր չափորոշիչների սահմանում<br><br>3. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ մարզպետների կատարած աշխատանքների գնահատման հետ կապված հարաբերություններ<br><br>4. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ մարզպետների գործունեության գնահատում՝ նոր չափորոշիչներով |
| 61. | **«Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թվականին մեկնարկեց համայնքների խոշորացման գործնական փուլը՝ մայիսի 17-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքային փնջերում անցկացվեցին տեղական հանրաքվեներ, իսկ 2016 թվականի փետրվարի 14-ին՝ այդ համայնքային փնջերում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:<br>2016 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100-Ն օրենքի համաձայն՝ խոշորացման ծրագրեր իրականացվեցին ՀՀ Արարատի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի 118 համայնքում՝ ստեղծելով 15 խոշորացված համայնք: 2016 թվականի սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին այդ համայնքային փնջերում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:<br>Ակնհայտ է, որ գործընթացը կարիք ունի շարունակման, ինչը կնպաստի համայնքների կողմից ֆինանսական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համայնքների խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվելու է ՀՀ օրենքների նախագծային փաթեթ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Փաթեթում ներառվող «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում սահմանվելու են խոշորացման արդյունքում ձևավորվող համայնքների կազմերը, անվանումները, համայնքային կենտրոնները, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ նոր ձևավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների |

| | |
|---|---|
| | ընտրությունների և լիազորությունների դադարման ու ստանձնման ժամկետները, այդ համայնքների կարգավիճակի փոփոխության վերաբերյալ դրույթներ:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է 2017 թվականին իրականացնել 18 խոշորացման ծրագիր, որտեղ կներառվի շուրջ 150 համայնք, ինչը լիազորությունների հետագա ապակենտրոնացման, բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացման, որակի և մատչելիության բարձրացման հիմք, կարևորագույն նախապայման կհանդիսանա և կնպաստի համայնքների կողմից ֆինանսական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը: |
| 62. | **«Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արդի դարաշրջանի առանձնահատկություններից մեկն այն է, որ գործավարությունում թղթե կրիչով փաստաթղթերին փոխարինելու են գալիս էլեկտրոնային փաստաթղթերը, բուռն զարգացում են ապրում տեղեկատվական նոր տեխնոլոգիաները: ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանելու մասին» N 1595-Ն որոշման մեջ կարգավորված չէ նշված գործընթացների մեծ մասը: Միջազգային փորձի հիման վրա առաջարկվում է նոր խմբագրությամբ ներկայացնել նշված որոշումը, մասնավորապես, կանոնակարգել պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության կազմակերպումը, դրանց հաշվառումը և պահպանումը, էլեկտրոնային փաստաթղթերի արխիվի ստեղծումը, որը ներառում է այդ փաստաթղթերի ստեղծումից մինչև դրանց օգտագործումը՝ հաշվառման, նկարագրման և տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծման միջոցով: Ելնելով նշվածից, առաջարկվում է նոր խմբագրությամբ ներկայացնել ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 198-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության աշխատակազմի թղթային և էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացման և պահպանման գործընթացները:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն անցնելու պայմաններում ստեղծել գործավարության կառավարման լիարժեք համակարգ, որի համար անհրաժեշտ է հանրապետական մակարդակով սահմանել փաստաթղթավարության կազմակերպման, միասնականացման ու ստանդարտացման, արխիվային և գործավարության ծառայությունների միասնական սկզբունքներ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ, որը հնարավորություն կընձեռի քիչ ծախսերով արդիականացնելու և նպատակահարմար դարձնելու ոչ թղթային փաստաթղթաշրջանառությունը և փաստաթղթավորման անցնելը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ կպահովվի գործավարության զարգացումը համաշխարհային առաջատար միտումների ու տեխնոլոգիաների հունով, կկրճատվեն էլեկտրո- |

| | |
|---|---|
| | նային փաստաթղթաշրջանառության համակարգերի մշակման և ստեղծման ծախսերը, կապահովվի փաստաթղթերի պահպանությունը, կկրճատվեն փաստաթղթերի ձևերը, տեսակներն ու քանակը և նրանց հետ իրականացվող աշխատանքի ծավալը:<br><br>3. **Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունումը կապահովի կանոնակարգել ՀՀ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպումը, դրանց հաշվառումը և պահպանումը, էլեկտրոնային փաստաթղթերի արխիվի ստեղծումը, որը ներառում է այդ փաստաթղթերի ստեղծումից մինչև դրանց օգտագործումը՝ հաշվառման, նկարագրման և տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծման միջոցով: |
| 63. | «2017-2020 **թվականների տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացվածության համատեքստում անհրաժեշտ է Հայաստանում տարածքային զարգացման բոլոր ուղղությունները միավորել և հստակ ճանապարհային քարտեզ ստեղծել՝ տարածքային զարգացման քաղաքականության համար:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տարածքային զարգացման ժամանակակից քաղաքականությունն ուղղված է մրցունակության և կառուցողականության բարձրացմանը՝ տարածքային կառավարման մոտեցումների իրականացմամբ և մարդկային կապիտալի, նորարարության, ներառման ու ենթակառուցվածքի ինտեգրմամբ: Նման ինտեգրված և տեղայնացված մոտեցումներն անհրաժեշտ են Հայաստանին:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան մարզերում զբաղվածության ընդլայնումը, մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական ապահովության համակարգի բարելավումը և պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումն է:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գործառնական ծրագրի արդյունքում կնկարագրվեն այն կոնկրետ միջոցառումները, որոնք մինչև 2020 թվականը կապահովեն 2025 թվականի համար նախատեսված թիրախների մոտավորապես 40 տոկոսի իրականացումը: |
| 64. | **«Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Ներկայումս տարածքային կառավարման մարմինների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N 728 հրամանագրով: ՀՀ Սահմա- |

| | |
|---|---|
| | նադրության փոփոխություններով պայմանավորված՝ 2018 թվականից անհրաժեշտություն է առաջանալու օրենքով կարգավորելու ՀՀ տարածքային կառավարման մարմինների հետ կապված իրավահարաբերությունները:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առաջիկայում տարածքային կառավարման հարաբերությունները՝ հիմքերը, իրավական հիմքերը, լիազորությունները պետք է ամրագրվեն օրենքով, որին հասնելու համար անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջիկայում տարածքային կառավարման հարաբերությունները՝ հիմքերը, իրավական հիմքերը, լիազորությունները պետք է ամրագրվեն օրենքով, որին հասնելու համար անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>2018 թվականից հետո ՀՀ մարզերում պետական կառավարման հետ կապված հարա-բերությունները<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տարածքային կառավարման մարմինների հետ իրավահարաբերությունների կարգավորման ուրվագծերի նախանշում |
| 65. | **«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառումը չի ենթադրում իրավական ակտի ընդունում, սակայն ՀՀ կառավարություն կներկայացվի ՀՀ Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների մոդելավորման արդյունքների մասին հաշվետվություն:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>1) մինչև այժմ ձեռնարկված քայլերը կամ առաջարկվող լուծումներն ունեցել են հատվածային բնույթ և հիմնականում վերաբերել են աղբը հավաքելուն ու առանց տեսակավորելու և խտացնելու բնակավայրից հեռացնելուն: Համայնքային, մասնավոր նախաձեռնությունները, միջազգային հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ, վերաբերում էին կոշտ կենցաղային թափոնների կառավարման (այսուհետ՝ ԿԿԹԿ) գործընթացում որևէ առանձին բաղադրիչի (պլաստիկ շշերի հավաքում, աղբահանություն, աղբավայրի կառուցում, աղբի վերամշակում և այլն).<br>2) առաջարկվող լուծումները հիմնականում վերաբերել են ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծմանը կամ բարելավմանը՝ առանց ինստիտուցիոնալ կողմին պատշաճ ուշադրություն դարձնելու. |

3) աղբավայրերի շահագործման, արտոնագրման հարցերում պետական կառավարման տարբեր մարմինների լիազորությունները հստակեցման կարիք ունեն.

4) պատշաճ ուշադրություն չի դարձվել պետական և մասնավոր հատվածների համագործակցությանը և ջանքերի համադրմանը.

5) հատվածային և ոչ լիարժեքորեն համակարգված բնույթ են կրում միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր երկրների (կազմակերպությունների) կողմից տրամադրված աջակցությունները. առկա են դեպքեր, երբ տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ընդգրկված տարբեր փորձագետներ միմյանց բացառող լուծումներ են առաջարկել:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Եվրոպական ստանդարտներով սահմանված, բնապահպանական միջազգային պայմանները բավարարող աղբահանության և աղբավայրերի շահագործման մոդելի ողդեգրում, որի արդյունքում, համապատասխան ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության նախագծի, կիրականացվի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարումը:

2. **Կարգավորման առարկան**

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության նախագծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ստեղծվեն իրարից անկախ գործող, բայց միևնույն սկզբունքները բավարարող տարածաշրջանային ենթահամակարգեր:

Կոտայք-Գեղարքունիքի տարածաշրջանային ենթահամակարգի աղբահանության և աղբավայրի կառուցման ու շահագործման ծրագիրն իրականացվում է 2016 թվականից:

Շիրակի տարածաշրջանային ենթահամակարգերի ստեղծման և շահագործման նախապայման է այդ ենթահամակարգերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման մոդելավորումը:

Ուսումնասիրությունների արդյունքում կմշակվի եվրոպական ստանդարտներով սահմանված կոշտ կենցաղային թափոնների կառավարման տարածաշրջանային մոդել՝ հիմնված բոլոր համայնքների ակտիվ շահագրգիռ մոտեցումների, նրանց միջև համագործակցությունն ապահովելու վրա: Մոդելը կներառի աղբավայրերի շահագործման, այդ թվում՝ փոխաբեռնման կայանների միջոցով, աղբահավաքման արդյունավետ սանիտարական, հետագա սպասարկման գործընթացների կառավարման սխեմաներ: Վերջինս ենթադրում է կոշտ կենցաղային թափոնների կառավարման միջհամայնքային ընկերության կամ պետություն-համայնք-մասնավոր գործակցության, այդ թվում՝ կոնցեսիոն տարբեր մոդելների կիրառմամբ լուծում: Կհստակեցվեն աղբահանության իրականացման ենթակառուցվածքի և աղբավայրերի տեխնիկական պարամետրերը, ենթահամակարգերի կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալները և ենթահամակարգի կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Եվրոպական ստանդարտներով սահմանված աղբահանության և աղբավայրերի շահագործման մոդելի որդեգրման արդյունքում ՀՀ Շիրակի մարզում աղբահանության մեջ բնակչության ընդգրկվածության ցուցանիշը կհասնի 75 տոկոսի, իսկ 4 տարվա ընթացքում՝ 90 տոկոսի:

| | |
|---|---|
| | Կստեղծվեն աղբահանության սխեմաներ (լոգիստիկաներ), կլիկվիդացվեն գործող աղբավայրերը, դրույքաչափի՝ օրենքով սահմանված շեմը կմնա անփոփոխ: |
| 66. | **«Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ներկայիս խմբագրությամբ որոշակի հակասություններ ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ) և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի հետ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի հետ առկա հակասությունները վերացնելու նպատակով նախատեսվում է մշակել «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը տեղական որոշակի նոր կարգավորումներ է նախատեսել, կապված տեղական հանրաքվեի ինստիտուտի հետ, մասնավորապես, 48-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը, իսկ 183-րդ հոդվածում նշվում է, որ համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների ընդունումն այդ սահմանումը փոքր-ինչ տարբերվում էր ներկայիս սահմանումից, մասնավորապես, «Համայնքի անդամները» բառերը փոխարինվել են «Համայնքի բնակիչները» բառերով, իսկ «համայնքային նշանակության հարցերը» բառերը՝ «համայնքային նշանակության հանրային հարցերը» բառերով: Գործող Սահմանադրությունից հանվել է նաև համայնքների միավորման հարցով ՀՀ կառավարության կողմից շահառու համայնքներում տեղական հանրաքվե անցկացնելու իրավակարգավորումը: Անհրաժեշտություն է առաջացել «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նոր իրավակարգավորումներին: |

| | |
|---|---|
| 67. | **«Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 28 արձանագրային որոշման 12-րդ կետի պահանջից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 28 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգով, ՀՀ-ում բնակվող իմիգրանտների բոլոր խմբերից որոշակի չափանիշների կիրառմամբ, ընտրվել են Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրման առաջիկա տարիների քաղաքականության նպատակային խմբերը, ինչպես նաև նրանց ցուցաբերվելիք աջակցության տեսակները կամ ինտեգրման բաղադրիչները: Մշակվելիք գործողությունների ծրագրով պետք է սահմանվեն այն կոնկրետ միջոցառումները, որոնք անհրաժեշտ կլինի իրականացնել ինտեգրման բաղադրիչներից յուրաքանչյուրն ապահովելու նպատակով:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանում բնակվող իմիգրանտների խմբերից, հաշվի առնելով նրանց խնդիրների լուծման անհետաձգելիությունը, մի կողմից, և դրանց լուծման համար առկա հնարավորությունները, մյուս կողմից, Հայաստանում իմիգրանտների ինտեգրման կարճաժամկետ քաղաքականության առաջ-նային թիրախային խմբեր են ճանաչվել`<br>1) Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձինք. այս խմբի ինտեգրումը ներառելու է ժամանակավոր կացարանով ապահովումը, լեզվա-կան և քաղաքացիական կողմնորոշման դասընթացները.<br>2) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողները կամ զավակները. այս անձանց անհրաժեշտ կլինի ներգրավել հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորոշման դասընթացներում.<br>3) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականները (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ). այս խումբը ևս կարիք ունի հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորոշման դասընթացների.<br>4) ազգությամբ հայ լինելու հիմքով Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները. այս խմբին պատկանող որոշ անձանց համար անհրաժեշտ կլինեն լեզվական և քաղաքացիական կողմնորոշման դասընթացներ.<br>5) ազգությամբ հայ լինելու հիմքով ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք. այս խմբին պատկանող որոշ անձանց համար նույնպես անհրաժեշտ կլինեն լեզվական և քաղաքացիական կողմնորոշման դասընթացներ: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Ընդունվելիք գործողությունների ծրագրով կսահմանվեն Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման ապահովման կոնկրետ միջոցառումները, դրանց պատասխանատու կատարողները և ժամկետները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը կապահովի ինտեգրման քաղաքականության հայեցակարգի իրականա-ցումը, որն էլ իր հերթին ուղղված է ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ առկա բացի լրացմանը՝ իմիգրանտների ինտեգրման քաղաքականության մասով: |
| 68. | **«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառումը չի ենթադրում իրավական ակտի ընդունում, սակայն ՀՀ կառավարություն կներկայացվի ՀՀ Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների մոդելավորման արդյունքների մասին հաշվետվություն:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>1) մինչև այժմ ձեռնարկված քայլերը կամ առաջարկվող լուծումներն ունեցել են հատվածային բնույթ և հիմնականում վերաբերել են աղբը հավաքելուն ու առանց տեսակավորելու և խտացնելու բնակավայրից հեռացնելուն: Համայնքային, մասնավոր նախաձեռնությունները, միջազգային հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ, վերաբերում էին կոշտ կենցաղային թափոնների կառավարման (այսուհետ՝ ԿԿԹԿ) գործընթացում որևէ առանձին բաղադրիչի (պլաստիկ շշերի հավաքում, աղբահանություն, աղբավայրի կառուցում, աղբի վերամշակում և այլն).<br>2) առաջարկվող լուծումները հիմնականում վերաբերել են ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծմանը կամ բարելավմանը՝ առանց ինստիտուցիոնալ կողմին պատշաճ ուշադրություն դարձնելու.<br>3) աղբավայրերի շահագործման, արտոնագրման հարցերում պետական կառավարման տարբեր մարմինների լիազորությունները հստակեցման կարիք ունեն.<br>4) պատշաճ ուշադրություն չի դարձվել պետական և մասնավոր հատվածների համա-գործակցությանը և ջանքերի համադրմանը.<br>5) հատվածային և ոչ լիարժեքորեն համակարգված բնույթ են կրում միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր երկրների (կազմակերպությունների) կողմից տրամադրված աջակցությունները. առկա են դեպքեր, երբ տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ընդգրկված տարբեր փորձագետներ միմյանց բացառող լուծումներ են առաջարկել: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Եվրոպական ստանդարտներով սահմանված, բնապահպանական միջազգային պայմանները բավարարող աղբահանության և աղբավայրերի շահագործման մոդելի որդեգրում, որի արդյունքում, համապատասխան ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության նախագծի, կիրականացվի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարումը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության նախագծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ստեղծվեն իրարից անկախ գործող, բայց միևնույն սկզբունքները բավարարող տարածաշրջանային ենթահամակարգեր:<br>Կոտայք-Գեղարքունիքի տարածաշրջանային ենթահամակարգի աղբահանության և աղբավայրի կառուցման ու շահագործման ծրագիրն իրականացվում է 2016 թվականից:<br>Լոռու տարածաշրջանային ենթահամակարգերի ստեղծման և շահագործման նախապայման է այդ ենթահամակարգերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման մոդելավորումը:<br>Ուսումնասիրությունների արդյունքում կմշակվի եվրոպական ստանդարտներով սահմանված կոշտ կենցաղային թափոնների կառավարման տարածաշրջանային մոդել, հիմնված բոլոր համայնքների ակտիվ շահագրգիռ մոտեցումների, նրանց միջև համագործակցություն ապահովելու վրա: Մոդելը կներառի աղբավայրերի շահագործման, այդ թվում՝ փոխաբեռնման կայանների միջոցով, աղբահավաքման արդյունավետ սանիտարական, հետագա սպասարկման գործընթացների կառավարման սխեմաներ: Վերջինս ենթադրում է կոշտ կենցաղային թափոնների կառավարման միջհամայնքային ընկերության կամ պետություն-համայնք-մասնավոր գործակցության, այդ թվում՝ կոնցեսիոն տարբեր մոդելների կիրառմամբ լուծում: Կհստակեցվեն աղբահանության իրականացման ենթակառուցվածքի և աղբավայրերի տեխնիկական պարամետրերը, ենթահամակարգերի կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալները և ենթահամակարգի կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Եվրոպական ստանդարտներով սահմանված աղբահանության և աղբավայրերի շահագործման մոդելի որդեգրման արդյունքում ՀՀ Լոռու մարզում աղբահանության մեջ բնակչության ընդգրկվածության ցուցանիշը կհասնի 90 տոկոսի, իսկ 4 տարվա ընթացքում՝ 95 տոկոսի: Կստեղծվեն աղբահանության սխեմաներ (լոգիստիկաներ), կլիկվիդացվեն գործող աղբավայրերը, դրույքաչափի՝ օրենքով սահմանված շեմը կմնա անփոփոխ: |
| 69. | **«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջնորդառումը չի ենթադրում իրավական ակտի ընդունում, սակայն ՀՀ կառավարություն կներկայացվի ՀՀ Սյունիքի մարզի կոշտ կենցաղային թափոնների մոդելավորման արդյունքների մասին հաշվետվություն: |

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

1) մինչև այժմ ձեռնարկված քայլերը կամ առաջարկվող լուծումներն ունեցել են հատվածային բնույթ և հիմնականում վերաբերել են աղբը հավաքելուն ու առանց տեսակավորելու և խտացնելու բնակավայրից հեռացնելուն: Համայնքային, մասնավոր նախաձեռնությունները, միջազգային հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ, վերաբերում էին կոշտ կենցաղային թափոնների կառավարման (այսուհետ՝ ԿԿԹԿ) գործընթացում որևէ առանձին բաղադրիչի (պլաստիկ շշերի հավաքում, աղբահանություն, աղբավայրի կառուցում, աղբի վերամշակում և այլն).

2) առաջարկվող լուծումները հիմնականում վերաբերել են ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծմանը կամ բարելավմանը՝ առանց ինստիտուցիոնալ կողմին պատշաճ ուշադրություն դարձնելու.

3) աղբավայրերի շահագործման, արտոնագրման հարցերում պետական կառավարման տարբեր մարմինների լիազորությունները հստակեցման կարիք ունեն.

4) պատշաճ ուշադրություն չի դարձվել պետական և մասնավոր հատվածների համագործակցությանը և ջանքերի համադրմանը.

5) հատվածային և ոչ լիարժեքորեն համակարգված բնույթ են կրում միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր երկրների (կազմակերպությունների) կողմից տրամադրված աջակցությունները. առկա են դեպքեր, երբ տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ընդգրկված տարբեր փորձագետներ միմյանց բացառող լուծումներ են առաջարկել:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Եվրոպական ստանդարտներով սահմանված, բնապահպանական միջազգային պայմանները բավարարող աղբահանության և աղբավայրերի շահագործման մոդելի ոդեգրում, որի արդյունքում, համապատասխան ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության նախագծի, կիրականացվի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարումը:

2. **Կարգավորման առարկան**

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության նախագծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ստեղծվեն իրարից անկախ գործող, բայց միևնույն սկզբունքները բավարարող տարածաշրջանային ենթահամակարգեր:

Կոտայք-Գեղարքունիքի տարածաշրջանային ենթահամակարգի աղբահանության և աղբավայրի կառուցման ու շահագործման ծրագիրն իրականացվում է 2016 թվականից:

Սյունիքի տարածաշրջանային ենթահամակարգերի ստեղծման և շահագործման նախապայման է այդ ենթահամակարգերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման մոդելավորումը:

Ուսումնասիրությունների արդյունքում կմշակվի եվրոպական ստանդարտներով սահմանված կոշտ կենցաղային թափոնների կառավարման տարածաշրջանային մոդել, հիմնված բոլոր համայնքների ակտիվ շահագրգիռ մոտեցումների, նրանց միջև համագործակցություն ապահովելու վրա: Մոդելը կներառի աղբավայրերի շահագործման, այդ թվում՝ փոխաբեռնման կայանների միջոցով, աղբահավաքման արդյունավետ սանիտարական, հետագա սպասարկման գործընթացների

| | |
|---|---|
| | կառավարման սխեմաներ: Վերջինս ենթադրում է կոշտ կենցաղային թափոնների կառավարման միջհամայնքային ընկերության կամ պետություն-համայնք-մասնավոր գործակցության, այդ թվում՝ կոնցեսիոն տարբեր մոդելների կիրառմամբ լուծում: Կհստակեցվեն աղբահանության իրականացման ենթակառուցվածքի և աղբավայրերի տեխնիկական պարամետրերը, ենթահամակարգերի կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալները և ենթահամակարգի կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Եվրոպական ստանդարտներով սահմանված աղբահանության և աղբավայրերի շահագործման մոդելի որդեգրման արդյունքում ՀՀ Սյունիքի մարզում աղբահանության մեջ բնակչության ընդգրկվածության ցուցանիշը կհասնի 70 տոկոսի, իսկ 4 տարվա ընթացքում՝ 90 տոկոսի: Կստեղծվեն աղբահանության սխեմաներ (լոգիստիկաներ), կլիկվիդացվեն գործող աղբավայրերը, դրույքաչափի՝ օրենքով սահմանված շեմը կմնա անփոփոխ: |
| 70. | **«Անդրսահմանային տարածքային համագործակցության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Երկկողմ տնտեսական համագործակցությունը մինչև այժմ հիմնականում կենտրոնացած է եղել էներգետիկայի և տրանսպորտի ոլորտների վրա: Պետությունների միջև (Հայաստան-Վրաստան, Հայաստան-Իրան) տնտեսական համագործակցությունն առավել զարգացնելու նպատակով ստեղծվել են միջկառավարական տնտեսական հանձնաժողովներ: Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջաններն ունեն նման աշխարհագրական պայմաններ, ինչպես նաև անցումային շրջանի ընդհանուր տնտեսական և սոցիալական պատմություն: Նախկինում (մինչև 1990 թ. գոյություն ունեցած) առկա տնտեսական կապերը քանդվել են, նախկինում ունեցած ընդհանուր գիտելիքները՝ հնացել, նախկին սոցիալական կապերը՝ հիմնականում կորսվել: 1990 թվականից հետո ստեղծված վարչական և ինստիտուցիոնալ կարգավորումները միմյանցից զգալիորեն տարբերվում են:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ամրապնդել միջսահմանային կապերը տեղական իշխանությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև՝ օգնելով մշակելու համատեղ լուծումներ նշված շրջաններում սոցիալական և տնտեսական զարգացման ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու համար:<br>Տարածքային համագործակցությունը կարող է օգնել հասնելու երեք հիմնական նպատակի, որոնց հասնել հնարավոր չէ միայն ազգային տարածքային զարգացման միջոցառումներով: Առաջին նպատակն է նվազեցնել միմյանց վրա ուղղակի բացասական ազդեցությունների տարածումը: Երկրորդ նպատակն է առավելագույնի հասցնել միմյանց վրա ուղղակի դրական ազդեցությունները: Երրորդ նպատակն է բացահայտել միջսահմանային սոցիալական կապիտալի ներուժը: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում՝ տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման միջոցով: Սահմանամերձ շրջաններում առկա բնապահպանական, զբաղվածության, հանրային առողջապահության և ցանկացած այլ ընդհանուր մարտահրավերների հաղթահարում: Միջսահմանային կրթական, բազմամշակութային երկխոսության հաստատում, սահմանամերձ մարզերում ՀՆԱ-ի աճ: |
| 71. | **«Տարածքային աճի բևեռների զարգացման (Գյումրի, Ջերմուկ, Վանաձոր, Դիլիջան) ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ տնտեսությունն աչքի է ընկնում խիստ կենտրոնացմամբ մայրաքաղաքում և հարակից շրջաններում: Մարզերում գրանցվող ցածր տնտեսական աճը, գործազրկության բարձր մակարդակը, մարդկային կապիտալի արտահոսքը, ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը պահանջում են լուրջ ռազմավարական փոփոխություններ՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը: Քաղաքային համայնքներում (Գյումրի, Վանաձոր, Ջերմուկ, Դիլիջան) քաղաքային զարգացման բևեռների հիմնումը բխում է Հայաստանի Հանրապետության 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարությունից, հետևաբար, նշված քաղաքային համայնքների զարգացման ծրագրերի մշակումը դառնում է առաջնային խնդիր:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ մարզերում համաչափ և արդյունավետ տարածքային զարգացման համար պետությունը որդեգրել է մարզերի մրցունակության բարձրացման և տնտեսական ու սոցիալական անհավասարությունների մեղմման քաղաքականությունը: Դրան ուղղված՝ անհրաժեշտ է զարգացնել ՀՀ երբեմնի զարգացած քաղաքային համայնքները՝ ստեղծել զարգացած այլընտրանքային բևեռներ, որոնք կունենան իրենց ուրույն դիմագիծը և իրենց առանցքային դերը երկրի տնտեսության զարգացման մեջ: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է բևեռային քաղաքների (Գյումրի, Ջերմուկ, Վանաձոր, Դիլիջան) զարգացման ծրագրերի մշակումը՝ հիմնված համակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ համաչափ տարածքային զարգացման բազմաբևեռացման ապահովումը<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Չորս քաղաքային համայնքների (Գյումրի, Վանաձոր, Ջերմուկ, Դիլիջան) համար վերտարածքային աճի բևեռներ դարձնելու նպատակով կմշակվեն զարգացման ծրագրեր, որոնք նպատակաուղղված կլինեն քաղաքներում նոր աշխատատեղերի ստեղծմանն ու կյանքի որակի բարձրացմանը՝ քաղաքային ենթակառուցվածքների վերականգնման, ծառայությունների, ներառյալ՝ սոցիալական ծառայությունների, որակի բարձրացման, ինչպես նաև գործարարության աջակցման կառույցների և ձեռներեցության զարգացման միջոցով: Ակնկալվում է, որ ծրագրերի իրա- |

| | |
|---|---|
| | կանացման արդյունքում կավելանան քաղաքային ձեռնարկություններում արդյունավետ ներդրումները, կմեծանա զբաղվածության աստիճանը, կբարձրանա զբոսաշրջային գրավչությունը և կնվազի ընտանեկան նպաստների համակարգում ներառված ընտանիքների թիվը: |
| **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն** | |
| 72. | **«Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2002 թվականի հունիսի 4-ին ՀՀ ջրային օրենսգրքի ընդունմամբ՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքով, որի բաղկացուցիչ մասն են ջրավազանային կառավարման պլանների մշակման, կազմման և իրագործման աշխատանքները:<br>Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի, «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությանը հավանություն տալու մասին» N 4 արձանագրային որոշման պահանջների՝ ջրային ռեսուրսը պլանավորվում է համապարփակ կառավարման պլանավորման սկզբունքով, որը նպատակաուղղված է ջրօգտագործողների, այդ թվում՝ համայնքների էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները հավասարակշռելուն: Ջրավազանային կառավարման պլանի առկայությունը նախապայման կհանդիսանա ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացման համար:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ախուրյանի ջրավազանային տարածքի կառավարման պլանի ընդունումը հնարավորություն կտա Ախուրյանի ավազանային կառավարման տարածքում հավասարակշռելու ջրային ռեսուրսների առաջարկը և պահանջարկը, բացահայտելու ջրավազանում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը, դրանց կանխարգելման և նվազեցման միջոցառումները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի պլանի մշակումը և իրագործումը հնարավորություն կտա ըստ ոլորտների գնահատելու ջրային ռեսուրսների առաջարկը և պահանջարկը, բացահայտելու Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ցանկալի վիճակին հասնելուն ուղղված միջոցառումները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Պլանի մշակումը և իրագործումը հնարավորություն կտան ըստ ոլորտների գնահատելու ջրի վրա բնական և մարդածին (այդ թվում՝ կլիմայի) փոփոխության ազդեցությունը, բացահայտելու ջրավազանում ցանկալի վիճակին հասնելուն ուղղված միջոցառումները, ջրավազանում արտակարգ իրավիճակների կանխարգելման հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումները, որոշելու ջրային ռեսուրսի պահպանության և օգտագործման գերակայությունները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրավազանային կառավարման պլանը կնպաստի ավազանային տարածքում ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որն իր հերթին կհանգեցնի ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ և համապարփակ կառավարմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը, ջրի ազգային ու ռազմավարական պաշարների ավելացմանը: |

| | |
|---|---|
| 73. | **«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունն առաջացել է Հայաստանի Հանրապետությունում ջրահեռացման ոլորտի իրավահարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտությունից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ջրահեռացման համակարգի սպասարկման ծառայությունների ցածր մակարդակ: Ստորգետնյա խմելու ջրաղբյուրների աղտոտման վտանգ, հեռացվող կեղտաջրերը մաքրման խնդիրներ, արտադրական ձեռնարկությունների կողմից կեղտաջրերը՝ առանց որևէ մաքրման, ուղղակիորեն լցնելը քաղաքային ջրահեռացման համակարգեր, մակերևութային ջրավազաններ կամ էլ մղելն ստորգետնյա հորիզոններ, կոյուղագծերի ապօրինի միացումը հեղեղատար համակարգերին:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Լեռնային և նախալեռնային շրջաններում գտնվող՝ չկոյուղացված որոշ բնակավայրերի կեղտաջրերը կարող են վտանգ ներկայացնել ստորգետնյա խմելու ջրաղբյուրների աղտոտման տեսանկյունից՝ այն դեպքում, որ դրանք՝ գտնվում են ստորգետնյա ջրաղբյուրների սնման գոտում, և դրանց՝ կեղտաջրերի, տարածաշրջանում առկա ջրաղբյուրների հիդրոլոգիական կապի մեջ լինելու հանգամանքը հնարավոր է որոշել միայն համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում: Խնդիրները կարող են լուծվել ջրամատակարար-բաժանորդ հարաբերությունները կարգավորող պայմանագրի շրջանակներում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ կատարելուց հետո կկանոնակարգվեն ջրահեռացման ոլորտում գործող իրավահարաբերությունները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծում, բաց ջրավազան կեղտաջրերի արտահոսքի նվազեցում |
| 74. | **«Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունման պահանջը բխում է էկոհամակարգային մոտեցմամբ շրջակա միջավայրի պահպանության միասնական իրավական հենքի ստեղծման և ՀՀ օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը մոտարկման գործընթացում առկա համալիր լուծման մոտեցումների ու սկզբունքների ներդրման անհրաժեշտությունից: «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ շրջանակային օրենք) ընդունման նպատակն է միասնական իրավական հենքի ստեղծման միջոցով ապահովել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանության ու վերականգնման արդյունավետ կառավարումը՝ կայուն զարգացման համատեքստում (դեռևս 1991 թ. ընդունվել է «Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքներ» ՀՀ օրենքը (նմանատիպ շրջանակային օրենքին), որը հետագայում չեղյալ է համարվել):<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանն ընդունել է բնապահպանության ոլորտը կանոնակարգող 30-ից ավելի օրենք և օրենսգիրք, որոնք հիմնականում ապահովում են շրջակա միջավայրի առանձին ճյուղերի՝ հողերի, |

ջրերի, մթնոլորտի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սակայն, դրանցից յուրաքանչյուրն էլ ներառում է այնպիսի պահանջներ, որոնք ընդհանուր են բոլոր ճյուղերի համար (թույլտվություններ, մոնիթորինգ, հաշվառում ու գույքագրում, տեղեկատվություն ու քաղաքացիական հասարակության իրազեկում և այլն) և հորիզոնական օրենսդրական ակտով կանոնակարգման անհրաժեշտություն ունեն: Բազմաթիվ նորմեր հիմնականում հնարավոր չէ արդյունավետ կիրառել՝ դրանց դեկլարատիվ և հակասական բնույթի կամ միևնույն հասկացությունների տարաբնույթ մեկնաբանությունների պատճառով: Այսպիսով, Հայաստանի բնապահպանության ոլորտի նորմատիվ իրավական դաշտն ընդհանուր առմամբ կարող է բնութագրվել ոչ բավարար ամբողջականությամբ, էկոլոգիական շահերը պաշտպանելու համար ներքին հակասությունների, բացերի և երկիմաստությունների առկայությամբ, շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտում շուկայական մեխանիզմների ներդրումն ու կիրառումը խթանող նորմերի բացակայությամբ, միջճյուղային հակասությունների առկայությամբ, էկոլոգիական հարաբերությունների կարգավորման համալիր մոտեցումների բացակայությամբ: Իրավակիրարկման արդյունավետությունը տուժում է նաև այն պատճառով, որ բնապահպանական քաղաքականությունն առանձին բաղադրիչների մասով հավասարաչափ զարգացում չի ունեցել:

Հիմնախնդիրներն են՝

1) ոլորտի հիմնական քաղաքականությունը սահմանող իրավական ակտի բացակայությունը, գործող որոշ դրույթների դեկլարատիվ և հակասական լինելը.

2) ոլոտի համալիր պլանավորման և սոցիալ-տնտեսական զարգացումներում բնապահպանական խնդիրների ինտեգրմանը նպաստող իրավական հենքի բացակայությունը. (կանաչ էկոնոմիկա, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրման խթանում և այլն).

3) ֆինանսական և տնտեսական գործիքների անկատարությունը և շրջակա միջավայրի պահպանման արդյունավետ մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական գործիքների (էկոպիտակավորում, շրջակա միջավայրի կառավարման ու էկոաուդիտի համակարգեր և այլն) և շրջակա միջավայրին հասցված վնասների հաշվարկման մեթոդների, մեխանիզմների ու համապատասխան փորձագետների փաստացի բացակայությունը.

4) բնապահպանական տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքի մշակման հիմնական սկզբունքներն են՝

1) էկոհամակարգային մոտեցումը, ինչը ենթադրում է բնական ռեսուրսների համալիր, համապարփակ կառավարման և էկոլոգիական անվտանգության ապահովումը.

2) էկոլոգիական խնդիրների ինտեգրումը սոցիալ-տնտեսական զարգացումներին.

3) բնապահպանական օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը մոտարկման գործընթացի ապահովումը.

4) շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելման ու հսկման նպատակով համալիր թույլտվությունների համակարգի ներդրումը, էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով էկոհամակարգային ծառայությունների, էկոպիտակավորման ու էկոաուդիտի համակարգերի ներդրումը և այլն.

5) էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների կիրառումը.

6) բնապահպանական խնդիրների լուծման և աղտոտման կանխարգելման համար տնտեսական և ֆինանսական մեխանիզմների ու խթանների կիրառումը, վճարների հասցեական օգտագործումը՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործմանը.

| | |
|---|---|
| | 7) շրջակա միջավայրին վերաբերող որոշումների ընդունման գործում տեղական ինքնակառավարման մարմինների և հանրության մասնակցության ապահովումը, հանրության իրազեկման ու տեղեկատվության հասանելիությունը.<br>8) միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքի կարգավորման առարկան են՝<br>1) ոլորտը կարգավորող օրենքներում առկա նույնաբնույթ սահմանումների իդենտիֆիկացումը.<br>2) բնապահպանական համալիր պլանավորումը, որը նախատեսում է հատուկ պլանավորում ու տարբեր պլանավորման տեսակներում բնապահպանական պլանավորման ինտեգրում.<br>3) բնական ռեսուրսների համալիր պահպանությունն ու կայուն օգտագործումը.<br>4) էկոհամակարգի կառավարումն ու էկոհամակարգային ծառայությունները.<br>5) էկոպիտակավորումն ու էկոաուդիտը.<br>6) բնապահպանական միասնական մոնիթորինգն ու տեղեկատվությունը.<br>7) բնապահպանական թույլտվությունները՝ համալիր թույլտվությունները, պարզ ընթացակարգով տրվող թույլտվությունները և թույլտվություն չպահանջող կայանքները՝ ծանուցման սկզբունքով.<br>8) ֆինանսական գործիքները.<br>9) վնասը և պատասխանատվությունը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման դեպքում կապահովվեն կայուն զարգացման համատեքստում բնապահպանական խնդիրների համահունչ ինտեգրումը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում և ոլորտի համակարգված կառավարումը՝ շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելումն ու բնական ռեսուրսների կայուն օգտագործումը, ինչը կերաշխավորի դրանց վերականգնման հնարավորությունը:<br>Օրենքի ընդունումը, մասնավորապես, կապահովի այս բնագավառի իրավահարաբերությունների կարգավորման առանցքային սկզբունքը՝ էկոհամակարգային մոտեցումը, կերաշխավորի շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների փոխկապակցվածությունն ու համալիր կառավարումը և միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների կատարումը համակարգային ու միասնական լուծումների հիման վրա, որի շնորհիվ բնապահպանության ոլորտի քաղաքականությունն առավել նպատակաուղղված կլինի շրջակա միջավայրի իրական բարելավմանը: |
| 75. | **«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների** 2018 **թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2018 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը կապված է լճի և դրա ջրահավաք ավազանի ներկայիս վիճակի բարելավման խնդրի հետ, որի համար անհրաժեշտ է ապահովել Սևանա լճի և դրա ջրահավաք ավազանի էկոհամակարգերի պահպանությանը, լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանն ու Սևանա լճի ջրահավաք ավազանի բնական պաշարների կայուն օգտագործմանն ուղղված 2018 թվականին նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարումը: |

Սկսած 2001 թվականից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը: Տարեկան ծրագրի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների պահանջներից և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակներից ու խնդիրներից:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Առաջնային են Սևանա լճի մակարդակի բարձրացման և նրա ջրահավաք ավազանի բնական պաշարների պահպանության ու կառավարման հարցերը, որոնք 2001 թվականից դրվել են օրենսդրական հիմքի վրա և կարգավորվում են «Սևանա լճի մասին» ու «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 876-Ն որոշմամբ:

Օրենքներում ամրագրված են Սևանա լճի էկոհամակարգի կայունության, ջրի դրական հաշվեկշռի ապահովման և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին դրույթները, որոնց կատարման անհրաժեշտ պայմաններից է՝ լճի մակարդակի բարձրացումն առնվազն 6 մետրով: Լճից բաց թողնված ջրի քանակը յուրաքանչյուր տարի հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ:

Ջրի տակ մնացող օրգանական նյութերի մեծ զանգվածները վտանգում են լճի վիճակը՝ ջրի աղտոտման տեսանկյունից: Լուրջ խնդիրներ են առաջացնում նաև ջրի տակ մնացած բազմաթիվ շինությունները և ենթակառուցվածքները: Միաժամանակ ջրի բարձր որակն ապահովելու համար կարևոր է կտրուկ բարելավել վիճակը՝ կապված մեծ քանակությամբ չմաքրված կեղտաջրերի՝ լիճ թափվելու հետ:

Սևանա լճի ձկնաշխարհն աչքի է ընկել ինքնատիպությամբ, սակայն լճի մակարդակի իջեցումը, կենսապաշարների գերօգտագործումը և դրանց կանոնավոր մոնիթորինգի բացակայությունը նպաստեցին լճի կենսաբազմազանության փոփոխմանը, ձկնապաշարների կտրուկ անկմանը՝ էնդեմիկ ձկնատեսակների, հատկապես Սևանի իշխանի ենթատեսակների անհետացմանը և սիգ ձկնատեսակի արդյունագործական ծավալների նվազեցմանը: Հայաստանի կարմիր գրքի (2010 թ.) մեջ են գրանցվել Սևանի իշխանը, Սևանի կողակը և Սևանի բեղլուն: Ձկնատեսակների թվի կրճատման հետևանքով լճի էկոհամակարգում տեղի է ունենում օրգանական նյութերի ինտենսիվ կուտակում և ճահճացման հանգեցնող գործընթացների արագացում, ինչը ևս բացասաբար է անդրադառնում Սևանա լճի էկոհամակարգի վրա: Հիմնական խնդիր է նաև լճում բնական և արհեստական եղանակներով էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի մեծացումը՝ մինչև կայուն ու կենսունակ աստիճանը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սևանա լճի հիմնախնդրի լուծումը Հայաստանի բնապահպանական քաղաքականության կարևորագույն մասն է: Հիմնական ջանքերը կենտրոնանում են հետևյալ խնդիրների լուծման վրա՝ լճի մակարդակի շարունակական բարձրացում, Սևանա լճի ջրահավաք ավազանի ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման կանխարգելում, փաստացի ջրօգտագործման պայմանների նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործում, լճի ջրահավաք ավազանի ջրի որակի բարելավում, կենսաբանական ռեսուրսների պահպանում և վերականգնում, Սևանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման հետ կապված խնդիրների լուծում, թափոնների կառավարման կատարելագործում:

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2018 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի կարգավորման նպատակն է Սևանա լճի՝ որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի պահպանումը, էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրահավաք ավազանի էկոհամակարգերի բնականոն, ներդաշնակ զարգացմանն ու կայուն օգտագործմանն ուղղված 2018 թվականի նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարման ապահովումը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում են՝<br>1) Սևանա լճի մակարդակի բարձրացում.<br>2) Սևանա լճի և դրա ջրահավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն և կենսապաշարների կայուն օգտագործման բարելավում.<br>3) ափամերձ ջրածածկ տարածքներից անտառաշերտերի, բազմաթիվ շինությունների և ենթակառուցվածքների մաքրում.<br>4) ռեկրեացիայի արդյունավետ զարգացում.<br>5) կենցաղային թափոնների կառավարման բարելավում.<br>6) կառավարման համակարգի բարելավում: |
| 76. | **«Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս անտառների պահպանության և ապօրինի հատումների դեմ պայքարի վերահսկողական համակարգը, մարդկային ռեսուրսները և տեխնիկական հագեցվածությունը բավարար չեն անտառային էկոհամակարգերի պահպանության, ապօրինի անտառահատումների կրճատման, անտառների ամբողջականության ապահովման համար: Վերահսկողական համակարգում առկա բացերը և ապօրինի անտառահատման դեմ պայքարի գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում ընդունելու նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման հայեցակարգ: Անտառները կարևորագույն նշանակություն ունեն շրջակա միջավայրի պահպանության համար: Դրանք էական օգուտներ են տալիս՝ վառելանյութ, շինափայտ, անտառային ոչ բնափայտային արտադրանք (սունկ, հատապտուղներ, դեղաբույսեր և այլն) և ծառայում են որպես արոտավայրեր: Անտառներն օգնում են բնակավայրերը պաշտպանել սողանքներից, ջրհեղեղներից և կանխում են հողերի էրոզիան: Դրանք կարևորագույն պահոցներ են կենսաբազմազանության համար, օգնում են ապահովել ջրի մատակարարումը, ջրի որակը և նպաստում են կլիմայի փոփոխության մեղմմանը՝ ածխաթթու գազի մեկուսացման և պահպանման միջոցով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին ժամանակներս մարդու տնտեսական գործունեության հետևանքով ՀՀ անտառների տարածքն զգալիորեն կրճատվել է (հատկապես պատերազմական և էներգետիկ ճգնաժամի տարիներին), ընկել են անտառների արտադրողականությունը և պաշտպանական ունակությունը: Անտառներին մեծ վնաս են հասցնում ապօրինի անտառահատումները, և այս գործընթացը շարունակվում |

| | |
|---|---|
| | է մինչև այսօր: Ապօրինի անտառահատումների հետևանքով տարեցտարի նվազում է բարձրարժեք ծառատեսակների թիվը՝ փոխարինվելով ավելի ցածրարժեք ծառատեսակներով և թփուտներով:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից վերահսկվում է ապօրինի անտառահատման գործընթացը, սակայն առկա մարդկային ռեսուրսներն ու տեխնիկական միջոցները դեռևս բավարար չեն ամբողջովին վերահսկելու ապօրինի անտառահատման գործընթացը: Դրանից ելնելով, առաջարկվում է նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ստեղծման սկզբունքների սահմանում, անտառների պահպանմանն ուղղված ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովման մեխանիզմների ու սկզբունքների ամրագրում, տեխնիկական և հիմնական միջոցների կիրառման հետ կապված խնդիրների լուծում:<br><br>2.**Կարգավորման առարկան**<br>Ապօրինի անտառահատումների վերահսկողության և կանխարգելման գործընթացը կատարելագործելու նպատակով հայեցակարգի ընդունում<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) վերահսկողության համակարգի կատարելագործում.<br>2) ապօրինի անտառահատումների կրճատում.<br>3) անտառների ամբողջականության ապահովում.<br>4) անտառածածկ տարածքների ավելացում: |
| 77. | **«Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված է ընդերքօգտագործողների կողմից խախտված հողերի (այդ թվում՝ նաև ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ հանդիսացող լցակույտերի մակերեսների) վերականգնման նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումների կատարումը:<br>«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (18.10.2016 թ. ՀՀ Ազգային ժողովում ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ) նախատեսվել է ընդերքօգտագործման թափոնների կառավարման համակարգի ներդնումը, որի համաձայն ընդերքօգտագործողները պարտավորվում են իրականացնել ընդերքօգտագործման թափոնների հավաքման, փոխադրման, վնասազերծման, կուտակման, պահման, հեռացման, տեղադրման, թաղման այն գործողությունները, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների բացասական ազդեցության՝ հնարավորության դեպքում կանխմանը կամ հնարավորինս նվազեցմանը:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Այս պարագայում՝ ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացիան պետք է համապատասխանեցվի ընդերքօգտագործման թափոնների կառավարման գործողությունների հետ և իրականացվի ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլաններով ստանձնած պարտավորությունների հաշվառմամբ: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված պատճառով առաջացել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին գումարների հատկացման, ռեկուլտիվացիոն ֆոնդի համալրման և ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման գործընթացի վերանայման անհրաժեշտություն:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունմամբ նախատեսվում է ստեղծել օրենսդրական նախադրյալներ՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ձևավորման մեխանիզմների վերանայման, դրամագլխի գումարների նպատակային օգտագործման նոր ուղղությունների մշակման համար: Նախատեսվում է կանոնակարգել ընդերքօգտագործման աշխատանքների ավարտից հետո իրականացվող ռեկուլտիվացիոն աշխատանքների համար հատկացվելիք գումարների օգտագործման հնարավորությունները՝ այն դեպքում, երբ ընդերքօգտագործողները նպատակադրված են օգտահանել նաև արտադրական լցակույտերում կուտակված ընդերքօգտագործման թափոնները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման արդյունքում ակնկալվում են՝<br>1) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ձևավորման մոտեցումների վերանայում, դրամագլխում գումարների համալրում.<br>2) բնապահպանական օրենսդրության պահանջների արդյունավետ իրականացում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե** | |
| 78. | **«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով (ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշում, հավելվածի 1.4-րդ գլուխ, «Քաղաքաշինություն» բաժին, 1-ին ենթակետ) նախատեսված՝ երկրաշարժի հետևանքով աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացում, 2017 թվականին Գյումրի քաղաքում ծրագրի ավարտ<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաշվառված և աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շահառու ճանաչված 5381 ընտանիքից 2008-2016 թվականների ընթացքում կարգավորվել է 4728 ընտանիքի բնակարանային խնդիրը, որոնցից՝<br>1) 2008-2015 թվականներին՝ շուրջ 62 մլրդ դրամ միջոցների հաշվին լուծվել է 4441 ընտանիքի բնակարանային խնդիրը.<br>2) Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված 1 մլրդ 849.5 մլն |

| | |
|---|---|
| | դրամ միջոցների հաշվին մինչև տարեվերջ լուծում կստանա 287 ընտանիքի բնակարանային խնդիր: Արդյունքում՝ դեռևս լուծում է պահանջում ծրագրի շահառու ճանաչված, սակայն բնակարանային պայմանները չբարելավված 653 ընտանիքի բնակարանային խնդիր:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է 2017 թվականի ընթացքում ֆինանսական աջակցության տրամադրմամբ լուծել ծրագրի շահառու ճանաչված շուրջ 100 ընտանիքի բնակարանային խնդիր, որոնցից՝<br>1) Գյումրի քաղաքում շուրջ 90 ընտանիքի (այդ թվում՝ ամբողջական փաստաթղթային փաթեթներ ներկայացրած, սակայն շահառուների ճանաչման գործընթացի ժամանակ հանրապետությունից բացակայած ընտանիքների) բնակարանի գնման վկայագրերի (ԲԳՎ) տրամադրման միջոցով, որով կավարտվի ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարումը.<br>2) Սպիտակ քաղաքում՝ մեկ ընտանիքի բնակարանի գնման վկայագրի տրամադրման միջոցով: Ընտանիքը բնակարանային ապահովման իրավունքը 2016 թվականին վերականգնել է դատական կարգով, ճանաչվել է 4-սենյականոց բնակարանի շահառու և չբաշխված 2 հատ 2-սենյականոց բնակարան չլինելու պարագայում խնդիրը կարող է կարգավորվել բնակարանի գնման վկայագրի տրամադրմամբ: Ընդ որում, Սպիտակ քաղաքում ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների նկատմամբ ձևավորված պարտավորությունները կատարվել են՝ 2 և 3-սենյականոց բնակարանների շահառու ճանաչված ընտանիքներին՝ մինչև 2015 թվականը, քաղաքի Վարպետաց թաղամասում կառուցված 2 և 3-սենյականոց բնակելի տների հատկացմամբ, իսկ մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքներին՝ 2016 թվականին, ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրմամբ.<br>3) ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում բնակարանային ապահովման իրավունքը 2016 թվականին դատական կարգով վերականգնած՝ մեկ սենյակի շահառու ճանաչված 3 ընտանիքի (Շիրակ-1, Լոռի-2) ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրում, յուրաքանչյուրին՝ 3.0 մլն դրամի չափով:<br>Արդյունքում՝ դեռևս լուծման կարիք կունենա ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերի 553 ընտանիքի բնակարանային խնդիր, որի լուծման համար կպահանջվի մոտավորապես 4.0 մլրդ դրամ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով (նախագիծ) նախատեսված 560.0 մլն դրամ հատկացումների հաշվին ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի բնակավայրերում (հիմնականում՝ Գյումրի քաղաքում) ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության մոտեցումների և աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարցերի ամրագրում<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի շարունակական իրականացում և ծրագրի շահառու ճանաչված շուրջ 100 ընտանիքի (քաղ. Գյումրի-90, քաղ. Սպիտակ-1, ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրեր-3) բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարում |
| 79. | **«Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև դրամաշնորհային կամ այլ աղբյուրներից ֆինանսավորվող սոցիալական բնակարանաշինության ծրագրերում կիսակառույցների շինարարության ավարտման, |

քանդման և տարածքի բարեկարգման աշխատանքներն ընդգրկելու համար իրավական հիմքի ստեղծում

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանրապետության մարզերում առկա են կիսակառույց օբյեկտներ, որոնց շինարարական աշխատանքներն սկսվել և դադարեցվել են 1988-1993 թվականներին: Շինարարական աշխատանքների դադարեցումից հետո 1990-ական թվականներին կիսակառույց օբյեկտները սահմանված կարգով չեն ենթարկվել կոնսերվացման և արտաքին միջավայրի, մշտական մթնոլորտային ազդեցության հետևանքով դրանց կոնստրուկտիվ տարրերը մեծ մասամբ ենթարկվել են քայքայման և ակնհայտորեն կորցրել են նախագծային ամրությունն ու հուսալիությունը:

Կիսակառույցների շինարարական աշխատանքների ավարտման, վթարայնության աստիճանը հաշվի առնելով՝ քանդման և տարածքի բարեկագման կամ այլ նպատակով օգտագործման հարցերը որևէ ֆինանսական ծրագրում չեն ներկայացվել, և երկար տարիներ այդ խնդիրները մատնված են անուշադրության:

Քաղաքային և գյուղական համայնքներում կիսակառույցներն զգալի տարածքներ զբաղեցնելով՝ փաստացի առաջ են բերում կառուցապատման համար պիտանի տարածքների ոչ նպատակային օգտագործման խնդիրներ:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույցների վերաբերյալ ՀՀ մարզպետարաններից ստացված տեղեկատվության հիման վրա 2016 թվականին սկսվել են նախագծի մշակման աշխատանքները:

Նախագծի մշակման ժամանակահատվածում պարզվել է, որ որոշ կիսակառույցներ մասնավորեցվել են, և անհրաժեշտություն է առաջացել մեկ անգամ ևս ճշտելու կիսակառույցների ցանկերն ու անհրաժեշտ հաշվարկները:

Արդյունքում՝ նախատեսվում է նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնել 2017 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակում:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կիսակառույցների տեխնիկական վիճակի հետազննության եզրակացությունների վերլուծության արդյունքում լուծումներ կառաջարկվեն յուրաքանչյուր օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտման կամ քանդման վերաբերյալ:

2. **Կարգավորման առարկան**

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներից անավարտ մնացած կիսակառույցներին առնչվող խնդիրների կարգավորում

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Բնակավայրի քաղաքաշինական միջավայրի բարելավման, քաղաքաշինության ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցության ծրագրերի մշակման, հասարակական և արտադրական նշանակության անհրաժեշտ օբյեկտների կառուցման համար նախադրյալների ստեղծում

80. **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 317 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրում ընդգրկված բնակավայրերի վերականգնման ենթակա տարածքները ոչ հիմնական շինու-

թյուններից ազատելու և դրանք հեռացնելու միջոցառումների մասին» N 317 որոշման վերանայման (փոփոխություններ և լրացումներ կատարելու) նպատակը ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի քաղաքային բնակավայրերի կառուցապատման նպատակով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերով չնախատեսված ոչ հիմնական շինությունների փաստագրումը և դրանց հաջորդաբար հեռացման քայլերի հստակեցումն է:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 317 որոշմամբ նախատեսված է, որ աղետի գոտու բնակավայրերի տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու աշխատանքները կանոնակարգելու նպատակով մարզպետները տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ յուրաքանչյուր տարածքի համար կազմում են սխեմաներ, որոնք բաղկացած են գրաֆիկական և աղյուսակային մասերից:

Գրաֆիկական մասում (որի կազմման համար, որպես հանութային հիմք, կարող էին օգտագործվել առկա հատակագծերը) պետք է արտացոլվեին տարածքի սահմանները և տարածքում առկա շինությունների տեղաբաշխումն՝ ըստ գործառնական նշանակության, իսկ աղյուսակային մասում պետք է նշվեին ոչ հիմնական շինությունների թվի, տվյալ շինություններում բնակվող ընտանիքների կարգավիճակի, ինչպես նաև, ելնելով շինությունների ֆիզիկական վիճակից՝ տարածքից դրանց հեռացման տարբերակի (ենթակա է ոչնչացման, տեղափոխման) մասին տվյալները:

Ըստ այդմ, պետք է կազմակերպվեր այդ ոչ հիմնական շինությունները տարածքներից հեռացնելու (կամ դրանք հատկացված տարածք տեղափոխելու) գործընթացը, ինչը հնարավորություն կտար ազատելու և բարեկարգելու այդ տարածքները՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով դրանց հետագա՝ քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան կառուցապատման (այդ թվում՝ ներդրումային ծրագրերի շրջանակներում) համար:

Այդ աշխատանքները, սակայն, չեն կատարվել, ինչը խոչընդոտում է այդ տարածքների՝ ըստ նպատակային նշանակության օգտագործումը, ինչպես նաև որպես ոչ հիմնական շինություն համարակալված, սակայն քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացումը: Հատկապես, որ այդ շինությունները չօրինականացնելը դրանք տիրապետող անձանց հնարավորություն է տալիս չհիմնավորված կերպով օգտվելու որոշակի սոցիալական երաշխիքներից:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 317 որոշման վերանայում՝ դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով

2. **Կարգավորման առարկան**

ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի քաղաքային բնակավայրերի կառուցապատման նպատակով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերով չնախատեսված ոչ հիմնական շինությունների փաստագրման (դրանց թվի, վիճակի և տեղաբաշխման վերաբերյալ ընդհանուր պատկերի ձևավորում) և հետագա իրականացվելիք քայլերի հստակեցում

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է ստեղծել նախադրյալներ՝ ոչ հիմնական շինությունների փաստագրման և դրանց հաջորդաբար հեռացման քայլերի հստակեցման, ինչպես նաև որպես ոչ հիմնական շինություն համարակալված, սակայն քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացման համար:<br>Վերանայված որոշմամբ նախատեսված քայլերի իրականացմամբ ակնկալվում է ունենալ ոչ հիմնական շինությունների թվի, վիճակի և տեղաբաշխման վերաբերյալ ընդհանուր պատկերը, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա պլանավորելու հետագա իրականացվելիք աշխատանքները: |
| 81. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի (ակտերի) անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ցանկում նշված միջոցառման ներառումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի գործնական կիրառման ընթացքում բացահայտված խնդիր-ների լուծմանը նպատակաուղղված մի շարք օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների համակարգման ընթացքում բացահայտվել են մի շարք խնդիրներ գլխավոր հատակագծերի իրագործման միջոցառումների կատարման, առանձին հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխման, գոտևորման նախագծով նախատեսված չափորոշիչների և թույլատրված օգտագործման ձևերի կիրառման գործընթացներում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող օրենսդրության կատարելագործում:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման գործընթացների պարզեցում |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** |
| 82. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2017 թվականի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի հողերի կադաստրային գները, ըստ նպատակային նշանակության, յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել 2017 թվականի համար, ուստի, որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվեն 2017 թվականի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2017 թվականի կադաստրային գները (արժեքները):<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն 2017 թվականի հողերի կադաստրային գները, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրման կամ այլ դեպքերում: |
| 83. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2017 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի հողամասերը, անկախ սեփականության ձևից, ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի ու քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների մասին ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի մասին տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում են փոփոխություններ, այդ թվում՝ նպատակային |

նշանակությունների ու սեփականության սուբյեկտների, հողատեսքերի ու գործառնական նշանակությունների, ինչպես նաև ոռոգվող հողերի կազմում: Այս բոլոր ընթացիկ փոփոխությունները տարեկան կտրվածքով ենթակա են պետական հաշվառման և պետք է արտացոլվեն Հայաստանի Հանրապետության ընթացիկ հողային հաշվեկշռում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշման պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1059-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հողային հաշվեկշիռը: 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններն անհրաժեշտ է արտացոլել Հայաստանի Հանրապետության 2017 թվականի հողային հաշվեկշռում:

Նպատակը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռի՝ ըստ նպատակային նշանակության ու սեփականության սուբյեկտների, իսկ գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերը՝ ըստ հողատեսքերի, տվյալները նախորդ տարիների հետ համեմատելն է, ինչպես նաև վերլուծության հիման վրա առաջարկություններ ներկայացնելն է՝ հողային պաշարների արդյունավետ օգտագործման և կառավարման, համայնքների սեփականաշնորհված հողերի միավորման ու խոշորացման ծրագրերին օժանդակելու համար:

**2. Կարգավորման առարկան**

Որոշման ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխությունները կարտացոլվեն 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռում:

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2017 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել բոլոր շահագրգիռ պետական մարմինները, ոչ պետական կազմակերպություններն ու անձինք:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2017 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման արդյունքում կկազմվի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի մասին տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը):

**Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե**

84. **«Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**

«Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Սևանա լճի էկոհամակարգերի վերա-

| | |
|---|---|
| | կանգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Ոռոգման նպատակով 2016 թվականին Սևանա լճից ջրառի մասին» N 558-Ա որոշմամբ ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի չափաքանակ է սահմանվել մինչև 170 մլն խոր. մետր ջրի քանակը:<br>2016 թվականի սեպտեմբերի 9-ի դրությամբ Սևանա լճից բաց է թողնվել 167.135 մլն խոր. մետր ջուր: Սևան-Հրազդան էներգետիկ-ոռոգման համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողերը ոռոգելու համար անհրաժեշտ է Սևանա լճից բաց թողնել համապատասխան քանակությամբ ջուր:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ջրային օբյեկտներից հնարավոր ջրառի տարբերության չափով պահանջարկի բավարարում<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Սևան-Հրազդան ոռոգման-էներգետիկ համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքներում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի՝ ոռոգման ջրով ապահովման գործընթացի իրականացում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրօգտագործողներին անհրաժեշտ քանակությամբ ոռոգման ջրով ապահովում |
| **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 85. | **«Հայաստանի Հանրապետությունում հրաձգություն մարզաձևի զարգացման ռազմավարությունը և դրա իրականացման 2018-2024 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունման նպատակը հրաձգություն մարզաձևին բնակչության տիրապետման հնարավորության ապահովումն է: Իրավական ակտն ընդունվելու է «Հրաձգություն մարզաձևի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմանը համապատասխան:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ-ում լիարժեք գործում է 3 հրաձգարան, ևս 9 հրաձգարան թերի է գործում՝ վերանորոգված չլինելու կամ զենք, զինամթերք չունենալու պատճառով: Մինչդեռ հրաձգարանների պահանջարկը ՀՀ-ում շատ ավելի մեծ է: Հրաձգարաններն անհրաժեշտ են պետության սահմանների պաշտպանվածությունը մեծացնելու և բնակչությանը զենքով ինքնապաշտպանություն սովորեցնելու համար:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ՀՀ մարզերում, հատկապես սահմանամերձ գոտիներում կառուցել հրաձգարաններ, եղած հրաձգարանները վերանորոգել, դրանք ապահովել զենքով և զինամթերքով: |

2. **Կարգավորման առարկան**

ՀՀ տարածքում, հատկապես սահմանամերձ գոտիներում գործող հրաձգարանների առկայության ապահովում, ուսումնական հաստատություններում ռազմագիտության դասի դասավանդման որակի բարձրացում, հրաձգություն մարզաձևի զարգացում

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հրաձգություն մարզաձևի զարգացում, ՀՀ բնակչության կողմից կրակելու և նշանառության հմտություններին տիրապետում, հրազենով ինքնապաշտպանության ունակ սերունդների դաստիարակում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում

86.

**«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրին հավա-- նություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության որոշման ընդունման նպատակը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ներդրումն ու ամրապնդումն է բնակչության շրջանում, ինչպես նաև առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՀՀ-ում բնակչության ներգրավվածությունը ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում դեռևս բավարար չէ. մինչև օրս հանրապետությունում չեն մշակվել՝ ինչպես բնակչության ֆիզիկական զարգացման, այնպես էլ՝ ֆիզիկական պատրաստականության չափորոշիչները, որոնց կիրառումը կապահովեր ֆիզիկական դաստիարակության վերահսկումը և պատշաճ մակարդակի ձեռքբերումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրին հավա- նություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը

2. **Կարգավորման առարկան**

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունմամբ կստեղծվի իրավական մեկ փաստաթուղթ, որը կներառի բնակչության բոլոր շերտերի ներգրավվածությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման, ֆիզիկական կուլտուրայի շարժման վերաբերյալ քարոզչության, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորման գործում:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ազգային ծրագրի մշակման, հաստատման և հետագա ներդրման շնորհիվ ֆիզիկապես կոփված և առողջ հասարակության ձևավորում, բնակչության բոլոր շերտերում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ներդրում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության կենցաղում ակտիվ հանգիստ և առողջ ապրելակերպ վարող անձանց թվի աճ: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերա- բերյալ քարոզչության նպատակով Երևան քաղաքի, ինչպես նաև մարզերի քաղաքների պուրակներում ու

| | |
|---|---|
| | այգիներում ֆիզկուլտուրային-առողջարարական և մասսայական մարզական միջոցառումների անցկացում: Մասսայական սպորտի ենթակառուցվածքների զարգացում՝ ինչպես կրթական համալիրներում, այնպես էլ՝ բնակելի և հասարակական վայրերում |
| 87. | **«Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի 2017-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունման նպատակն է թույլ չտալ, որ մոռացության մատնվի հայկական ազգային կոխ ըմբշամարտ ազգային մարզաձևը, որը մեզ է հասել դարերի խորքից: Իրավական ակտի նպատակն է ապահովել հայկական ազգային կոխ ըմբշամարտի պահպանումը, տարածումը և զարգացումը ՀՀ-ում, Արցախում, Ջավախքում և հայկական սփյուռքում:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հունա-հռոմեկան և ազատ ոճի ըմբշամարտերի, սամբոյի, ձյուդոյի մարզիչներն իրենց սաներին ուսուցանում են նաև հայկական ազգային կոխ ըմբշամարտի հնարքներն ու մարտավարական կանոնները: Հունա-հռոմեկան և ազատ ոճի ըմբշամարտերի, սամբոյի, ձյուդոյի մարզիչների հետագա վերապատրաստումը կազմակերպելու և հայկական ազգային կոխ ըմբշամարտի ՀՀ առաջնություններ և այլ մրցաշարեր անցկացնելու համար անհրաժեշտ է ծրագրանպատակային մոտեցում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայկական ազգային կոխ ըմբշամարտի ուսուցանում մարզադպրոցներում, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի համապատասխան մասնագիտությունների ուսանողների վերապատրաստում, հայկական ազգային կոխ ըմբշամարտի վերաբերյալ քարոզչություն և ՀՀ առաջնությունների, միջազգային մրցաշարերի կազմակերպում<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայկական մշակութային ժառանգության, ֆիզիկական դաստիարակության դարերից եկած ազգային համակարգի պահպանում, երիտասարդ սերնդի շրջանում ազգային գաղափարախոսության և բարձր արժեքների արմատավորում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ազգային կոխ ըմբշամարտի պահպանումը, տարածումը և զարգացումը ՀՀ-ում, Արցախում, Ջավախքում ու հայկական սփյուռքում և փոխանցումը հաջորդ սերունդներին, ինչը լուրջ քայլ է ազգապահպանման գործում: |
| 88. | **«Երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2018-2022 թվականների ընթացքում ՀՀ-ում համակարգված և արդյունավետ երիտասարդական պետական քաղաքականութան իրականացում<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2017 թվականին կավարտվի 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության միջոցառումների ծրագրի գործունեության ժամկետը, և անհրաժեշտություն է առաջանում մշակելու երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր՝ 2018-2022 թվականների համար: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երիտասարդական քաղաքականության արդիական խնդիրների լուծում<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Երիտասարդական պետական քաղաքականության համակարգվածության ապահովում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացում, երիտասարդական քաղաքականության ոլորտում առկա հիմնախնդիրների վերհանում, երիտասարդության մասնակցային գործընթացի խթանում, արդյունավետ երիտասարդական քաղաքականության իրականացում |
| 89. | **«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի (այսուհետ՝ հայեցակարգ) ընդունման նպատակը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար մարզական-առողջարարական և մարզական մասսայական աշխատանքների արդյունավետ համակարգի ու համակարգված համապատասխան պայմանների ստեղծումն է, հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովումը, մարզադպրոցների, մարզասրահների և մասսայական սպորտի այլ ենթակառուցվածքների մատչելիության ապահովումը, հաշմանդամային տարբեր մարզաձևերի զարգացումը և տարբեր առաջնություններում հայ մարզիկների նոր հաջողությունների գրանցումը:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները համընդհանուր բնույթ կրող խնդիրներ են, որոնք, անկախ տնտեսական վիճակից, գոյություն ունեն աշխարհի բոլոր երկրներում: Չնայած պետական մարմինների համապատասխան ուշադրությանը՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծմանը, այնուամենայնիվ, դեռևս շոշափելի արդյունքներ չեն գրանցվել, քանի որ չի ապահովվում հաշմանդամություն ունեցող անձանց՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու, ֆիզիկական դաստիարակության շարունակականությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը: Առաջիկա հինգ տարվա համար հաշմանդամային սպորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակում և ընդունում<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայեցակարգի ընդունումը կնպաստի ՀՀ-ում հաշմանդամային սպորտի բնագավառում նախանշված նպատակների իրագործման՝ հիմնական ուղղությունների և միջոցառումների մշակմանը և իրագործմանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների ու հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ: Այն կարող է |

| | |
|---|---|
| | հիմք դառնալ ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ հաշմանդամային սպորտի զարգացման տեղական ծրագրեր մշակելիս:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մինչև 2024 թվականը ՀՀ յուրաքանչյուր մարզի առնվազն 2 մանկապատանեկան մարզադպրոցում ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնամարզական, մարզական կատարելագործման խմբերի առկայություն, միջհամայնքային մարզադպրոցների ստեղծում` հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար, զրաված մրցանակային տեղերի և նվաճած մեդալների որակական բարելավում և մասնակիցների թվի ավելացում` նախորդ տարիների համեմատ: |
| **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** | |
| 90. | **«Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3-րդ բաժնի «Սփյուռք» գլխի 4-րդ կետից և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման հավելվածից:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սփյուռքում վտանգված են հայապահպանությունը, հայոց լեզուն, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ երիտասարդության մշտական և բազմաբնույթ կապերն ու հարաբերություններն են, պատանիների ու աղջիկների՝ Հայաստան ճանաչողական այցելությունները, իրենց հասակակիցների հետ ծանոթություններն ու շփումները, հայկական հարուստ ժառանգության հետ նրանց մշտական առնչություններն են:<br><br>3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Արի տուն» ծրագրի մշակման ու իրականացման միջոցով հնարավոր է սփյուռքի երիտասարդության համար ճանաչելի դարձնել սեփական հայրենիքը, լեզվամշակութային արժեքները, նպաստել Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանն ու հայապահպանությանը սփյուռքում:<br><br>4. **Կարգավորման առարկան**<br>«Արի տուն» ծրագրի իրականացումը թույլ է տալիս յուրաքանչյուր տարի հայաստանյան ընտանիքներում հյուրընկալել հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդների, նրանց համար կազմակերպել ճանաչողական շրջայցեր ու դասընթացներ:<br><br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում, սփյուռքի երիտասարդության կողմից հայրենաճանաչություն և ամուր կապ հայրենիքի հետ, երիտասարդական գործակցության խորացում և սփյուռքում հայապահպանություն, երիտասարդների ներգրավում համահայկական ծրագրերում: 2017 թվականի ծրագրով Հայաստան կայցելեն, հայաստանյան ընտանիքներում կհյուրընկալվեն, շրջագայությունների կմասնակցեն և ճամբարային հանգիստ կանցկացնեն տարբեր երկրների՝ մինչև 1000 հայ երիտասարդ: |

91.

**«Հայաստանի Հանրապետության բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսումնական տարվա ուսման վարձերի փոխհատուցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.3-րդ բաժնի «Սփյուռք» գլխի 2-րդ կետից և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման հավելվածից:

**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Սիրիահայ երիտասարդության՝ հայաստանյան հանրություն ինտեգրելուն ուղղված ծրագրերն ու միջոցառումները, նրանց ուսման վարձի փոխհատուցման հարցերը դարձել են ՀՀ սփյուռքի նախարարության համար առաջնահերթային, մշտապես քննարկվել են գործող միջգերատեսչական հանձնաժողովում, աշխատանքներ են կատարվել համապատասխան գերատեսչությունների, համահայկական կառույցների, հիմնադրամների, ուսումնական հաստատությունների հետ կրթական խնդիրների օպերատիվ, արդյունավետ լուծման համար: Սակայն բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսման վարձերի հարցը շարունակում է մնալ որպես ամենամյա լուծում պահանջող խնդիր, քանի դեռ չի ավարտվել ուսման ամբողջ շրջանը:

**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

2012 թվականից սկսած յուրաքանչյուր տարի սիրիահայ ուսանողների ուսման վարձի փոխհատուցման համար ֆինանսական միջոցների հիմնական ծավալը տրամադրվել է «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկության, Հայկական բարեգործական ընդհանուր միության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից: Ցուցաբերված նյութական աջակցությունը բավարար չլինելու պատճառով սիրիահայ ուսանողների ուսման վարձը փոխհատուցելու նպատակով ֆինանսական միջոցներ են տրամադրվել նաև ՀՀ պետական բյուջեից:

**4. Կարգավորման առարկան**

Նախագծի ընդունմամբ կկարգավորվի սիրիահայ ընտանիքների, երիտասարդների սոցիալական, թերևս, ամենահրատապ և շարունակական լուծում պահանջող հիմնահարցերից մեկը:

**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետության բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսումնական տարվա ուսման վարձերի փոխհտատուցում

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն**

92.

**«Ծխելու դեմ պայքարի ռազմավարությանը և այդ ռազմավարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

2004 թվականի հոկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վավերացրեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի մասին շրջանակային կոնվենցիան, որի նպատակն է միջազգային, ազգային և տարածաշրջանային

մակարդակներում իրականացվող ծխախոտի դեմ պայքարի միջոցառումների օգնությամբ ներկա և ապագա սերունդներին պաշտպանել մարդկանց առողջության համար ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության քայքայիչ հետևանքներից:

«Ծխելու դեմ պայքարի ռազմավարությանը և այդ ռազմավարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումը պայմանավորված է հանրային առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցման անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ծխախոտի օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջապահության հիմնական խնդիրներից մեկն է: Ծխախոտի օգտագործումը և դրա հետևանքով առաջացած ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության ու մահացության բարձր ցուցանիշներն առողջապահական և տնտեսական լուրջ խնդիրներ են ստեղծում:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոնի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2014 թվականի պաշտոնական տվյալների՝ Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հվանդություններից մահացության բեռը կազմում է մոտավորապես 80 տոկոս, ընդ որում, մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդություններն զբաղեցնում են առաջին տեղը՝ 48 տոկոս, որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20.6 տոկոս, շաքարային դիաբետը՝ 4.8 տոկոս, վնասվածքները, թունավորումները և արտաքին պատճառները՝ 4.7 տոկոս, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները (բրոնխիտ, ասթմա, քրոնիկական այլ թոքային և բրոնխոէկտատիկ հիվանդություններ)՝ 3.6 տոկոս:

Համաձայն ապացուցողական բժշկության տվյալների՝ ոչ վարակիչ հիվանդությունների զարգացումն ասոցացվում է կենսակերպային առանձնահատկությունների և դրանց հետ կապված՝ ռիսկի գործոնների, ժառանգական առանձնահատկությունների հետ, որոնք ունակ են արագացնելու հիվանդության զարգացումը: Բնակչության առողջության վիճակի վրա ռիսկի գործոնների առկայությունը և վնասակար ազդեցությունն արտահայտվում են ոչ թե անմիջապես, այլ համեմատաբար, երկար ժամանակահատվածում:

Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոններից է նաև ծխախոտի օգտագործումը:

Համաձայն 2012 թվականին առողջապահության համակարգի գործունեության գնահատման ծրագրի շրջանակում իրականացված հետազոտության՝ Հայաստանում 20 տարեկան և բարձր տարիքի՝ ամեն օր ծխող տղամարդկանց թիվը կազմում է 55.5 տոկոս: Ծխախոտի օգտագործումն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի՝ ակնհայտորեն ցույց են տալիս, որ ծխախոտի օգտագործումը տղամարդկանց շրջանում թռիչքաձև աճում է 15-19 տարիքային խմբից 20-29 տարիքային խումբ անցնելիս: Ըստ տարիքի ծխախոտի օգտագործումը տղամարդկանց մոտ հասնում է իր առավելագույնին՝ 30-39 տարեկանների շրջանում, և աստիճանաբար սկսում է նվազել: 70 տարեկան և բարձր տարիք ունեցող բնակչության շրջանում ամեն օր ծխողների թիվը ընդամենը 26 տոկոս է:

Հիմք ընդունելով շարադրվածը՝ ծխախոտի օգտագործման կրճատումը կնպաստի առողջության ցուցանիշների բարելավմանը, ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության և մահացության նվազեցմանը:

Նախագծի ընդունումը կնպաստի հանրային առողջության պահպանմանն ու ամրապնդմանը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Որպես հիմնախնդրի լուծում՝ առաջարկվում է ընդունել «Ծխելու դեմ պայքարի ռազմավարությանը և այդ ռազմավարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը, որով կնախանշվեն ՀՀ կառավարության՝ ծխելու դեմ պայքարի գերակայությունները, որոնք գերակշիռ մասով ուղղված են լինելու ծխախոտի

| | |
|---|---|
| | իրացման, սպառման օգտագործման բազմոլորտային սահմանափակումների սահմանմանը (հարկային օրենսդրության վերանայում, օգտագործման համար արգելված վայրերի ընդլայնում, իրազեկման արդյունավետ գործիքների մշակում և այլն):<br><br>2. **Կարգավորման նպատակը և բնույթը**<br>Նախագծի ընդունման նպատակն է պահպանել բնակչության առողջությունը և նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության ցուցանիշները՝ կրճատելով ծխախոտի օգտագործման տարածվածությունը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Ծխելու դեմ պայքարի ռազմավարությանը և այդ ռազմավարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է նվազեցնել ծխախոտի օգտագործումը բնակչության շրջանում՝ նվազեցնելով ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկը: |
| 93. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության ծրագրի «Առողջապահություն» բաժնի 5-րդ կետի «ա» ենթակետով 2017 թվականի համար նախատեսված՝ պետական պատվերի տեղաբաշխման գործընթացի թափանցիկության բարձրացման, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների առավել նպատակային և արդարացի օգտագործման անհրաժեշտությունից:<br><br>1.1. **Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա հիմնախնդիրները**<br><br>Ներկայումս պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկը, ամբողջ բնակչության համար անվճար բժշկական օգնության և սպասարկման ծրագրերն ու դրանց ծավալները, սոցիալական փաթեթի շահառուների համար պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման կարգն ու ծառայությունների փաթեթները սահմանված են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն և 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշումներով:<br>ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված է պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով կամ հատուկ (առանձին) խմբերի ցանկը: Տարիների ընթացքում այդ ցանկում ընդգրկված խմբերը պարբերաբար համալրվել են և ներկայումս կազմում են թվով 25: Պետք է նկատել, որ նախորդ տարիների, ինչպես նաև առկա ընթացիկ տարվա ցուցանիշները ցույց են տալիս, որ պետության կողմից երաշխավորված հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում պահանջող դեպքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում սոցիալական անա-պահովության միավոր չունեցող 2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամներին, մինչդեռ առավել խոցելի խումբ հանդիսացող՝ սոցիալապես անապահով քաղաքացիների, 1-ին խմբի հաշմանդամների հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման վրա կատարված ծախսերն էականորեն քիչ են: Փաստորեն, ստացվում է մի իրավիճակ, որ սոցիալապես պակաս խոցելի խավերի |

բուժօգնության համար առավել մեծ ծավալի միջոցներ են հատկացվում, քան առավել խոցելի համարվող անապահով խավերի բուժօգնության համար: Նկատի ունենալով այն, որ սոցիալական պետության հիմնական առաքելությունն առավել խոցելի, անվճարունակ խավերի սոցիալական պաշտպանությունը և նրանց առողջության պահպանման առաջնահերթ կարիքների բավարարումն է, պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստացող շահառուների առկա խմբերի սահմանումը, ինչպես նաև նրանց յուրաքանչյուրին պետական պատվերի շրջանակներում հատկացվող բժշկական ծառայությունների շրջանակը հրատապ վերանայման կարիք ունեն՝ սոցիալական արդարության, հավասար հնարավորությունների ընձեռման, առավել կարիքավոր խմբերին առաջնահերթություն տալու նկատառումներով և հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների ծավալը:

Մյուս կողմից, քանի որ գործող օրենսդրությամբ սոցիալական փաթեթի շահառուներին ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները բուժհաստատությունների միջև բաշխվում են նախապես՝ մինչև կոնկրետ բժշկական ծառայություն մատուցելը, տարվա ընթացքում առաջանում է բաշխված գումարի և պահանջարկի անհամապատասխանություն և, փաստորեն, մեծ պահանջարկ վայելող բուժհաստատություններին տրամադրված գումարները ծախսվում են օրացուցային տարվա ավարտից շատ ավելի շուտ, և շահառուն փաստացի չի կարողանում օգտվել բժշկական ծառայություններից և ստիպված է հերթագրվել, իսկ այդ դեպքում նրա հերթը կարող է հասնել 3-6 ամսից: Բավարար չեն նաև ներկայումս գործող վերահսկողական մեխանիզմները, որպեսզի ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներն օգտագործվեն արդյունավետ և առավել նպատակային:

Իրականում սոցիալական փաթեթի շատ շահառուներ տվյալ բժշկական ծառայության ստացման համար ստիպված օգտվում են վճարովի ծառայություններից: Արդյունքում առկա են բազմաթիվ դժգոհություններ՝ ինչպես սոցիալական փաթեթի շահառուների, այնպես էլ բժշկական հաստատությունների մեծ մասի կողմից:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն և 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշումներում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը

2. **Կարգավորման առարկան**

Առաջարկվում է `

1) պետության՝ սոցիալական արդարություն ապահովելու հանձնառության համատեքստում վերանայել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շահառուների ցանկը, տրամադրվող ծառայությունների շրջանակը՝ հիմքում դնելով անապահով խավերին առաջնահերթություն տալու սկզբունքը.

2) սոցիալական փաթեթի շահառուների բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպել ապահովագրական ընկերությունների հետ կնքվող ապահովագրության պայմանագրերի հիման վրա՝ սահմանելով այդ ընկերությունների ընտրության կարգը և չափանիշները:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

1) ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների առավել նպատակային և հասցեական ծախսում.

2) սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա խարսխված՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում և տրամադրում.

3) կլուծվի պետական հիմնարկներում և կազմակերպություններում աշխատող 88,998 շահառուի սոցիալական փաթեթի շրջանակներում իրենց հասանելիք բժշկական ծառայությունների ստացման

հարցը՝ առանց հերթագրումների և տվյալ անձանց կողմից նախընտրած բժշկական հաստատություններում, չգերազանցելով այդ նպատակի համար ՀՀ պետական բյուջեից ծախսվող գումարների ներկա մակարդակը՝ մոտավորապես 3,560,000 դրամ:

94.

**«Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Պացիենտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել գործուն մեխանիզմներ ստեղծելու, այդ իրավունքների խախտումներին օպերատիվ արձագանքելու, խախտված իրավունքների վերականգնմամբ նմանատիպ խախտումների հետագա դեպքերը կանխարգելելու, ինչպես նաև պացիենտների և բուժհաստատությունների՝ առողջապահության ոլորտում իրավագիտակցության բարձրացման նպատակով նախատեսվում է ներդնել բժշկական հաշտարարի համակարգ: Այս նպատակով անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական դաշտի ապահովում, ինչի նպատակով կմշակվի հայեցակարգի նախագիծը, որն էլ հենք կհանդիսանա «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մշակման համար:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Պացիենտների իրավունքներն ամրագրված են առողջապահության ոլորտը կարգավորող բազմաթիվ իրավական ակտերում, դրանց պաշտպանության մեխանիզմները գործող իրավակարգավորումների և իրողությունների շրջանակում բազմազան են, այդուհանդերձ դրանց կիրառման արդյունավետությունը ցածր է և ոչ բոլորին հասանելի: Պացիենտների խախտված իրավունքների վերականգնման գործող մեխանիզմներն ընդհանուր առմամբ մեծ ներուժ չեն պարունակում, մինչդեռ պացիենտների և բուժաշխատողների ցածր իրավագիտակցությունը, նրանց անտեղյակությունը, խախտումներով զբաղվող միասնական մարմնի բացակայությունը թույլ են տալիս ենթադրել, որ դրանց իրավունքների խախտումները քիչ չեն, ինչը, ընդհանուր առմամբ, բացասաբար է ազդում ինչպես մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի ապահովման, այնպես էլ՝ առողջապահական համակարգի բնականոն գործունեության վրա:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է խնդրի համապարփակ կարգավորման նպատակով ՀՀ-ում ներդնել պացիենտ-բուժհաստատություն վեճերի լուծման երկաստիճան համակարգ: Առաջին աստիճանում վեճերը կքննվեն բուժհաստատություններում ստեղծվելիք համապատասխան մարմինների կողմից, իսկ չլուծվելու դեպքում կտեղափոխվեն ավելի բարձր հարթակ՝ բժշկական հաշտարարի գրասենյակ, որի որոշումների իրականացումը, սահմանված ընթացակարգերին համապատասխան, պետք է օժտված լինի պարտադիրության ուժով և հարկադիր կատարման հնարավորությամբ: Համակարգի ներդրումը հնարավոր է ապահովել միայն համապատասխան օրենսդրական ակտի՝ «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ՝ նկատի ունենալով այն, որ համակարգի գործունեությունն ուղղակիորեն վերաբերում է ֆիզիկական և իրավաբա-

| | |
|---|---|
| | նական անձանց իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, ինչը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն, ենթադրում է համապատասխան օրենքի ընդունում: <br> Նշված օրենքով կսահմանվեն իրավունքի խախտումների դեպքերը, որոնք ենթակա կլինեն օրենքով սահմանված կարգով քննման, առաջին և երկրորդ ատյաններում վեճերը քննող մարմինների ստեղծման կարգը, գործունեության շրջանակները և լիազորությունները, գործերի քննության ընթացակարգերը, ժամկետները, որոշումների կատարման եղանակները՝ ներառյալ հարկադիր կատարման ընթացակարգերը, ինչպես նաև համակարգի ներդրման և գործարկման համար անհրաժեշտ և օրենքով կարգավորման ենթակա այլ հարաբերությունների շրջանակը: <br> Պետք է նշել, որ բժշկական կամ առողջապահական հաշտարարի ինստիտուտը տարբեր ձևաչափերով և լիազորությունների տարբեր շրջանակով գործում է բազմաթիվ երկրներում (Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Շվեյցարիա, Իսրայել և այլն) և մեծ դեր ունի ինչպես խախտված իրավունքների վերականգնման, այնպես էլ՝ դրանց կանխարգելման և առողջապահական իրավունքի կատարելագործման գործում: Ուստի, իրավական դաշտը կայուն զարգացման սկզբունքներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է համապատասխան հայեցակարգի ընդունում: <br><br> **2. Կարգավորման առարկան** <br> Բժշկական հաշտարարի ինստիտուտի գործարկումն ապահովող հայեցակարգային դրույթների ամրագրում <br><br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի հաստատմամբ ակնկալվում է մշակել և ընդունել «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» ՀՀ օրենքը, որի կիրարկման դեպքում ակնկալվում է նվազեցնել և կանխարգելել պացիենտների իրավունքների խախտումները, ապահովել խախտված իրավունքների վերականգնման օպերատիվ և անաչառ համակարգ: Բացի դրանից՝ բժշկական հաշտարարի ինստիտուտի գործարկումը թույլ կտա վեր հանել առողջապահական համակարգի այլ խնդիրներ՝ հնարավորություն տալով դրանց լուծման միջոցով բարելավել ոլորտի ընդհանուր վիճակը: |
| 95. | **«Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ** <br><br> 1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը) <br><br> «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրական առկա բացերը և խնդիրները վեր հանելու, դրանց վերլուծության արդյունքներով միասնական մոտեցումների որդեգրման միջոցով ոլորտային նոր մայր օրենքի ընդունման անհրաժեշտությամբ: |

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Առողջապահության ոլորտը կարգավորող հիմնական օրենքները, այն է՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է դեռևս 1996 թվականին, «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը՝ 1992 թվականին, «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը՝ 1997 թվականին, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքը և «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը՝ 2002 թվականին:

Փաստորեն այդ օրենքների մի մասն ընդունվել է անկախությունից անմիջապես հետո կամ դրան հաջորդող տասնամյակում՝ առողջապահական համակարգի համընդհանուր վերափոխումների շրջանում և հընթացս փոփոխվել է՝ ըստ իրավիճակային զարգացումների: Այսինքն, օրենքների կարգավորման հարաբերությունների շրջանակը մեծ առումով միասնական փիլիսոփայության, մոտեցումների և համակարգային կառուցակարգերի վրա խարսխված չէ, բացի դրանից, անկախությունից ի վեր առողջապահական համակարգի զարգացման հետ միաժամանակ ձևավորվել են կարևոր և կայուն հասարակական հարաբերություններ, որոնք, սակայն, օրենսդրորեն կարգավորված չեն:

Գործող հնացած, ոչ լիարժեք և ոչ հարմոնիզացված օրենսդրությունը ոչ միայն չի խրախուսում առողջապահական համակարգի զարգացումը, այլև շատ հաճախ խոչընդոտ է հանդիսանում ինչպես համակարգի բնականոն զարգացման, այնպես էլ՝ նոր մոտեցումների և ինստիտուտների ներդրման համար:

Հայաստանի Հանրապետությունում առողջապահության ոլորտը կարգավորող միասնական մայր օրենքն անհրաժեշտ է այս ոլորտում մարդու սահմանադրական իրավունքների պատշաճ իրականացման երաշխիքներ սահմանելու, առողջապահության ոլորտում պետական քաղաքականության միասնական մոտեցումներն ամրագրելու, համակարգի ընդհանուր կառուցվածքը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը հստակեցնելու, պացիենտների, բուժաշխատողների իրավունքները և պարտականությունները համապարփակ սահմանելու, առողջապահական համակարգի առավել կարևոր ենթահամակարգերի ընդհանուր նկարագրերը տալու և մի շարք այլ կարևոր խնդիրներ կանոնակարգելու նպատակներով:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ծավալով կամ կարևորությամբ նշանակալից օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակման աշխատանքների սկզբում նախագիծը մշակող մարմինը կարող է պատրաստել դրա հայեցակարգը: Հայեցակարգում տրվում են կարգավորման ենթակա հարաբերությունների բնութագիրը և ապագա իրավական ակտի նպատակները, շարադրվում են հիմնական դրույթները, վերլուծվում են նախագծվող նորմերի կիրարկման ենթադրվող հետևանքները, կարող է ներկայացվել իրավական ակտի նախնական կառուցվածքը: Հիմք ընդունելով օրենքի հիշատակված հոդվածը, ինչպես նաև այն, որ «Առողջապահության մասին» ՀՀ օրենքը պետք է պարունակի համակարգի բոլոր առավել կարևոր հարաբերությունները՝ նպատակահարմար է մինչև նախագիծը ներկայացնելը մշակել «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը:

**2. Կարգավորման առարկան**

Առաջարկվում է օրենքի հայեցակարգով համապարփակ կարգով վերլուծել առողջապահության ոլորտի գործող օրենսդրությունը, վեր հանել առկա բացթողումները, հակասությունները, շահերի

| | |
|---|---|
| | բախման ոլորտները, ոլորտի՝ օտարերկրյա պետությունների օրենսդրության վերլուծությունը, ներկայացնել օրենքի մակարդակում կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը և նպատակները՝ գլուխ առ գլուխ համառոտ ներկայացնելով դրանց հիմնական շեշտադրումները, ինչպես նաև ներկայացնել օրենքի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է նախապատրաստել առողջապահության ոլորտը համապարփակ կարգավորող, ոլորտի բնականոն զարգացումն ապահովող և նախանշող իրավական փաստաթղթի՝ «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման համար անհրաժեշտ հիմքերը: |
| **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն** | |
| 96. | **«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի N 1 և Վանաձորի N 1 հատուկ հանրակրթական հաստատությունները տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի N 1 և Վանաձորի N 1 հատուկ հանրակրթական հաստատությունները տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 3-րդ և 5-րդ կետերի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որի համաձայն նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքելու եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:<br>Օրենքով ամրագրվել է, որ հատուկ դպրոցները պետք է վերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն հանրակրթական դպրոցներին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, որպես երկրորդ մակարդակ, պետք է մատուցեն անձի կրթության |

| | |
|---|---|
| | աջակցության մանկավարժահոգեբանական ծառայություններ (կազմակերպում, համակարգում) և իրականացնեն անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի համաձայն նախատեսվում է 2017 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզում 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում:<br>Միաժամանակ նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների ձևավորմամբ կապահովվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելությանը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումը՝ իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրմամբ նախատեսվում է համընդհանուր ներառական կրթության, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդնում, ինչը կնպաստի կրթության ոլորտում սահմանված նպատակների իրականացմանը, մասնավորապես, կապահովվի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն՝ բոլոր երեխաների համար: |
| 97. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած ռազմավարության մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, որի փորձնական փուլի գործողությունների ժամկետները սահմանված են եղել 2014-2016 թվականների համար: Նշված արձանագրային որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով նախանշվել են «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի զարգացման և իրականացման ժամկետները՝ 2016-2021 թթ.: Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը կայուն դպրոցական սննդի կազմակերպման և իրականացման արդյունավետ մեխանիզմների ձևավորմամբ ՀՀ մարզերում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի զարգացումն ու ընդլայնումը ապահովելն է՝ ներգրավելով պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների բոլոր աշակերտներին:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում 2014-2016 թվականներին ՀՀ պետական բյուջեից համապատասխան հատկացումներ են տրվել ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերին՝ պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին դպրոցական սննդով ապահովելու համար: Ներկայումս «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում |

| | |
|---|---|
| | ընդգրկված է շուրջ 23400 աշակերտ:<br>ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հիմնականում սննդի կազմակերպման և սննդամթերքի անվտանգության ընդհանուր կանոններով: ՀՀ դպրոցական սննդի արդյունավետ կառավարման և ֆինանսավորման մեխանիզմները դեռևս հստակ կանոնակարգված չեն:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կայուն դպրոցական սննդի զարգացման և ընդլայնման իրականացմամբ կստեղծվեն դպրոցական կայուն սննդի կազմակերպման գործուն համակարգ և արդյունավետ մեխանիզմ, որոնք հնարավորություն կտան ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Կայուն դպրոցական սննդի կազմակերպման արդյունավետ համակարգի ստեղծմամբ նպաստել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի զարգացմանն ու ընդլայնմանը ՀՀ բոլոր մարզերում՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների աշակերտներին դպրոցական սննդով ապահովելու նպատակով:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Լիարժեքորեն ապահովել կայուն դպրոցական սննդի կազմակերպման գործընթացը ՀՀ բոլոր մարզերում, որի արդյունքում հանրապետության ամբողջ տարածքում տարրական դասարանների բոլոր սովորողներին կտրամադրվի հավասարակշռված, անվտանգ և որակյալ սնունդ: |
| 98. | **«Ձեռնարկատիրական կրթության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշման հավելվածի Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ազգային ռազմավարության իրականացմամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 44 որոշման հավելվածի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության 44-րդ և 45-րդ կետերով: Նպատակը կրթության բոլոր մակարդակներում ձեռնարկատիրական կրթության զարգացմանը նպաստելն է՝ ձեռներեց սերունդներ դաստիարակելու և ձեռնարկատիրական կարողություններ խթանելու համար:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական կրթության զարգացումը պետք է ուղղված լինի տնտեսական միջավայրի ձևավորմանն ու ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնմանը խթանելուն: Այն կարևոր հարթակներից է՝ ապահովելու համար արդյունավետ համագործակցություն ուսումնական հաստատությունների և սոցիալական գործընկերների (այդ թվում՝ մասնավոր գործարարներ) միջև: Հայաստանում ձեռնարկատիրական կրթության համակարգի ձևավորումը կարևորագույն խնդիրներից է: Ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը կրթական համակարգի բոլոր մակարդակներում դեռևս առկա չէ, և բիզնեսների ուսուցումն ու դրանց զարգացման միտումները հստակեցված չեն: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ապահովել ձեռնարկատիրական կրթության ուսումնառությունը դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ տարբեր առարկաներում և կրթական ծրագրերում ձեռնարկատիրական կրթության ինտեգրման սկզբունքով: Ձեռնարկատիրական կրթության զարգացումը աշակերտներին և ուսանողներին հնարավորություն կտա ձեռք բերելու գիտելիք ու հմտություններ՝ գործարար նախաձեռնություններ սկսելու, ինչպես նաև միմյանց հետ արդյունավետ համագործակցելու համար:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ձեռնարկատիրական կրթությամբ նպաստել սովորողների կարողությունների զարգացմանը: Ուսումնական հաստատություններում ձեռնարկատիրական կրթության զարգացումը կդիտարկվի որպես կարիերայի այլընտրանք դիտարկելուն ուղղված ուսումնառության կազմակերպման հնարավորություն:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կրթության բոլոր մակարդակներում լիարժեքորեն կապահովվի ձեռնարկատիրական կրթության կազմակերպումն ու զարգացումը: Աշակերտների և ուսանողների մոտ կձևավորվի ձեռնարկատիրական մտածողություն, կստեղծվեն հնարավորություններ՝ ուսումնական հաստատությունների և գործարարների միջև արդյունավետ համագործակցության համար, կստեղծվեն գործարար կապեր: |
| 99. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ներկայումս գործող ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշմամբ հաստատված՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության (տեղափոխման) վերանայման ու ներկայիս իրավիճակի համապատասխան դաշտի կարգավորման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ուսանողների շարժունության (տեղափոխության) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշմամբ, որի գործողության ընթացքում առաջացել է իրավակիրառական որոշ դրույթների փոփոխման անհրաժեշտություն:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է սահմանել համապատասխան դրույթներ, որոնցով կընդլայնվեն ուսանողների շարժունության (տեղափոխման), ակադեմիական կրեդիտների ավելի լայն օգտագործման գործընթացները և այլն:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ուսանողների շարժունությունը (տեղափոխությունը)<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում կընդլայնվեն ուսանողների շարժունության (տեղափոխման) պայմանները: |

100. **«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջից:

Ծրագիրը նպատակ ունի ապահովելու մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում արձանագրված ձեռքբերումների զարգացումն ու ընդլայնումը, որոնց հիման վրա կնախանշվեն ոլորտի զարգացման նոր միտումները:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2016 թվականին ավարտվում է ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի նիստի N 27 արձանագրային որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագիրը:

Նշված ծրագրի շրջանակում ՄԿՈՒ համակարգի բարեփոխումները հիմնականում իրականացվել են նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների չափորոշիչների ու մոդուլային ուսումնական պլանների մշակման և ներդրման, անձնակազմի վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման, նյութատեխնիկական բազայի հարստացման ու վերազինման, ինչպես նաև ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման ուղղությամբ: Բարեփոխումների թիրախում էին հիմնականում 12 տարածաշրջանային քոլեջների և 5 արհեստագործական ուսումնարանների զարգացումը, որոնք այժմ գտնվում են անհամեմատ լավ պայմաններում:

Սակայն համակարգում գործում են 100-ից ավելի ուսումնական հաստատություններ, որոնք դեռևս գտնվում են ոչ բարվոք վիճակում, մասնավորապես, խնդիրն առկա է Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գերատեսչական ենթակայության փոփոխության ռազմավարության հիման վրա ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության անցած գյուղատնտեսության և առողջապահության ոլորտների միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հնարավորություն են ստեղծում քայլ առ քայլ լուծելու ոլորտում ծառացած խնդիրները և ապահովելու ՄԿՈՒ համակարգի բնականոն և շարունակական զարգացումը:

2. **Կարգավորման առարկան**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագիրը նպատակ ունի նախանշելու և կանոնակարգելու ՄԿՈՒ համակարգի զարգացումը նշված ժամանակահատվածում:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Միջնաժամկետ հատվածում նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացման ուղղությունների սահմանում և դրանց համապատասխան գործընթացների կազմակերպում

101. **«Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Իրավական ակտի նպատակը տարբեր սոցիալական պատճառներով դպրոց չհաճախող երեխա-

| | |
|---|---|
| | ների բացահայտման հայաստանյան մոտեցումը և նրանց (վեր) ինտեգրումն է դպրոցներում՝ միջոլորտային համագործակցության և դեպքերի վարման համակարգի իրականացման միջոցով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դպրոց չհաճախող երեխաների բացահայտման մեխանիզմներն իրականացվել են տարբեր շահագրգիռ կողմերի և լիազոր մարմինների կողմից տրամադրված երեխաների ցուցակների եռակողմ համադրման (տրիանգուլյացիայի) միջոցով: Մասնավորապես, այդ ցանկերը ներառել են՝<br>1) տվյալ տարածքում բնակվող 5.6-ից 16 տարեկան երեխաների ցանկը և նրանց կրթական ներկայիս կարգավիճակը.<br>2) երեխաների ցանկը՝ տրամադրված դպրոցների կողմից.<br>3) հաշմանդամություն ունեցող երեխաների ցանկը՝ հիմքը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ազգային տվյալների բազան.<br>4) դժվար պայմաններում ապրող երեխաների ցանկը՝ հիմքը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ազգային տվյալների բազան:<br>2014 թվականի փորձնական ծրագրի շրջանակներում բացահայտվել է դպրոց չհաճախող 228 երեխա: Ամենամեծ խումբը կազմում էին 6-8 տարեկան երեխաները, որոնք դեռևս չէին ընդունվել առաջին դասարան՝ 212 երեխա: Եվս 16 երեխա 9-16 տարիքային խմբում նույնպես չի ընդունվել և չի հաճախում դպրոց: Դեպքի վարման արդյունքում՝ 6-8 տարեկան 72 երեխա ընդունվել է առաջին դասարան և 9-16 տարեկան 11 երեխա նույնպես ընդունվել է դպրոց:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հիմնվելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀՀ կառավարության միջև 2016-2017 թվականների գործողությունների երկամյա ծրագրի վրա, և հետևելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016 թվականի մայիսին ստորագրված համատեղ հրամանին (N 494-Ա և N 498-Ա), ինչպես նաև, հիմնվելով 2014-2015 թվականներին ՀՀ Լոռու մարզում իրականացված նշված միջոլորտային հաջողված փորձի ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետի կողմից կատարված ուսումնասիրության առաջարկությունների վրա, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախատեսում է մշակել և ներդնել պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման մեխանիզմներ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագիծն ուղղված է ՀՀ ամբողջ տարածքում պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաներին բացահայտելուն և դպրոց վերադարձնելուն:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Յուրաքանչյուր երեխայի համար ապահովել կրթության իրավունքի իրացումը: |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե** | |
| 102. | **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի 2011-2020 թվականների զարգացման ռազմավարությունից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության |

| | |
|---|---|
| | գործող օրենքն ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին և, կապված գիտության ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների, ինչպես նաև մի շարք նոր օրենքների ընդունման հետ, կարիք ունի էական փոփոխությունների:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածների ու դրույթների ճնշող մեծամասնությունը հստակեցման և արդիականացման կարիք ունի: Գիտության արդի պահանջներին պետք է համապատասխանեցնել օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, օրենքի հիմնական խնդիրները, գիտական կազմակերպության իրավասությունները և այլ դրույթներ: Օրենքում պետք է ներառվեն նաև մի շարք նոր հոդվածներ ու հասկացություններ: Մասնավորապես, հստակեցման կարիք ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության և գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները, կանոնակարգման կարիք ունեն գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները, պետք է արդիականացվեն ֆինանսավորման ձևերը: Բացի դրանից՝ անհրաժեշտ է սահմանել նոր հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին, հետազոտական համալսարան, գիտական դրամաշնորհ և այլն:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի իրավահարաբերությունների բարելավման և արդիականացման նպատակով օրենքում տեղ գտած բացթողումների լրացում, ժամանակակից հասկացությունների ներմուծում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունումը հնարավոր կդարձնի ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի համապատասխանեցումը գիտության զարգացման արդի վիճակին և միջազգային չափանիշներին, կնպաստի Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի առաջընթացին և դինամիկ զարգացմանը: |
| 103. | **«Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարան ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի 2011-2020 թվականների զարգացման ռազմավարությունից: Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարան ստեղծելու նպատակը գիտական բարձր մակարդակի հետազոտությունների և կրթական գործընթացների (մագիստրատուրա, ասպիրանտուրա, հետդոկտորանտուրա, վերապատրաստում և ստաժավորում) ինտեգրումն է, որի արդյունքում կձևավորվի միջազգային պահանջներին համապատասխան գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն ներուժի պատրաստման ժամանակակից բարձրագույն ուսումնական հաստատություն, կբարձրանա գիտական արդյունքների առևտրայնացման աստիճանը, կավելանա գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերի արտաբյուջետային բաղադրիչը և կստեղծվեն լրացուցիչ նախադրյալներ՝ տնտեսության ինովացիոն զարգացման համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման գործում: Այն կնպաստի նաև գիտության և տեխնիկայի բնագավառի կադրերի, մասնավորապես, գիտաշխատողների տարիքային կազմի կառուցվածքի բարենպաստ |

փոփոխությանը և կապահովի գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրությունը:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության ապահովումը: Սկսած 2009 թվականից իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ նպատակաուղղված գիտության ոլորտի երիտասարդացմանը, երիտասարդ գիտնականների և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցմանը: Մասնավորապես, ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների հայտերի մրցույթների ժամանակ սահմանվել է երիտասարդ կատարողների (ասպիրանտներ և մագիստրանտներ) մասնակցության նվազագույն սահմանը, իրականացվում են ասպիրանտների անհատական և երիտասարդ գիտնականների հետազոտական խմբերի աջակցության ծրագրեր, ինչպես նաև խրախուսվում են երիտասարդ գիտնականների շարժունության ապահովման ծրագրեր: Իրականացվող միջոցառումների արդյունքում ավելացել է երիտասարդ գիտնականների մասնաբաժինը գիտական ծրագրերի և թեմաների կատարողների մեջ: Սակայն այդպիսի ծրագրերը պետք է զուգակցվեն գիտական կադրերի պատրաստման ժամանակակից մեթոդների ներդրման հետ, մասնավորապես, այդ պատրաստումն անհրաժեշտ է կազմակերպել գիտության և տեխնիկայի արդի մակարդակին համապատասխան հետազոտություններ իրականացնող գիտակրթական/գիտահետազոտական կազմակերպություններում: Վերջինս կարևորվում է նաև նրանով, որ հնարավորություն է տալիս խորացնել գիտության և կրթության համագործակցությունը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նպատակին կարելի է հասնել՝ ստեղծելով հետազոտական համալսարան, որը կրթական, գիտական և ինովացիոն գործունեության միասնականության հիման վրա գործող և բարձրագույն ուսումնական հաստատության ու գիտական կազմակերպության գործառույթները զուգակցող կազմակերպություն է: Ներկայումս հետազոտական համալսարանները գիտության և տեխնոլոգիաների միասնական համակարգի անբաժանելի մասն են՝ դրանցում կատարվող գիտահետազոտական աշխատանքների և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման աշխատանքների կարևորության ու ազդեցության շնորհիվ:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անհրաժեշտ է մշակել և իրականացնել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդի պահանջներին համապատասխան համակարգային ծրագիր՝ նպատակ ունենալով ստեղծել գիտելիքահենք տնտեսության ու հասարակության հիմքը հանդիսացող բարձր կրթական և մասնագիտական որակավորում ունեցող կադրերի ինքնավերարտադրվող համակարգ: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նպատակին հասնելու ամենաարդյունավետ միջոցը հետազոտական համալսարանի ստեղծումն է, որտեղ հնարավոր է անհամեմատ ավելի բարձր արդյունավետությամբ զուգակցել մագիստրոսական և ասպիրանտական ուսուցման գիտակրթական բաղադրիչները. միայն ակտիվ գիտական միջավայրում է հնարավոր պատրաստել բարձր որակավորում ունեցող և գիտության ու տեխնիկայի ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետներ:

2. **Կարգավորման առարկան**

Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծումը հնարավորություն կտա ընտրելու գիտամանկավարժական բարձր որակավորմամբ, միջազգային մակարդակին համապատասխան հիմնարար ու կիրառական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածք ու նյութատեխնիկական բազա ունեցող գիտական կամ գիտակրթական կազմակերպություններ, որոնց հիման վրա էլ կձևավորվի հետազոտական համալսարանը: Միևնույն ժամանակ հետազոտական համալսարանի ստեղծումը կնպաստի երիտասարդ գիտնականների և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցմանը,

գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերարտադրությանը և բնագավառի կադրային կազմի տարիքային կառուցվածքի անհրաժեշտ փոփոխությանը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծումը կնպաստի գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակների ներդրմանը, ինչպես նաև գիտական հետազոտությունների և կրթական գործընթացի բոլոր մակարդակների (մագիստրատուրա, ասպիրանտուրա, հետդոկտորանտուրա, վերապատրաստում և ստաժավորում) ինտեգրման արդյունքում կձևավորվի միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն ներուժի վերարտադրողական համակարգ: Այն կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվի անհրաժեշտ փոփոխությանը և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրությանը: Հետազոտական համալսարանի ստեղծման արդյունքում կավելանա գիտական հետազոտությունների ու մշա-կումների վրա կատարվող ծախսերի արտաբյուջետային բաղադրիչը, լրացուցիչ նախադրյալներ կստեղծվեն տնտեսության զարգացման համար, կաճի գիտական կիրառական արդյունքների առևտրայնացման աստիճանը:

**Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն**

104.

**«Հայաստանի Հանրապետության հնագիտության զարգացմանը նպաստող միջոցառումների (2017-2025 թվականներ) ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է հնագիտական հուշարձանների պահպանության, օգտագործման, հանրահռչակման բնագավառում միասնական մոտեցումների մշակման և իրականացման անհրաժեշտությունից: Իրավական ակտով առաջարկվող համալիր միջոցառումները նպատակաուղղված կլինեն հնագիտական հուշարձանների նպատակային հետազոտման, պահպանության, ամրակայման, վերականգնման, թանգարանացման, օգտագործման և հանրահռչակման ապահովմանը, ինչպես նաև մշակութային զբոսաշրջության զարգացման նպատակով՝ հնագիտական հուշարձանների և պատմական միջավայրի օգտագործման խրախուսմանը, հնագիտության վերջին տասնամյակների ձեռքբերումների ամրապնդմանն ու ենթակառուց-վածքների զարգացմանը: Որոշման նախագծի հիմնական նպատակը երկրի կայուն զարգացման գործընթացներում հնագիտական ժառանգության՝ որպես տնտեսական ռեսուրսի դիտարկումն է:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիներին Հայաստանում ՀՀ պետական բյուջեից զգալի միջոցների հատկացման, միջազգային համատեղ ծրագրերի ընդլայնման, հուշարձանների վերականգնման աշխատանքների ծավալման, հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ ոլորտում զգալի աճ և ձեռքբերումներ են արձանագրվել, ինչը կրում է շարունակական բնույթ: Նոր հետազոտությունների արդյունքում թարմացվել ու համալրվել է տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրության աղբյուրագի-տական հենքը: Արտասահմանյան գիտական կենտրոնների օժանդակությամբ իրականացվել են մեծ միջոցներ պահանջող հետազոտություններ, որոնք որակապես նոր տվյալներ են տալիս Հայաստանի պատմության, տնտեսության և մշակույթի ուսումնասիրության համար: Օտար լեզու-ներով հրատարակվել են մի շարք ուսումնասիրություններ: Նման աշխատանքների շնորհիվ հայ հնագիտությունն այսօր սերտորեն ինտեգրվել է միջազգային գիտական կենտրոնների ծրագրերին ու աշխատանքներին: Հայաստանում տարեկան իրականացվում է մոտավորապես 60 հնագիտական պեղում:

Հնագիտության վերջին տարիների ձեռքբերումներն ամրապնդելու, այս ուղղությամբ հեռանկարային զարգացումն ապահովելու համար առաջնահերթ և լուծում պահանջող խնդիրներից է հնագիտական հուշարձանների ուսումնասիրման, պահպանության, օգտագործման, հանրահռչակման համալիր միջոցառումների և հուշարձանակիր տարածքների ուսումնասիրման, թանգարանացման ծրագրերի իրականացումը:

Որոշման նախագծով առաջնահերթ և լուծում պահանջող խնդիրներից են՝

1) հնագիտական ուսումնասիրությունների զարգացումը, պեղվող հուշարձանների ամրակայումը և վերականգնումը.

2) հուշարձանակիր տարածքների թանգարանացումը, զբոսաշրջային երթուղիների մշակումը, զբոսաշրջային ծրագրերում ներգրավումը.

3) հնագիտական ժառանգության պահպանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը.

4) թվայնացումը, քարտեզագրումը.

5) կադրերի պատրաստումը.

6) միջազգային համագործակցության ընդլայնումը և մշակութային ժառանգության միջազգայնացումը, հնագիտական պեղումների արդյունքների և ժառանգության հանրահռչակումը.

7) պատմամշակութային ժառանգության պահպանման իրավական հիմքերի ամրապնդումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Որոշման նախագծով առաջարկվում է իրականացնել հնագիտական հուշարձանների նպատակային հետազոտման, պահպանության, ամրակայման, վերականգնման, թանգարանացման, օգտագործման և հանրահռչակման համալիր ծրագրեր, ստեղծել հնագիտական հիմնարար հետազոտությունների ոլորտի մակարդակի բարձրացման, պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման, հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, հուշարձանների հանրահռչակման նպատակով հնագիտական հուշարձանների պեղումների շտեմարան-տեղեկագիրք, կազմակերպել միջազգային գիտաժողովներ, ներդնել սկզբնաղբյուրների թվայնացման, էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և օգտագործման նպատակով հնագիտական տեղեկատվական համակարգ, ստեղծել հնագիտական ուսումնասիրությունների կենտրոն, մասնավորապես, ուրարտական ուսումնասիրության կենտրոն, մշակել ընթացակարգեր՝ հնագիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների նպատակով:

1.3. **Կարգավորման առարկան**

Իրավական ակտի կարգավորման առարկան հայկական պատմամշակութային ժառանգության բացառիկ հուշարձանների պեղումների ընդլայնման ու այդ ուղղությամբ միջազգային համագործակցության ամրապնդման, հուշարձանակիր տարածքների թանգարանացման, զբոսաշրջային ծրագրերում ներառման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է:

1.4. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետության հնագիտության զարգացմանը նպաստող միջոցառումների (2017-2025 թվականներ) ծրագրի մշակման արդյունքում նորովի կկազմակերպվեն հնագիտական հուշարձանների պահպանությունը և կառավարումը՝ սահմանելով տնտեսական զարգացման առաջնահերթությունները և համալիր մոտեցում ցուցաբերելով բնության, պատմական միջավայրի, հնագիտական ժառանգության, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման խնդիրներին: Կստեղծվի ուրարտագիտական կենտրոն, գիտության ժամանակակից պահանջները բավարարող պեղումներով և հետազոտություններով կհամալրվի մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներին վերաբերող սկզբնաղբյուրների աղբյուրագիտական բազան:

Ծրագրի ընդունմամբ ակնկալվում է շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղա-

| | |
|---|---|
| | կան ինքնակառավարման մարմինների, բնագավառի գիտական կազմակերպությունների և բուհերի, ինչպես նաև միջազգային կառույցների հետ ակտիվ ու արդյունավետ համագործակցության արմատավորում: |
| 105. | **«Կինեմատոգրաֆիայի մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆիայի ոլորտի համապարփակ կարգավորման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել կինոնկարների արտադրության, կինովարձույթի, ցուցադրման և կինոփառատոներում, կինոշուկաներում մասնակցության պետական ֆինանսավորման, օտարերկրյա ներդրումների շրջանակներում կինոարտադրողին ավելացված արժեքի հարկի գծով փոխհատուցման, կինովարձույթի հավաստագրի տրամադրման, կինոնկարների դասակարգման (ըստ դիտողների տարիքային սահմանափակումների), ՀՀ կառավարության, ոլորտի լիազոր պետական մարմնի, կինեմատոգրաֆիայի խորհրդի և կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունների հետ կապված հարաբերությունները:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մինչև օրս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կինեմատոգրաֆիայի ոլորտը կարգավորող իրավական ակտ, ինչի արդյունքում մի շարք կարևոր հարաբերություններ օրենսդրական կարգավորում չեն ստացել, իսկ առկա կարգավորումները չեն ապահովում եզրույթների օգտագործման միասնականությունը: Կարգավորված չեն կինոնկարների արտադրության, կինովարձույթի, ցուցադրման, միջազգային կինոփառատոներին մասնակցության պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևերը: Որևէ կերպ չի խրախուսվում օտարերկրյա կինոնկարների նկարահանումը Հայաստանի Հանրապետությունում: Կինոդահլիճներում և հեռուստատեսությամբ կինոնկարների հրապարակայնորեն ցուցադրումն իրականացվում է առանց տարիքային սահմանափակումների մասին նշում անելու, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ երեխաների իրավունքների պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և բարոյականության վրա: Կարգավորված չէ կինովարձույթի հավաստագրման գործընթացը, որով հնարավորություն կտրվի կինոարտադրությամբ և կինոցուցադրությամբ զբաղվող կազմակերպություններին ցուցադրելու որակյալ կինոնկարներ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքների նախագծերը նպատակ ունեն՝<br>1) հստակեցնելու կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմինների լիազորությունները.<br>2) սահմանելու կինոնկարների արտադրության, կինովարձույթի, ցուցադրման, կինոփառատոներին մասնակցության պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևերի իրականացման հիմնական կանոնները.<br>3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից փոխհատուցելու ավելացված արժեքի հարկի գումարը՝ օտարերկրյա ներդրումների շրջանակներում արտադրվող ֆիլմերի համար.<br>4) հստակեցնելու կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի գործառույթները.<br>5) սահմանելու Հայաստանի Հանրապետությունում հրապարակայնորեն ցուցադրվող կինոնկարների պարտադիր դասակարգման պահանջ՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակումների.<br>6) կինեմատոգրաֆիայի ոլորտում առաջարկություններ ներկայացնելու համար ներգրավելու քաղաքացիական հասարակությանը՝ կինեմատոգրաֆիայի խորհուրդ ստեղծելու միջոցով: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆիայի ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի նորմատիվ դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը և հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրարկման համար:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքների նախագծերի ընդունումը նոր խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում կինեմատոգրաֆիայի զարգացման համար, մասնավորապես, պետական ֆինանսավորման և աջակցության այլ ձևերի արդյունավետության բարձրացման, տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման, կինոնկարների նկարահանման համար Հայաստանի Հանրապետությունում գրավիչ պայմանների ստեղծման, նոր կինոնկարների ստեղծման, այդ թվում՝ երեխաների և պատանիների համար, ոլորտի աշխատողների մասնագիտական հմտությունների բարձրացման, օտարերկրյա պետությունում հայկական կինոնկարների արտադրության, վարձույթի, միջազգային կինոփառատոներին մասնակցության միջոցով, Հայաստանի Հանրապետությունում արտադրված, ինչպես նաև համատեղ արտադրության ֆիլմերի հավաքագրման, վերականգնման և թվայնացման, կինոարխիվի ստեղծման համար: |
| 106. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի պահանջներից:<br>Նշված որոշման նախագծի նպատակը ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման ձևաչափի արդիականացումն է:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ոլորտում իրավահարաբերությունները կարգավորվում են «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերով՝ ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն, 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա, 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն, 2012 թվականի մարտի 1-ի N 241-Ն և 2016 թվականի մարտի 24-ի N 293–Ա որոշումներով:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ ապահովվելու է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի արդյունավետ կիրարկումը:<br>Ներկայումս առկա խնդիրներն են՝<br>1) տեղեկատու էլեկտրոնային շտեմարանների և կայքէջերի միջոցով ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ նյութերի տարածման ապահովումը.<br>2) տեղեկատվության փոխանակման ձևաչափի արդիականացումը: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փոփոխություն կատարելով՝ առաջարկվում է՝<br>1) ապահովել ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ նյութերի տարածումը՝ տեղեկատու էլեկտրոնային շտեմարանների և կայքէջերի միջոցով.<br>2) խթանել ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ գիտական, կրթական, մշակութային պետական հաստատությունների կողմից գրականության հրատարակումը.<br>3) արդիականացնել ոչ նյութական մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մեխանիզմները:<br><br>1.3. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ տեղեկատվության փոխանակման ձևաչափի արդիականացումը<br><br>2. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կապահովվեն Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների գույքագրման, ուսումնասիրման, դասակարգման, պահպանության, հանրահռչակման, փաստաթղթավորման, տեղեկատվության փոխանակման ձևաչափի արդիականացումը և ոչ նյութական մշակութային ժառանգության, անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային արժեքների, մշակութային տարածքների ցանկերի համալրման գործընթացի իրականացումը: |
| | **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| 107. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 4-րդ ենթակետի դրույթներից, որի համաձայն նախատեսվել է եռամյա ժամկետում անապահովության գնահատման մոտեցումների ու մեթոդաբանության արմատական վերանայում՝ հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին (երեխաներին, միայնակ տարեցներին, բազմազավակ ընտանիքներին և այլ խմբերի) ուղղելու սկզբունքային մոտեցումը:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգ, ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակում և վճարում, կարգավորվում են ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ:<br>Ի կատարումն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտության արդյունքներով ներկայացվող առաջարկությունների հիման վրա մշակվում են ընտանիքի անապահովության բնութագրիչների թիրախային ցուցանիշները: |

| | |
|---|---|
| | Արդեն իսկ հրապարակվել են 2015 թվականի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները, այդ թվում՝ առաջին անգամ հրապարակվել է նաև բազմաչափ աղքատության գնահատումը, որը հնարավորություն է տալիս ընտանիքների անապահովության գնահատման մոտեցումներում և մեթոդաբանության մեջ իրականացնել արմատական փոփոխություններ: Բազմաչափ աղքատության գնահատման համար ընտրված չափումներից և ցուցանիշներից են ծայրահեղ աղքատությունը, բնակարանային պայմանները, կրթությունը, աշխատանքի շուկային մասնակցությունը, առողջապահությունը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սահմանել ընտանիքների անապահովության գնահատման նոր մոտեցումներ և մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա բարձրացնել ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության տրամադրման հասցեականությունը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ընտանիքների անապահովության գնահատման նոր մոտեցումների և մեթոդաբանության կիրառմամբ՝ ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման գործընթացի ապահովում, հասցեականության բարձրացում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված որոշման նախագծի ընդունմամբ կիստակեցվեն ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները: |
| 108. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4.2-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի ժամանակ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բժշկասոցիալական փորձաքննության ներկայիս համակարգը հնարավորություն չի տալիս արդյունավետ կազմակերպել գործընթացը, լիարժեք չէ նաև հաշմանդամության գնահատման չափորոշիչների օբյեկտիվության մակարդակը, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Այս խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է կատարել համակարգի արմատական փոփոխություններ՝ վերանայելով բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմինների գործառույթները և փոխհարաբերությունները, հնարավորինս սահմանափակելով քաղաքացիների և փորձաքննական որոշում կայացնողների ուղղակի շփման հնարավորությունը: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ձևավորել որոշումների ընդունման կենտրոնացված համակարգ, ներդնել անկախ վերահսկողական մեխանիզմ և իրականացնել այլ գործընթացներ:<br>Ներկայումս հաշմանդամության գնահատման չափորոշիչները սահմանված են ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշմամբ, բժշկասոցիալական փորձաքննության առնչվող հարաբերությունները, իրականացման կարգը սահմանված են մի շարք այլ իրավական ակտերով: Հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման ուղղությամբ 2015-2016 թվականների ընթացքում մշակվել են հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչներ (գործիքներ), որոնց հիմքում ընկած են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների |

| | |
|---|---|
| | միջազգային դասակարգման սկզբունքները (ԱՀԿ ՖՄԴ): Մշակված գործիքները փորձարկվել են բժշկասոցիալական փորձաքննական տարբեր հանձնաժողովներում, վեր են հանվել որոշակի խնդիրներ, քննարկվել են դրանց կարգավորման ուղիները: Հնարավոր ռիսկերից խուսափելու և սոցիալական լարվածություն չառաջացնելու համար նպատակահարմար է մոդելը փորձնական կիրառել բժշկասոցիալական փորձաքննության համար առաջին անգամ դիմած անձանց նկատմամբ: Այս գործընթացում նախատեսվում է առանձնակի ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերին, որոնք պետք է հիմք հանդիսանան նրանց բժշկական վերականգնման համար:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Այս գործընթացի իրավական հիմքն ապահովելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել մի շարք իրավական ակտերում՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշում, 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշում, 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշում, 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում, 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1535-Ն որոշում, 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշում և այլն:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Կատարել բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արմատական փոփոխություն, հաշմանդամության սահմանման նոր մոդելը փորձնական կիրառել բժշկասոցիալական փորձաքննության համար առաջին անգամ դիմած անձանց նկատմամբ:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արմատական փոփոխություն՝ նոր համակարգի ձևավորմամբ: Հաշմանդամության սահմանման հստակ՝ հիվանդությունները հաշմանդամությունից տարանջատող չափորոշիչների առկայություն.<br>2) հաշմանդամության գնահատման նոր մոդելի փորձնական կիրառման համար իրավական դաշտի ապահովում |
| 109. | **«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Ներկայացվող նախագծերի ընդունման նպատակը «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի N 32 հավելվածի (այսուհետ՝ կանոնակարգ) համաձայն՝ ՀՀ օրենսդրությամբ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կոլեգիայի անդամների, միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատողների (այսուհետ՝ միջազգային ծառայողներ) կենսաթոշակի իրավունքի իրացումն ապահովող իրավական հիմքերը սահմանելն է:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կանոնակարգով, ի թիվս սոցիալական այլ երաշխիքների, սահմանվել է, որ միջազգային ծառայողների կենսաթոշակային իրավունքն իրացվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են նրանք: Այս նպատակով, առանց միջազգային ծառայողների աշխատավարձից պահումներ կատարելու, միության բյուջետային միջոցների |

| | |
|---|---|
| | հաշվից կատարվում են աշխատողների կենսաթոշակային ապահովության գծով պարտադիր մասհանումներ՝ անդամ պետությունների կենսաթոշակային ֆոնդերին:<br>Հայաստանի Հանրապետությունում ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի իրավունքն իրացվում է «Պետական կենսաթոշակների մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքների համաձայն՝ օրենքներով սահմանված պայմանները բավարարելու, այդ թվում՝ համապատասխանաբար ՀՀ պետական բյուջե եկամտային հարկ կամ սոցիալական վճար վճարած լինելու դեպքերում: Մինչդեռ հանձնաժողովի կոլեգիայի անդամները և միության դատարանի դատավորներն օգտվում են «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով դիվանագիտական գործակալի համար նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիություններից (18-րդ կետ), իսկ պաշտոնատար անձինք ազատվում են միության մարմինների կողմից վճարվող աշխատավարձի և այլ վարձատրությունների հարկումից (19-րդ կետ):<br>Այսինքն, հանձնաժողովի կոլեգիայի անդամների, միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց աշխատավարձը և այլ վարձատրություններն ազատված են եկամտային հարկից և նույնիսկ միության բյուջետային միջոցների հաշվին նրանց համար ՀՀ պետական բյուջե եկամտային հարկ վճարվել չի կարող:<br>Մյուս կողմից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի դրույթներն ամբողջությամբ կիրառելի են այն վարձու աշխատողների համար, ովքեր աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվում բացառապես ՀՀ պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց հետ, որոնց էլեկտրոնային եղանակով ներկայացրած գրանցման հայտերի և անձնավորված հաշվարկների հիման վրա էլ կառուցված է կուտակային կենսաթոշակային համակարգը:<br>Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումները բավարար չեն միության բյուջետային միջոցների հաշվին միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության գծով պարտադիր մասհանումների կատարումն ապահովելու համար:<br>Հարկ է նշել, որ կանոնակարգի դրույթները նախատեսված են ՀՀ պետական բյուջեից տարբեր կենսաթոշակային ֆոնդեր ունեցող երկրների համար: Հաշվի առնելով ՀՀ օրենսդրության նշված առանձնահատկությունները՝ նպատակահարմար է կատարել համապատասխան փոփոխություններ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ելնելով շարադրվածից՝ առաջարկվում է ընդունել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>1) օրենքով կսահմանվի կենսաթոշակային վճար, որպես միջազգային ծառայողների՝ ՀՀ օրենսդրության համաձայն պետական կենսաթոշակային ապահովության մակարդակում կենսաթոշակի իրավունքի իրացման պայման.<br>2) միջազգային կառույցի կարգավիճակով պայմանավորված՝ կկարգավորվեն անձնավորված հաշվառմանը և վճարների կատարմանն առնչվող հարաբերությունները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներկայացվող նախագծերի ընդունման դեպքում կապահովվի միջազգային ծառայողի կենսաթոշակի իրավունքի իրացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակի իրավունքի իրացման համար միջազգային կառույցի բյուջեի միջոցների հաշվին կատարված մասհանումների հիման վրա: |

| | |
|---|---|
| 110. | **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին » ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի կազմակերպման ոլորտում առկա խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որը նախատեսվում է իրականացնել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմամբ: Նման կարգավորման պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4.2-րդ կետի 8-րդ ենթակետում:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները որոշակիորեն կարգավորված են ՀՀ օրենսդրությամբ:<br>Սակայն, անհրաժեշտ է նշել, որ դեռևս առկա են օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ոլորտի կայացմանն ու հետագա զարգացմանը: Մասնավորապես, դրանցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները՝<br>1) կամավորական աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու ոչ լիարժեք իրավական կարգավորումները.<br>2) կամավորի և կամավորներ ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորման բացակայությունը.<br>3) կամավորի գործունեության հետ կապված ծախսերին (ճանապարհածախս, օրապահիկ, գիշերակաց, գործուղման վճար, արտահագուստ և այլն) փոխհատուցման մեխանիզմների ամբողջական կարգավորման բացակայությունը.<br>4) կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքները միմյանցից տարանջատելու մեխանիզմների բացակայությունը.<br>5) կամավոր աշխատանքներում քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակների ներգրավման խթանիչ մեխանիզմների բացակայությունը.<br>6) կամավորական գործունեությունից բխող հնարավոր ռիսկերի ապահովագրման մեխանիզմների բացակայությունը, այդ թվում՝ կամավոր աշխատանքում դժբախտ դեպքերից ապահովագրություն, կամավորի պատասխանատվության ապահովագրություն կամավորի օգնության կարիք ունեցողի նկատմամբ.<br>7) կամավորներ ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպության և կամավորի հիմնական իրավունքների և պարտականությունների ամրագրման բացակայությունը՝ ինչպես միմյանց, այնպես էլ՝ կամավորի օգնության կարիք ունեցողի նկատմամբ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի կազմակերպման ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով հայեցակարգի նախագծով նախատեսվում է «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում, որով կսահմանվեն կամավորական աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու մեխանիզմները, կապահովվեն կամավորի ինստիտուտի կայացման և զարգացման, կամավոր աշխատանքների խթանման, քաղաքացիական հասարակության կյանքում վերջինիս դերի բարձրացման նախապայմանները:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբե- |

| | |
|---|---|
| | րությունների կարգավորում՝ սահմանելով կամավորական գործունեության սկզբունքները, նպատակները, ոլորտներն ու ձևերը, ինչպես նաև կամավոր աշխատանքի կազմակերպման իրավական հիմքերը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի նախագծի ընդունումը կհանգեցնի կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ամբողջական օրենսդրական կարգավորման համապատասխան հիմքերի և ուղղությունների ամրագրման՝ ըստ որի կապահովվեն կամավորի ինստիտուտի կայացման և զարգացման, կամավոր աշխատանքների խթանման, քաղաքացիական հասարակության կյանքում վերջինիս դերի բարձրացման նախապայմանները: |
| 111. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է ծառայողական գործուղման մեկնող աշխատողների համար՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասից բխող երաշխիքների ամբողջական ապահովման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի համաձայն հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու կամ, անկախ հեռավորությունից, հիմնական աշխատանքի վայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքերում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն գործուղման ճանապարհածախսը:<br>Նշված դրույթի կիրարկման արդյունքում առաջանում են որոշ խնդիրներ, մասնավորապես, գործատուն աշխատողին գործուղում է Ռուսաստանի Դաշնություն, որտեղ աշխատողը մեկ օրվա ընթացքում պետք է կատարի իր հանձնարարությունները և վերադառնա Հայաստանի Հանրապետություն: Ստացվում է, որ այս դեպքում աշխատողին կհատուցվի միայն ճանապարհածախսը, այն դեպքում, երբ աշխատողն ամբողջ օրը՝ մեկ աշխատանքային օրվանից էլ շատ ժամանակ, լինելու է դրսում, և իր կեցության (սնունդ, տվյալ քաղաքում տրանսպորտային միջոցներից օգտվելու վճար և այլն) համար անհրաժեշտ ծախսերի դիմաց նրան հատուցում չի տրվելու: Նման դեպքերում գործատուն կարող է արհեստականորեն երկարաձգել գործուղման ժամկետը, որը ՀՀ պետական բյուջեից հատուցման դեպքում լրացուցիչ ֆինանսական ծախս կառաջացնի:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ կառաջարկվի մեկօրյա գործուղումների դեպքում աշխատողին հատուցել նաև օրապահիկը, ինչպես նաև առավել կհստակեցվեն կարգի մյուս դրույթները:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման հետ կապված հարաբերությունները<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի հստակեցում |

| 112. | **«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1906-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 5-րդ ենթակետի դրույթներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 36 արձանագրային որոշմամբ նախատեսված միջոցառումներից և ուղղված է Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով՝ երեխաների խնամքի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմանը և այդ հաստատություններում երեխաների թվի նվազեցմանը:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատություն (մանկատուն), որտեղ խնամվում է 660 երեխա:<br>2015 թվականի մայիս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, այդ թվում՝ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ում (որը նախատեսված է 70 երեխայի շուրջօրյա խնամքի համար) խնամվող երեխաների խորը գնահատում: Գնահատվել են խնամվող երեխաների խնդիրները, այդ թվում՝ յուրաքանչյուր երեխայի՝ հաստատությունում հայտնվելու պատճառները, առկա առողջապահական, հոգեբանական և այլ կարիքները, ընտանիք (հարազատներ) ունենալու փաստը, վերջիններիս գտնվելու վայրը, ընտանիքի (հարազատների) հետ շփումների աստիճանը, երեխաների կենսաբանական ընտանիքների սոցիալական կարիքները, յուրաքանչյուր ընտանիքի կողմից երեխային հաստատություն հանձնելու պատճառները, կենսաբանական ընտանիքի հետ երեխայի վերամիավորման հնարավորությունները, անհրաժեշտ պայմաններն ու խանգարող պատճառները, ինչպես նաև երեխաների ծագման համայնքների, համայնքամերձ տարածքների, մարզերի սոցիալական խնդիրները, սոցիալական պաշտպանության ենթակառուցվածքների վիճակն ու հնարավորությունները՝ բացահայտելով յուրաքանչյուր համայնքում ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրները, այդ թվում՝ աղքատության աստիճանը, բնակարանային պայմանները, զբաղվածության աստիճանը, կառուցվածքային և բարոյահոգեբանական խնդիրները (բազմազավակ, ոչ լրիվ կազմով, կոնֆլիկտներ ունեցող ընտանիքների թիվը), երեխաների սոցիալական կազմը (սեռատարիքային կառուցվածքը. հաշմանդամություն ունեցող, աղքատ ընտանիքներում ապրող, առանց ծնողական խնամքի մնացած, այդ թվում՝ միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հոգեբանական խնդիրներ ունեցող, բռնության ենթարկված, դաժան վերաբերմունքի ենթարկված, բժշկասոցիալական վերականգնման, խնամքի, դաստիարակության և ուսուցման հատուկ կարիքներ ունեցող երեխաների թիվը: Գնահատվել են նաև հաստատությունում երեխայի ընտանիք (համայնք) վերադարձնելու համար անհրաժեշտ պայմանները, համայնքամերձ տարածքում անհրաժեշտ սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների առկայությունը և մատչելիությունը: |
|---|---|

2016 թվականին լրացուցիչ ուսումնասիրվել են Վանաձորի մանկատանը խնամվող երեխաների փաստաթղթերը՝ նրանց կարգավիճակները հստակեցնելու, Գավառի մանկատուն վերաուղեգրելու, կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամատար ընտանիքում տեղավորելու նպատակով:

Մանկատանը խնամվող չորս երեխայի 18 տարին լրացել է, սակայն վերջիններս շարունակում են մնալ մանկատանը՝ բնակության այլ վայր չունենալու պատճառով:

Համագործակցության շրջանակներում քննարկումներ են իրականացվել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտ-պանության բաժնի և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ. քննարկվել է մանկատանը խնամվող 13 երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու նպատակահարմարության հարցը:

10 երեխա վերաուղեգրվել է Գավառի մանկատուն: Հնարավոր է 5 երեխայի վերադարձը կենսաբանական ընտանիք, 5 երեխայի՝ հարազատների ընտանիք, 8 երեխայի հնարավոր է տեղափոխել երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն, 14 երեխայի՝ հանձնել որդեգրման:

Վանաձորի մանկատան վերակազմակերպումից հետո մանկատունը երկարաժամկետ խնամք կտրամադրի առանց ծնողական խնամքի մնացած առավելագույնը 30 երեխայի՝ մինչև նրանց տասնութ տարին լրանալը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Վանաձորի երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, որտեղ կիրականացվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան երեխաների ցերեկային խնամքը, ինչպես նաև 3-18 տարեկան երեխաների՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով շուրջօրյա լրիվ խնամքի ապահովումը, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման աջակցությունը:

2. **Կարգավորման առարկան**

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի պայմանների բարելավումը և երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բարելավումը, հաստատություններում խնամվող երեխաների խնամքի, կյանքի որակի բարելավումը, նրանց ինտեգրումը հասարակությանը:

113.

**«Ծերացման հետևանքների հաղթահարման ու տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառում-ների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4.2-րդ կետի 1-ին ենթակետից, ինչպես նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի դրույթներից:

Բնակչության ծերացումը գլոբալ, անխուսափելի գործընթաց է, որը նաև լրջագույն ազդեցու-

| | |
|---|---|
| | թյուն է թողնում սոցիալական ապահովության, սոցիալական ծառայությունների և հանրային առողջապահական ծառայությունների մատուցման գործընթացի վրա:<br>Հայաստանի առջև ծառացած երկրի ծերացման հետ կապված ու դրանից բխող հիմնախնդիրները լուծելու նպատակով և հիմք ընդունելով 2002 թ. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական խորհրդի կողմից ընդունված Ծերության խնդիրների վերաբերյալ Մադրիդի միջազգային գործողությունների պլանի ռեգիոնալ իրականացման ռազմավարության դրույթները, ՀՀ կառավարությունը դեռևս 2012 թվականի օգոստոսի 12-ի N 31 արձանագրային որոշմամբ հավանություն տվեց Բնակչության ծերացման հետևանք-ներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավա-րությանը և Ռազմավարության իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրին: Ռազմավարության մշակումը պայմանավորված է նշված ծրագրի շարունակականությունն ապահովելու, նոր մոտեցումներ որդեգրելու, երկրի առջև ծառացած նոր մարտահրավերներին պատասխանելու, նոր առաջնահերթություններ ուղենշելու և իրականացնելու անհրաժեշտությամբ:<br>Նախագծով նախատեսվող միջոցառումները համահունչ են Ծերության խնդիրների վերաբերյալ Մադրիդի միջազգային գործողությունների պլանի ռեգիոնալ իրականացման ռազմավարության տասը հանձնառություններին և մեր հանրապետության որդեգրած սոցիալական պաշտպանության քաղաքականության դրույթներին:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ ծնելիության նվազումն ու միգրացիայի բարձր տեմպերը հանգեցրել են նրան, որ 2016 թվականի տարեսկզբի դրությամբ աշխատունակ բնակչությունը (16-62 տարեկան) կազմել է ՀՀ մշտական բնակչության ընդհանուր թվի (2 995,1 մլն) 66.3 տոկոսը, իսկ 20.8 տոկոսը՝ աշխատունակ տարիքից ցածրը (0-15 տարեկան), 63 տարեկան և բարձր տարիքի մարդկանց թիվը կազմում է բնակչության ընդհանուր թվի 12.9 տոկոսը (387 659 մարդ): Հանրապետության 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկնում 195 տարեց և 0-15 տա-րեկան 314 երեխա: Տարիքային կենսաթոշակառուների թիվը կազմում է 307 449:<br>Գործող համակարգում շեշտը դրված է առավելապես խնամքի կարիք ունեցող տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ տրամադրելու վրա՝ հիմնականում խնամքի շուրջօրյա հաստատություններում, սակայն վերջին տարիների ուսումնասիրությունները փաստում են, որ տարեցներն իրենք իսկ կարևորում են առողջ ծերացումն ու հասարակական ակտիվությունը, սոցիալական ներառումն ու այլընտրանքային ծառայությունները, որոնք տարբերվում են դասական տուն-ինտերնատներից: Այս ուղղությամբ աշխատանքներն արդեն իսկ սկսվել են, և դրանք զարգացնելու և ընդլայնելու անհրաժեշտությունը կա:<br>Բացի դրանից՝ ներկայումս տարեցներին տրամադրվող բոլոր սոցիալական ծառայություններն ուղղված են միայնակ կենսաթոշակառուներին, այսինքն՝ ծառայությունների տրամադրման հիմքում դրվել է մարդու՝ որոշակի սոցիալական խմբին պատկանելու հանգամանքը (միայնակությունը, զավակ չունենալը), և գոյություն ունեցող առկա ծառայությունների ու հաստատությունների հնարավորությունները, ընտանիքներում ապրող տարեցների խնդիրները կարծես անտեսվել են:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծի ընդունմամբ կամրագրվեն նպատակներ և կուրվագծվեն առաջիկա տարիներին տարբեր ոլորտներում իրականացվելիք միջոցառումները, արդյունքում կմշակվեն համապատասխան ընթացա-կարգեր, որոնց իրականացման արդյունքում կբարելավվի տարեցների սոցիալական պաշտպանությունը, կապահովվի նրանց ներառումը հասարակություն, կստեղծվեն համապատասխան պայմաններ՝ առողջ ծերացման համար և այլն: Այս խնդիրները լուծելու համար պետք է համախմբվեն բոլոր շահագրգիռ մար-մինների ջանքերը. յուրաքանչյուր գերատեսչություն իր իրավասությունների շրջանակում իրականացվող քաղաքականության ու ծրագրերի մեջ պետք է հաշվի առնի ծերացման խնդիրները և տարեցների օրինական շահերը: Միայն այդպես հնարավոր կլինի կառուցել հասարակություն՝ բոլոր տարիքի մարդկանց համար: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Սույն որոշման կարգավորման առարկան հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ծերացման հետևանքների հաղթահարման և տարեց մարդկանց սոցիալական պաշտպանության հետ կապված հարաբերություններն են:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարությամբ նախատեսվում է ուղենշել ոլորտի առաջնահերթությունները և առաջիկա 5 տարվա ընթացքում բարեփոխել Հայաստանի Հանրապետությունում տարեցների սոցիալական պաշտպանության համակարգը՝ ընդլայնելով տարեցներին ու հաշմանդամներին տրամադրվող սոցիալական ծառայությունների շրջանակը, ներդնելով ծառայությունների տրամադրման նոր մոդելներ և մոտեցումներ՝ հիմնված տարեցների գնահատված կարիքների վրա: Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ներառելով ծերացման հետևանքների հաղթահարմանն ու տարեցների կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ տարեց մարդկանց համար ապահովել գոյության արժանապատիվ կենսապայմաններ: |
| 114. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտություն (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման հավելվածներով նոր աշխատանքներ ու աշխատանքի և հանգստի ռեժիմներ նախատեսելու, ինչպես նաև առկա աշխատանքների և սոցիալական պաշտպանության հաստատությունների անվանումները հստակեցնելու և 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն և N 815-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1292-Ն որոշմանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման առանձին հավելվածներով սահմանված են առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները:<br>Այդ հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝<br>1) 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով կատարվել են փոփոխություններ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների անվանումներում.<br>2) ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն և N 815-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1292-Ն որոշմամբ |

| | |
|---|---|
| | հաստատվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված՝ խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները, ավելացել են՝ ինչպես նոր հաստիքներ, այնպես էլ՝ առկա մի շարք հաստիքների անվանումներում տեղի են ունեցել փոփոխություններ.<br>3) իրավակիրառական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների որոշակի աշխատողներ դուրս են մնացել որոշման կարգավորման դաշտից.<br>4) իրավակիրառական պրակտիկայից բխող այլ փոփոխություններ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով որոշման հավելվածներում կկատարվեն համապատասխան փոփոխություններ՝ նպատակ ունենալով այդ հավելվածները համապատասխանեցնելու 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն և N 815-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1292-Ն որոշման կարգավորումներին:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ աշխատանքային օրենսդրության բարելավում և կատարելագործում՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հստակեցման միջոցով<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունմամբ կհստակեցվի, թե որ աշխատողի վրա են տարածվում որոշման հավելվածներում նշված աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները: |
| 115. | **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերլուծության արդյունքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների հստակեցման և պարզեցման, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:<br>Նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4.2-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թվականի հունիսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքում կատարվեցին բավականին մեծ թվով փոփոխություններ, որոնց զգալի մասը ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցնելու գործընթացի համատեքստում էր: Օրենքի ընդունումը պայմանավորված էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի որոշակի դրույթների կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրներով: |

| | |
|---|---|
| | Այնուամենայնիվ, իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ տրված լուծումները դեռևս ամբողջական չեն, պահանջում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների շարունակական բարելավում և կատարելագործում, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանեցման միջոցով: Մյուս կողմից՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում օբյեկտիվորեն կարևորվում է փոքր և գերփոքր ձեռնարկությունների համար աշխատանքային հարաբերությունների կարգավորման որոշակի խթանների և առանձնահատկությունների սահմանումը՝ նկատի ունենալով նաև այս ուղղությամբ միջազգային հաջողված փորձը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով կհստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն դրույթները, որոնք իրավակիրառական պրակտիկայում տարընկալման տեղիք են տալիս, ինչպես նաև որոշ դրույթներ կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին: Նախատեսվում է նաև միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման ճկուն հիմքերի ստեղծում՝ հատկապես փոքր և գերփոքր ձեռնարկությունների համար:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ աշխատանքային օրենսգրքի կատարելագործում՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հստակեցման, սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլի առանձնահատկություններից բխող՝ օրինական աշխատանքային հարաբերությունների խթանիչ կարգավորումների նախատեսման միջոցով<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Աշխատանքային հարաբերությունների ձևավորման, փոփոխման և դադարման նոր ճկուն հիմքերի ապահովում՝ հատկապես փոքր և գերփոքր ձեռնարկությունների համար, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համապատասխանեցում |
| 116. | **«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք տվող, ինչպես նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու պայմանների (աշխատելու հանգամանքի հետ փոխկապակցված) հստակեցմամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի աշխատում (չի զբաղեցնում պետական և համայնքային պաշտոն կամ չի կատարում վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, որպես անհատ ձեռնարկատեր չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ, չի զբաղեցնում նոտարի պաշտոն): Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ պետական պաշտոն զբաղեցրած անձի աշխատանքի ընդունվելու (պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելու կամ վճարովի այլ աշխատանք կատարելու, բացի գիտական, մանկավարժական և |

| | |
|---|---|
| | ստեղծագործական աշխատանքից, որպես անհատ ձեռնարկատեր՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, նոտարի պաշտոն զբաղեցնելու) դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է:<br>Ընդ որում, իրավակիրառական պրակտիկայում ծագում են խնդիրներ՝ գիտական և ստեղծագործական աշխատանքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափորոշիչները կիրառելիս:<br>Նպատակահարմար է վերանայել օրենքով սահմանված կենսաթոշակի նշանակման և կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման սահմանափակումները:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Կվերանայվեն «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կենսաթոշակի նշանակման և կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման սահմանափակումները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով կսահմանվեն կենսաթոշակի նշանակման և կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման այլ սահմանափակումներ: |
| 117. | **«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 27 արձանագրային որոշմամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության ներկա ժողովրդագրական կացությունը, բնակչության թվի փոփոխությունները կախված են բնակչության աճի բաղադրիչների՝ ծնելիության, մահացության, ամուսնության ու ամուսնալուծության և միգրացիայի ցուցանիշների փոփոխություններից: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ազգային ծրագրի հիմնական խնդիրներն են ծնելիության՝ պարզ վերարտադրություն չապահովող մակարդակը, ամուսնությունների թվի նվազումը և ամուսնալուծությունների թվի աճը, մանկամահացության և մայրամահացության ցուցանիշների բարելավումը, ինչպես նաև միգրացիայի, մասնավորապես, արտաքին ուղևորափոխադրումների բացասական մնացորդի աճը, ներգաղթի խրախուսման պայմանների ստեղծումը, որոնք, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության նկատառումներից ելնելով, հանդիսանում են լուրջ մարտահրավերներ: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման համար առաջիկա մի քանի տարիների կտրվածքով առաջարկվում է՝<br>1) բնակարանի կարիք ունեցող և առկա հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու հնարավորություն չունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական նպատակային ծրագրի ներդրում.<br>2) տարիքային տարբեր խմբերի երիտասարդ մայրերին աջակցություն՝ երեխաներ ունենալու, խնամքի, ինչպես նաև աշխատաշուկայում նրանց մրցունակությանն աջակցելու միջոցով.<br>3) ժողովրդագրական զարգացմանը միտված ծրագրերի այլընտրանքային ֆինանսական ապահովում՝ ժողովրդագրական զարգացման ազգային հիմնադրամի ստեղծման միջոցով:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի կարգավորման առարկան իրականացվող միջոցառումների շնորհիվ ժողովրդագրական բացասական միտումների կանխումը, իրավիճակի կայունացումն ու բարելավումն են:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման և իրականացման դեպքում ակնկալվում են՝ ժողովրդագրական բացասական միտումների կանխում, հետևանքների մեղմում և ՀՀ ժողովրդագրական իրավիճակի կայունացում, այդ թվում՝ ծնելիության մակարդակի բարձրացում և ծնունդների թվի ավելացում, հանրային վստահության ավելացում, արտագաղթի ծավալների նվազում: |
| 118. | **«Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2017-2021 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ կետի, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ինչպես նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի 4-րդ համաշխարհային համաժողովի (1995 թ.) հանձնարարականների, Եվրախորհրդի կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի հազարամյակի հռչակագրի պահանջների և ՀՀ միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից մշակվող և իրականացվող միջնաժամկետ և երկարաժամկետ պետական նպատակային ծրագրերի միջոցով:<br>Այդ համատեքստում ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի որոշմամբ հաստատվեց Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որով սահմանվեցին կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ |

| | |
|---|---|
| | ուղղությունները, իսկ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ՝ Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագիրը, որի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում սեռի հատկանիշով բռնության կրճատմանը նպաստելն է: Յուրաքանչյուր տարի ռազմավարական ծրագրերով նախանշված նպատակներն իրակա-նացնելու համար ՀՀ կառավարության կողմից հաստատվում էին համապատասխան տարեկան ծրագրեր: Դրանցում ներառված միջոցառումներն ուղղված էին կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, սոցիալ-տնտեսական, կրթության, առողջապահության, մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասա-րության հաստատմանը և ընտանեկան բռնության երևույթի կանխարգելմանը: Նշված ռազմավարական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասարության իրավիճակի գնահատման փորձա-գիտական խմբի եզրակացությունները վկայում են, որ պլանավորված և  անցկացված միջոցա-ռումները հիմնականում համապատասխանում են պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը: Ռազմավարական ծրագրերը նպաստել են հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացմանը և իրավիճակի գնահատման մեխանիզմների ստեղծմանը: Ըստ էության, իրականացված աշխատանքների շրջանակում ստեղծվել են այն անհրաժեշտ հիմքերը, որոնք հաջորդ ծրագրային փուլում կարող են ապահովել ներգործուն միջավայր՝ ուղղորդված ոլորտային և միջոլորտային քաղաքականության իրականացմանը: Սակայն սեռով պայմանավորված հավասարության ապահովման և խտրականությունը կանխելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում  ներդնել այնպիսի մեխանիզմներ և գործիքներ, որոնք կնպաստեն կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանմանը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականության շարունակա-կանությունն ապահովելու համար անհրաժեշտ է նոր ռազմավարական ծրագրի ընդունում՝ 2017-2021 թվականների համար, որն ուղղված կլինի՝<br>1) կանանց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսևորման համար հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծմանը.<br>2) իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարու-թյան ապահովմանը.<br>3) հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երկու սեռերի հավասար մասնակցության ապահովմանը.<br>4) սեռի հատկանիշով պայմանավորված կարծրատիպերի հաղթահարմանը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Հանրապետությունում կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը, կայուն զարգացման, ժողովրդավարական գործընթացների խորացման, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման և կյանքի որակի բարձրացման նախադրյալների ստեղծումը<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավոր-մանն աջակցելը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը |

| | |
|---|---|
| 119. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 923-Ն և 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 5-րդ ենթակետի պահանջներից և պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով՝ երեխաների խնամքի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմամբ և այդ հաստատություններում երեխաների թվի նվազեցմամբ, ինչպես նաև խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների ցանցի զարգացման անհրաժեշտությամբ:<br>Գործընթացի նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի, երեխայի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանության երաշխիքների, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելման ապահովումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող, մասնավորապես, 0-6 տարեկան երեխաների խնդիրների հայտնաբերումը, կանխարգելումը և վաղ միջամտությունն է:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության 12 հաստատություն, որից 6-ը՝ երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (մանկատներ) են, իսկ 6-ը՝ երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններ: Վերջիններիս գործունեության նպատակը ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումն էր:<br>Ներկայումս նախարարության համակարգի երեխաների խնամքի գիշերօթիկ 6 հաստատությունում իրականացվում է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 540 երեխայի խնամք:<br>Վերջին տարիներին մոնիթորինգային դիտարկումներով պարզվում է, որ այդ հաստատություններում խնամվող երեխաների մի մասը, պայմանավորված հաստատության գտնվելու վայրով, հնարավորություն ունեն գիշերելու տանը (ընտանիքում)՝ շարունակելով տվյալ հաստատությունում ստանալ աջակցության ծառայություններ:<br>Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հանրապետությունում դեռևս բավարար չեն երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալական աջակցության ծառայություններ տրամադրող կառույցները, նպատակահարմար է գործող հաստատությունները վերակազմակերպել այլընտրանքային ծառայություններ տրամադրող կառույցների:<br>Նոր ստեղծվող կառույցները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին, ըստ գնահատված կարիքների, կտրամադրեն մասնագիտական ծառայություններ, այդ թվում՝ աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է ուսումնասիրել և նախանշել հաստատությունների բեռնաթափման հիմնական սկզբունքը և ուղղությունները, մշակել դրանց վերակազմակերպման վերաբերյալ առաջարկներ և իրականացման ուղղված համապատասխան միջոցառումներ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումն է, շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների թվի նվազեցումը, այլընտրանքային |

| | |
|---|---|
| | ծառայությունների ցանցի զարգացումը, երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կվերակազմակերպվեն և կբեռնաթափվեն նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն, Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն). դրանցում խնամվող երեխաները կվերադառնան կենսաբանական ընտանիքներ, կստեղծվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող այլընտրանքային կառույցներ: |
| 120. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի նիստի N 4 արձանագրության 24-րդ կետով հավանության արժանացած ՀՀ կառավարության արձանագրային որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ սահմանված են կենսաթոշակի գործերը վարելու կանոնները:<br>Ընդ որում, սահմանված կանոնների հիմքում ընկած է այն մոտեցումը, որ կենսաթոշակի գործում ներառվող տեղեկատվությունը ձևավորվում է (պահվում է) թղթային կրիչով:<br>Մասնավորապես, սահմանված է, որ յուրաքանչյուր անգամ կենսաթոշակ նշանակելիս, կենսաթոշակի չափը վերահաշվարկելիս և այլ դեպքերում տպվում է համապատասխան հաշվարկ-կարգադրություն, որը կցվում է կենսաթոշակի գործին:<br>Առկա ընթացակարգերը ռեսուրսատար են (թուղթ և համապատասխան նյութեր՝ տպելու համար, հետագա ծախսեր՝ դրանց պահպանման համար):<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ներկայացվող նախագծով, հաշվի առնելով «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի ընձեռած հնարավորությունը, կսահմանվի, որ հաշվարկ-կարգադրությունը ձևավորվում և պահպանվում է թվային եղանակով:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման դեպքում կկրճատվի կենսաթոշակի գործում փաստաթղթային կրիչով պահպանվող տեղեկատվությունը: |

| | |
|---|---|
| 121. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 3-րդ ենթակետի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշմամբ սահմանված են մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի համար դիմելու կարգը, ներկայացվող փաստաթղթերը:<br>Համաձայն սահմանված կարգի՝ նպաստը նշանակելու համար ծնողն անձամբ կամ այլ անձի միջոցով տարածքային կենտրոն է ներկայացնում դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը:<br>Այսինքն, նպաստ նշանակելու համար սահմանված է ֆիզիկապես տարածքային կենտրոն այցելելու պահանջ:<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև այլ պետական կառավարման մարմինների տեղեկատվական ենթակառուցվածքների զարգացումը հնարավորություն է տվել շահառուներին մատուցվող ծառայությունները տեղափոխել որակական նոր հարթություն՝ կրճատելով սոցիալական ծառայություններ ստանալու նպատակով դիմելու համար ծախսվող ժամանակը և վերացնելով փաստաթղթեր ներկայացնելու պահանջը:<br>Ըստ այդմ, նախատեսվում է ներդնել երեխայի խնամքի համար առցանց դիմելու ընթացակարգեր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Ներկայացվող նախագծով կսահմանվեն երեխայի խնամքի նպաստի համար առցանց դիմում ներկայացնելու կարգը, ներկայացվող տվյալների ցանկը, առցանց ներկայացված դիմումի (տվյալների) հիման վրա նպաստը նշանակելու, վճարելու որոշում կայացնելու պայմաններն ու կարգը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման դեպքում, սկսած 2018 թվականի հունվարի 1-ից, կգործարկվի խնամքի նպաստի համար առցանց դիմում ներկայացնելու համակարգը, ինչի շնորհիվ կբարելավվի շահառուներին մատուցվող ծառայությունների որակը: |
| 122. | **«Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացը, որի հիմքում դրված է սոցիալական կարիքների գնահատման հիման վրա համապատասխան ծառայությունների՝ փաթեթով տրամադրում: Իսկ |

| | |
|---|---|
| | «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն) սահմանված են անապահովության գնահատման մոտեցումները (9-12-րդ հոդվածներ): Ներկայացվող նախագծով առաջարկվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգին վերաբերող 2-րդ գլուխը՝ բոլոր հոդվածներով (9-12-րդ) տեղափոխել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, որպես՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգ՝ նախատեսելով աղքատ ընտանիքներին տրամադրվող՝ կենսամակարդակի բարձրացմանն օժանդակող կամ դրա վատթարացումը կանխող նպաստները, որպես սոցիալական ծառայություններից միայն մեկը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (գլուխ 7)՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի հիմքում դրված է սոցիալական դեպքի վարումը: Այն ներառում է սոցիալական աջակցություն ստացողների կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ծրագրավորումը, դրանք ստանալու հարցում աջակցությունը՝ նպատակ ունենալով բավարարել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները: Ընդ որում՝ սոցիալական դեպքի վարման ժամանակ կատարվում է ամբողջացված կարիքների գնահատում, սակայն գործող օրենսդրությունը քիչ լուծումներ է առաջարկում ընտանիքի բարեկեցության և բարօրության մակարդակի գնահատման համար:<br>Միաժամանակ, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված՝ տարածքային մարմինների լիազորություններից է նաև խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, ինչպես նաև խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին եզրակացություն տալը: Եվ այդ դեպքում կարևորվում է նաև անձի բարեկեցության աստիճանի գնահատումը, որը նաև կբացառի կամ հնարավորինս կնվազեցնի որոշման ընդունման սուբյեկտիվ մոտեցումները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայացված նախագծով առաջարկվում է լրացուցիչ գործիքների ներդրման և կիրառման նպատակով ստեղծել բարենպաստ իրավական դաշտ, վերացնել գործնականում առկա բացերն ու խոչընդոտները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Ներկայացված նախագծի ընդունման արդյունքում կբարելավվի օրենսդրական դաշտը և կվերանան ոլորտի զարգացման խոչընդոտները, հնարավորություն կտրվի ճանաչել ոչ միայն սոցիալական ծառայություն հայցող կամ ստացող անձին, այլ նաև տրամադրողին:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներկայացված նախագծի ընդունմամբ անհրաժեշտ իրավական հիմքեր կստեղծվեն ընտանիքի սոցիալական վիճակի գնահատման համակարգի միջոցով գնահատելու ընտանիքի թե՛ անապահովության, թե՛ բարեկեցության ու բարօրության վիճակը՝ առաջին դեպքում նախատեսելով սոցիալական ծառայությունների համապատասխան փաթեթի տրամադրում, այդ թվում՝ նաև նպաստ (որի վճարման հետ կապված հարաբերությունները կկարգավորվեն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով), իսկ երկրորդ դեպքում՝ խնամատար ընտանիքի, խնամակալի ընտրության, ինչպես նաև երեխա որդեգրել ցանկացող ընտանիք հաշվառելու հնարավորություն: |
| 123. | **«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի |

| | |
|---|---|
| | Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին կետի 1.1-ին ենթակետի 8-րդ և 9-րդ պարբերությամբ սահմանված՝ պետական ծառայողի կերպարի արմատական վերափոխման հրամայականից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով 2014 թվականի հուլիսի 1-ից պետական իշխանության բոլոր մարմիններում ներդրվեց վարձատրության միասնական համակարգ, որում հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հենասյուներն ունեն հստակ կարգավորումներ, իսկ պարգևատրման համակարգը հայեցողական մոտեցումներին է թողնված և հիմնականում կիրառվում են էգալիտար մոտեցումներ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է սահմանել բարձր կատարողականություն ունեցող պետական աշխատողների խրախուսման, այդ թվում՝ պարգևատրման նոր մեխանիզմներ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված կատարողականության նոր չափանիշները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կարգավորվում են պետական ծառայողների վարձատրության, մասնավորապես, խրախուսման հետ կապված հարաբերությունները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ անհրաժեշտ հիմքեր կապահովվեն պետական ծառայողների խրախուսման առավել արդյունավետ համակարգի ներդրման և արհեստավարժ ծառայողների խրախուսման համար: |
| 124. | **«Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը բխում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 39-րդ հոդվածներից և պայմանավորված է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ՝ սոցիալական աշխատանքի կայացման ուղղությամբ իրականացվող բարեփոխումներով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սոցիալական ծառայություններ տրամադրող տարբեր մարմինների և կազմակերպությունների աշխատողների որակավորման բարձրացումն իրականացվում է վերապատրաստումների կամ «Սոցիալական աշխատանք» հատուկ դասընթացների միջոցով: Նախագծի ընդունմամբ հնարավորություն կընձեռվի ձևավորել սոցիալական աշխատողների պրոֆեսիոնալ անձնակազմ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կատարելագործել սոցիալական աշխատողների մասնագիտական գիտելիքների որակավորման գործընթացը, մասնավորապես, ներդնել հավաստագրման, ինչպես նաև մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգ, որը հնարավորություն կտա նաև բարձրացնել տրամադրվող սոցիալական ծառայությունների որակը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կարգավորվում են սոցիալական աշխատողի կարգավիճակի, սոցիալական աշխատանքի մասնագիտացման, վերապատրաստման, հավաստագրման, մասնագիտական զարգացման կրեդիտավորման հետ կապված հարաբերությունները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ անհրաժեշտ հիմքեր կստեղծվեն սոցիալական աշխատանքի կայացման և պրոֆեսիոնալ աշխատակազմի ձևավորման համար: |

| | |
|---|---|
| 125. | **«Հաշմանդամի սայլակների ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման և պետական հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4.2-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջներից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հաշմանդամի սայլակները տրամադրվում են համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1035-Ն որոշմամբ սահմանված կարգի և ժամկետների: Սայլակների ձեռքբերումն ու բաշխումն իրականացվում է գնումների մասին օրենսդրությանը համապատասխան: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԺԾ-ի և ՀՀ պետական բյուջեի հայտերով ներկայացնում է որոշակի պարագաների տեսականու ցանկ՝ հաշվի առնելով նշված որոշմամբ սահմանված՝ տվյալ պարագան ստանալու իրավունք ունեցող սոցիալական խմբերը և այդ պարագաների տրամադրման ժամկետները: Չնայած նրան, որ նախարարությունը պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում ընդլայնում է այդ պարագաների, մասնավորապես, հաշմանդամի սայլակների տեսականին, կատարելագործվում են դրանց տեխնիկական բնութագրերը, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող անձանց առողջական, կառուցվածքային, տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները բազմազան են, ինչի պատճառով հնարավոր չէ յուրաքանչյուրին ապահովել իր կարիքին համապատասխան սայլակով: Սա տեղիք է տալիս հաշմանդամություն ունեցող անձանց դժգոհության:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է հաշմանդամություն ունեցող անձանց սայլակները տրամադրել պետական հավաստագրի հիման վրա: Սա հնարավորություն կտա, որոշակի հավելավճար կատարելով, ձեռք բերել կարիքին համարժեք հաշմանդամի սայլակ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հաշմանդամի սայլակների տրամադրում՝ պետական հավաստագրերի հիման վրա<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց իրենց կարիքին համարժեք պետական աջակցությամբ սայլակներ ձեռք բերելու հնարավորություն |
| 126. | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավմամբ, ինչը բխում է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելվածի 41-րդ կետի պահանջներից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն գործող օրենսդրության՝ կենսաթոշակները և նպաստները (բացառությամբ ընտանեկան նպաստների) վճարվում են կանխիկ և անկանխիկ եղանակով: |

| | |
|---|---|
| | Անկանխիկ եղանակով վճարումն իրականացվում է բանկային համակարգի միջոցով՝ հետևյալ տարբերակներով՝<br>1) անձը ներկայացնում է իր անվամբ բացված բանկային հաշվի համարը, որին փոխանցվում է կենսաթոշակի կամ նպաստի գումարը.<br>2) համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 910-րդ հոդվածի՝ երբ սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) անձի տվյալները տրամադրում է բանկին՝ համաձայն անձի կատարած ընտրության, իսկ բանկը քաղաքացու անվամբ բացում է հաշիվ և այդ հաշվին է մուտքագրում գումարները:<br>Երկրորդ տարբերակը կիրառվում է այն դեպքերում, երբ գումարի վճարումը կրում է միանվագ բնույթ (թաղման նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մայրության նպաստ):<br>Ընդ որում, փոխանցված գումարների կապակցությամբ բանկի և պետության միջև ծագող հարաբերությունները կարգավորվում են բանկի և պետության միջև կնքված պայմանագրով, իսկ բանկային հաշվի կապակցությամբ բանկի և քաղաքացու միջև ծագող հարաբերությունները՝ բանկային հաշվի պայմանագրով:<br>Հաշվի առնելով առկա իրավակարգավորումները՝ քաղաքացիների համար երբեմն առաջացնում են անհարմարություններ, քանի որ գործող ՀՀ բանկային օրենսդրությամբ հաշվի չեն առնված խնդրո առարկա գործընթացի առանձնահատկությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ սահմանելով կենսաթոշակները և նպաստներն անկանխիկ եղանակով վճարելու համար նախատեսված հատուկ բանկային (սոցիալական) հաշիվ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ներկայացվող նախագծով մեկ միասնական սկզբունքների ներքո կսահմանվեն կենսաթոշակները և նպաստներն անկանխիկ եղանակով վճարելու համար նախատեսված հատուկ բանկային (սոցիալական) հաշիվ բացելուն և վարելուն, այդ հաշվից օգտվելուն, հաշվին առկա միջոցները տնօրինելուն առնչվող առանձնահատկությունները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման շնորհիվ էապես կմեծանա պետական կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացի արդյունավետությունը, կպարզեցվի վարչարարությունը: |
| 127. | **«Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 245-Ա որոշման հավելվածի 21-րդ կետով (մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ին տասնօրյակ «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը):<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն 2001 և 2011 թվականների մարդահամարների՝ հանրապետությունում բնակվել են 4 և ավելի երեխաներ ունեցող համապատասխանաբար շուրջ 31.000 և 13.000 տնային տնտեսություններ, իսկ ահա մեկ ամուսնական զույգի կամ միակ ծնողի խնամքի տակ 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների թիվը կազմել է համապատասխանաբար շուրջ 14.000 և 7400: Ընտանիքների այդ տեսակի թվի կրճատումը հիմնականում պայմանավորված է նրանց սոցիալական վիճակով, թվով շատ երեխաներ պահելու և մեծացնելու դժվարություններով: Բազմազավակ ընտանիք- |

| | |
|---|---|
| | ների թվի կրճատումը մեծապես պայմանավորված է եղել ծնելիության կրճատմամբ: Միաժամանակ, հանրապետությունում օրենքով ամրագրված չէ «բազմազավակ ընտանիք» հասկացությունը, ինչպես նաև բազմազավակ ընտանիքներին պետության կողմից տրվելիք երաշխիքները:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով բազմազավակ՝ 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների կարիքները՝ անհրաժեշտ է օրենքով սահմանել «բազմազավակ ընտանիք» հասկացությունը, ինչպես նաև ամրագրել ընտանիքի այդ տեսակին տրվելիք սոցիալական երաշխիքները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքով կարգավորվելու են «բազմազավակ ընտանիք» հասկացությունը, ինչպես նաև բազմազավակ ընտանիքներին պետության կողմից տրվելիք նվազագույն երաշխիքները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի ներդրմամբ ակնկալվում են՝<br>1) օրենքով «բազմազավակ ընտանիք» հասկացության սահմանումը.<br>2) բազմազավակ ընտանիքներին պետության կողմից տրվելիք նվազագույն երաշխիքների սահմանումը.<br>3) բազմազավակ ընտանիքների ինքնապահովման խրախուսման և մարդկային կապիտալի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծումը: |
| 128. | **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմամբ նախատեսվում է համապարփակ լուծումներ տալ կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի կազմակերպման ոլորտում առկա խնդիրներին: Նման կարգավորման պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4.2-րդ կետի 8-րդ ենթակետով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները որոշակիորեն կարգավորված են ՀՀ օրենսդրությամբ:<br>Սակայն, անհրաժեշտ է նշել, որ դեռևս առկա են օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ոլորտի կայացմանն ու հետագա զարգացմանը: Մասնավորապես, դրանցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնականները՝<br>1) կամավորական աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու ոչ լիարժեք իրավական կարգավորումները.<br>2) կամավորի և կամավորներ ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորման բացակայությունը.<br>3) կամավորի գործունեության հետ կապված ծախսերի (ճանապարհածախս, օրապահիկ, գիշերակաց, գործուղման վճար, արտահագուստ և այլ) փոխհատուցման մեխանիզմների ամբողջական կարգավորման բացակայությունը.<br>4) կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքները միմյանցից տարանջատելու մեխանիզմների բացակայությունը.<br>5) կամավոր աշխատանքներում քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակների ներգրավման խթանիչ մեխանիզմների բացակայությունը. |

| | |
|---|---|
| | 6) կամավորական գործունեությունից բխող հնարավոր ռիսկերի ապահովագրման մեխանիզմների բացակայությունը, այդ թվում՝ կամավոր աշխատանքում դժբախտ դեպքերից ապահովագրություն, կամավորի պատասխանատվության ապահովագրություն կամավորի օգնության կարիք ունեցողի նկատմամբ.<br>7) կամավորներ ներգրավելու իրավասություն ունեցող կազմակերպության և կամավորի հիմնական իրավունքների և պարտականությունների ամրագրման բացակայությունը՝ ինչպես միմյանց, այնպես էլ՝ կամավորի օգնության կարիք ունեցողի նկատմամբ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի կազմակերպման ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակմամբ կսահմանվեն կամավորական աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու մեխանիզմները, կապահովվեն կամավորի ինստիտուտի կայացման և զարգացման, կամավոր աշխատանքների խթանման, քաղաքացիական հասարակության կյանքում վերջինիս դերի բարձրացման նախապայմանները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերությունների կարգավորում՝ սահմանելով կամավորական գործունեության սկզբունքները, նպատակները, ոլորտներն ու ձևերը, ինչպես նաև կամավոր աշխատանքի կազմակերպման իրավական հիմքերը<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման արդյունքում կտրվեն կամավորի ինստիտուտի կարգավորման լիովին նոր մոտեցումներ՝ հիմնված կամավորի ինստիտուտի զարգացման հիմնարար սկզբունքի վրա: |
| 129. | **«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է օրենքի կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու, թրաֆիքինգի և շահագործման զոհերի և (կամ) հատուկ կատեգորիայի զոհերի հայտնաբերման և ուղղորդման գործընթացները բարելավելու անհրաժեշտությամբ:<br>Համապատասխան կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակն է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի և (կամ) հատուկ կատեգորիայի զոհերի նույնացման ընթացակարգի կատարելագործումը, համապատասխան մարմինների միջև համագործակցության ամրապնդումը, զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի, սկսած հայտնաբերման պահից, պատշաճ ուղղորդումը, նրանց ընտանիքների անդամներին և (կամ) օրինական ներկայացուցիչներին որակյալ ծառայությունների տրամադրումը, հատուկ կատեգորիայի զոհերի համար նախատեսված աջակցության ժամկետների վերանայումն ու հստակեցումը, ինչպես նաև այդ խմբին պատկանող երեխաների ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: |

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող կարգերում անկատար են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով տարբեր մարմինների միջև զործակցության, անձի՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված լինելը հավաստող կամ հերքող տեղեկությունների, փաստերի, ապացույցների հավաքագրման մեխանիզմները, անձին զոհ և (կամ) հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու բուն ընթացակարգը: Կանոնակարգված չէ տեղեկատվության փոխանակումը՝ զոհ ճանաչված անձանց հետագա ճակատագրի վերաբերյալ, այն է՝ նրանց քրեադատավարական նորմերին համապատասխան տուժող ճանաչելու, աջակցության ընթացքի մասին տեղեկությունների տրամադրումը, ինչը խանգարում է հաշվետվողականությանը և վիճակագրական հստակ տվյալների առկայությանը: Միևնույն ժամանակ աջակցության տրամադրման նորմերն ընդհանուր են և հաշվի չեն առնում հատուկ կատեգորիայի զոհերի ուղղորդման, աջակցության և պաշտպանության հետ կապված առանձնահատկություններն ու հատուկ կարիքները՝ մասնավորապես, երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում: Վերջինս կարևոր է, քանի որ դիտարկումները ցույց են տալիս, որ հատուկ կատեգորիայի խմբին պատկանող հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ այն ղեկավարելու հնարավորությունից զրկված զոհերը և (կամ) հավանական զոհերը, նույնպես հիմնականում անչափահաս են: Որոշակի դեպքերում (օրինակ՝ երեխան շահագործվել է ծնողի կողմից, երեխան ենթարկվել է սեռական բռնության և շահագործման, դուրս է մնացել կրթությունից և ներգրավված է հարկադիր աշխատանքներում, այդ թվում՝ վատթարագույն աշխատանքի ձևերում) զոհը և նրա ծնողը չունեն օթևան, նրանց ուղղորդմանը, ինտեգրմանն ուղղված ընթացակարգերը և ծառայությունները հստակ չեն, սահմանված չեն նաև տրամադրվող ծառայությունների որակի չափորոշիչները: ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 5-ի «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը և չափերը սահմանելու մասին» N 492-Ն որոշման մեջ արտացոլված չեն նաև երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ընթացող բարեփոխումները:

Նախատեսվող լրացումները և փոփոխությունները հնարավորություն կտան ամրապնդել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման և ուղղորդման իրավական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ մեխանիզմները, կնպաստեն թրաֆիքինգի ենթարկված յուրաքանչյուր անձի կարիքների ճիշտ գնահատմանը և աջակցության կազմակերպմանը, կկանխարգելեն կրկնազոհացումը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է վերլուծել և գնահատել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման, ուղղորդման և աջակցության ընթացակարգերը՝ համապատասխան ակտերը գործողության մեջ մտնելուց հետո արձանագրված խնդիրների և նախադեպերի տեսանկյունից, հստակեցնել բացերը, համադրելով այն նաև վերջին հետազոտությունների արդյունքների հետ, և մշակել գործող ընթացակարգի կատարելագործման առաջարկներ՝ ուղղորդման բարելավման, տեղեկատվության փոխանակման հարցում պատասխանատու դերակատարների հստակեցման, հանձնաժողովի կողմից զոհ ճանաչված անձանց հետագա ճակատագրի մասին համապատասխան մարմիններից տեղեկատվություն ստանալու մեխանիզմի ու տեղեկատվական շտեմարանի վարման և պահպանման վերաբերյալ:

2. **Կարգավորման առարկան**

Կարգավորման առարկան մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի նույնացման գործընթացի կատարելագործումն է, համագործակցության և ուղղորդման մեխանիզմների, աջակ-

| | |
|---|---|
| | ցության գործընթացի բարելավումը, հատուկ կատեգորիայի հավանական զոհերի և զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնման ապահովումը, կրկնազոհացման ռիսկի նվազեցումը, զոհերի իրավունքների պաշտպանությունը՝ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Փոփոխություններն էլ ավելի կհստակեցնեն ներգրավված կողմերի պարտականությունները, կբարելավվի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի բացահայտման գործընթացը, կնպաստեն մեկ աղբյուրում տեղեկատվության կուտակման և հաշվետվության տրամադրման մեխանիզմի կատարելագործմանը՝ էլ ավելի վերահսկելի դարձնելով ֆինանսական ծախսերը: Բացի դրանից՝ կմշակվի և կներդրվի հատուկ կատեգորիայի հավանական զոհերի և զոհերի ուղղորդման ընթացակարգը, կընդլայնվի դերակատարների շրջանակը, կհստակեցվեն համագործակցության մեթոդները, կսահմանվեն որակյալ ծառայությունների մատուցման չափորոշիչները, որպես ընդհանուր հեռանկարային արդյունք կհզորացվեն համապատասխան ինստիտուտները և կներդրվեն նոր ծրագրեր: |
| 130. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման (այսուհետ՝ որոշում) նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.1.1-ին ենթակետի 9-րդ պարբերության պահանջից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշմամբ սահմանված է կատարողականի հիման վրա պետական ծառայողի պարգևատրման կարգը, որը համապատասխանում է ներկա գնահատման համակարգին:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1-ին կետի 1.1-ին ենթակետի 9-րդ պարբերությամբ նախատեսվում է ներդնել հանրային ծառայողի մասնագիտական ունակությունների, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարման աստիճանի գնահատման կատարողականության չափանիշներ, որի արդյունքում ուղղակիորեն պետք է վերանայվի պարգևատրման գործող համակարգը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով նախատեսվում է վերանայել պետական ծառայողների պարգևատրման ընթացակարգը՝ պետական ծառայողի կերպարի արմատական վերափոխման հրամայականի իրագործման նպատակով ներդրվող կատարողականության նոր չափանիշներին համապատասխան:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետական ծառայողների պարգևատրման առավել արդյունավետ (խթանիչ և ապախթանիչ) ընթացակարգերի առկայություն |
| 131. | **«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) մշակումը |

| | |
|---|---|
| | պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածի և 86-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով և ոլորտում իրականացվող քաղաքականության՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցմամբ:<br>Նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելն է:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օրենքն ընդունվել է 1996 թվականի մայիսի 29-ին՝ ՄԱԿ-ի համանուն կոնվենցիային համապատասխան: Ելնելով օրենքի իրավակիրառ պրակտիկայում առկա մի շարք խնդիրներից՝ անհրաժեշտ է վերանայել այն՝ սահմանելով առավել գործուն մեխանիզմներ:<br>Հայաստանի Հանրապետությունում գործում են երեխաների իրավունքների պաշտպանության հետևյալ մարմինները՝ համայնքային մակարդակում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները, մարզային մակարդակում՝ մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները և ազգային մակարդակում՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը:<br>Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի համաձայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման, հաշվառման, նրանց տեղավորման հիմնական գործառույթները վերապահված են միայն խնամակալության և հոգաբարձության մարմիններին: Մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 158-Ն համատեղ հրամանով հաստատված օրինակելի կանոնադրությամբ, իսկ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը՝ ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ: Օրենքով սահմանված չէ սույն ոլորտը համակարգող պետական մարմինը, որը որոշում է երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականությունը, ռազմավարական ուղղությունները, պատասխանատու է դրանց իրականացման համար և այլն: Առկա խնդիրներն են՝<br>1) «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով մինչև այսօր սահմանված չեն երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության համակարգը և այն իրականացնող մարմինները.<br>2) երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների երեխայի տեղավորման ձևի վերաբերյալ որոշումների վերանայման հնարավորության իրավական սահմանումը և կարգավորումը.<br>3) երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը.<br>4) երեխաների կարգավիճակը սահմանող տարատեսակ հասկացությունների հստակեցումը և տարբեր իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության արդյունավետ երաշխիքների ստեղծումը.<br>5) երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության հարցերը լուծելիս՝ նրա կարծիքն ավելի վաղ տարիքից հաշվի առնելու հնարավորության ապահովումը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է՝<br>1) Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի ամբողջացման, դրա սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացման, փոխհամագործակցության, աշխատանքների ավելի կոորդինացված իրականացման, լիազորությունների ավելորդ կրկնությունների վերացման, յուրաքանչյուր օղակի մասնագիտական ռեսուրսների ուժեղացման |

| | |
|---|---|
| | նպատակով անհրաժեշտ է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում ամրագրել երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը, որի մարմիններն են՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը, մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը, դրանց լիազորությունները.<br>2) օրենքում կտրվեն երեխայի տեղավորման ձևի վերաբերյալ որոշումների իրավական սահմանումը և նոր կարգավորումները.<br>3) օրենքում կնախատեսվի «օգտագործվող հիմնական հասկացություններ» հոդվածը, որով կսահմանվեն երեխաների կարգավիճակի վերաբերյալ տարատեսակ հասկացությունները.<br>4) օրենքում կամրագրվի երեխայի իրավունքների և շահերի հետ առնչվող հարց լուծելիս՝ երեխայի կարծիքը վաղ տարիքից հաշվի առնելը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով առաջարկվող փոփոխություններով և լրացումներով առավել արդյունավետ կկարգավորվի հանրապետությունում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտը, կստեղծվեն երեխաների իրավունքների իրացման լրացուցիչ երաշխիքներ, կհստակեցվի երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը, կապահովվի համակարգի սուբյեկտների լիազորությունների վերաբաշխումը՝ ի նպաստ համակարգի կայացմանը, կստեղծվեն երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների գործունեության վերահսկման հնարավորությունը և հստակ մեխանիզմները:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային չափանիշներին համապա-տասխան՝ երեխայի իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմների մշակում |
| 132. | **«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 86-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով և ոլորտում իրականացվող քաղաքականության՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցմամբ:<br>Նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտ-պանության արդյունավետությունը բարձրացնելն է:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ օրենք) ընդունվել է 2002 թվականի սեպտեմբերի 24-ին: Սույն օրենքով սահմանվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխա և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ հասկացությունները, որը շատ դեպքերում, իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է մի շարք խնդիրներ:<br>Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 86-րդ հոդվածի 6–րդ կետի պահանջի՝ անհրաժեշտ է վերանայել օրենքով ամրագրված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակները և սկզբունքները:<br>Խնդիրներ են երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների երեխայի տեղավորման ձևի վերաբերյալ որոշումների վերանայման հնարավորության իրավական սահմանումը և կարգավորումը, |

| | |
|---|---|
| | երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը, երեխաների կարգավիճակը սահմանող տարատեսակ հասկացությունների հստակեցումը և տարբեր իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության արդյունավետ երաշխիքների ստեղծումը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է՝<br>1) օրենքով տրված հիմնական հասկացությունների վերանայումը.<br>2) երեխայի տեղավորման ձևի վերաբերյալ որոշումների իրավական սահմանումը և նոր կարգավորումները.<br>3) օրենքի հիմնական դրույթների համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային կոնվենցիաների համապատասխան դրույթներին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով առաջարկվող փոփոխություններով և լրացումներով առավել արդյունավետ կկարգավորվի հանրապետությունում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտը, կստեղծվեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների իրականացման լրացուցիչ երաշխիքներ, կհստակեցվեն հիմնական հասկացությունները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, նրանց ինտեգրումը հասարակությանը: |
| 133. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 3-րդ ենթակետի պահանջներից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ կարգավորվում են երեխայի ծննդյան միանվագ նպաստը (այսուհետ՝ նպաստ) նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները:<br>Համաձայն գործող կարգի՝ առաջին կամ երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու դիմումը կարող է ներկայացվել նաև առցանց եղանակով:<br>Խնդրո առարկա տարբերակումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՔԿԱԳ մարմիններում դեռևս թվայնացված չեն նախկինում գրանցված ակտերը:<br>Ըստ այդմ, ՀՀ կառավարությունում տեղի ունեցած քննարկման արդյունքում հանձնարարվել է քննարկել ՔԿԱԳ-ի տեղեկատվական շտեմարանից անհրաժեշտ տեղեկատվության առցանց փոխանակմանն առնչվող ծրագրային ապահովման խնդիրները և մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցը:<br>Արդյունքում՝ նախատեսվում է առցանց եղանակով ստանալ նաև երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ: |

**2. Կարգավորման առարկան**

Ներկայացվող նախագծով կսահմանվեն երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար առցանց դիմում ներկայացնելու կարգը, ներկայացվող տվյալների ցանկը, առցանց ներկայացված դիմումի (տվյալների) հիման վրա նպաստը նշանակելու, վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու (այդ թվում՝ ՔԿԱԳ մարմիններից համապատասխան տեղեկատվություն ստանալու) պայմաններն ու կարգը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի ընդունման դեպքում, սկսած 2018 թվականի հունվարի 1-ից, կգործարկվի երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար առցանց դիմելու համակարգ, ինչի շնորհիվ կբարելավվի շահառուներին մատուցվող ծառայությունների որակը:

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն**

134.

**Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների 2017-2019 թվականների ծրագրի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**

2012 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ Նախագահի ՆԿ-159-Ն կարգադրությամբ հաստատվել և ուժի մեջ է մտել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, որի 47-րդ կետի համաձայն ՀՀ կառավարությունը 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշմամբ հաստատեց Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության դրույթներից բխող գործողությունների ծրագիրը՝ 2014-2016 թվականների համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գործողությունների ծրագրում ներառված միջոցառումների իրականացումը նախատեսված է մինչև 2016 թվականի ավարտը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է եղել մշակելու Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության դրույթներից բխող գործողությունների նոր ծրագիր՝ 2017-2019 թվականների համար:

Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության դրույթներից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի հաստատումն ամրագրված է ՀՀ կառավարության ծրագրում, որի համար սահմանված է վեցամսյա ժամկետ:

**2. Կարգավորման առարկան**

Նախագծով կապահովվեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ռազմավարությունից բխող միջոցառումների հաստատումը և համակարգված իրականացման անհրաժեշտ իրավական հիմքերը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների 2017-2019 թվականների ծրագրով նախատեսված գործողությունների ամբողջական կատարում՝ սահմանված ժամկետներում

| | |
|---|---|
| 135. | **«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի «Մարդու իրավունքներ և արդարադատություն» ենթաբաժնի 2-րդ կետի «գ» ենթակետով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա են կատարողական վարույթի հարուցման և իրականացման ժամկետների հետ կապված թերի կարգավորումներ: Առկա են նաև բազմաթիվ ոչ հստակ ձևակերպումներ, ինչպես նաև անհարկի հայեցողական լիազորություններ, որոնք ակնհայտորեն դժվարացնում են դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը: Օրինակ, դատարանը նշանակում է հայցի ապահովման միջոց՝ գույքի կամ դրամական միջոցի վրա արգելանք, և հարկադիր կատարողը կամայականորեն կարող է որոշել, թե արդյոք արգելանքը դնում է միայն գույքի վրա, թե արգելանքը դրվում է և՛ գույքի, և՛ դրամական հաշիվների վրա: Կամ կատարողական վարույթի համար սահմանված է երկամսյա ժամկետ, ԴԱՀԿ ծառայողը 10 օր հետո, տեսնելով, որ պարտապանը կամավոր չի կատարում պարտականությունը, կարող է որոշում կայացնել գույքը հարկադիր աճուրդի հանելու վերաբերյալ, սակայն ինչ-ինչ պատճառներով ձգձգում է գույքի աճուրդը՝ մինչև սահմանված ժամկետի ավարտը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է մշակել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով նախատեսվում է բարելավել դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը, մասնավորապես, օրենսդրորեն սահմանափակել հարկադիր կատարողի՝ աճուրդի հանվող գույքի հերթականությունը որոշելու, տնտեսվարող սուբյեկտի դրամական միջոցների վրա՝ որպես հայցի ապահովման միջոց, արգելանք դնելու հարցը որոշելու հարկադիր կատարողի հայեցողությունը, եթե դատարանն ուղղակիորեն չի ընտրել պարտապանի դրամական միջոցի վրա արգելանք դնելու հայցի ապահովման միջոցը: Բացի դրանից՝ օրենսդրորեն ամրագրել այն ժամկետը, որի ընթացքում հարկադիր կատարողը պետք է որոշի գույքն աճուրդի հանելու մասին:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի հստակեցում և հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների նվազեցում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման արդյունքում կհստակեցվեն հարկադիր կատարողի լիազորությունները՝ |

| | |
|---|---|
| | դրանով իսկ ապահովելով դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի արդյունավետությունը: |
| 136. | **«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի «Մարդու իրավունքներ և արդարադատություն» ենթաբաժնի 2-րդ կետի «գ» ենթակետով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հրապարակային սակարկությունների կազմակերպումը և անցկացումը դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի բաղկացուցիչ մասն են, իսկ առկա են բազմաթիվ ոչ հստակ իրավական կարգավորումներ, առանձին դեպքերում էլեկտրոնային աճուրդի կազմակերպման բնագավառում առկա են անորոշ ժամկետային կարգավորումներ, ինչպես օրինակ, հստակ կարգավորված չէ, թե գույքն աճուրդով վաճառելու որոշում կայացնելիս՝ ինչ ժամկետում պետք է գնահատվի լոտը, կամ օրինակ, բացակայում է համապատասխան կարգավորում, թե հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումն աճուրդի անցկացման օրվանից առնվազն քանի օր առաջ պետք է կատարվի:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է մշակել «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հստակեցնել հրապարակային սակարկությունների կազմակերպման գործընթացը՝ դրանում նվազեցնելով դատական ակտերի հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների շրջանակը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Հրապարակային սակարկությունների կազմակերպման գործընթացի հստակեցում՝ նվազեցնելով դատական ակտերի հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների շրջանակը<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով կարգավորվող իրավահարաբերությունները հարկադիր կատարման բնագավառի բաղկացուցիչ մասն են հանդիսանում, ապա նախագծի ընդունման արդյունքում կապահովվի դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի արդյունավետությունը: |

137.

**Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 5-րդ կետով, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի «Մարդու իրավունքներ և արդարադատություն» ենթաբաժնի 3-րդ կետի «ա» ենթակետով:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:»:

Սահմանադրության 164-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:»:

Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն. «Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:»:

Սահմանադրության 165-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Դատավորների թեկնածուների համար Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:»:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:»:

Սահմանադրության 174-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով:»:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նախատեսել որոշակի իրավական կարգավորումներ՝ դատական գործերի ողջամիտ ժամկետում քննությունը և դատարանների ծանրաբեռնվածության գնահատման կառուցակարգեր և չափանիշներ սահմանելու համար:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի (սահմանադրական օրենք) նախագծի մշակմամբ նախատեսվում է կարգավորել դատական իշխանության կազմակերպմանը և գործու-նեությանն առնչվող հարցերը, այդ թվում՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը, դատավորների անհամատեղելիության լրացուցիչ պահանջները, դատավորների կարգավիճակին ներկայացվող պահանջները, դատավորների թեկնածուներին

| | |
|---|---|
| | ներկայացվող լրացուցիչ պահանջները, դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները, Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը (Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար անհամատեղելիության պահանջներ, Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ, Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրության ժամկետներ և կարգ), Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորություններն ու գործունեության կարգը և այլն:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի համապատասխանեցում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ողջամիտ ժամկետում գործերի քննությունն ապահովող օրենսդրական կարգավորումների կատարելա-գործում, ինչպես նաև դատարանների ծանրաբեռնվածության գնահատման արդյունավետ կառուցակարգերի և չափանիշների ներդրում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի կազմակերպման և գործունեության համապատասխանությունը 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Բացի դրանից՝ կսահմանվեն ողջամիտ ժամկետում գործերի քննությունն ապահովող կարգավորումներ, կներդրվեն դատարանների ծանրաբեռնվա-ծության գնահատման արդյունավետ կառուցակարգեր և չափանիշներ: |
| 138. | **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ նոր օրենքի մշակումը պայմանավորված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային մի շարք պարտավորություններով: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի համա-ձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»: Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թվականից)՝ Հայաստանի Հանրապետությունը միացել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, որի 19-րդ հոդվածում հռչակվում է. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»:<br>2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը |

ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու, տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1993 թ.), որի 19-րդ հոդվածում խոսվում է կարծիք ունենալու իրավունքի և, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության մասին:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ օրենք) ընդունվել է 2003 թվականին: Անցած 13 տարվա ընթացքում դրսևորվեցին՝ ինչպես օրենքի կենսունակությունն ու հասարակական անհրաժեշտությունը, այնպես էլ՝ ի հայտ եկան մի շարք բացթողումներ: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով և (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում»: Այս դրույթը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներին, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը օտարերկրյա անձանց համար տեղեկատվության ազատության իրավունքի այլ սահմանափակումներ չի նախատեսում:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որպես հարցման եղանակ, նախատեսված են գրավոր և բանավոր հարցումները: Օրենքում էլեկտրոնային եղանակով հարցման հետ կապված որևէ կարգավորում նախատեսված չէ, ինչը տեղեկատվական տեխնոլոգիաների տարածվածության և համացանցի հասանելիության արդի փուլում շատ խնդրահարույց է: Բացի դրանից՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա չեն, իսկ առկայության դեպքում բավականին թերի են կարգավորված հարցման պատասխան ստանալու հետ կապված հարաբերությունների, տեղեկություններ փնտրող անձին հավաստի և ամբողջական տեղեկության տրամադրման ապահովման, տեղեկատվության ազատության պրոակտիվ հրապարակման հետ կապված հարաբերությունները: Սահմանված չեն նաև անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը, անձի՝ հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքը և տեղեկությունների համար վճարելու պայմաններն ու կարգը:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա չեն կարգավորումներ տեղեկատվության ազատության ոլորտի այնպիսի կարևոր ինստիտուտի մասին, ինչպիսին տեղեկատվության ազատության հանձնակատարն է:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկվում է մշակել և ընդունել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որով համապարփակ ձևով կլուծվեն ոլորտում առկա խնդիրները:

2. **Կարգավորման առարկան**

Տեղեկատվության ազատության ոլորտի պաշտպանության միջազգային նորմերին և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին համապատասխան երաշխիքների օրենսդրական ամրագրում

| | |
|---|---|
| | 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ տեղեկատվության ազատության օրենսդրական կարգավորումները կհամապատասխանեցվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և միջազգային չափանիշներին՝ դրանով իսկ ապահովելով տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանությունը: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով ամբողջական կարգավորման կենթարկվեն էլեկտրոնային եղանակով հարցում ուղարկելու և հարցման պատասխան ստանալու հետ կապված հարաբերությունները, տեղեկություններ փնտրող անձին հավաստի և ամբողջական տեղեկության տրամադրման ապահովումը, տեղեկատվության ազատության պրոակտիվ հրապարակման կարգավորումները, անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը, անձի՝ հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքը և տեղեկությունների համար վճարելու պայմաններն ու կարգը, ինչպես նաև տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտը: |
| 139. | **«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը բխում է Հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 13-րդ, 14-րդ, 16-րդ կետերի պահանջներից և կարևորվում է շահերի բախման ինստիտուտի համապարփակ կարգավորման տեսանկյունից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ հանրային ծառայողների հայտարարագրման գործող ինստիտուտը հիմնականում սահմանափակվում է պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման պահանջով: Մինչդեռ, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևորվում է շահերի հայտարարագրումը, ինչը Հայաստանի Հանրապետությունում բացակայում է:<br>Միևնույն ժամանակ, ներկայումս հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրությամբ հանրային ծառայողների շահերի բախման իրավիճակների արդյունավետ մեխանիզմներ նախատեսված չեն: Մինչդեռ շահերի բախման արդյունավետ կարգավորումը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն միջոցառումներից է:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում:<br>Նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կհստակեցվեն շահերի բախման հասկացությունը, սուբյեկտների շրջանակը, կկարգավորվեն շահերի բախման իրավիճակում հանրային ծառայողի գործողությունները և վերահսկողության մեխանիզմները: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Հանրային ծառայության ոլորտում շահերի բախման արդյունավետ կարգավորում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ: Հանրային ծառայության համակարգում կբարձրանան թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը: |
| 140. | **«Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջազգային իրավական ակտերում կոռուպցիայի տարրերի հստակեցումը, դրանց քրեականացումը և ներպետական կենտրոնացված և համակարգային վերահսկողությունն ու դրա դեմ պայքարը հիմք են հանդիսանում մի շարք ածանցյալ իրավական ինստիտուտների ստեղծման՝ ուղղված համակարգի արդյունավետ գործունեությանը: Կոռուպցիայի դեմ պայքարի գործում ածանցյալ իրավական մեխանիզմներից կարևորվում է ազդարարների պաշտպանության գործուն կառուցակարգերի ընդունումը:<br>Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի և Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիաները, պարտավորություն է ստանձնել ապահովել կոռուպցիայի գործերով հաղորդում ներկայացրած անձանց արդյունավետ պաշտպանությունը:<br>«Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը բխում է նաև ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 51-րդ կետից:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան անհրաժեշտ պայմաններ՝ ազդարարման համար: Առկա չեն այս գործունեությունը կարգավորող բավարար և համապարփակ օրենսդրական կարգավորումներ: Բացի դրանից՝ ձևավորված չէ հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարին մղող դրական միջավայր:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ընդունել «Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, որով համալիր կարգավորման կենթարկվեն ազդարարման հետ կապված իրավահարաբերությունները և կերաշխավորվի ազդարարման իրավունքի արդյունավետ իրացումը:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Ազդարարների պաշտպանության երաշխիքների օրենսդրական ամրագրում |

| | |
|---|---|
| | 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի ընդունմամբ կապահովվի Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի մասին ազդարարած անձանց իրավական պաշտպանությունը, ինչով պայմանավորված է կոռուպցիոն դեպքերի բացահայտման և կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը պետությունում: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը կկատարի ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 33-րդ և Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի 9-րդ հոդվածներով ստանձնած իր պարտավորությունները: |
| 141. | **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի «Կոռուպցիայի դեմ պայքար» ենթաբաժնի 4-րդ կետով: Մասնավորապես, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար կարևոր նախապայման է հանդիսանում նաև համարժեք պատժողական քաղաքականության իրականացումը պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների բնագավառում: Այս առումով, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով ոչ միայն անհրաժեշտ հստակությամբ պետք է սահմանվեն պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների տեսակները, այլև դրանց համար պետք է նախատեսվեն առավել խիստ պատասխանատվության միջոցներ՝ հաշվի առնելով դրանց առավել բարձր վտանգավորության աստիճանը:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 29-րդ գլխում: Ներկայիս իրավական կարգավորմամբ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների թվին են դասվում 15 հանցագործություն, որոնց վերաբերյալ, իրենց հերթին, առկա են որակյալ հատկանիշներով իրավական կարգավորումներ: Սակայն, հարկ է նկատել, որ առանձին դեպքերում, օրինակ, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, խոշտանգման, ձեռնարկատիրական գործունեության ապօրինի մասնակցելու կամ պաշտոնեական անփութության համար նախատեսված պատասխանատվության միջոցները համարժեք չեն, և, հաշվի առնելով վերջիններիս հանրային վտանգավորությունն ու դրանց կատարմամբ հասարակությանն ու պետությանը պատճառվող վնասի բնույթը և հետևանքները, սահմանված պատասխանատվության միջոցները համարժեք չեն և չեն բխում պետական ծառայության համակարգի առջև դրված մարտահրավերներից:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Նախագծով առաջարկվում է հստակեցնել և առավել խստացնել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների կատարման համար կիրառման ենթակա պատասխանատվության միջոցների շրջանակը՝ ելակետ ընդունելով վերջիններիս առավել բարձր հանրային վտանգավորությունը: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br><br>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար առավել խիստ պատասխանատվության միջոցների սահմանում՝ հաշվի առնելով առավել բարձր վտանգավորության աստիճանը<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար կսահմանվեն պատասխանատվության առավել խիստ միջոցներ՝ հաշվի առնելով առավել բարձր վտանգավորության աստիճանը: |
| 142. | **«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 6-րդ կետով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներ են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:»:<br>Սահմանադրության 164-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ դատական օրենսգրքով:»:<br>Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն. «Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ դատական օրենսգրքով:»:<br>Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ դատական օրենսգրքով:»:<br>Սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն. «Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով:»: |

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է մշակել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Օրենքով նախատեսվում է կարգավորել Սահմանադրական դատարանի գործունեության կազմակերպման կարգը, սահմանել սահմանադրական դատավարության սկզբունքները, սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման դատավարական առանձնահատկությունները. ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը, դատավորների անհամատեղելիության լրացուցիչ պահանջները, դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները, դատավորների թեկնածուների համար ներկայացվող լրացուցիչ պահանջները, ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման կարգը և այլն:

2. **Կարգավորման առարկան**

ՀՀ սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորում

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի մշակմամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, նոր կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունների իրականացման դատավարական առանձնահատկությունները կհամապատասխանեցվեն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

143.

**«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 7-րդ կետով:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 2-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:»:

Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն. «Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:»:

| | |
|---|---|
| | Սահմանադրության 204-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեին, 205-րդ հոդվածը՝ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերով հանրաքվեներին, 206-րդ հոդվածը՝ հանրաքվեի նշանակմանը, 207-րդ հոդվածը՝ հանրաքվեի դրված ակտի ընդունմանը, իսկ 208-րդ հոդվածը՝ հանրաքվե անցկացնելու արգելքին:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով շարադրվածը՝ առաջարկվում է մշակել «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, որով կարգավորվելու են հանրաքվեի նշանակման, անցկացման, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակի, հանրաքվեի նշանակման դեպքերի, նախընտրական քարոզչության, հանրաքվեի արդյունքների ամփոփման, ինչպես նաև հանրաքվեի արդյունքների ամրագրման հետ կապված այլ հարաբերությունները:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Հանրաքվեի ինստիտուտի հետ կապված հարաբերությունների հստակ և ամբողջական կարգավորում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի մշակմամբ հանրաքվեի կազմակերպման և անցկացման առկա կարգավորումները կհամապատասխանեցվեն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: |
| 144. | **«Դատախազության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 9-րդ կետով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է ՀՀ Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով: Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ ՀՀ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին: Բացի դրանից՝ գործում է նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորումները չեն բխում՝ ինչպես համակարգի գործունեության առանձնահատկություններից, այնպես էլ՝ առանձին դեպքերում չունեն մանրամասն դատավարական կարգավորում:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Եթե գործող կարգավորմամբ գլխավոր դատախազի նշանակումն իրականացվում է Հայաստանի |

| | |
|---|---|
| | Հանրապետության Նախագահի առաջարկությամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից, ապա նոր կարգավորմամբ գլխավոր դատախազը մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Իսկ գլխավոր դատախազը պաշտոնանկ կարող է արվել օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Միաժամանակ, գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:<br>Նոր կարգավորմամբ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայցի հարուցմամբ դատարան կարող է դիմել միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում և կարգով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակմամբ նախատեսվում է հստակ ամրագրել Հայաստանի Հանրապետության դատախազության կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, սահմանել դատախազին ներկայացվող պահանջները, դատախազների նշանակման, նրանց ծառայողական առաջխաղացման, խրախուսանքի և պատասխանատվության միջոցների կիրառման հիմքերը և կարգը, դատախազության համակարգը, դատախազների իրավական և սոցիալական երաշխիքները՝ դրանով իսկ ապահովելով նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 210-րդ հոդվածի 5-րդ մասի կատարումը:<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակմամբ ՀՀ դատախազության իրավական կարգավիճակը կհամապատասխանեցվի 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: |
| 145. | **«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 10-րդ կետով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:»: |

| | |
|---|---|
| | Սահմանադրության 196-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:»:<br><br>Սահմանադրության 197-րդ հոդվածը վերաբերում է հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմին և կազմավորման կարգին:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է մշակել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով հստակորեն կկարգավորվեն հեռուստատեսության և ռադիոյի կարգավիճակի, դրանց հիմնադրման, հեռուստաընկերություն-ների լիցենզավորման և ղեկավարման կարգի, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերի, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող այլ հարաբերություններ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br><br>Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում առկա հարաբերությունների համապարփակ կարգավորում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակմամբ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի իրավական կարգավիճակը կհամապատասխանեցվի 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: |
| 146. | **«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 11-րդ կետով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմա-նադրության մեջ (այսուհետ՝ Սահմանադրություն), ի տարբերություն 2005 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ Սահմանադրության, չի պարունակվում Վերահսկիչ պալատին վերաբերող դրույթներ: Վերահսկիչ պալատի փոխարեն Սահմանադրությամբ նախատեսվել է Հաշվեքննիչ պալատի ինստիտուտը:<br><br>Սահմանադրության 13-րդ գլուխը վերաբերում է Հաշվեքննիչ պալատին: Մասնավորապես, Սահմանադրության 198-րդ հոդվածը վերաբերում է Հաշվեքննիչ պալատի գործառույթներին և լիազորություններին, իսկ 199-րդ հոդվածը՝ հաշվեքննիչ պալատի կազմին և կազմավորման կարգին: Սահմանադրության 198-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Հաշվեքննիչ պալատի |

| | |
|---|---|
| | լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:»:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է մշակել «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի ձևավորման, լիազորությունների շրջանակի, գործունեության կարգի, երաշխիքների, ինչպես նաև մի շարք այլ հարաբերություններ:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>Հաշվեքննիչ պալատի կազմակերպման ու գործունեության, ինչպես նաև նրա կողմից իրականացվող հաշվեքննության հետ կապված հարաբերությունների ամբողջական և հստակ կարգավորում<br><br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակմամբ ՀՀ հաշվեքննիչ պալատի իրավական կարգավիճակը կհամապատասխանեցվի 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: |
| 147. | **«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի N 1 հավելվածի 12-րդ կետով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Օրենքով սահմանված դեպքերում ՀՀ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին: Իսկ կենտրոնական բանկի խորհրդի անդամներին նշանակելու իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ հինգ տարի ժամկետով:<br>Գործող կարգավորմամբ կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել խորհրդին վերապահված իրավասությունների կատարումը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր կարգավորմամբ սահմանվում է կենտրոնական բանկի նոր կարգավիճակը՝ որպես ազգային բանկ: Կենտրոնական բանկը ՀՀ Ազգային ժողով ներկայացնում է տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ: |

Սահմանվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի նախագահին ՀՀ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է ՀՀ Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Իսկ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամներին ՀՀ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է ՀՀ Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, ընդ որում, լիազորությունների ժամկետը սահմանվել է վեց տարի: Միաժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի լիազորությունները դադարեցնում է ՀՀ Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, իսկ մյուս անդամներինը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Այսինքն, նոր կարգավորմամբ Հանրապետության Նախագահն այլևս թեկնածություն չի ներկայացնում և պաշտոնանկ անելու առաջարկությամբ հանդես գալու իրավասություն չունի:

Նախագծով ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների նկատմամբ սահմանվում են նոր պահանջներ: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք:

2. **Կարգավորման առարկան**

«Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակմամբ նախատեսվում է ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական կարգավիճակի հետ կապված դրույթների ամբողջական կարգավորումը՝ դրանով իսկ ապահովելով նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 210-րդ հոդվածի 5-րդ մասի կատարումը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմամբ ՀՀ կենտրոնական բանկի իրավական կարգավիճակը կհամապատասխանեցվի 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

148.

**«Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և պահվող երեխայի վերադարձի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ օրենսդրական համակարգում բացակայում է «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի Կոնվենցիայի շրջանակներում քննվող վարույթների ընթացակարգը կարգավորող օրենք:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որոշ վերապահումներում վավերացրեց 2006 թվականի հոկտեմբերի 23-ին, որը Հայաստանի համար ուժի մեջ մտավ 2007 թվականի հունիսի 1-ից:

| | |
|---|---|
| | Կոնվենցիայի կատարումը պատշաճ ապահովելու նպատակով 2008 թվականի փետրվարի 7-ին ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվեց Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման մասին համատեղ հրամանը, որով սահմանվեցին առևանգման գործին առնչվող ընթացակարգերը: ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի N 925-Ն որոշմամբ կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված կենտրոնական մարմին նշանակվեց ՀՀ արդարադատության նախարարությունը: Միաժամանակ բացակայում են այն դրույթները, որոնց հիման վրա ՀՀ կենտրոնական մարմինը և այլ ներգրավված գերատեսչություններ իրականացնում են վարույթները կամ մասնակցում դրանց իրականացմանը, բացի դրանից՝ բացակայում են նշված մարմինների հստակ գործառույթները սահմանող նորմատիվ դրույթները, ինչը պրակտիկայում որոշակի խնդիրներ է առաջանում վարույթների քննման ընթացքում: 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ներկայացված որոշ խնդիրների լուծման նպատակով 2016 թվականի փետրվարի 11-ին ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստորագրվեց Գործակալության կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած՝ «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների գործընթացում ստանձնած պարտավորություններն արդյունավետ իրականացնելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի N 51 հրամանը: Միջգերատեսչական աշխատանքային խմբի քննարկումների և առաջարկությունների արդյունքում մշակվել է «Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ պահվող երեխայի վերադարձի վարույթի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ուղղված է երեխայի վերադարձման վարույթի կանոնակարգմանը, վարույթի ժամկետների հստակեցմանը, որոշումների տեսակների և դրանց ընդունման ընթացակարգերի սահմանմանը: 2. **Կարգավորման առարկան** Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ պահվող երեխայի վերադարձի վարույթի ընթացակարգերի սահմանումը 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ պահվող երեխայի վերադարձի վարույթների հարուցման և դրա իրականացման ընթացակարգերի հստակեցում, որոշումների հստակեցում և դրանց կատարման ընթացակարգերի սահմանում, վարույթի մասնակից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության ձևաչափերի հստակեցում |
| 149. | **«Քրեական գործերով իրավական փոխօգնության և իրավական հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ** 1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** «Քրեական գործերով իրավական փոխօգնության և իրավական հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետության քրեական |

| | |
|---|---|
| | դատավարության օրենսգրքի նախագծով, որը 2014 թվականի մայիսի 19-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում, չի կարգավորվել իրավական օգնության ոլորտը: Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթների 472-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխները, որոնք այս կամ այն չափով կարգավորում են քրեական գործերով իրավական օգնությանն առնչվող հարաբերությունները, ուժը կորցրած չեն ճանաչվում:<br>Բացի նշվածից՝ «Քրեական գործերով իրավական փոխօգնության և իրավական հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը բխում է օտարերկրյա պետություններում պատիժը կրող՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող դատապարտյալների կամ Հայաստանի Հանրապետությունում պատիժը կրող օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող դատապարտյալների փոխանցման հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունից, քանի որ դրանք ներկայումս որևէ ներպետական իրավական ակտով կարգավորված չեն:<br><br>2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քրեական գործերով իրավական փոխօգնությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերի և գործող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ գլուխներում ամրագրված հոդվածների համաձայն:<br>Հայաստանի Հանրապետությունը կողմ է հանդիսանում քրեական գործերով իրավական օգնության ոլորտում գործող մի շարք բազմակողմ և երկկողմ միջազգային պայմանագրերի, որոնցով կարգավորվում են քրեական գործերով իրավական փոխօգնության, հանցագործություն կատարած անձանց հանձնման (էքստրադիցիայի), դատապարտյալների փոխանցման, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման ու կատարման և այլ հարցեր:<br>Հայաստանի Հանրապետությունը միացել է այնպիսի կարևորագույն ունիվերսալ միջազգային պայմանագրերի, որոնցից են «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ», 1957 թ. դեկտեմբերի 13-ի միջազգային կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունները, «Կոռուպցիայի դեմ» 2003 թ. հոկտեմբերի 31-ի միջազգային կոնվենցիան, «Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին» 1997 թ. դեկտեմբերի 16-ի միջազգային կոնվենցիան, «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 1999 թ. դեկտեմբերի 9-ի միջազգային կոնվենցիան, որոնցից յուրաքանչյուրով նախատեսվում են հոդվածներ, որոնք առնչվում են տվյալ կոնվենցիայի շրջանակներում իրավական օգնության տրամադրմանը:<br>Հայաստանի Հանրապետությունը մի շարք տարածաշրջանային բազմակողմ պայմանագրերով նույնպես ստանձնել է քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու պարտավորություններ. դրանցից են՝ «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» 1998 թ. հոկտեմբերի 2-ի համաձայնագիրը, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման պայքարի մասին» 2005 թ. մայիսի 16-ի եվրոպական կոնվենցիան, «Հանձնման մասին» 1957 թ. դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիան, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թ. ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիան, Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնության և փոխգործակցության մասին համաձայնագիրը: |

Բացի նշված բազմակողմ միջազգային պայմանագրերից՝ գործում են նաև երկկողմ պայմանագրեր Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության, Հունաստանի Հանրապետության, Սիրիայի Արաբական Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Ռումինիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Լատվիայի Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության հետ: Ոլորտը կարգավորող համաձայնագրեր են ստորագրվել նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Քուվեյթի Պետության հետ, որոնց թիվը տարեցտարի աճում է:

Հարկ է նշել, որ միջազգային պայմանագրերը կոչված են պետություններին ընձեռել իրավական փոխադարձ օգնություն տրամադրելու հնարավորություն միայն և ընդհանուր առմամբ սահմանում են դրանց տրամադրման ձևերը, սակայն իրավական օգնության տրամադրման կարգը, դրա հետ կապված դատավարական գործողությունները միջազգային պայմանագրերով չեն կարգավորվում՝ թողնելով դրանց կարգավորումը յուրաքանչյուր երկրի ներպետական օրենսդրությանը:

Ի լրումն միջազգային պայմանագրերի՝ գործող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել են քրեական գործերով իրավական օգնությունը կարգավորող հոդվածներ, որոնք հիմնականում ընդգրկված են 54-րդ (Քրեական գործերով իրավական օգնությունը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան) և 54.1-ին (Քրեական գործերով իրավական օգնությունը՝ միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում) գլուխներում:

Չնայած գործող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում նշված գլուխների առկայությանը՝ այդուհանդերձ, դրանցում նշված կարգավորումները հաճախ թերի են, իրարամերժ, գործնականում կիրառելիս առաջացնում են բազմաթիվ խնդիրներ, իսկ որոշ դեպքերում՝ ընդհանրապես կարգավորումներ չեն նախատեսում:

Ի հավելումն նշվածի՝ մտահոգությունների տեղիք է տալիս նաև այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որը 2014 թ. մայիսի 19-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում, ընդհանրապես չի նախատեսում որևէ հոդված, որով հնարավոր լիներ կարգավորել իրավական օգնության ոլորտը: Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթների 472-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթները ուժը կորցրած չեն ճանաչվում:

Նշվածից հետևում է, որ քրեական գործերով իրավական օգնության ոլորտը, որը ներառում է ոչ միայն օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հետ ՀՀ իրավասու մարմինների (պետական կառավարման համապատասխան մարմինների, քննիչների, դատախազների, դատարանների) համագործակցության կազմակերպումը, այլ նաև ձեռք բերված ապացույցների փոխանցումը, հանցագործությունից ստացված եկամուտների սառեցումը և փոխանցումը, հանցագործություն կատարած անձանց հանձնումը, դատապարտյալների փոխանցումը և համագործակցության ավելի լայն շրջանակ, ոչ միայն բարելավման, այլ նաև ժամանակին համահունչ պատշաճ օրենսդրական կարգավորման կարիք ունի:

Ի հավելումն նշվածի՝ անհրաժեշտ է նաև կանոնակարգել օտարերկրյա պետություններում պատիժը կրող ՀՀ քաղաքացի հանդիսացող դատապարտյալների կամ Հայաստանի Հանրապետությունում պատիժը կրող օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող դատապարտյալների փոխանցման հարցերը, որոնք ներկայումս որևէ ներպետական իրավական ակտով կարգավորված չեն:

3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների ժամանակավոր կիրառման հետ կապված խնդիրներից խուսափելու, ինչպես նաև իրավական փոխօգնության ոլորտում ծագող հարաբերությունները համալիր կարգավորելու նպատակով առաջարկվում է ընդունել «Քրեական գործերով իրավական փոխօգնության և իրավական հարաբերությունների մասին» ՀՀ օրենք:

4. **Չափելի քայլերի հերթականությունը**

«Քրեական գործերով իրավական փոխօգնության և իրավական հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում հնարավոր կլինի առավել ամբողջական կարգավորել իրավական փոխօգնության ոլորտում ծագող հարաբերությունները, ստեղծել օտարերկրյա պետությունների հետ իրավական փոխօգնության իրականացման լիարժեք և գործուն մեխանիզմներ՝ իրականացնելով ոլորտում լայն շրջանակի համագործակցություն, խուսափելով ՀՀ պատկան մարմինների կողմից որոշումների ընդունման հայեցողականությունից, որն, ըստ էության, չափելի արդյունք է:

Օրենքի նախագծի մշակումից հետո նախատեսվում է այն համաձայնեցնել ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի հետ, որից հետո այն հնարավոր կլինի ներկայացնել ՀՀ կառավարություն:

5. **Կատարման հստակ ժամկետները**

ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում «Քրեական գործերով իրավական փոխօգնության և իրավական հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը նախանշված է մինչև 2017 թվականի մայիսի 1-ին տասնօրյակը:

**Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն**

150. **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 245-Ա որոշմամբ հաստատված ցանկի 40-րդ և 41-րդ կետերի կատարման, ինչպես նաև զինվորական ծառայության կազմակերպման գործընթացը ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության գերակայություններին համապատասխան ապահովելու նկատառումներով:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ 2015 թվականին կատարված փոփոխությունների համաձայն Հայաստանի Հանրապետությունն անցում է կատարել խորհրդարանական կառավարման համակարգին, որի արդյունքում գործող «Զինապարտության մասին» և «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքների մի շարք կարգավորումներ ենթակա են համապատասխանեցման Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին: Միաժամանակ, ՀՀ օրենսդրության մեջ մեկ ակտով հստուկ սահմանված չեն պարտադիր, պայմանագրային և

| | |
|---|---|
| | պահեստազորային զինվորական ծառայության իրականացման շրջանակները, զինվորական ծառայության կազմակերպման գործընթացում ամբողջական սահմանված չէ զինծառայողի կարգավիճակը, վերանայման անհրաժեշտություն ունեն զինվորական պաշտոնների նշանակման, ծառայողական առաջխաղացման, զինվորական կոչումների շնորհման ընթացակարգերը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է գործող «Զինապարտության մասին» և «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքներով կարգավորվող հարաբերությունները, ինչպես նաև զինծառայողի սոցիալական և իրավական երաշխիքները սահմանող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը նախատեսել մեկ միասնական օրենքի տեսքով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել պարտադիր, պայմանագրային և պահեստազորային զինվորական ծառայության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, հստակ ամրագրել զինծառայողի կարգավիճակը և դրանից բխող նրա իրավունքների և պարտականությունների, սոցիալական ու իրավական երաշխիքների շրջանակը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի ընդունումը խթան կհանդիսանա ՀՀ քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության իրականացման, զինվորական ծառայության կազմակերպման ձևերի, զինծառայողների կարգավիճակի հստակեցման, պահեստազորային համակարգի զարգացման համար, ինչը կնպաստի երկրի պաշտպանունակության և անվտանգության առավել բարձր մակարդակի ապահովմանը: |
| 151. | **«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 245-Ա որոշմամբ հաստատված ցանկի 36-րդ և 37-րդ կետերի կատարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման գործընթացն արդի մարտահրավերներին ու ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության գերակայություններին համապատասխան ապահովելու նկատառումներով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ 2015 թվականին կատարված փոփոխությունների համաձայն Հայաստանի Հանրապետությունն անցում է կատարել խորհրդարանական կառավարման համակարգին, որի արդյունքում գործող «Պաշտպանության մասին» և «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքների մի շարք կարգավորումներ ենթակա են համապատասխանեցման Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին: Բացի դրանից՝ գործող «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով հիմնականում կարգավորվում է խաղաղ ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման և ապահովման գործընթացը, իսկ զորահավաքային նախապատրաստության միջոցառումները և պետությունը խաղաղից պատերազմական ժամանակի աշխատանքային ռեժիմի անցման հարաբերությունները ոչ ամբողջական տեսքով կարգավորվում են դեռևս 1999 թվականին ընդունված «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքով, որի շատ դրույթներ արդիականացման կարիք ունեն: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է գործող «Պաշտպանության մասին» և «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքները նախատեսել մեկ միասնական օրենքի տեսքով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծով հստակեցվում են խաղաղ և պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման և ապահովման, պետությունը խաղաղից պատերազմական ժամանակի աշխատանքային ռեժիմի անցման հարաբերությունները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության մակարդակը, Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական և ռազմական անվտանգության համակարգը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններին, ինչպես նաև ռազմական սպառնալիքների հնարավոր զարգացումներին: |
| | ***Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն*** |
| 152. | **«Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>«Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի «Ոչ պարենային արտադրանքի տեխնիկական կանոնակարգերի վերանայման պլանավորման ծրագիրը հաստատելու մասին» N 1015-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի պահանջով:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տվյալ ոլորտի համար տեխնիկական անվտանգության հարաբերությունները նախկին իրավական ակտերով մոտարկված չեն մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների մասին Եվրոպական միության 1999/5 ԵՀ դիրեկտիվին:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տեխնիկական կանոնակարգի ընդունում: Կանոնակարգվող ոլորտին վերաբերող անվտանգության պահանջները համահունչ դարձնել ԱՏԽ (Առևտրի տեխնիկական խոչընդոտներ) դրույթներին և դրանց մոտարկումը ԵՄ (Եվրոպական միության) օրենսդրությանը, այսինքն, ԵՄ-ի և Հայաստանի միջև ԽՀԱԱՀ-ի (Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր) շուրջ բանակցությունների արդյունքներին:<br><br>2. **Կարգավորման առարկան**<br>«Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կկարգավորվեն մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների մասին տեխնիկական անվտանգության պահանջների սահմանման իրավական հիմքերը: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կանոնակարգվող ոլորտի համար իրավական հիմքերի ստեղծում և միջազգային չափորոշիչներին համապատասխան տեխնիկական անվտանգության պահանջների սահմանում |
| 153. | **«Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի «Ոչ պարենային արտադրանքի տեխնիկական կանոնակարգերի վերանայման պլանավորման ծրագիրը հաստատելու մասին» N 1015-Ն որոշման հավելվածի 19-րդ կետի պահանջով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տվյալ ոլորտի համար տեխնիկական անվտանգության հարաբերությունները նախկին իրավական ակտերով մոտարկված չեն վերելակների և դրանց շահագործման անվտանգությանը ներկայացվող պահանջների մասին Եվրոպական միության 95/16 ԵՀ դիրեկտիվին:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տեխնիկական կանոնակարգի ընդունում: Կանոնակարգվող ոլորտին վերաբերող անվտանգության պահանջները համահունչ դարձնել ԱՏԽ (Առևտրի տեխնիկական խոչընդոտներ) դրույթներին և դրանց մոտարկումը ԵՄ (Եվրոպական միության) օրենսդրությանը, այսինքն, ԵՄ-ի և Հայաստանի միջև ԽՀԱԱՀ-ի (Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր) շուրջ բանակցությունների արդյունքներին:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կկարգավորվեն վերելակների և դրանց շահագործման անվտանգությանը ներկայացվող պահանջների մասին տեխնիկական անվտանգության պահանջների սահմանման իրավական հիմքերը:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կանոնակարգվող ոլորտի համար իրավական հիմքերի ստեղծում և միջազգային չափորոշիչներին համապատասխան տեխնիկական անվտանգության պահանջների սահմանում |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 154. | **«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է վարչական իրավախախտումները |

բացահայտելիս՝ քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից անհրաժեշտ բացատրություններ, տվյալներ, տեղեկանքներ, փաստաթղթեր և (կամ) դրանց պատճեններ պահանջելու և ստանալու, ինչպես նաև հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ օգտագործելու՝ ոստիկանության լիազորությունների պոզիտիվ ամրագրման անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վարչական իրավախախտումների քննության ընթացքում ոստիկանությունը քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից և կազմակերպություններից պահանջում է բացատրություններ, տվյալներ, տեղեկություններ, փաստաթղթեր կամ դրանց պատճեններ: Ոստիկանության նշված գործողությունն օրենսդրական ամրագրում չունի, հետևաբար Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է օրենքում կատարել համապատասխան լրացում: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանվում են ոստիկանության իրավունքները՝ վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս: Հոդվածում խոսվում է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավունքի մասին, սակայն բացակայում է արձանագրությունները կազմելու կամ վարչական իրավախախտման հատկանիշները պարզելու նպատակով քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից անհրաժեշտ բացատրություններ, տվյալներ, տեղեկանքներ, փաստաթղթեր և (կամ) դրանց պատճեններ պահանջելու և ստանալու լիազորությունը: Ոստիկանությանը նման իրավունք վերապահված է միայն օրենքի 19-րդ հոդվածով՝ որպես իրավախախտումը կանխելու լիազորություն: Օրինականության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունից է բխում նույն լիազորության ամրագրումը նաև 21-րդ հոդվածում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածը երաշխավորում է մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Ոստիկանությունը, իր խնդիրներն իրականացնելիս, օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում իրավասու է հավաքելու մասնավոր կյանքի գաղտնիք կազմող տեղեկություններ: Տեղեկությունների հավաքումը տեխնիկական միջոցներով քաղաքացիների մոտ հաճախ տարակուսանքի և դժգոհության առիթ է տալիս, մասնավորապես, մարդկանց անհանգստացնում է հավաքված տեղեկությունների պահպանման և հետագա օգտագործման վերաբերյալ օրենսդրական բացերի առկայությունը: Հաշվի առնելով այն, որ հասարակական անվտանգության պահպանման ոլորտը հասարակական կարգի այն ենթահամակարգերից է, որտեղ ամենաշատն է ոստիկանության շփումը քաղաքացիների հետ, խնդիրն էլ ավելի արդիական է դառնում:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է օրենքում ամրագրել իրավախախտումների բացահայտման ընթացքում քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից ու կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու՝ ոստիկանության լիազորությունը, ինչպես նաև հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս՝ ոստիկանության ծառայող-

ներին իրավունք վերապահել օգտագործելու տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ՝ միաժամանակ սահմանելով տեսանյութերը կամ լուսանկարները պահելու առավելագույն ժամկետները, ինչպես նաև նախատեսելով տեսանյութերը կամ լուսանկարները, իրավախախտումների քննությունից բացի, այլ նպատակներով օգտագործելու արգելք:

2. **Կարգավորման առարկան**

Նախագծով ոստիկանությանն իրավունք կվերապահվի վարչական իրավախախտումներ բացահայտելիս՝ քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից պահանջել և ստանալ անհրաժեշտ բացատրություններ, տվյալներ, տեղեկանքներ, փաստաթղթեր և (կամ) դրանց պատճեններ: Այս լիազորությունը գործնականում ոստիկանությունն իրականացնում է, սակայն պոզիտիվ ամրագրում այն երբևէ չի ստացել:

Հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս՝ ոստիկանության ծառայողներին իրավունք կվերապահվի օգտագործելու տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունումը ոստիկանությանը հնարավորություն կտա ապահովելու օրինականության բարձր մակարդակ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության և հասարակական կարգի ապահովման բնագավառներում: Մասնավորապես, առաջարկվող լրացումների արդյունքում՝

1) կապահովվի սահմանադրական նորմի պահանջը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրարկումն ապահովելու նպատակով կամրագրվի, որ ոստիկանությունն իրավունք ունի հասարակական կարգի պահպանության ոլորտում կիրառելու տեխնիկական միջոցներ, ինչպես նաև քաղաքացիներից, կազմակերպություններից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն).

2) կերաշխավորվի ոստիկանության գործողության լեգիտիմությունը.

3) քաղաքացիների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց համար հասկանալի կլինի, որ նման պահանջներն օրինական են և պարտադիր կատարման ենթակա.

4) օրենքի մակարդակով կհստակեցվեն տեխնիկական միջոցներով հավաքված տեղեկությունների պահպանման նվազագույն և առավելագույն ժամկետները, կապահովվի տեղեկությունների հավաքման և օգտագործման նպատակի լեգիտիմությունը, այսինքն՝ կհստակեցվեն մասնավոր կյանքի ոլորտ ոստիկանական միջամտության սահմանները:

155.

**«Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Նախագծի ընդունումը պայմանավորված է հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, ընթացք տալու և հաշվառելու հետ կապված հարաբերությունների նորմատիվ կարգավորման անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի կատարման անհրաժեշտությամբ, համաձայն որի ոստիկանությունը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով ընդունել, գրանցել և հաշվառել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները, դրանց տալ

համապատասխան ընթացք: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև օրս օրենքի պահանջը չի կատարվել, ինչն առաջացրել է օրենսդրական բաց (գործնականում ՀՀ կառավարության որոշմամբ կարգավորման ենթակա հարաբերությունները կարգավորվել են ՀՀ ներքին գործերի նախարարի և գլխավոր դատախազի 1999 թվականի սեպտեմբերի 1-ի N 12/354 համատեղ հրամանով, որը, սակայն, ՀՀ արդարադատության նախարարությունում պետական գրանցում չի ստացել, ուստի, իրավաբանական ուժ չունի):

Օրենսդրական բացը ոչ միայն հակաիրավական է դարձնում հանցագործությունների գրանցման ոլորտում ոստիկանության գործառույթների իրականացումը, անարդյունավետ դարձնում ոլորտի նկատմամբ դատախազական հսկողությունը, այլև սահմանափակում է իրավախախտումներից տուժած անձանց՝ պետությունից արդյունավետ պաշտպանություն ստանալու իրավունքը կենսագործելու հնարավորությունը, քանի որ անորոշ են մնում իրավախախտումների մասին հաղորդում ներկայացնելիս՝ ոստիկանության և տուժած անձանց փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակները:

Օրենսդրական բացը լրացնելու անհրաժեշտության վերաբերյալ ոստիկանությանը դիմել է նաև ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագրով: Ըստ մի շարք քրեական գործերի քննության արդյունքների՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը եզրակացրել է, որ կարգի բացակայությունը և իրավաբանական ուժ չունեցող հրամանով ղեկավարվելը պաշտոնական մի շարք հանցագործությունների համար հանցանպաստ գործոն է: Որոշման ընդունումից հետո միջնորդագրով ներկայացված պահանջը կկատարվի:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, ընթացք տալու և հաշվառելու հետ կապված հարաբերությունները կանոնակարգել ՀՀ կառավարության որոշմամբ:

2. **Կարգավորման առարկան**

Նախագծով կկարգավորվեն ՀՀ ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու հետ կապված իրավահարաբերությունները՝ օրենքի պահանջին համապատասխան:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ՝

1) կապահովվի օրենքի պահանջի կատարումը.

2) քաղաքացիներն ու կազմակերպությունները հստակ պատկերացում կարող են ունենալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու կարգի և ժամկետների մասին.

3) կապահովվի՝ ինչպես դատախազական հսկողության, այնպես էլ՝ հասարակական վերահսկողության արդյունավետությունը հաղորդումների գրանցման ընթացքի նկատմամբ, քանի որ ոստիկանության իրավասու ստորաբաժանումների՝ օրենքով նախատեսված լիազորությունները բավարար չափով կարգում կոնկրետացվելու են և զարգացվելու, հստակեցվելու են կամայականությունների դեպքում քաղաքացիների բողոքարկման իրավունքի իրականացման հնարավորությունները:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե**

156. **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 553-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Նշված իրավական ակտի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման և վնասազերծման հետ կապված հարաբերությունները հստակեցնելու, կուտակված փորձը կիրառելու և ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտներին համապատասխանացնելու անհրաժեշտությունից:

**2. Կարգավորման առարկան**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման ու վնասազերծման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 553-Ն որոշմամբ: Սակայն դեռևս կան հարցեր, որոնք կարգավորման կարիք ունեն: Մասնավորապես, մաքսային սահմանի վրա հայտնաբերված՝ թույլտվություն չունեցող ռադիոակտիվ կամ ռադիոակտիվ աղտոտածությամբ նյութերի ու առարկաների վնասազերծման հետ կապված և այլ հարցեր:

**3. Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ կհստակեցվեն ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման ու վնասազերծման հետ կապված հարաբերությունները, ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման ու վնասազերծման հետ կապված մարմինների գործառույթները, ինչպես նաև կապահովվի կառավարության նշված որոշման համապատասխանությունը ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտներին:

157. **«Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում վթարների ճառագայթային հետևանքների գնահատման պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջից, համաձայն որի կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր երկիր պարտավորվում է միջոցներ ձեռնարկել ապահովելու համար ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը հնարավոր վթարների դեպքում: Վթարների պլանավորման և հակազդման գործողություններն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ նախագծային վթարների ճառագայթային հետևանքների գնահատման պահանջներ:

2. **Կարգավորման առարկան**

Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում վթարների ճառագայթային հետևանքների գնահատման պահանջներ:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի ընդունմամբ կսահմանվեն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտ-

| | |
|---|---|
| | ների վթարների ճառագայթային հետևանքների գնահատման պահանջները, որոնց օգնությամբ հնարավորինս հստակ կսահմանվեն վթարային պլանավորման և հակազդման գործողությունները՝ ապահովելու համար անձնակազմի, բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից: |
| 158. | **«Հայաստանի Հանրապետության** 2009 **թվականի հունիսի** 4-**ի** N 631-Ն **որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված իրավական ակտի ընդունումը պայմանավորված է Եվրոպական միության անդամ պետություններում ընդունված մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում կիրառելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության հարցերով մեկ միասնական փաստաթուղթ ունենալու անհրաժեշտությամբ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ պահանջները կարգավորվում են ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1489-Ն, 2007 թվականի հունիսի 4-ի «Ռադիոակտիվ թափոնների կառավարման կարգը հաստատելու մասին» N 631-Ն որոշումներով, որը դժվարացնում է ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ու մասնագետների աշխատանքը:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կստեղծվի ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հարաբերությունները կարգավորող համակարգված փաստաթուղթ, որը կներառի նաև ԱԷՄԳ և Եվրոպական միության դիրեկտիվների դրույթները: |
| 159. | **«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին տարածք հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին են վերապահված շրջակա միջավայրի հողի, օդի, ջրի ճառագայթային մշտադիտարկման (մոնիթորինգ) և վերահսկողության իրականացումը, տեսչական ստուգումների ժամանակ ստուգվող օբյեկտներից փորձանմուշներ վերցնելը, հայտնաբերված ռադիոակտիվ նյութերի տիպաճշտումը, երկրի ընդերքից արտազատվող ռադիոակտիվ ռադոն գազի վերահսկումը:<br>Նշված աշխատանքները ժամանակակից պահանջներին համապատասխան կատարելու համար անհրաժեշտ է բարձր ճշտության ռադիոմետրիկ ու սպեկտրոմետրիկ սարքերով, ինչպես նաև ռադիոքիմիական անալիզների կատարման ու փորձանմուշների մշակման համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցված լաբորատորիա: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Կստեղծվի ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հարաբերությունները կարգավորող համակարգված փաստաթուղթ՝ Եվրամիության դիրեկտիվներին և ԱԷՄԳ անվտանգության ստանդարտներին համապատասխան:<br><br>3. **Ակնկալվող արդյունքը**<br>Ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիա ունենալու դեպքում կոմիտեն կկարողանա Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխան իրականացնել շրջակա միջավայրի կարգավորող վերահսկողությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, բարելավելու շրջակա միջավայրի պահպանությունը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 12-ի N 122 - Ն որոշման

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| NN ը/կ | **Հիմնավորումներ** |
| --- | --- |
| **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն** | |
| 1. | **Նոր տեսչական մարմինների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող տեսչական բարեփոխումների շրջանակում 2014 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տեսչական մարմիններն ստեղծվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում: Օրենքն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 9-ին: Օրենքի ընդունման պահին Հայաստանի Հանրապետությունում գործում էր 18 տեսչություն: Մինչև օրս ստեղծվել է մեկ տեսչական մարմին՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, լուծարվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությունը, լուծարման գործընթացում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տեսչական մարմինների ստեղծմամբ ակնկալվում է օպտիմալացնել գործադիր իշխանության համակարգում գործող ստուգում իրականացնող մարմինները՝ կրճատելով ստուգում իրականացնող մարմինների թիվը և ստեղծել նոր տեսչական համակարգ` անկախ տեսչական մարմիններ, կառավարման նոր մոդելով և պատասխանատվության հստակ տարանջատմամբ, ինչը մի կողմից կբերի պետական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, վարչական կոռուպցիայի խիստ նվազեցման, մյուս կողմից՝ գործարար միջավայրի բարելավման: |
| 2. | **Իրան-Հայաստան** 400 **կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցումը նպատակաուղղված է գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում տարածա- |

| | |
|---|---|
| | շրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը: <br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը** <br>Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Արդյունքում Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի: |
| 3. | **Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման վերաբերյալ** <br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)** <br>Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքի ապահովումն է՝ նպատակ ունենալով բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում: Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ (ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ) փոխշահավետ համագործակցության զարգացումը: <br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը** <br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Արդյունքում Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից առաջին փուլում 2019 թվականին կհասցվի 350 ՄՎտ-ի, երկրորդ փուլում 2021 թվականին՝ 700 ՄՎտ-ի, և վերջնական փուլում 1050 ՄՎտ-ի: |
| 4. | **Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի իրականացման վերաբերյալ** <br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)** <br>Հաշվի առնելով, որ Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետն ավարտվում է 2016 թվականին և ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման աշխատանքները դեռ չեն մեկնարկել՝ ՀՀ էներգետիկ անվտանգության ներկայիս մակարդակի պահպանման համար անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը: <br>Հայկական ԱԷԿ-ի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի նիստի N 12 արձանագրության 11-րդ կետով հավանության է արժանացել Հայկական ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), համաձայն որի կիրականացվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր զննման ու մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքները, այնուհետև կսկսվեն Հայկական ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի լրացուցիչ ժամկետում շահագործման նախապատրաստման աշխատանքները: <br>ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 836-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը: <br>2015 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ են մտել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ստորագրված Հայկական |

| | |
|---|---|
| | ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրերը:<br>2017 թվականի ընթացքում կիրականացվեն Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի սարքավորումների, համակարգերի և շինությունների արդիականացման նախագծային աշխատանքները, սարքավորումների մնացորդային պաշարի հաշվարկային հիմնավորումը, ճառագայթային անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները (ռադիոակտիվ թափոնների կառավարման արդիականացում, ռադիոակտիվ թափոնների պահպանման կոնտեյների ձեռքբերում):<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի սարքավորումների, համակարգերի և շինությունների արդիականացման նախագծային աշխատանքների և սարքավորումների մնացորդային պաշարի հաշվարկային հիմնավորման արդյունքում կմշակվի Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի սարքավորումների և համակարգերի արդիականացման նախագիծ և կհիմնավորվի չփոխարինվող ու չվերականգնվող սարքավորումների հետագա շահագործման հնարավորությունը: |
| 5. | **Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 11-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի պահանջների կատարման ապահովումն է: ՀՀ Նախագահի 2015 թվականի հուլիսի 21-ի ՆՀ-467-Ն հրամանագրով հաստատված «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիր» դրամաշնորհի համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար իրականացնել հորատանցքերի հորատման աշխատանքներ:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հորատանցքերի հորատման աշխատանքներն ուղղված են Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի պատշաճ որոշման ապահովմանը: |
| 6. | **«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա երկրաբանական տեղեկությունների և օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի թվայնացման և հրապարակման աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության աշխատակազմի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության միջև կնքված «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի առաջին բաղադրիչի կիրարկումն ապահովելու նպատակով պետք է իրականացվեր «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում: 2016 թվականի ընթացքում նախատեսված է թվայնացնել ֆոնդում առկա տվյալների առնվազն 35-40%-ը, ինչպես նաև ստեղծել ինտերնետ կայք և արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրել այդ կայքում: 2017 թվականի ընթացքում նախատեսվում է թվայնացնել ֆոնդում առկա տվյալների՝ մնացած 60-65%-ը, և 100 % տեղեկատվությունը տեղադրել արդեն իսկ ստեղծված ինտերնետ կայքում:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ |

| | |
|---|---|
| | կետի «Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի 4-րդ ենթակետի համաձայն պետք է իրականացվեն օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի թվայնացման և հրապարակման աշխատանքներ: Ներկայումս գործող ինտերնետային կայքէջում կլրացվեն 2014թվականից հետո կազմված՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա, օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի թվայնացված տարբերակները, ինչպես նաև կթվայնացվեն նոր կազմված անձնագրերը՝ առկայության դեպքում:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կքարտեզավ տեղեկատվության դյուրին հասանելիությունը հանրությանը: |
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | |
| 7. | **«Մակրոտնտեսական կայունությանը միտված պարտքի կայունացում, պարտքի կառավարելիության բարձրացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացվել է հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականություն՝ նպատակ ունենալով հնարավորինս հակազդելու արտաքին աշխարհից ներթափանցող բացասական ազդեցություններին: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը գերազանցել է ծրագրված մակարդակը, ինչի հետևանքով արձանագրվել է պարտքի աճ: Ստեղծված իրավիճակում հարկաբյուջետային քաղաքականության գերխնդիրն է պարտք/ՀՆԱ-ի ցուցանիշի կայունացումը, ինչն ընդհանուր մակրոտնտեսական կայունության ապահովման գլխավոր նախապայմաններից մեկն է:<br>Մյուս կողմից, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Եթե կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է ՀՀ նախորդ տարվա ՀՆԱ-ի 50%-ը, ապա հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը»:<br>Պետական ֆինանսների արդյունավետության բարձրացման, զարգացման և երկրին տրամադրվող աջակցության հասցեականության ու արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ներդնել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և կոորդինացման համակարգ և ստեղծել համապարփակ տեղեկատվական բազա:<br>Տնտեսական զարգացումներով պայմանավորված լրացուցիչ պետական ծախսերի անհրաժեշտության առաջացման պարագայում անհրաժեշտ է բացառել հաստատված ծախսերի վերաբաշխումները և վերջիններս կատարել բացառապես ներքին եկամուտների հնարավորությունների սահմաններում՝ խուսափելով նոր պարտքի ձևավորումից:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի ցուցանիշը 2016 թվականի տարեվերջին առաջին անգամ կգերազանցի 50% շեմը՝ կիրառելով համապատասխան օրենսդրական սահմանափակումը՝ 2017թվականի համար ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի 150.1 մլրդ դրամը (ՀՆԱ-ի 2.8%-ը): |
| 8. | **«Գնումների մասնակի կենտրոնացված համակարգի ներդրում, գնման պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացի էլեկտրոնային եղանակով կազմակերպում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ գնումներն իրականացվում են ապակենտրոնացված եղանակով: Այսինքն պատվիրատուներն ինքնուրույն են կազմակերպում գնման ընթացակարգերը: |

| | |
|---|---|
| | Միաժամանակ՝ էլեկտրոնային գնումների համակարգն օգտագործող պատվիրատուները պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացն իրականացնում են թղթային եղանակով:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պարբերական սպառման բնույթ և միանման տեխնիկական բնութագրեր ունեցող որոշ ապրանքների ու ծառայությունների գնումները կիրականացվեն կենտրոնացված կարգով, գնումների պայմանագրերի կատարման արդյունքների ընդունման գործընթացը կդառնա էլեկտրոնային: |
| 9. | **Օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ ծրագրերի համաձայն իրականացվող գնումների թղթային եղանակով կազմակերպումից էլեկտրոնային եղանակի անցման գերակա խնդրի վերաբերյալ**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաշխարհային բանկն առաջարկել է իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում գնումները (գնանշման հարցում և բաց ազգային մրցույթ) իրականացնել էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով՝ առանց ֆունկցիոնալ փոփոխությունների:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ծրագրերի շրջանակներում կատարվող գնման գործընթացները (գնանշման հարցում և բաց ազգային մրցույթ) կկազմակերպվեն պետական գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով: |
| 10. | **«Հարկաբյուջետային քաղաքականության իրականացման թափանցիկության և հաշվետվողականության աստիճանի բարձրացման նպատակով մասնագիտական ու հանրային հետադարձ կապի ապահովում» գերակա խնդրի վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս ՀՀ կառավարության կողմից վարվող հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ հանրությանը հետաքրքրող բազմաբնույթ հարցերի պատասխաններն ամբողջությամբ և լիարժեք չեն տրվում, և որոշ կարևոր հարցադրումներ մնում են չլուսաբանված կամ վատ լուսաբանված, ինչի արդյունքում զանգվածային լրատվամիջոցներում տեղ են գտնում ոչ ճիշտ տեղեկատվություններ: Վերոնշյալի շրջանակներում անհրաժեշտ է դառնում հանրությանը հետաքրքրող առավել կարևոր հարցերի վերաբերյալ հատուկ շփման հարթակի ստեղծումը: Հանրության հետ համագործակցությունը խորացնելու նպատակով գերակա խնդիր է դարձել առավել հանրային և թափանցիկ աշխատանքը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է Հայաստանի տնտեսական և ֆինանսական իրավիճակի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում, ինչը նախատեսվում է իրականացնել վերոնշյալ հարթակի և ֆեյսբուքյան էջի, ինչպես նաև Twitter սոցիալական հարթակի ստեղծման միջոցով: Արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հատուկ հարթակների միջոցով հանրությանը կտրամադրվեն ՀՀ կառավարության կողմից վարվող հարկաբյուջետային քաղաքականությանն առնչվող հիմնական հարցերի վերաբերյալ գրավոր և բանավոր պարզաբանումներ, լրատվամիջոցների հետ կկազմակերպվեն քննարկումներ, ստեղծված հատուկ հարթակների միջոցով փոխադարձ կապ կստեղծվի այլ շահագրգիռ մարմինների հետ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կկազմակերպվեն ՀՀ ֆինանսների նախարարի և այլ պաշտոնատար անձանց ասուլիսներ: |
| 11. | **«ՀՀ հարկային օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական նորմատիվ ակտերի** |

| | |
|---|---|
| | **նախագծերի մշակում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ հարկային օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական նորմատիվ ակտերի նախագծերի մշակում» խնդիրը ՀՀ կառավարության 2017 թվականի գերակա խնդիր սահմանելը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրային դրույթների իրագործմամբ: Մասնավորապես, ծրագրի «Գործարարության զարգացում և խրախուսում» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն նախատեսվում է իրականացնել տնտեսական ակտիվությունը, տնտեսվարողների մրցակցությունը սահմանափակող իրավանորմերի մշտադիտանցում և վերհանված խոչընդոտների վերացման ուղղությամբ միջոցառումների, ինչպես նաև տնտեսվարողների համար ստեղծել կանխատեսելի և ընկալելի տնտեսական միջավայր: Այս առումով, չնայած նրան, որ ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ և ուժի մեջ մտնելով ՀՀ հարկային համակարգում կատարվելու են մի շարք արմատական փոփոխություններ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական (օրենսդրական և ենթաօրենսդրական) ակտերը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է՝<br>- իրականացնել ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված՝ մշակման կամ փոփոխության ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի գույքագրում՝ պարզելու համար դրանց նախնական ցանկը,<br><br>- սահմանել ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված՝ մշակման կամ փոփոխության ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունման առաջնահերթությունները՝ համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև հանրային քննարկումների միջոցով հասարակական և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ,<br><br>- մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված՝ մշակման կամ փոփոխության ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերը: |
| 12. | **«Անշարժ գույքի հարկի հարկման բազայի, դրույքաչափերի և պարտավորությունների կատարման նոր մեխանիզմների սահմանման առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Անշարժ գույքի հարկի հարկման բազայի, դրույքաչափերի և պարտավորությունների կատարման նոր մեխանիզմների սահմանման առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ» խնդիրը ՀՀ կառավարության 2017 թվականի գերակա խնդիր սահմանելը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված ծրագրային դրույթների իրագործման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, «Հարկային և մաքսային համակարգեր» բաժնի 5-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվում է 2017 թվականի ընթացքում վերանայել գույքահարկով հարկման մեխանիզմները՝ նպատակ ունենալով խրախուսել պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ստեղծվող ավելացված արժեքին:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է՝<br>- իրականացնել գույքային հարկերի, որպես սեփականությունից գանձվող հարկերի, հարկման հորիզոնական և ուղղահայաց մեխանիզմների, ինչպես նաև դրանց հիմքում դրված սկզբունքների միջազգային փորձի ուսումնասիրություն,<br><br>- նախաձեռնել քննարկումներ հանրապետության տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող անշարժ գույքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվական բազայի ձևավորման, ինչպես նաև անշարժ գույքի հարկով հարկման բազան անշարժ գույքի հարկման օբյեկտի կադաստրային արժեքից շուկայական արժեքին անցում կատարելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում «Անշարժ գույքի հարկով հարկման բազայի արժեքի գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման հետ կապված,<br><br>- ներկայացնել առաջարկություններ ՀՀ հարկային օրենսգրքի 46-րդ «Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը» գլխի վերախմբագրման օրինագծի մշակման աշխատանքներ նախաձեռնելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու հետ կապված, որոնք առնչվում են անշարժ գույքի հարկով չհարկվող շեմի վերանայմանը, հարկի ավելի հիմնավորված դրույքաչափերի սահմանմանը, հարկային արտոնությունների համակարգի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև անշարժ գույքի հարկի գծով պարտավորությունների կատարման նոր մեխանիզմների սահմանմանը,<br><br>- քննարկել տնտեսվարող սուբյեկտներին պատկանող՝ գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող գույքային միավորների համար առավել բարձր գույքահարկի դրույքաչափերի սահմանման հարցը՝ այն դեպքերում, երբ գույքային միավորները փաստացի պարապուրդի են մատնված: |
| 13. | **«Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտություն (նպատակը)**<br>Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման աշխատանքների շարունակականության ապահովման նպատակը դեռևս 2014 թվականին ընդունված «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովումն է:<br>«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ընդունված ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի N 463-Ն հրամանով հաստատված ժամանակացույցին համապատասխան հանրային հատվածի կազմակերպություններում 2016 թվականի հունվարի 1-ից սկսվել է և 2017-2018թթ. իրականացվելու է հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում: Այդ աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում որոշակի փոփոխություններ կատարել արդեն իսկ գործող իրավական ակտերում կամ ընդունել նոր իրավական ակտեր: Միաժամանակ, անհրաժեշտ է գործնական օգնություն ցուցաբերել նաև հանրային հատվածի կազմակերպություններին՝ նոր համակարգի ներդրման աշխատանքները ժամանակին և ամբողջությամբ իրականացնելու համար:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է՝ ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխանող առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նոր համակարգի ներդրման աշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար ձևավորել վերահսկողական և մշտադիտարկման համակարգ, ինչպես նաև օժանդակել առանձին ֆինանսական հաշվետվություններ պատրաստող հանրային հատվածի |

| | |
|---|---|
| | կազմակերպություններին՝ նոր համակարգի ներդրման աշխատանքները պատշաճ ձևով իրականացնելու համար: |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** | |
| 14. | **Փոստային կապի ազգային օպերատոր՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կառավարչի ընտրության գործընթացի կազմակերպման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «թ» ենթակետի ապահովմամբ, ինչպես նաև Փոստային կապի ազգային օպերատոր՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կառավարման նոր մոդելի ներդրմամբ: ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1379-Ա որոշմամբ «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը հանձնվել են հավատարմագրային կառավարման՝ «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին և 2006 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրվել է հավատարմագրային կառավարման պայմանագիր: Պայմանագրով հավատարմագրային կառավարման ժամկետը սահմանվել է 5 տարի (ավարտը՝ 2011 թվականի նոյեմբերի 30-ը), որը հետագայում երկու անգամ փոփոխությունների արդյունքում երկարացվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 30-ը:<br>Հաշվի առնելով միջազգային փորձը՝ փոստային կապի ազգային օպերատորի հետագա կառավարման մոդելի ընտրության նպատակով կառավարչի ընտրության գործընթացը նպատակահարմար է իրականացնել մրցութային կարգով:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մրցութային կարգով կառավարչի ընտրությունը հնարավորություն կտա երկարաժամկետ և ավելի մեծ ծավալի ֆինանսական ներդրումների միջոցով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության ապահովել միջազգային չափանիշներին համահունչ որակյալ փոստային ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների): |
| 15. | **ՏՀՏ-ի ոլորտի խթանման և հայաստանյան շուկան միջազգային ընկերությունների մուտքի ապահովման նպատակով միջազգային հարթակներում առնվազն 2 թիրախային միջոցառման իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՏՀՏ-ի ոլորտի խթանման և հայաստանյան շուկան միջազգային ընկերությունների մուտքի ապահովման նպատակով միջազգային հարթակներում առնվազն 2 թիրախային միջոցառում մշակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «ա» ենթակետը և նպատակը միջազգային հարթակներում հայրենական տեխնոլոգիական արտադրանքը և լուծումները ներկայացնելն է, միջազգային շուկաներում հայկական տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրանքի առաջմղումը խթանելն է, հայկական բրենդը միջազգային շուկաներում բարձրացնելն է և ՀՀ-ի անունից նոր ստարթափերը և տեխնոլոգիական առաջընթացը ներկայացնելն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի պետություն-մասնավոր հատվածի համագործակցության հարթակների ընտրության և մասնակցության ձևաչափի որոշում, նոր շուկաներում հայկական բրենդի և արտադրանքի ներկայացում, ինչպես նաև նոր ներդրումների և նոր ծրագրերի ներգրավում: |

| | |
|---|---|
| 16. | **ՏՀՏ-ի ոլորտի ուսումնական, հետազոտական կենտրոնների ծրագրերի շարունակական իրականացման ու զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՏՀՏ-ի ոլորտի ուսումնական, հետազոտական կենտրոնների ծրագրերի շարունակական իրականացման ու զարգացման միջոցառումը մշակվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «դ» ենթակետը և նպատակը Գյումրի և Վանաձոր քաղաքներում, ինչպես նաև այլ բնակավայրերում տեխնոլոգիական կենտրոնների, ուսումնական և լաբորատոր կենտրոնների ստեղծման, զարգացման և պետական աջակցության ծրագրերի շարունակական իրականացումն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում Գյումրի, Վանաձոր քաղաքներում, ինչպես նաև այլ բնակավայրերում ժամանակակից գիտելիքային և նորարարական ենթակառուցվածքներով հագեցված տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նոր ենթակառուցվածքների ստեղծումը և գործունեության ապահովումն է, որը կնպաստի տեխնոլոգիատար ընկերությունների ու աշխատատեղերի ստեղծմանը, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների որակյալ մասնագիտական ներուժի պահպանմանն ու զարգացմանը, երիտասարդ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը: |
| 17. | **2018 թվականին պետություն-մասնավոր համագործակցությամբ տվյալների մշակման ժամանակակից կենտրոնների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2018 թվականին պետություն-մասնավոր համագործակցությամբ տվյալների մշակման ժամանակակից կենտրոնների ստեղծման ծրագիրը մշակվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» 5-րդ կետը և նպատակը ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիական ծրագրերի և տարբեր բովանդակությամբ տվյալների անվտանգ, անխափան և հուսալի ժամանակակից պահոցներ և ծառայություններ ստեղծելն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ տարածքային և տարածաշրջանում ընկերությունների ծառայությունների և ծրագրերի, ինչպես նաև տեղական բովանդակությամբ տվյալների պահոցի ստեղծմանն ուղղված պետություն-մասնավոր հատվածի համագործակցության հարթակների ձևավորումն ու կենտրոնների ստեղծման նպատակով մրցութային փաթեթի մշակումն է: |
| 18. | **Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անձնագրավորման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անձնագրավորման նպատակը ՀՀ-ում միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասին տեղեկատվական բազայի ստեղծումն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ բոլոր միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասին տեղեկատվությունը կկենտրոնացվի մեկ վայրում և կապահովվի այդ տեղեկատվության հասանելիությունը: |

| | |
|---|---|
| 19. | **ՏՀՏ-ի կրթության ծրագրերի մշակման և ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>10-12-րդ դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելն է:<br>ՏՀՏ-ի ոլորտում մասնագիտական կրթության որակը բարձրացնելն է ՝ ներմուծելով ժամանակակից տեսական ու գործնական նորարարական գիտելիքների վրա հիմնված մեթոդաբանությունը:<br>Տեխնոլոգիական կրթությունը՝ որպես մտածելակերպ ձևավորելու միջոց օգտագործելն է:<br>Երիտասարդների ուշադրությունը ՏՀՏ-ի ոլորտին հրավիրելն է՝ որպես երկրի տնտեսական և գիտատեխնիկական զարգացման առանցք և ՀՀ-ում արժանավայել ապագայի հնարավորություն:<br>Բուհական ծրագրերի զգալի արդիականացմանը նպաստելն է՝ հաշվի առնելով բուհ ընդունվող ուսանողների ավելի բարձր մակարդակը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>• ծրագրի ներդրում 105 ավագ դպրոցում (առնվազն մեկական դասարան յուրաքանչյուրում),<br>• 105 ավագ դպրոցում առնվազն 630 ուսուցչի պատրաստում (վերապատրաստում),<br>• տարեկան առնվազն 7000 աշակերտի ուսուցում, իսկ հեռանկարում նաև միջազգային սերտիֆիկացում,<br>• ՏՀՏ-ի ոլորտում կադրերի խնդրի լուծման նպաստում,<br>• հանրակրթական դպրոցներում ՏՀՏ-ի ուսուցման ծրագրի արդիականացում: |
| 20. | **Խելացի քաղաքի ստեղծման հայեցակարգի մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Խելացի քաղաքի ստեղծման հայեցակարգի մշակման և ՀՀ կառավարության քննարկման միջոցառումը մշակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ «Ոլորտային զարգացում» կետի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ ոլորտ» «գ» ենթակետը և նպատակը բնակչության կենսամակարդակը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ զարգացնելն է, տեղեկատվական հասարակության ձևավորմանը և զարգացմանը խթանելն է, ենթակառուցվածքները և ծառայությունները թվայնացնելն է, ինչպես նաև Խելացի քաղաքի ստեղծման հիմնական խնդիրները, ուղղությունները սահմանելն է՝ ներառելով նաև իրականացվող միջոցառումների ցանկն ու ակնկալվող արդյունքները:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգը կսահմանի Խելացի քաղաքի ստեղծման հիմնական խնդիրները, ուղղությունները, կներառի նաև իրականացվող միջոցառումների ցանկն ու ակնկալվող արդյունքները՝ այն է ՀՀ տարածքում ստեղծել տարածաշրջանային բարձր տեխնոլոգիաներով հագեցված (թվայնացված) տարածք՝ խելացի լուծումների նախագծման, լաբորատոր փորձարկումների և արտադրության համար նորագույն տեխնոլոգիաներով հագեցված կենտրոններ՝ զարկ տալով վերականգնվող էներգետիկայի, մաքուր և ճշգրիտ տեխնոլոգիաներին և այլ ինովացիաներին:<br>Խելացի քաղաքի ստեղծումը միտված է նաև ենթակառուցվածքների և ծառայությունների թվայնացմանը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա տուրիզմի, հայրենական արտադրության և այլ ծառայությունների զարգացմանը: |
| 21. | **ՏՀՏ-ի և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացմանն աջակցող միջազգային կառույցների ֆինանսական և տեխնիկական աջակցության ծրագրերի գույքագրման, պետական աջակցության ծրագրերի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | **1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Այժմ ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման նպատակով մի շարք միջազգային կառույցների կողմից տրամադրվում է ֆինանսական և տեխնիկական աջակցություն ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններին: Նմանատիպ աջակցություն է տրամադրվում նաև պետության կողմից: Տրամադրվող աջակցությունը ոչ միայն կանոնակարգված չէ, այլ նաև մասամբ չի վերահսկվում պետական լիազոր մարմնի կողմից:<br>Անհրաժեշտ է կատարել տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացմանն աջակցող միջազգային կառույցների ֆինանսական և տեխնիկական աջակցության ծրագրերի գույքագրում, որը հնարավորություն կտա ոչ միայն կանոնակարգել ոլորտը, այլ նաև օպտիմալացնել և բարձրացնել պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման նպատակով կմշակվի Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացմանն աջակցող միջազգային կառույցների ֆինանսական և տեխնիկական աջակցությանն ուղղված գործողությունների ծրագիր, որը կնպաստի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աջակցության ծրագրերի կանոնակարգմանը: |
| 22. | **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման միջոցառումների իրականացման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման միջոցառումների նպատակը Հայաստանում տեղեկատվական հասարակության և զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացմանը, աշխարհի առաջատար ՏՀՏ-ի երկրների շարքում Հայաստանը ՏՀՏ-ի ուղղվածությամբ դասվելուն, ոլորտի արդյունավետության աճի պահպանմանը և զարգացմանը, որակյալ աշխատուժի աճի շարունակական զարգացմանը նպաստելն է: ՀՀ կառավարությունը, կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման հիմնական գործոն, շեշտադրում է ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում պետական աջակցության միջոցով ակնկալվում է երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծում: |
| 23. | **Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովման նպատակը ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների զարգացման համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքների, բարենպաստ միջավայրի զարգացումն է: Այդ պատճառով անհրաժեշտ է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտների սկսնակ ընկերությունների և աշխատատեղերի ստեղծման համար ապահովել բարենպաստ միջավայր, հիմնել ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ և կազմակերպել ու անցկացնել վերջիններիս կողմից բարձրորակ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ուսումնական դասընթացներ, սեմինարներ և այլ միջոցառումներ, ինչպես նաև վարել բանակցություններ ոլորտային վերազգային ընկերությունների հետ: |

| | |
|---|---|
| | 2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տեխնոլոգիատար ընկերությունների ու աշխատատեղերի ստեղծման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների որակյալ մասնագիտական ներուժի պահպանման ու զարգացման, երիտասարդ տեխնոլոգիական մասնագետների պատրաստման ու վերապատրաստման խթանում: |
| **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** | |
| 24. | **Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հանրապետությունում առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, էներգետիկ արժեքով գնահատված, կազմում է շուրջ 60 տոկոս: Նշվածի հետ մեկտեղ, մի շարք պարենամթերքների ինքնաբավության մակարդակը հանրապետությունում չափազանց ցածր է, դա հիմնականում վերաբերում է ցորենին, անասնապահական ծագման մթերքներին (բացառությամբ մանր եղջերավորների մսի և ձվի): Հետևաբար պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը կարևորագույն գերակա խնդիր է:<br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա գյուղատնտեսությունում տնտեսվարողների բարձր վերարտադրության սերմերով ապահովվածության մակարդակը, որը բուսաբուծական արտադրանքի ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիքներից մեկն է: Իրականացված միջոցառումների արդյունքում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կավելանան 3.0-3.5 հազ. հեկտարով:<br>Կբարձրանա գյուղատնտեսության ոլորտում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութի, դիզելային վառելանյութի ձեռքբերման, գյուղատնտեսությանը տրամադրվող վարկերի մատչելիության մակարդակը:<br>Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կնպաստի գյուղատնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, տնտեսվարողների գործունեության պայմանների բարելավմանը, ընդլայնված վերարտադրության ապահովմանը, գյուղատնտեսական արտադրության և սպասարկումների առավել արդյունավետ կազմակերպմանը, կոոպերատիվներին կտրամադրվի 100 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 25 միավոր տրակտոր: |
| 25. | **Գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գներով մատակարարման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի լուծման անհրաժեշտությունը պայմանավորված է գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների, մասնավորապես, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման ծրագրի շարունակմամբ, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման, ագրոտեխնիկական պահանջների կատարման անհրաժեշտությամբ:<br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է՝<br>- գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական |

| | |
|---|---|
| | մշակաբույսեր մշակելու ագրոտեխնիկական պահանջների կատարման համար,<br>- կբարձրանա գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունա-վետությունը, կավելանան արտադրության ծավալները և տնտեսվարողների եկամուտները,<br>- կբարձրանա գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը և ինքնաբավության մակարդակը,<br>- պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման համար: |
| 26. | **Սերմնաբուծությամբ մասնագիտացված տնտեսությունների միջոցով գյուղացիական տնտեսություններին վերարտադրված որակյալ սերմերի մրցակցային գներով մատակարարման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Հանրապետության ագրարային ոլորտի առաջնահերթ կարևորություն ունեցող ենթա-ճյուղերից մեկում՝ բուսաբուծության ոլորտում անհրաժեշտություն է սերմնաբուծության բնագավառում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, հացահատիկային մշակաբույսերի տեղական արտադրության ավելացումը, ներմուծման փոխարինումը և ինքնաբավության մակարդակի բարձրացումը:<br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>- տեղական արտադրության հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալ-ների ավելացման համար նախադրյալների ստեղծում,<br>- տեղական բարձր վերարտադրության սերմերի արտադրության մրցունակության բարձրացման և ծավալների ավելացման միջոցով ներմուծման փոխարինում,<br>- նպատակային պետական աջակցության մեխանիզմների կիրառմամբ բնատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նախադրյալների ստեղծում,<br>- ներդրումների մատչելիության միջոցով արտադրության արդյունավետության բարձ-րացման հնարավորությունների ստեղծում,<br>- հանրապետության ագրոպարենային համակարգի՝ սերմնաբուծության ոլորտի զար-գացման համար կարևոր նշանակություն ունեցող ընկերությունների, ֆերմերային տնտեսու-թյունների ժամանակավոր դժվարությունների հաղթահարման և կայուն գործունեության ապահովման պայմանների ստեղծում,<br>- ագրոպարենային ոլորտում աշխատատեղերի պահպանում և նոր աշխատատեղերի ստեղծում,<br>- ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի, համալիր միջոցառումների արդյունքում, երկրի ագրոպարենային համակարգում ձևավորել համեմատաբար կայուն իրավիճակ,<br>- գյուղատնտեսական մշակաբույսերի եկամտաբերության բարձրացում, ցանքատարա-ծությունների ընդարձակում և համախառն բերքի ծավալների ավելացում: |
| 27. | **Պտղի և խաղողի պատվաստված տնկանյութի արտադրությամբ զբաղվող գենոֆոնդի պահպանության և ինտենսիվ այգեգործության սելեկցիայի զարգացման գիտաարտադրական կենտրոնի ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Այգեգործության զարգացումը ներկայումս պահանջում է խաղողի սորտային կազմի, ինտենսիվ այգեգործության սելեկցիայի զարգացման բարելավում, խաղողի գենոֆոնդի պահպանություն և ֆիլոքսերադիմացկուն սորտերի այգիների ստեղծման միջոցառումների իրականացում:<br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումից ակնկալվում է՝ |

| | |
|---|---|
| | - ինտենսիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ խաղողի և պտղատու այգիների տարածքների ավելացման համար նախադրյալների ստեղծում,<br>- խաղողի և պտղատու այգիների արտադրության ծավալների ավելացում,<br>- տեղական արտադրության մրցունակության բարձրացման և ծավալների ավելացման միջոցով ներմուծման փոխարինում,<br>- ներդրումների մատչելիության միջոցով արտադրության արդյունավետության բարձրացման հնարավորությունների ստեղծում,<br>- աշխատատեղերի պահպանում և նոր աշխատատեղերի ստեղծում,<br>- այգետարածքների ընդարձակում և արտադրության ծավալների ավելացում, եկամտաբերության բարձրացում: |
| 28. | **Գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br><br>Անասնաբուծության զարգացումը պահանջում է հանրապետությունում տոհմային տնտեսությունների ձևավորման, մաքրացեղ տոհմային կենդանիների գլխաքանակի ավելացման և տավարաբուծական մասնագիտացում ունեցող տնտեսություններում բուծվող կենդանիների տոհմամթերատու հատկանիշների բարելավմանն ուղղված պետական աջակցության միջոցառումների իրականացում:<br><br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Տոհմային բարձրարժեք կենդանիների վերարտադրությունից ստացված տոհմային մատղաշը փոխշահավետ պայմաններով կվաճառվի հանրապետության տավարաբուծական տնտեսություններին, ինչը հնարավորություն կընձեռի տոհմային տնտեսություններին շարունակել ՀՀ ներկրված բարձրարժեք տոհմային կենդանիների մաքուր բուծման գործընթացը: Տավարաբուծական տնտեսությունների կողմից ձեռք բերված տոհմային կենդանիները համակարգված տոհմասելեկցիոն աշխատանքների միջոցով կօգտագործվեն տեղական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման նպատակով, ինչն իր հերթին կհանգեցնի հանրապետությունում կենդանական ծագման արտադրանքի ծավալների ավելացմանը և որակի բարձրացմանը: |
| 29. | **Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացի բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս (2015 թվականի տվյալներով) գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին կշռված մակարդակը կազմում է 58,6 տոկոս: Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացումը, բնագավառում ներդրումների ավելացումը պահանջում է ապրանքայնության մակարդակի բարձրացում, որը հնարավոր է միայն իրացման գործընթացի տարբեր օղակների գործունեության բարելավման միջոցով: Վերջինս պահանջում է պետությունմասնավոր հատվածի համագործակցության մի շարք քայլերի ձեռնարկում՝ ուղղված մթերումների գործընթացի բարելավմանը, այդ բնագավառում պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը, անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորմանը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը, վերջինս հնարավորություն կտա գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ավելացմանը, արդյունքում կբարձրանա արդյունավետությունը և կավելանան արտադրության ծավալները: Դա կնպաստի նաև գյուղական բնակավայրերում եկամուտների ավելացմանը և աղքատության կրճատմանը: |

| | |
|---|---|
| 30. | **Գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտական դասընթացների կազմակերպման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի մասնագիտական խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցումը, սեմինարների և ուսուցումների կազմակերպումը, գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և համաշխարհային փորձի ներդրումն ու տեղայնացումը, գյուղատնտեսական մթերքների իրացման նպատակով շուկաների հետազոտումը և մարքեթինգային տեղեկատվության ապահովումը, ուսուցողական ու դաշտային ցուցադրական պարապմունքների անցկացումը, լրատվության կազմակերպումը:<br><br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Խորհրդատվական ծառայությունների մատուցման հասանելիության և արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման արդյունքում տնտեսվարողների գիտելիքների և հմտությունների բարելավում, գործունեության արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսության վարման արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի և գյուղական բնակչության եկամուտների ավելացում: |
| 31. | **Ագրարային ոլորտում արտաքին ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ագրարային ոլորտի զարգացումը, մասնավորապես, բնագավառում արդիական տեխնոլոգիաների և կառավարման առաջավոր մեթոդների ներդրումը պահանջում է զգալի միջոցների ներդրում, որն անհնար է ապահովել առանց արտաքին ներդրումների ներգրավման: Վերջինս պահանջում է այդ գործընթացի ակտիվացման քայլերի ձեռնարկում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ագրարային ոլորտում երկկողմ և բազմակողմ համագործակցության, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, միջկառավարական հանձնաժողովներին մասնակցության ակտիվացման, միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովումը կնպաստի ագրարային ներդրումների ավելացմանը և արդյունքում ոլորտում արտադրության արդյունավետության բարձրացմանը և արտադրության ծավալների ավելացմանը: |
| 32. | **Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներգրավման և ոռոգվող տարածքների ընդարձակման մեխանիզմների մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br><br>Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում առկա է գյուղատնտեսական հողերի չմշակման, ոչ նպատակային և անարդյունավետ օգտագործման հիմնախնդիրը, իսկ մշակովի հողերի զգալի մասում նկատվում է մշակաբույսերի բերքատվության նվազում:<br><br>Սակավահող մեր հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման համար հրատապ դարձած՝ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացումը գերակա խնդիր է: |

| | |
|---|---|
| | 2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Վաճառքի և վարձակալությամբ տրամադրման ենթակա հողատարածքների (այդ թվում` խոշորացված) վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի առկայությունը կնպաստի հողի շուկայի զարգացմանը՝ երկրագործությունում պոտենցիալ ներդրողները հեշտությամբ կգտնեն իրենց անհրաժեշտ հողատարածքները, կընդլայնվեն և արդյունավետ կօգտագործվեն ոռոգելի հողատարածքները, ոռոգման ջրի կորուստների կրճատման և մշակաբույսերի բերքատվության բարձրացման շնորհիվ կապահովվի հողօգտագործողների եկամուտների աճ: |
| 33. | **Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային ծրագրի իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Արտահանման խթանում» բաժնի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 700-Ն որոշման հավելվածի պահանջների ապահովմամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սննդամթերքի անվտանգության ռազմավարության և դրանից բխող գործողություններով սահմանված տեղական արտադրության մեղրի և ձկան ԵՄ արտահանելու առաջնահերթությամբ և դրան ուղղված գործողությունների կատարման պահանջով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հայտնաբերման միջազգային ընդունված հետազոտություններ, բացահայտել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և սպառվող ձկան և մեղրի մեջ մի շարք նյութերի սահմանային թույլատրելի քանակությունները, դրանց գերազանցումները և չթույլատրված նյութերի կիրառումը, բարձրացնել տեղական արտադրության սննդամթերքի անվտանգության ապահովման և սննդային գործոնով պայմանավորված մարդկանց առողջության պաշտպանության մակարդակը, բարելավել վտանգավոր սննդամթերքի հայտնաբերման ներկա իրավիճակը, անմիջականորեն և հիմնավոր բացահայտել վտանգավոր սննդամթերքը, տեղական շուկայում և տեղական սպառողներին ապահովել սննդամթերքի անվտանգության միջազգային ընդունված չափորոշիչներին համապատասխանող սննդամթերքով, ստեղծել ձկան և մեղրի անվտանգ արտադրության և պետական հսկողության ապահովման միջազգային ընդունելի գործելակերպ, որը կապահովի տեղական սպառողների առողջության պաշտպանությունը սննդային վնասակար և վտանգավոր գործոններից, տեղական արտադրության համար ճանապարհի կբացի դեպի եվրոպական և այլ շուկաներ՝ խթանելով տեղական արտադրության ծավալների աճին: |
| 34. | **Հանրապետությունում իրացվող պեստիցիդների որակի հսկողության իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշման հավելվածի 1.2-րդ կետի «Արտահանման խթանում» բաժնի 1-ին կետի «բ» ենթակետի և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» 700-Ն որոշման |

| | |
|---|---|
| | N 3 հավելվածով սահմանված՝ Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծրագրի պահանջի ապահովմամբ:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել պեստիցիդների նմուշառում և պեստիցիդներում ազդող նյութի համապատասխանության բացահայտմանն ուղղված հետազոտություններ, ինչը թույլ կտա բացահայտել շուկայում իրացվող պեստիցիդների ծագումը և որակը: |
| 35. | **Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման կարողությունների զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի ապրիլի 20-ի ՀՆԱ-6 հանձնարարականի համաձայն ընդունված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստի N 48 արձանագրության 11-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 2.7-րդ ենթակետի պահանջով, մասնավորապես, ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի արդիականացման և միջազգային պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է գիտական կենտրոնի միջազգային պահանջներին համապատասխանեցում և անասնաբուժական ռիսկերի գնահատման մեթոդների ներդրում: |
| 36. | **Սահմանային վերահսկողության կազմակերպման և իրականացման արդիականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի ապրիլի 20-ի ՀՆԱ-6 հանձնարարականի համաձայն ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստի N 48 արձանագրության 11-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 2.9-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1404-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 3.4-րդ ենթակետի պահանջով, մասնավորապես, միջազգային պահանջներին համապատասխան սահմանային հսկիչ-կետերի շենքային և աշխատանքային պայմանների բարելավման անհրաժեշտությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է սահմանային հսկիչ-կետերի շենքային և աշխատանքային պայմանների բարելավում, միջազգային պահանջներին համապատասխան սահմանային վերահսկողության համապատասխանեցում, սահմանային հսկման ենթակա սննդամթերքի արդիական սպասարկում և ռիսկերի նվազեցում, ինչպես նաև պետական սահմանի անցման կետերում ներգրավված մարմինների ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխությունների իրականացում: |
| 37. | **ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայության լաբորատոր կարողությունների զարգացման վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի ապրիլի 20-ի ՀՆԱ-6 հանձնարարականի համաձայն ընդունված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստի N 48 արձանագրության 11-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 2.10-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի N 45 արձանագրության 23-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման N 2 հավելվածի 3.1-ին ենթակետի պահանջներով, մասնավորապես, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային պահանջներին համապատասխան հավատարմագրման, լաբորատոր նոր սարքավորումների ձեռքբերման և միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների մատուցման, հետազոտությունների տեսակների և քանակների ավելացման, մեթոդաբանության ներդրման և անձնակազմի վերապատրաստման, ինչպես նաև լաբորատորիաների ցանցի ստեղծման համար կարիքների բացահայտման և մեխանիզմների մշակման անհրաժեշտությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային ԻՍՕ-ի ստանդարտով հավատարմագրում և միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների մատուցում, լաբորատորիաների ցանց ստեղծելու համար կարիքների բացահայտում և մեխանիզմների մշակում: |
| 38. | **Գյուղատնտեսության զարգացման համար մասնավոր ներդրումների հավաքագրման մեխանիզմների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Գյուղատնտեսության զարգացման հատուկ ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ է նաև ոչ միայն պետական միջոցների, այլ նաև մասնավոր միջոցների հավաքագրում: Այդ միջոցները պետք է ոչ թե պարզապես հավաքագրել, այլ հատուկ մեխանիզմներ ներդնել, ինչը գրավիչ կդարձնի այս ոլորտում ներդրումներ կատարելը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Միջնորդման իրականացման արդյունքում կներկայացվեն այն քայլերը, որոնց իրականացմամբ հնարավոր կլինի գյուղատնտեսության զարգացման նպատակով ստեղծել ներդրումային ֆոնդ կամ ֆոնդեր: |
| **Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | |
| 39. | **Ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերջին տարիներին համաշխարհային տնտեսության աճի համեստ տեմպերը թերևս պահպանվելու միտում ունեն, գոնե կարճաժամկետում, ինչի մասին են վկայում նաև միջազգային տարբեր |

| | |
|---|---|
| | կառույցների հրապարակումներն ու փորձագիտական շրջանակները: Արագ զարգացող երկրների ու տարածաշրջանների հետ, որոնք էական խթանիչ ազդեցություն են ունենում համընդհանուր տնտեսական ակտիվության վրա, նույնպես մեծ ակնկալիքներ չեն կապում: Նշված զարգացումների տրամաբանության ներքո ներդրումների ներգրավման մրցավազքը դարձել է ավելի կոշտ՝ ուղեկցվելով ներդրումային գլոբալ արժեշղթաների, հիմնական հանգույցների ու տարածաշրջանային առաջնահերթությունների վերարժևորմամբ:<br><br>Այս պայմաններում ներդրումային գրավիչ միջավայրի ապահովումը, օգտագործելով ներքին և արտաքին բոլոր հնարավորությունները, տնտեսական զարգացման քաղաքականության առանցքային գերակայություններից է: Կայուն ներդրումային հոսքերի երաշխավորմանն ուղղված քաղաքականության միջոցառումների համալիրը կներառի՝<br>• ՀՀ ներդրումային օրենսդրության վերանայումը՝ ապահովելով ներդրումների պաշտպանության մեխանիզմների ուժեղացումը,<br>• պետություն-մասնավոր գործընկերության զարգացման համար օրենսդրական կարգավորումների վերանայումը և ինստիտուցիոնալ հարթակի գործարկման հիմքերի ապահովումը,<br>• ԱՄԷ-ում ներդրումային համաժողովի նախապատրաստման և անցկացման ապահովումը,<br>• օտարերկրյա ներդրումների ներգրավման և հայկական արտադրանքի արտահանման համար ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ներգրավումը,<br>• ներդրումային ծրագրերին աջակցող պետական կամ պետության մասնակցությամբ կառույցների օպտիմալացման և գործունեության արդյունավետության բարձրացման առաջարկությունների ներկայացումը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ընդլայնել ներդրումներ կլանելու տնտեսության հնարավորություններն ու ապահովել ներդրումների պաշտպանության ավելի կայուն և վստահելի միջավայր: |
| 40. | **Գործարար ակտիվության խթանմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br><br>Ներդրումների խրախուսման և գործարար ակտիվության ապահովման նպատակով պետության ակտիվ քաղաքականությամբ և հաշվեկշռված մասնակցությամբ Հայաստանում հնարավոր է ձևավորել պոտենցիալ ներդրողների և մասնավոր հատվածի հետ փոխվստահելի գործընկերություն՝ ուղղված տնտեսության արագ աճող և զարգացման մեծ պոտենցիալ դրսևորող ոլորտներում հեռանկարային ծրագրերի իրականացմանը ֆինանսապես աջակցելուն: Կառուցողական երկխոսությունը թույլ կտա հստակ բացահայտել ու արագ արձագանքել գործարար հանրության կողմից բարձրացված խնդիրները՝ գործարար ակտիվության բարձրացման համար ձեռնարկելով ֆինանսական և (կամ) իրավական բնույթի նախաձեռնություններ: ՓՄՁ-ի զարգացման համատեքստում անհրաժեշտ է ապահովել պետական քաղաքականության շարունակականությունը՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի իրականացման նպատակով ռեսուրսների հատկացմամբ: Կշարունակվի ՀՀ կառավարության արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության դրույթների իրագործումը՝ ընկերությունների և արտահանման ներուժ ունեցող ոլորտների արդիականացմանն աջակցության, միջազգային մրցունակության աճին ուղղված նախաձեռնությունների խրախուսման և ինովացիոն համակարգի ձևավորման միջոցով: |

| | |
|---|---|
| | 2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ունենալ կառավարություն-մասնավոր հատվածի երկխոսության և գործընկերության գործուն հարթակ, ինչը կծառայի հնարավոր ռեսուրսների բացահայտման և դրանք արդյունավետ օգտագործման գործին: Ակնկալվում է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության ընդլայնում և մրցակցային կարողությունների ամրապնդում, ֆինանսական և ներդրումային հնարավորությունների, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվի աճ և նոր աշխատատեղերի ստեղծում, ինչպես նաև տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնում և դիվերսիֆիկացիա, հայկական ապրանքների մրցունակության աճ և արդյունքում արտահանվող ապրանքների ծավալի աճ: Այս առումով, խնդրի լուծման քայլերը կներառեն՝<br>- պետական աջակցություն ՓՄՁ ԶԱԿ-ի հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման 2017 թվականի ծրագրի իրականացումը,<br>- գործարար համայնքի ներկայացուցիչների հետ առավել արդյունավետ համագործակցության ինստիտուցիոնալ հարթակի ձևավորումը,<br>- ներդրումային ծրագրերի շրջանակներում ԱԱՀ-ի գումարների վճարման հետաձգման ընթացակարգի պարզեցումը,<br>- պետական աջակցություն ՀՀ-ի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագրային միջոցառումների իրականացումը,<br>- չաշխատող ակտիվների վերագործարկման վրա հիմնված գործարար ծրագրերի ձևավորման ուղղորդումը: |
| 41. | **Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության ինդեքսում և համաշխարհային բանկի գործարարությամբ զբաղվելու վարկանիշում ՀՀ դիրքի բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Միջազգային վարկանիշներն այն կիրառական գործիքներից են, որոնք թույլ են տալիս երկրներին տեղավորվել միասնական, ունիվերսալ և քանակապես չափելի կաղապարի մեջ՝ նպատակ ունենալով տնտեսությունները համադրելի և համեմատելի դարձնել որևէ հատկանիշով կամ հատկանիշների խմբով և ցույց տալ ժամանակի մեջ վերջիններիս զարգացումը կամ հետընթացը: Մյուս կողմից, անկախ մեթոդաբանական առանձնահատկություններից և ծածկույթից, միջազգային վարկանիշներն ըստ էության արտացոլում են երկրի ձեռքբերումներն ու ձախողումները, համեմա-տական առավելություններն ու թերությունները՝ այդպիսով ցույց տալով այս կամ այն ոլորտում գլոբալ զարգացումներից խզվածքը:<br>Այս տեսակետից ՀՀ կառավարությունը մշտապես կարևորել է միջազգային հեղինակավոր վարկանիշներում երկրի բարենպաստ դիրքավորման և առաջընթացի ապահովման հարցերը՝ ձևավորելով բարեփոխումների համապատասխան օրակարգեր: Զարգացման ներկա փուլում առանձնակի թիրախավորելով Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող գլոբալ մրցունակության և Համաշխարհային բանկի գործարարությամբ զբաղվելու վարկանիշ-ներում երկրի նկարագրի բարելավումը՝ նախատեսվում է իրականացնել Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2017 թվականի ծրագիրը և գլոբալ մրցունակության ինդեքսում Հայաստանի դիրքի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է համապատասխան վարկանիշների բովան-դակությանը համարժեք թիրախավորված միջոցառումների իրականացման միջոցով բարելավել Հայաստանի դիրքը: |

| | |
|---|---|
| 42. | **Մասնագիտացված արտահանող կառույցների ձևավորմանը և հզորացմանն ուղղված աջակցության գործիքակազմի սահմանման վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Արտահանման զարգացման նպատակադրման ներքո համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումն ու արդյունավետ գործունեության ապահովումն առանցքային նշանակություն ունի: Հաշվի առնելով հանրապետությունում բազմաթիվ պոտենցիալ արտահանողների առկայությունը, որոնք փոքր ծավալների առաջարկի պայմաններում ստիպված են կատարել տրանսակցիոն բարձր ծախսեր և դրա արդյունքում չեն կարողանում մրցունակ մնալ արտաքին շուկաներում, մասնագիտացված արտահանող կառույցներն ավելի քան պահանջված են: Վերջիններիս կայացման համար, գոնե սկզբնական շրջանում, անհրաժեշտ է որոշակի աջակցություն: Խնդրի լուծման համար կիրականացվեն՝<br><br>• ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողների տվյալների բանկի ձևավորում, այդ թվում՝ նրանց գործունեության հիմնական ոլորտները, առկա շուկաները, առկա հնարավորությունները և զարգացման պոտենցիալը,<br><br>• մեծ առևտրային ցանցերում հայկական արտադրանքի դիրքավորման հնարավորությունների և առկա խնդիրների բացահայտում,<br><br>• մասնագիտացված արտահանող կառույցների (այդ թվում՝ լոգիստիկ ընկերությունների) ձևավորման աջակցության մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների մշակում և համապատասխան գործիքակազմի ներկայացում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է արտահանման ընդլայնում թե ծավալային, թե աշխարհագրական, և թե առավել մեծ թվով տնտեսվարողների ընդգրկման տեսանկյունից: |
| 43. | **Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ երկրի հասանելիության և ճանաչելիության բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերության զարգացման նպատակով վարվող պետական հացեսկան քաղաքականությամբ հետևողական ջանքեր են ներդրվել ոլորտում համարժեք կարողությունների կուտակման, առկա ներուժի զարգացման ու նոր հնարավորությունների բացահայտման ուղղությամբ: Արդյունքում տպավորիչ զարգացումներ են արձանագրվել ոլորտում ավանդական, պատմամշակութային ու ազգային հենքով զբոսաշրջության ասպարեզում: Միաժամանակ, վերջին ժամանակահատվածում ոլորտում նկատվող միտումները բավականին խոստումնալից հիմքեր են ապահովում զբոսաշրջային նոր ուղղությունների զարգացման համար՝ նպաստելով զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, ինչպես նաև զբոսաշրջային միջազգային շուկայում սպառողական բազմազան խմբերի համար երկրի հետաքրքրության աճին:<br>Երկրի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ վայր ճանաչելիության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը 2017 թվականի ընթացքում նախատեսում է ընդլայնել առանց արտոնագիր մուտք գործելու հնարավորություն ունեցող քաղաքացիների երկրների և սահմանային անցման կետերում ՀՀ մուտքի արտոնագիր ստանալու հնարավորություն ունեցող քաղաքա- |

| | |
|---|---|
| | ցիների երկրների ցանկը, իրականացնել տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերի իրականացմամբ ակնկալվում է Հայաստանի ճանաչելիության բարձրացման միջոցով նպաստել ոլորտի աճի և զարգացման հնարավորությունների ընդլայնմանը, տնտեսության այլ ճյուղերում հարակից դրական արդյունքների տարածմանը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | |
| 44. | **Ռիսկերի կառավարման մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված հարկային վարչարարության բարեփոխումների թիրախային ուղղություններից է համարվում ռիսկային չափանիշների հիման վրա հարկային հսկողության հասցեականության ապահովումը և արդյունավետության բարձրացումը՝ ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգի կատարելագործման միջոցով:<br><br>Բացի դրանից՝ արդիական է շարունակում մնալ ռիսկերի արագ բացահայտման և արդյունավետ կառավարման համակարգերի կիրառությունն ու դրա հիման վրա թիրախավորված ընթացիկ հարկային հսկողության իրականացումը: Այս տեսանկյունից կարևորվում է վերլուծական կարողությունների զարգացումը՝ ուղղված ռիսկերի բացահայտմանը և կառավարման մեխանիզմների կատարելագործմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է վերանայել ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության չափանիշները՝ համակարգը հարկ վճարողների իրական ռիսկը բնութագրող նոր չափանիշներով համալրելու և ոչ արդյունավետ կիրառվող ռիսկային չափանիշները հանելու նպատակով՝ դրանով իսկ ապահովելով ՀՀ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումների առավել հասցեականությունը:<br><br>Միաժամանակ, ակնկալվում է երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների իրացման արդյունավետության բարձրացման և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության համադրությունների միջոցով ապահովել կամերալ ուսումնասիրությունների կարողությունների զարգացումը: Աշխատանքներ կտարվեն երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների, ինչպես նաև կամերալ ուսումնասիրությունների իրականացման ընթացակարգերի ավտոմատացման ուղղությամբ: |
| 45. | **Տնտեսությունում գործարքների ամբողջական փաստաթղթավորման մշակույթի ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br><br>ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված հարկային վարչարարության բարեփոխումների առաջնահերթություններից է սահմանվել տնտեսությունում կատարվող գործարքների ամբողջական փաստաթղթավորման մշակույթի ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:<br><br>Հաշվի առնելով, որ հարկ վճարողների կողմից կատարվող գործարքների մեջ դեռևս զգալի ծավալ |

| | |
|---|---|
| | են կազմում առանց հաշվարկային փաստաթղթերի, կամ գործարքների իրական գներից էականորեն տարբերվող գներով կազմված փաստաթղթերով, կամ գործարքները կատարվելուց հետո դրանց մասով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերն անվավեր համարելու, ինչպես նաև հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով անապրանք փաստաթղթեր դուրս գրելու դեպքերը՝ արդիական է շարունակում մնալ մատակարարվող ապրանքների գծով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման խախտումների բացահայտմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այս պայմաններում հարկային եկամուտների ապահովման հարցում առավել կարևորվում է խոշոր հարկ վճարողների մոտ հարկային հսկողության արդյունավետության բարձրացումը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ նախատեսվում է հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման նկատմամբ մոնիթորինգի համակարգի ներդրման, մշտադիտարկման արդյունքում տնտեսվարող սուբյեկտների մոտ ամրապնդել խախտումներ իրականացնելու դեպքում պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիությունը, ինչն իր հերթին կհանգեցնի տնտեսության մեջ փաստաթղթաշրջանառության մշակույթի ամրապնդմանը: |
| 46. | **Մեկ միասնական հաշվի ներդրման ապահովման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է մեկ միասնական հաշվի ներդրման նպատակով ընթացակարգային և ծրագրային աշխատանքների ապահովմամբ: Մեկ միասնական հաշվի ներդրմամբ կպարզեցվի հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների կատարման գործընթացը՝ հարկային պարտավորությունների վճարման համար ներկայումս գործող բազմաթիվ գանձապետական հաշիվների փոխարեն բացելով մեկ գանձապետական հաշիվ:<br><br>Միաժամանակ անհրաժեշտ է 2017 թվականի ընթացքում ավարտել մեկ միասնական հաշվի ներդրման ծրագրային աշխատանքները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12015 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-154-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ապահովել մեկ միասնական հաշվի ներդրման գործընթացի սահուն ընթացքը: |
| 47. | **«Արտաքին տնտեսական գործունեության իրականացման դյուրինացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br><br>Գերակա խնդրի նպատակը մի կողմից մաքսային մարմնի կողմից մաքսային հսկողության իրականացման ընթացակարգերի կատարելագործումը, օպտիմալացումն ապահովելն է, իսկ մյուս կողմից՝ ԱՏԳ մասնակիցների համար էլեկտրոնային հարթակ ստեղծելն է՝ մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ գործողություններն իրականացնելու նպատակով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ապահովել ԱՏԳ-ի մասնակիցների համար |

| | |
|---|---|
| | ապրանքների սահմանահատման, ձևակերպման և բացթողման գործընթացների պարզեցում ու դյուրինացում: Իր հերթին կատարելագործված ռիսկերի կառավարման էլեկտրոնային համակարգի աշխատանքի միջոցով կբարձրացվի մաքսային հսկողության արդյունավետությունը: |
| 48. | **«Հարկային և մաքսային մարմինների գործուն մեխանիզմների ներդրում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Նշված գերակա խնդրի սահմանումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ հարկային և մաքսային ծառայողի կերպարի արմատական վերափոխման մեխանիզմների, օրինապահ հարկ վճարողների գործունեության համար առավել բարենպաստ պայմանների ներդրման անհրաժեշտությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ ակնկալվում է մշակել համապատասխան իրավական ակտեր՝ ուղղված հարկային և մաքսային ծառայողների կերպարի վերափոխմանը, օրինապահ հարկ վճարողների գործունեության համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը, հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության բարձրացմանը: |
| 49. | **«Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման համաձայնագրերի ցանցի ընդլայնում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի իրագործման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, ծրագրի 1.2-րդ բաժնի «Հարկային և մաքսային համակարգեր» ենթաբաժնի 3-րդ կետով ակնկալվում է հարկային և մաքսային ոլորտին առնչվող համաձայնագրերի ցանցի ընդլայնում, այդ թվում՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման համաձայնագրերի ցանցի ընդլայնում: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրների «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» բազմակողմ կոնվենցիային Հայաստանի Հանրապետության միանալու միջոցով՝ ՀՀ-ի հարկային մարմիններին հնարավորություն կընձեռվի փոխանակվել տեղեկատվությամբ, ստանալ և հանձնել փաստաթղթեր, ինչպես նաև ցուցաբերել ու ստանալ բռնագանձման հարցերում աջակցություն կոնվենցիային արդեն իսկ միացած՝ 100-ից ավելի պետությունների իրավասու մարմինների հետ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ապահովել «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» բազմակողմ կոնվենցիային միանալուց հետո կոնվենցիայի կիրառման անհրաժեշտ պայմանները: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | |
| 50. | **Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 290 թռիչքային մակարդակից (FL290) բարձր ժամը 00:00-ից մինչև 06:00 «օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free route airspace) հայեցակարգի ներդրման վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>Եվրակոնտրոլի միջազգային աերոնավիգացիոն անվտանգության կազմակերպության նախաձեռնությամբ մշակվել է «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ):<br>Համաձայն հայեցակարգի օդային մայրուղիներից ազատ օդային տարածք է հանդիսանում այն օդային տարածքը, որտեղ թռիչքները կարող են իրականացվել առանց պետության օդային տարածքում սահմանված օդային մայրուղիներով՝ ունենալով թռիչքի երթուղու ազատ ընտրության հնարավորություն օդային տարածքի մուտքի և ելքի կետերի միջև:<br>Հայեցակարգի առավելություններն են՝<br>1) օդային տարածքի թողունակության բարձրացումը.<br>2) օդի աղտոտման նվազումը.<br>3) օդային երթևեկության սպասարկման և օդանավ շահագործողների ծախսերի նվազումը.<br>4) համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Ելնելով հայեցակարգից ակնկալվում է, որ թռիչքները կիրականացվեն ուղիղ հետագծերով՝ բացառությամբ թռիչքների համար վտանգավոր կամ փակ տարածաշրջանների:<br>Եվրակոնտրոլի նախնական հաշվարկներով Եվրակոնտրոլի անդամ բոլոր պետությունների օդային տարածքներում հայեցակարգի ներդրման դեպքում թռիչքների երկարությունը կկրճատվի 7,5 մլն մղոնով, որն իր հերթին կբերի 45 հազ. տոննա վառելիքի և 150 հազ. տոննա թունավոր արտանետումների նվազման կամ 37 մլն եվրո խնայողության:<br><br>3. **Ընթացիկ իրավիճակը**<br>Եվրոպական երկրների օդային մայրուղիներից ազատ օդային տարածքի ներդրման փորձը ցույց է տալիս, որ օդային տարածքի թողունակության բարձրացումը և տարանցիկ թռիչքների ավելացումն իրականացվում է ոչ թե ի հաշիվ անվտանգության պահանջների նվազեցման, այլ բազմակի փորձարկումների և օդային տարածքի հիմնական օգտատերերի և հարևան երկրների հետ համագործակցության արդյունքում:<br>2015 թվականի վերջին տվյալներով, որոշակի սահմանափակումներով պայմանավորված (տարածքային, ժամանակային կամ բարձրությունների), հայեցակարգը մասնակիորեն կամ ամբողջական ներդրվել է հետևյալ օդային տարածքների շրջանային կենտրոններում՝ Բելգրադ (Սերբիա), Բրեստ (Ֆրանսիա), Բրինդիսի (Իտալիա), Բորդո (Ֆրանսիա), Բուխարեստ (Ռումինիա), Քիշնև (Մոլդովա), Կարլսռուե (Գերմանիա), Կոպենհագեն (Դանիա), Լիսաբոն (Պորտուգալիա), Լոնդոն (Անգլիա), Լյուբլյանա (Սլովենիա), Մաաստրիխտ (Նիդերլանդներ), Մադրիդ (Իսպանիա), Մալմյո (Շվեդիա), Մալթա (Մալթա), Մարսել (Ֆրանսիա), Միլան (Իտալիա), Պադույա (Իտալիա), Պրահա (Չեխիա), Փրեստվիկ (Շոտլանդիա), Ռեյմս (Ֆրանսիա), Հռոմ (Իտալիա), Շենոն (Ֆրանսիա), Սկոպյե (Մակեդոնիա), Սոֆիա (Բուլղարիա), Ստոքհոլմ (Շվեդիա), Տամպերե (Ֆինլանդիա), Վարշավա (Լեհաստան), Վիեննա (Ավստրիա) և Զագրեբ (Խորվաթիա):<br><br>4. **Կարգավորման նպատակը և բնույթը**<br>Հայեցակարգի ներդրման արդյունավետությունը՝<br>1) թռիչքի ժամանակի կրճատում՝ հաշվի առնելով, որ հիմնականում թռիչքներն իրականացվելու են ամենակարճ երթուղիներով.<br>2) թռիչքի ժամանակի կրճատման հաշվին վառելիքի ծախսի և դրանից բխող $CO_2$ գազի արտանետումների նվազում.<br>3) թռիչքային անվտանգության մակարդակի բարձրացում՝ պայմանավորված թռիչքային ուղիների |

| | |
|---|---|
| | տարանջատման հետ.<br>4) օդանավի քաշի օպտիմալացում՝ վառելիքի կրճատման և օգտակար բեռի ավելացման հաշվին:<br>Օդային երթևեկության սպասարկման տեսանկյունից՝ հայեցակարգի ներդրումը սարքավորում-ների արդիականացման հետ կապված լրացուցիչ ծախսեր չի պահանջում:<br>ՀՀ օդային տարածքն օդային մայրուղիներից ազատելու ժամանակահատվածը (ժամը 00:00-ից մինչև 06:00) պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ ժամանակահատվածում նվազում են ՀՀ օդային տարածքով իրականացվող քաղաքացիական օդանավերի տարանցիկ թռիչքները և ռազմական ավիացիայի օդանավերի կողմից ուսումնավարժական թռիչքներ չեն իրականացվում: |
| 51. | **Տեղական և օտարերկրյա ավիաընկերությունների կողմից օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների ստացման համար հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրումը պայմանավորված է տեղական և օտար-երկրյա օդանավ շահագործողներին դեպի Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հան-րապետությունից կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցու-թյունների իրականացման թույլտվություններ տալու գործընթացի արդիականացման և պարզեցման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Ակնկալվում է թույլտվություններ տալու գործընթացի արդիականացում և առցանց համակարգի ներդնում, ինչպես նաև համապատասխան ենթաօրենսդրական դաշտի վերանայում, որի արդյուն-քում նախատեսվում է կրճատել նախկինում պահանջվող փաստաթղթերի ցանկը և պարզեցնել թույլտվություններ տալու գործընթացը:<br><br>**3. Ընթացիկ իրավիճակը**<br>Ներկայումս օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից դեպի Հայաստանի Հանրապե-տություն և Հայաստանի Հանրապետությունից կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունները ներկայացվում են թղթային տարբերակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, որից հետո հայտը՝ կից փաստաթղթերով, ներկայացվում է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ կարծիքի և վերջինիս եզրակացության հիման վրա նախարարության կողմից տրվում է թույլտվություն:<br><br>**4. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>ՀՀ-ում գործող թույլտվություններ տալու համակարգի ներդրման արդյունքում ոլորտի մասնա-կիցների, մասնավորապես, մասնավոր հատվածի կողմից մշտապես արտահայտվում են գործողու-թյունների անորոշության հետ կապված բողոքներ, ինչպես նաև առաջանում են մի շարք բարդություններ երկու տարբեր մարմինների կողմից մեկ ոլորտի կարգավորման ընթացքում, ինչն արտահայտվում է ընթացակարգային ձգձգումներով:<br>Ավիափոխադրողներին համապատասխան թույլտվություններ տալու ընթացակարգերը կանոնա-կարգող գործող իրավական ակտերի կիրառման և փաստաթղթերի թղթային տարբերակով պե-տական մարմինների և հայտատուների միջև շրջանառման արդյունքում նկատվել է բիզնես գործ-ընթացների խիստ բարդացում՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝<br>1) միևնույն փաստաթղթերի ներկայացում երկու տարբեր պետական կառավարման լիազորված մարմիններին,<br>1) երկու տարբեր պետական կառավարման լիազորված մարմինների կողմից ավիաընկերությանը |

| | |
|---|---|
| | ներկայացվող տարբեր պահանջներ,<br>1) փաստաթղթերի լրացուցիչ շրջանառությամբ պայմանավորված ընթացակարգային լուրջ հետաձգումներ:<br>Նոր առցանց համակարգի ներդրումը կանխում է ընթացակարգային հետաձգումների հավանականությունը, իսկ ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը հասցվում է նվազագույնի:<br>Առաջարկվող փոփոխությունները քննարկվել են նաև մի շարք ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնք դրական են արձագանքել հնարավոր նոր ընթացակարգի ներդրմանը: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | |
| 52. | **Պետական սեփականություն հանդիսացող՝ չաշխատող ակտիվների վերագործարկումը խթանող մեխանիզմների ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Պետական սեփականություն հանդիսացող՝ չաշխատող ակտիվների վերագործարկմանը խթանող մեխանիզմների ներդրումը պայմանավորված է պետական սեփականություն համարվող՝ չաշխատող անշարժ և շարժական գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ կտա ապահովել անշարժ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը:<br>Գործունեություն չծավալող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վերագործարկումը պայմանավորված է դրանց գործունեության խթանման անհրաժեշտությամբ, որին կարելի է հասնել իրատեսական ներդրումային ծրագրերի իրականացման, կազմակերպությունների վերակազմակերպման և հավատարմագրային կառավարման հանձնելու ճանապարհով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծումը կապահովի անշարժ գույքի օտարումից ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացումը, մասնավորապես, կանխատեսվում է 2017 թվականի 1-ին եռամսյակում ստանալ մոտ 265 մլն դրամ՝ չօգտագործվող տարածքների օտարումից: ՀՀ պետական բյուջեի մուտքերը կավելանան նաև գույքը վարձակալության տրամադրելու հաշվին:<br>Անշարժ գույքի օտարումը, վարձակալությունը և անհատույց օգտագործման տրամադրումը, համաձայն համապատասխան պայմանագրերի, կապահովի նաև ներդրումային ծրագրերի իրականացումը և արդյունքում ներդրումների ծավալի ավելացումը:<br>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների լավացումը կնպաստի շահութաբաժինների գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացմանը, իսկ դրանց լուծարման դեպքում՝ պետության և այլ կրեդիտորների նկատմամբ պարտավորությունների մարմանն ու պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից առանձնացված չօգտագործվող ակտիվների վաճառքից ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացմանը: |
| **ՀՀ կենտրոնական բանկ** | |
| 53. | **Արժեթղթավորման ոլորտի զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Արժեթղթավորման ոլորտի զարգացման համար, բացի իրավական դաշտից, հատկապես կարևորվում է ժամանակակից ենթակառուցվածքների առկայությունը և ինստիտուցիոնալ ու մասնագիտական կարողությունների բարձր մակարդակը:<br>Արժեթղթավորումը, հանդիսանալով կապիտալի ներգրավման կարևորագույն միջոցներից մեկը, |

| | |
|---|---|
| | հնարավորություն է ընձեռում ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպություններին դառնալ կապիտալի շուկաների ուղղակի մասնակից:<br><br>Արժեթղթավորման գործընթացների արդյունավետություն բարձրացման նպատակով դրանցում պետք է ներգրավվեն ժամանակակից տեխնոլոգիաները և ոլորտի լավագույն մասնագետները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Առաջարկվող քայլերը հնարավորություն կընձեռեն Հայաստանի Հանրապետությունում իրապես զարգացնել արժեթղթավորումը՝ ստեղծելով ինովացիոն ներդրումային գործիքներ և բարձրացնելով ներդրումների ու գործընթացների գրավչությունը: |
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | |
| 54. | **Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ, կենտրոնացված կառավարման համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>Հայաստանի Հանրապետության Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների անարդյունավետ և ոչ նպատակային օգտագործման հետևանքով անհրաժեշտություն է առաջացել արդի տեխնոլոգիաների կիրառմամբ հաշվառել ջրօգտագործողների կողմից օգտագործված ջրի քանակությունները: Ավտոմատ կենտրոնացված համակարգի ներդրման նպատակը ջրօգտագործման ծավալների նկատմամբ առցանց հսկողություն իրականացնելն է՝ ապահովելով ընդհանրական կտրվածքով Արարատյան դաշտի ջրօգտագործման ռեժիմի ծավալների հաշվառումը, հավաքագրումը և էլեկտրոնային եղանակով փոխանցումը՝ ըստ առանձին ջրաղբյուրների, ջրօգտագործողների, բնակավայրերի, ջրահավաք ավազանների:<br>Գերակա խնդիրն իրականացվելու է ԱՄՆ ՄԶԳ-ի Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության (ԳԱՏՕ) ծրագրի աջակցությամբ: 2017 թվականի ընթացքում Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում նախատեսվում է շուրջ 20 ավտոմատ, կենտրոնացված կառավարման համակարգի ներդրում:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ավտոմատ կենտրոնացված համակարգի ներդրումը կնպաստի ջրօգտագործման ծավալների նկատմամբ առցանց հսկողության իրականացմանը: Համակարգի ներդրման արդյունքում հնարավոր կլինի հսկել ջրօգտագործողների կողմից օգտագործվող ջրաքանակները և թույլատրելիից գերազանցելու դեպքում օպերատիվ կերպով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: |
| 55. | **Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>2015 թվականի ընթացքում հիդրոակուստիկ դիտարկումները ցույց են տվել, որ սիգի ընդհանուր կենսազանգվածը նախորդ տարիների համեմատ աճել է, ինչը պայմանավորված է հիմնականում նախորդ 2-3 տարիների բեղուն սերունդների առկայությամբ: Ստացված տվյալների ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ սիգ ձկնատեսակի պոպուլյացիայի կենսազանգվածը հիմնականում ապահովել են 2-3 տարեկան ձկները: Ավելի փոքր և ավելի մեծ տարիքի ձկները կազմել են պոպուլյացիայի 15 %-ը, ինչը վկայում է այն մասին, որ թեպետ առկա է այս ձկնատեսակի ընդհանուր կենսազանգվածի որոշակի աճ նախկին տարիների համեմատ, սակայն խոսել արդյունագործական |

| | |
|---|---|
| | պաշարների վերականգնման մասին դեռ վաղ է:<br>Հաշվետու տարվա ընթացքում Սևանա լճում նկատվել է արծաթափայլ լճածածանի քանակի կտրուկ կրճատում: Որսի հիմնական մասը կազմել են մինչև 3 տարեկան, արդյունագործական նշանակություն չունեցող, առանձնյակները, որոնք եղել են քիչ քանակությամբ:<br>Սևանի էնդեմիկ ձկնատեսակ՝ բեղլուն և էնդեմիկ ենթատեսակ կողակը հանդիպել են եզակի առանձնյակներով: Սևանի իշխանի մանրաձկների շարունակական բացթողման աշխատանքները դեռ չեն հանգեցնում լճում այս ձկնատեսակի քանակի զգալի փոփոխության: Այսպիսով, կարելի է նշել, որ թեպետ լճում իշխանի պոպուլյացիան գոյություն ունի ամենամյա մանրաձկան բացթողումների հաշվին, սակայն համարել որ դա արդեն վերականգնված պոպուլյացիա է դեռ վաղ է, քանի որ այս տեսակի բնական վերարտադրությունը լճում գործնականորեն բացակայում է:<br>Սևանա լճի էկոհամակարգի կայուն զարգացման և իրավիճակի վերահսկման համար անհրաժեշտ է ներկա վիճակի արդյունագործական պաշարների՝ սիգի, կարասի և խեցգետնի պաշարների հաշվառման և գնահատման աշխատանքների իրականացում: Լճում այդ տեսակների պոպուլյացիայի չափատարիքային, սեռական կազմի ու թվի վերաբերյալ հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա հնարավոր կլինի համապատասխան միջոցառումներ մշակել ձկան պաշարների օգտագործման և Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու և պահպանելու միջոցառումների մշակման համար: Սևանա լճի ջրահավաք ավազանում էնդեմիկ ձկների վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ Սևանա լճում և Սևանա լիճ թափվող հիմնական գետերում:<br>«Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի իրականացումը նախատեսված է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Սևանա լճի արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման ծրագիրը հաստատելու մասին» N 1755-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 1-ին և 2-րդ կետերով, ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե:<br>Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառման նպատակով անհրաժեշտ է շարունակել «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի իրականացումը, այդ թվում՝<br>• Սևանա լճի ձկների (սիգի, կողակի, լճածածանի, իշխանի) ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում յուրաքանչյուր տարին 1 անգամ,<br>• Սևանա լճի խեցգետնի պաշարների ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում՝ յուրաքանչյուր տարին 1 անգամ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>«Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքներ» ծրագիրը բաղկացած է 3 ենթաբաժիններից՝<br>1. Սևանա լճում ձկան պաշարների հաշվառման ծառայություններ (հաշվետվություն)՝ 1 հատ Հաշվետվության կազմում հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>• սիգի արդյունագործական պաշարների որոշում,<br>• սիգի զիրացող վտառի գնահատում,<br>• սիգի ձվադրող վտառի գնահատում, բեղունություն ,<br>• սիգի գծային և քաշային աճը,<br>• սիգի որսաչափի գնահատում,<br>• կարասի արդյունագործական պաշարների որոշում,<br>• կարասի բեղունության որոշում,<br>• կարասի ձվադրավայրերի և ձվադրման ժամկետների որոշում, |

| | |
|---|---|
| | • կարասի գծային, քաշային աճի որոշում,<br>• կարասի որսաչափի գնահատում,<br>• իշխանի վտառի գնահատում:<br>Հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված բոլոր ելակետային տվյալների միջանկյալ և վերջնական հաշվետվությունների ներկայացում:<br>2. Սևանա լճում խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ (հաշվետվություն)՝ 1 հատ<br>Հաշվետվության կազմում հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>• խեցգետնի արդյունագործական պաշարների որոշում,<br>• խեցգետնի սննդառությունը,<br>• խեցգետնի սեզոնային բաշխվածությունը՝ ըստ խորության և տարածքի,<br>• խեցգետնի գծային և քաշային աճը՝ ըստ տարիքաչափային խմբերի,<br>• խեցգետնի բեղունությունը,<br>• խեցգետնի որսաչափի գնահատում:<br>Հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված բոլոր ելակետային տվյալների միջանկյալ և վերջնական հաշվետվությունների ներկայացում:<br>3. Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկան և խեցգետնի կենսամիջավայրի պայման-ների բացահայտման ծառայություններ (հաշվետվություն)՝ 1 հատ<br>Հաշվետվության կազմում հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիկ, Մակենիս և Մասրիկ գետերում՝<br>• Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերի ձկան տեսակային կազմի որոշում,<br>էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունի, ամառային իշխանի, կողակի) ձվադրավայրերի վիճակի գնահատում,<br>• էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունի, ամառային իշխանի, կողակի) ձվադրմանը գնացող ժամկետների, քանակի, կենսաբանական վիճակի որոշում,<br>• էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունի, ամառային իշխանի, կողակի) ձվադրմանը խոչընդոտող պայմանների որոշում: |
| 56. | **Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվե-տվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգի ներդրման նախադրյալների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերի կազման (ներկայացման) ժամանակի կրճատման և «Մեկ պատուհան» սկզբունքի ապահովման հանգամանքով:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի N 986 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 980-Ն որոշմամբ հաստատվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը, միա-ժամանակ նույն որոշման 2-րդ կետի համաձայն բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու անհրաժեշտ կարողու-թյունների ապահովումը պետք է իրականացնել ծրագրավորման աշխատանքների համար ֆինան-սավորում ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2016 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 110-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 1.4-րդ կետով նախատեսված է «Բնապահպանա-կան և բնօգտագործման հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման |

| | |
|---|---|
| | անհրաժեշտ կարողությունների ապահովում» միջոցառումը` օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրների միջոցներով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն գերակա խնդրի իրականացման արդյունքում կներդրվի բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգը, ինչն էլ կնպաստի հարկ վճարողների կողմից համապատասխան գերատեսչական մարմիններ ներկայացվող փաստաթղթերի կազմման (ներկայացման) ժամանակի կրճատմանը, կստեղծվի մեկ ընդհանուր տեղեկատվական բազա, որն էլ իր հերթին կնպաստի շահագրգիռ պետական կառավարման մարմինների համատեղ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: |
| 57. | **Էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման զարգացման ռազմավարության մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Ռազմավարության մշակման նպատակը ՀՀ էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումն է, այդ բնագավառում պետության, հասարակության և միջազգային կառույցների միջև ներդաշնակ և փոխշահավետ համագործակցության ընդլայնումը՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և էկոլոգիական գիտակցության ձևավորմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծումը կնպաստի բնապահպանական կրթության և դաստիարակության դերի բարձրացմանն ազգային ընդհանուր կրթական համակարգում, մատաղ սերնդի, ինչպես նաև ամբողջ հասարակության էկոլոգիական աշխարհայացքի, հայրենի բնության նկատմամբ պատասխանատու և հոգատար վերաբերմունքի ձևավորմանը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, բնապահպանական խնդիրների լուծման և շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացներում հասարակության լայն շերտերի մասնակցության խրախուսմանը: |
| 58. | **Կանաչ տնտեսության ազգային կենտրոնի ձևավորման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>«Կանաչ տնտեսության ազգային կենտրոնի ձևավորում» գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 6-րդ կետով հավանության արժանացած «Մաքուր արտադրության հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ ամրագրված սկզբունքներից և հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում կանաչ տնտեսության ներդրման համար անհրաժեշտ տարրերից մեկը, որը կնպաստի իրավաբանական և ֆիզիկական անձանց (ՓՄՁ-ներ, բիզնեսի, արդյունաբերական, արտադրական ոլորտի ներկայացուցիչներ, ֆերմերային տնտեսություններ և այլ շահառուներ) կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մաքուր արտադրության կազմակերպմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն գերակա խնդրի իրականացման արդյունքում կձևավորվի Կանաչ տնտեսության ազգային կենտրոն, որի գործունեությունը կկառավարվի հիմնադիրների խորհրդի կողմից: Որպես հիմնադիրներ կարող են հանդիսանալ ՄԱԿ-ի ԱԶԿ-ն, Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը |

| | |
|---|---|
| | և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:<br>Կենտրոնի գործունեությունը միտված կլինի Հայաստանում կանաչ տնտեսության ներդրմանը, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց կտրամադրվեն ռեսուրսների արդյունավետ կառավարմանն ու արտադրողականության բարձրացմանը, մաքուր ու մրցունակ արտադրանքի ստացման համար արտադրությանն աջակցող ծառայություններ, առողջ ծառայությունների առաջարկների փաթեթներ: Նախատեսվում է կենտրոնի աշխատանքներին ներգրավել համապատասխան ազգային փորձագետներ: |
| 59. | **Սևանի, Հրազդանի և Հյուսիսային ջրավազանային տարածքների կառավարման պլանների տեխնիկական առաջադրանքների մշակման վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>2002 թվականի հունիսի 4-ին ՀՀ ջրային օրենսգրքի ընդունմամբ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում, Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքով, որի բաղկացուցիչ մասն են կազմում ջրավազանային կառավարման պլանների մշակման, կազմման և իրագործման աշխատանքները: Համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1749-Ն որոշման՝ սահմանվել է 6 ավազանային կառավարման տարածքը, այդ թվում՝ Հրազդան ավազանային կառավարման տարածքը, որը ներառում է Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերը՝ իրենց ջրահավաքներով, Հյուսիսային ավազանային կառավարման տարածքը, որը ներառում է Դեբեդ, Աղստև գետերը՝ իրենց ջրահավաքներով և Քուռ գետի վտակները՝ իրենց ջրահավաքներով, Սևան ավազանային կառավարման տարածքը՝ Սևանա լիճն իր ջրահավաքով: Ուսումնասիրելով և համադրելով Սևանի, Հրազդանի, Հյուսիսային ջրավազանների գետավազանային առանձնահատկությունները՝ նախատեսվում է մշակել երեք ջրավազանային տարածքների համար ջրավազանային կառավարման պլանների տեխնիկական առաջադրանքներ, որի հիման վրա կմշակվեն ջրավազանային կառավարման պլանները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տեխնիկական առաջադրանքներում կներառվեն ջրային հաշվեկշռի, ջրատնտեսական հաշվեկշռի կազմումը, ինչը հնարավորություն կտա գնահատելու ըստ գետավազանների ստորերկրյա և մակերևութային ջրերի հոսքերը, հավասարակշռելու տարբեր նպատակներով ջրօգտագործողների փոխկապակցված հարաբերությունները:<br>Ջրավազանային կառավարման պլանների տեխնիկական առաջադրանքների հիման վրա կմշակվեն Սևան, Հրազդան և Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանները: Ջրավազանային կառավարման պլանները նախապայման կհանդիսանան ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացման համար: Պլանների մշակումը և իրագործումը հնարավորություն կտա ըստ ոլորտների գնահատել ջրային ռեսուրսների առաջարկը և պահանջարկը, բացահայտել ջրավազանում ցանկալի վիճակին հասնելուն ուղղված միջոցառումները: |
| 60. | **«Ջերմուկ» ազգային պարկի հիմնման իրավական հենքի ստեղծմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի բնության հատուկ պահպանվող |

| | |
|---|---|
| | տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ-ներ) 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումների (կետ 3.2-րդ) համաձայն ԲՀՊՏ-ների համակարգի զարգացման նպատակով Ջերմուկի ջրաբանական արգելավայրի հենքի վրա նախատեսվում է ստեղծել «Ջերմուկ» ազգային պարկի հիմնման իրավական հենքը: Դա հնարավորություն կընձեռի ստեղծելու նախադրյալներ ՀՀ Վայոց ձորի մարզի բնական էկոհամակարգերի ամբողջականության պահպանության համար, խթանելու զբոսաշրջության զարգացումը, աջակցելու ազգային պարկի պահպանման գոտում գտնվող համայնքների տնտեսական զարգացմանը:<br>«Ջերմուկ» ազգային պարկի հիմնման իրավական հենքի ստեղծման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև նախատեսվում է կնքել փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է իրականացնել ֆինանսական օժանդակություն 5.7 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով:<br>ՀՀ ԲՀՊՏ-ների գործող համակարգը ներկայումս ներառում է 4 ազգային պարկ, որոնք տեղակայված են ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերի տարածքում և ստեղծվել են Սևանա և Արփի լճերի էկոհամակարգերի, ՀՀ Տավուշի մարզի կաղնու և հաճարենու ռելիկտային անտառների, Մեղրիի լեռնաշղթայի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական տեսակների պահպանության նպատակով:<br>ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում գտնվող Ջերմուկի ջրաբանական արգելավայրի հենքի վրա «Ջերմուկ» ազգային նոր պարկի հիմնման իրավական հենքի ստեղծմամբ հնարավորություն է ընձեռվում ապահովելու Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի ջրային ու հարակից էկոհամակարգերի, դրանց կենսաբանական բազմազանության պահպանությունը, հողի, օդի, ջրի և կենսաբանական բազմազանության ամբողջականությունը, բնական պաշարների, հազվագյուտ կենդանական տեսակների, դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի, բնության կենդանի և անկենդան հուշարձանների պահպանությունը, խթանելու տարածաշրջանում զբոսաշրջության զարգացումը:<br>ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Ջերմուկի ջրաբանական պետական արգելավայր և Հանքավանի ջրաբանական պետական արգելավայր ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին» N 1063-Ն որոշմամբ սահմանվել է արգելավայրի պահպանության ռեժիմը: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1430-Ն որոշմամբ հաստատվել է նաև «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը, հատակագիծը և տարածքի չափը, որը կազմում է 17371.76 հա:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում հնարավոր կլինի ՀՀ Վայոց ձորի մարզում կանոնակարգել կարևորագույն էկոհամակարգերի ամբողջականության պահպանությունը՝ ներառելով Արփա գետի վերին հոսանքի ջրահավաք ավազանի ջրային ու հարակից էկոհամակարգերի, բնության կենդանի և անկենդան հուշարձանների, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակների, դրանց ապրելավայրերի, աճելավայրերի, պահպանությունը, ինչպես նաև խթանելու տարածաշրջանում զբոսաշրջության զարգացումն ու նպաստելու հարակից համայնքների տնտեսական զարգացմանը: |
| 61. | **«Բնապահպանական պետական տեսչական մարմնի ստեղծում՝ պետական ծառայության հատուկ կարգավիճակի ամրագրմամբ» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը ծագել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի |

| | |
|---|---|
| | 19-րդ հոդվածի պահանջներից, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների արդյունավետ և լիարժեք իրականացման անհրաժեշտությունից, բնապահպանական պետական տեսչության գործառույթների առանձնահատկություններից:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**:<br><br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է.<br>- տեսչական բարեփոխման իրականացման արդյունքում ունենալ ՀՀ օրենսդրությանը և միջազգային ստանդարտներին համապատասխան նոր բնապահպանական տեսչական մարմին, ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, համադրելի և համատեղ օգտագործվող մանրամասն տվյալների բազաներով և համակարգի կիրառման նպատակով վերապատրաստված տեսուչներ, ինչպես նաև ստուգումների իրականացման պարզ, թափանցիկ և կանխատեսելի ընթացակարգեր, ընթացակարգերը նկարագրող հրապարակված ձեռնարկներ, բողոքարկման արագ, արդյունավետ և մատչելի ընթացակարգեր, հավասարակշռության ապահովում տեսուչների իրավունքների և պարտավորությունների (պատասխանատվության) միջև:<br><br>- ունենալ բնապահպանական տեսչական մարմին, որին վերապահված կլինի իրականացնելու վերահսկողական գործառույթներ՝ լրիվ ծավալով և արդյունավետ (վարչական իրավախախտումները հայտնաբերելու, իրավախախտի անձը պարզելու, իրավախախտմամբ ձեռք բերված բնական ռեսուրսների ձեռքբերման աղբյուրը պարզելու, բնապահպանական իրավախախտումների գրանցման, հաշվառման համար): |
| **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն** | |
| 62. | **Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման և համակարգի արդիականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի N 29 արձանագրության 24-րդ կետով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության ծրագիրը: ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարության հիմնական նպատակը մարզերի մրցունակության բարձրացումն է՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումն ազգային ու միջազգային տնտեսությունների հետ, տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքներին ու սահմանամերձ համայնքներին: Ռազմավարության կարևորագույն նպատակներից է նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա տարածքային զարգացման քաղաքականության իրականացումը, ինչպես նաև գործելակերպերի բարելավումը զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:<br><br>Տարածքային համաչափ զարգացումը հնարավոր է ապահովել բացառապես հեռահար տարածքային կառավարման և պլանավորման միջոցով: Տարածքային զարգացման ռազմավարությամբ մատնանշված խնդիրների լուծումն անհնար է ապահովել առանց պատշաճ տարածքային կառավարման համակարգի: Գործող տարածքային կառավարման համակարգը նպատակաուղղված չէ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովմանը: Հայաստանում տարածքային կառավարման դերը, ընդհանուր առմամբ, կառավարության քաղաքականության իրականացումն է մարզերում՝ գործադիր իշխանության տարածքային ծառայությունների համակարգման միջոցով: |

| | |
|---|---|
| | Սակայն չունենալով բավարար գործիքակազմ, տարածքային կառավարման ծածկույթն այսօր վերածվել է մի պասիվ օղակի հանրապետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման ծածկույթի միջև:<br><br>Նշվածը պայմանավորում է տարածքային կառավարման ռազմավարական համակարգի ստեղծում: Տարածքային ռազմավարական կառավարումը պետք է իրականացվի հեռահար պլանավորման միջոցով և ուղղված լինի տարածքային զարգացման ռազմավարական նպատակների լուծմանը: Արմատապես վերանայման կարիք ունեն տարածքային կառավարման մարմինների առջև դրված խնդիրները: Նոր խնդիրներով պայմանավորված հարկ է վերանայել նաև տարածքային քաղաքականություն իրականացնող սուբյեկտների լիազորությունների համալիրը:<br><br>Տարածքային կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացին լրացուցիչ ազդակ են հաղորդել նաև 2015 թ. սահմանադրական բարեփոխումները: Ներկայումս պետական կառավարումը մարզերում իրականացվում է ՀՀ Նախագահի 1997 թվականի «Մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրով: Խորհրդարանական կառավարման մոդելի ընտրության պայմաններում հարկավոր է փոփոխել տարածքային կառավարման գործող իրավակարգավորումները: ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդվածի երկրորդ և երրորդ կետերի համադրված վերլուծությունից բխում է, որ տարածքային կառավարման հարաբերությունները հարկ է կարգավորել օրենքով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Տարածքային կառավարման հայեցակարգի ընդունումը և դրան հաջորդող նորմատիվ իրավական կարգավորումները կմատնանշեն տարածքային կառավարման հիմնական գերակայությունները և ուղենիշները, կստեղծեն տարածքային կառավարման ռազմավարական համակարգ՝ հեռահար խնդիրների պլանավորման և լուծման գործիքակազմով, ինչպես նաև տարածքային զարգացման ռազմավարության իրացման ուղղված գործառույթներ կվերապահեն տարածքային կառավարման մարմիններին: |
| 63. | **Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>2015 թվականին մեկնարկեց համայնքների խոշորացման գործնական փուլը՝ մայիսի 17-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյանի, ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքային փնջերում անցկացվեցին տեղական հանրաքվեներ, իսկ 2016 թվականի փետրվարի 14-ին այդ համայնքային փնջերում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:<br><br>2016 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100-Ն օրենքի համաձայն խոշորացման ծրագրեր իրականացվեցին ՀՀ Արարատի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի 118 համայնքում՝ ստեղծելով 15 խոշորացված համայնք: 2016 թվականի սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին այդ համայնքային փնջերում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:<br><br>Ակնհայտ է, որ գործընթացը կարիք ունի շարունակման, ինչը կնպաստի համայնքների կողմից ֆինանսական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը:<br><br>2.**Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>2017 թվականին նախատեսվում է իրականացնել 18 խոշորացման ծրագիր, որտեղ կներառվի մոտ 150 համայնք, ինչը լիազորությունների հետագա ապակենտրոնացման, համայնքի կառավարման արդյունավետության բարձրացման, ռեսուրսների համախմբման, առավել մրցակցային ավազանու |

| | |
|---|---|
| | ձևավորման, համայնքային ծրագրերի մշակման և իրականացման հնարավորությունների բարձրացման, բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացման, որակի և մատչելիության բարձրացման կարևորագույն նախապայման կհանդիսանա: |
| 64. | **Մարզերի մրցակցային առավելությունների բացահայտման և տարածքային զարգացման ուղիների ուրվագծման վերաբերյալ**<br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտություն (նպատակը)**<br>ՀՀ մարզերի մրցակցային առավելությունների բացահայտումը և զարգացման ուղիների ուրվագծումը բխում է Հայաստանի Հանրապետության 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարությունից, ինչպես նաև նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.7-րդ կետից:<br>ՀՀ մարզերի մրցակցային առավելությունների բացահայտումը և զարգացման ուղիների ուրվագծման համար ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացվածության համատեքստում անհրաժեշտ է Հայաստանում տարածքային զարգացման բոլոր ուղղությունները միավորել և հստակ ճանապարհային քարտեզ ստեղծել տարածքային զարգացման քաղաքականության համար: Պետք է կենտրոնացնել տարածքային զարգացման քաղաքականությունը բոլոր մարզերում՝ մրցունակությունը զարգացնելով և տարածքներում աճի ապահովման կենտրոններին աջակցելով, որը հնարավորություն կտա դրական հակակշիռ ստեղծել Երևանի գերակայությանը:<br>Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ներուժի գնահատման նկարագիրն ունենալու դեպքում յուրաքանչյուր մարզ պետք է բազմակողմանի հետազոտվի և բնութագրվի, որպեսզի գնահատվեն նրա հնարավորությունն ու ակնկալիք մասնակցությունը երկրի ընդհանուր զարգացման գործում և անհրաժեշտության դեպքում նաև աջակցություն ցուցաբերվի նրան:<br>ՀՀ մարզերի համար տարածքային զարգացման ռազմավարություն և 2017-2020 թթ. Տարածքային գործառնական ծրագիր ունենալու դեպքում այն կխթանի բոլոր մարզերում մրցունակության բարձրացմանը՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումն ազգային ու միջազգային տնտեսությունների հետ: Ինչպես նաև կապահովի տարածքներում համաչափության բարձր մակարդակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա:<br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մարզային 2017-2025 թթ. զարգացման ռազմավարությունների իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>2025 թվականի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավելի, քան 30%-ը:<br>2025 թվականի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակը կաճի առնվազն 10 տոկոսով ՝ համեմատած 2014 թվականի հետ:<br>Գործառնական ծրագրի արդյունքում կնկարագրվեն այն կոնկրետ միջոցառումները, որոնք մինչև 2020 թվականը կապահովեն 2025 թվականի համար նախատեսված թիրախների մոտ 40%-ի իրականացումը: |
| 65. | **ՀՀ արխիվային գործի բնագավառում արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման իրականացման վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>ՀՀ կառավարության գործունեության ծրագրում մեծ տեղ է հատկացվում քաղաքացիներին մատուց-վող ծառայությունների որակի բարձրացմանը, որի իրականացման առաջին գրավականը քաղա-քացիներին էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցումն է: Հայաստանի ազգային արխիվի շահառուների թիվը տարեկան կազմում է 20 հազ. քաղաքացի, որոնց 80 տոկոսը կենսա-թոշակի անցնող քաղաքացիներն են: Նրանց անհրաժեշտ արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) տրամադրման գործընթացների դյուրացումը կարևոր նշանակություն ունի հասարակությունում վստահության ամրապնդմանն ուղղված ՀՀ կառավարության որդեգրած ծրագրերի կենսագործման գործընթացում: Ուստի արխիվային ծառայությունների մատուցման նոր համակարգի ներդրումն առավել մատչելի կդարձնի քաղաքացիների կողմից արխիվային տեղեկությունների ստացումը՝ կրճատելով տեղեկության ստացման տևողությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց արխիվային ծառայու-թյունների մատուցումը կիրականացվի էլեկտրոնային համակարգի միջոցով, որի շնորհիվ նրանք հնարավորություն կունենան տեղեկություն ստանալ առցանց համակարգով, առանց որևէ շփման տեղեկություն տրամադրող մարմնի հետ, կամ տեղեկությունը պահանջում և ստանում է այն մարմինը, որին դիմել է քաղաքացին: |
| 66. | **Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության առողջապահական համակարգի օպտիմալացման վերաբերյալ**<br><br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունն է մարզային ենթակայության առողջապահական համակարգի կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների որակի բարձրացումը և ֆինանսա-կան վիճակի բարելավումը:<br><br>ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի, Ծաղկահովտի բժշկական կենտրոնի, ՀՀ Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների և ՀՀ Շիրակի մազի «Սամարիթեր» վերականգնողական կենտրոնի զարգացման և բարելավման ուղղությամբ տարվում են աշխատանքներ, նախատեսվում է իրականացնել հաստիքների օպտիմալացում և բժշկական կենտրոնների կարգավիճակի փոփոխություն: Հայաստանի Հանրապետության մարզային ենթակա-յության առողջապահական համակարգի օպտիմալացումը կբարձրացնի մատուցվող ծառայու-թյունների որակը և կապահովի ֆինանսական կայունություն:<br><br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության առողջապահական համակարգի օպտի-մալացման արդյունքում ակնկալվում է մարզերի բնակչությանը մատուցել առողջապահական առավել որակյալ, մատչելի և հասանելի ծառայություններ: Ակնկալվում է առողջապահական համակարգի մատուցող ծառայությունների որակի բարձրացում և առողջապահական կենտրոնների ֆինանսական վիճակի բարելավում: |

| | |
|---|---|
| 67. | **Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության կրթական հաստատությունների օպտիմալացում**<br><br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Մարզային ենթակայության կրթական հաստատությունների օպտիմալացման նպատակն ուսումնական հաստատություններին հատկացվող բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության և նպատակայնության բարձրացումն է, ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպական ցուցանիշների (սովորող-մանկավարժ հարաբերակցություն, ուսումնական խմբերի միջին խտություն, մանկավարժների միջին ծանրաբեռնվածություն և այլն) օպտիմալացումը, դրանով հանդերձ կրթության որակի բարելավումը:<br><br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Մարզային ենթակայության կրթական համակարգի ֆինանսատնտեսական վիճակի և ծառայությունների մատուցման որակի բարձրացման պոտենցիալի վերլուծության, շահագրգիռ մարմինների հետ մասնագիտական քննարկումների արդյունքում ակնկալվում է ուսումնական հաստատություններում կրթության որակի, մատչելիության և ընդգրկվածության մակարդակի բարձրացում: |
| 68. | **Մարզային ենթակայության կրթական հաստատությունների բյուջեների և ծախսերի կատարման թափանցիկության ապահովման վերաբերյալ**<br><br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Գերակա խնդրի նպատակը մարզային ենթակայության կրթական հաստատությունների բյուջեների և ծախսերի կատարման թափանցիկությունն ապահովելն է, որն ուղղակիորեն բխում է ՀՀ կառավարության գործունեության ծրագրի «Կրթություն և գիտություն» բաժնի 1-ին կետի «ա» ենթակետի պահանջներից:<br><br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Մարզային ենթակայության կրթական հաստատությունների բյուջեների և ծախսերի կատարման թափանցիկության ապահովման արդյունքում ակնկալվում է մարզային ենթակայության յուրաքանչյուր դպրոցի բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիություն: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե** |
| 69. | **Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակման, վերանայման, տեղայնացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>«Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակում, վերանայում, տեղայնացում» գերակա խնդիրը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 51 արձանագրության 17-րդ կետով «Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի նիստի N 17 արձանագրության 26-րդ կետով «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» հավանության արժանացած արձանագրային որոշումների պահանջների, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում սպառողների համար հարմարավետության ապահովման անհրաժեշտությունից: |

| | |
|---|---|
| | Հանրապետությունում գործող քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի համակարգը հիմնականում ընդգրկում է նախկին ԽՍՀՄ ժամանակահատվածում գործող նորմերը, որոնք չեն համապատասխանում ներկայումս գործող միջազգային և եվրոպական ստանդարտներին: Հետևաբար, կարիք ունեն արդիականացման՝ համահունչ միջազգայնորեն ընդունված չափանիշներին:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքաշինության բնագավառի առաջնահերթ նշանակության նորմատիվ փաստաթղթերի մշակումը, վերանայումը և տեղայնացումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան կնպաստի բնակչության առողջության և բարեկեցության բարելավմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, շենքերի ու շինությունների սեյսմակայունության և հուսալիության բարձրացմանը:<br>Միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ նորմատիվ փաստաթղթերի բազայի համալրումը կապահովի միասնական շուկայում հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունը, տեխնոլոգիաների արդիականացումը, տարբեր նշանակության շենքերի ու շինությունների նախագծային և շինարարական աշխատանքների որակը, ինչպես նաև շահագործման պահանջներն ու պայմանները:<br>Մշակման, վերանայման և տեղայնացման ենթակա նորմատիվ փաստաթղթերի նկատմամբ առաջնահերթության սահմանումը թույլ կտա առավել նպատակային օգտագործել տրամադրվող ֆինանսական միջոցները: |
| 70. | **Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բազայի համալրում, մինչև 2021 թվականի հունվարի 1-ը հանրապետության բոլոր համայնքների ապահովում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության գերակա խնդիրների թվում նշված ծրագրի ներառման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համայնքներում տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորման անհրաժեշտությամբ:<br>Հայաստանի Հանրապետության համայնքների զգալի մեծամասնությունն ապահովված չեն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, ինչի հետևանքով բազմաթիվ համայնքներում կառուցապատումը կրում է չկանոնակարգված բնույթ, որն էլ իր հերթին սուբյեկտիվ որոշումների ընդունման հնարավորություն է ստեղծում: Ծրագրի իրականացումը կապահովի համայնքների ռազմավարական զարգացման պլանավորումը:<br>Ներկայացվող ծրագրով նախատեսվում է (ֆինանսավորման առկայության դեպքում) յուրաքանչյուր տարի մշակել 2-3 մարզի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր՝ առաջնահերթությունը տալով ռազմավարական նշանակություն ունեցող, սահմանամերձ համայնքներին:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2017 թվականին նախատեսվում է համալրել ՀՀ համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգը՝ առաջնահերթությունը տալով ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին: Հաշվի առնելով նշված համայնքների ռազմավարական նշանակությունը՝ ծրագրում նախատեսվել է ֆինանսավորումը՝ համայնքների գոտևորման նախագծերի մասով, ևս իրականացնել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:<br><br>Մինչև 2017 թվականի վերջը մշակված կլինի ՀՀ Տավուշի մարզի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ: Նշված 6 փաստաթուղթը կներառի 55 բնակավայրի գոտևորման նախագիծ:<br>55 բնակավայրն են՝ |

| | |
|---|---|
| | • քաղ. Նոյեմբերյան (լրամշակել 70%), Բերդավան, Դովեղ, Բարեկամավան, Կոթի, Ոսկեվան, Ոսկեպար, Բաղանիս, Ջուջևան,<br>• Աճարկուտ, Կիրանց, Բերքաբեր, Սարիգյուղ, Ծաղկավան (Իջևան), Սևքար, Աչաջուր, Ակնաղբյուր, Լուսաձոր, Խաշթառակ,<br>• Դիտավան, Ազատամուտ, Այգեհովիտ, Վազաշեն, Պառավաքար, Վարագավան, Ծաղկավան,<br>• քաղ. Բերդ, Տավուշ (Թովուզ), Ներքին կարմիր աղբյուր, Այգեպար, Մոսեսգյուղ, Վերին կարմիր աղբյուր, Նորաշեն, Չորաթան, Արծվաբերդ, Չինար, Այգեձոր,<br>• Դեբեդավան, Բագրատաշեն, Դեղձավան, Պտղավան, Ջորական, Հաղթանակ, քաղ. Այրում, Լճկաձոր, Արճիս, Կողբ,<br>• քաղ. Իջևան, Ենոքավան, Գետահովիտ, Լուսահովիտ, Գանձաքար, Իծաքար, Նավուր, Չինչին: |
| 71. | **Քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման սկզբունքները ձևավորող բաղադրիչների արդիականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատվել է գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը: Կարգը կազմվել է 1994-1995 թվականների մեթոդաբանության հիմքով, երբ դեռևս բացակայում էին շուկայական հարաբերությունները: Ներկայումս շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով 1984 թվականի նորմատիվ բազան, այդ թվում՝ աշխատավարձի և մեքենա-մեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է նախկինում գոյություն ունեցող գներով՝ կիրառելով համապատասխան գործակիցներ: Ներկայումս գործող՝ նշված կարգով շինմոնտաժային աշխատանքների նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի ծախսերի միջև առկա են անհամապատասխանություններ:<br>Այդ կապակցությամբ, անհրաժեշտություն է առաջացել շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացումը ձևավորող բաղադրիչների՝ նյութերի, մեքենամեխանիզմների շահագործման, բանվորների և մեքենամեխանիզմներ շահագործող անձնակազմի աշխատավարձի հաշվարկն իրականացնել հաշվի առնելով շուկայի արդի պահանջները:<br>2016 թվականին նախատեսված էր մշակել շինարարության արժեքի գնագոյացման նոր մեթոդաբանություն, որի համար մրցութային կարգով պետք է ստեղծվեր աշխատանքային խումբ: Հաշվի առնելով աշխատանքի ծավալը, աշխատատարությունը, աշխատանքի կատարման ժամանակահատվածը (10-12 ամիս)՝ 8-10 մասնագետ ներգրավելու համար անհրաժեշտ էր մոտ 30.0 մլն դրամ, սակայն ՀՀ 2016 թվականի պետական բյուջեում, ինչպես նաև 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում նմանատիպ աշխատանքների համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, որի պատճառով 2016 թվականի ընթացքում այն չի իրականացվել:<br>Ուստի, ներկայումս նախատեսվում է նոր մեթոդաբանության մշակման փոխարեն 2017 թվականի գերակա խնդիրների շրջանակներում արդիականացնել գնագոյացման բաղադրիչներից, մասնավորապես, աշխատավարձի հաշվարկման սկզբունքները:<br>Գնագոյացման բաղադրիչների վերանայման աշխատանքներն իրականացվելու են մասնագիտական քննարկումների ժամանակ հավաքագրված տեղեկատվության արդյունքների ամփոփման միջոցով: Աշխատանքների իրականացումը ՀՀ պետական բյուջեից ֆինանսական հատկացումների անհրաժեշտություն չի առաջացնում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Գերակա խնդրի լուծմամբ ակնկալվում է շինմոնտաժային աշխատանքների արժեքում ունենալ նյութերի, մեքենամեխանիզմների շահագործման, բանվորների և մեքենամեխանիզմներ շահագործող անձնակազմի աշխատավարձի իրատեսական արժեք, որի արդյունքում շինարարության նախահաշվային արժեքն ավելի մոտ կլինի շուկայում ձևավորված գներին: |
| 72. | **Կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Քաղաքաշինության կոմիտեի գերակա խնդիրների թվում նշված ծրագրի ներառման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառուցապատման ծրագրերում ընդգրկված տարածքների քաղաքաշինական վերազարգացման և արդիականացման անհրաժեշտությամբ և հրատապությամբ:<br>Հաշվի առնելով Հանրապետության հրապարակի մերձակայքում վերոնշյալ տարածքային հատվածների տեղակայման հանգամանքը, վերջիններիս կարևորագույն քաղաքաշինական դերը կենսամիջավայրի գեղագիտական հատկանիշների կատարելագործման տեսանկյունից՝ կառուցապատման ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կիրառել համալիր լուծումներ՝ դրանց շարունակական իրականացումը երաշխավորելու համար:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է մշակել կառուցապատման ներդրումային ծրագրեր՝ հնարավորություն ընձեռելով համալիր մոտեցումներ ձևավորել և դյուրացնել կառուցապատման գործընթացը:<br>Կառուցապատման ներդրումային ծրագրերի իրագործման աշխատանքների հետևողական համակարգումն էական ազդեցություն կունենա այդ ծրագրերի բնականոն ընթացքի և շարունակականության ապահովման տեսանկյունից: |
| 73. | **Կառուցապատման ընթացակարգերի պարզեցման շարունակական իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Նշված ծրագիրը գերակա խնդիրների ցանկում ներառելը պայմանավորված է հանրապետությունում քաղաքաշինության ոլորտում շարունակական բարելավման միջոցառումների իրականացման միջոցով բարենպաստ ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանն ուղղված լրացուցիչ խթաններ ստեղծելու և կառուցապատման նպատակով թույլտվություններ տրամադրելու գործընթացի պարզեցման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի գործարկումը կապահովի թույլատվական ընթացակարգերի վերահսկելիությունը (այդ թվում՝ շահագրգիռ օգտագործողների կողմից) ամբողջ գործընթացի իրականացման ընթացքում, ինչպես նաև կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: |
| | **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** |
| 74. | **Հայաստանի Հանրապետության տարածքում** WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) /ArmREF02/ **ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքների վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն ծրագրի նպատակը ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ իրականացնելն է: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի՝ բարձր ճշտությամբ՝ հնարավորություն տալով գեոդեզիայի բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին խնայել ժամանակ և ֆինանսական զգալի միջոցներ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք՝<br>- GPS 156 հիմնակետերի դիտարկում և կոորդինատների հավասարակշռում ու հաշվարկում,<br>- II դասի 113.0 գծ.կմ նիվելիրացում,<br>- II դասի 113.0 գծ.կմ նիվելիրացման նյութերի մշակում և 30 կետի հավասարակշռում:<br>Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի «ՌՈՎԵՐ» դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) համակարգում: |
| 75. | **Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի ներդրման ամբողջական գնման հայտի փաթեթի նախապատրաստման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջները բավարարող բազային երկրատեղեկատվական միասնական համակարգի ներդրման համար ամբողջական գնման հայտի փաթեթի նախապատրաստումն է:<br><br>Ներդրվող բազային երկրատեղեկատվական համակարգը հիմք է հանդիսանալու զերատեսչական տարբեր բնագավառների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, հողերի օգտագործման և գոտևորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական ու տնտեսական գործունեության, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների ընդունման, համայնքի ու առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ բնագավառների խնդիրների լուծման համար:<br><br>1. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Երկրատեղեկատվական համակարգի ներդրման նախապատրաստված ամբողջական գնման հայտի փաթեթի ստեղծումն է:<br><br>Երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ավտոմատացման ծրագրի ներդրման արդյունքում ակնկալվող արդյունքներն են՝<br><br>1) ՀՀ-ի միասնական գեոպորտալի ստեղծում.<br><br>2) բազային ԵՏՀ-ի տեղեկատվական բանկի տվյալների հավաքագրման և մշակման ստանդար- |

| | |
|---|---|
| | տացման աստիճանի բարձրացում. <br><br> 3) տվյալների լրիվության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակում. <br><br> 4) երկրատեղեկատվական միասնական տեղեկատվական բանկում տվյալների թարմացում իրական (on-line) ժամանակում. <br><br> 5) տեղեկատվական բանկի պահուստային պատճենների ստեղծման գործընթացի հեշտացում, օպերատիվության բարձրացում և ծախսերի նվազեցում. <br><br> 6) տեղեկատվական բանկի տվյալների հետ աշխատանքի մեխանիզմների և մեթոդների պարզեցում, տվյալների հետ աշխատանքի համար ծախսվող ժամանակի կրճատում. <br><br> 7) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և հանրության համար էլեկտրոնային եղանակով ինտերնետ միջավայրում տեղեկատվության հասանելիության ապահովում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե** | |
| 76. | **Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորման վերաբերյալ** <br><br> 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)** <br><br> Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը լրանում է 2016 թվականին: Էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքները պետք է իրականացվեն երկու փուլով՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման նկատմամբ պահանջները հաստատելու մասին» N 1085-Ն որոշման: <br> Շահագործման ժամկետի երկարացման 1-ին փուլի աշխատանքներին զուգահեռ սկսվել է Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի երկարացման աշխատանքների իրականացման 2-րդ փուլը՝ շահագործման լրացուցիչ ժամկետին էներգաբլոկի նախապատրաստումը, որի ընթացքում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմինը (այսուհետ՝ կարգավորող մարմին) կքննարկի Հայկական ԱԷԿ-ի կողմից ներկայացվող հետևյալ փաստաթղթերը՝ <br> 1) էներգաբլոկի չվերականգնվող և չփոխարինվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորում. <br> 2) էներգաբլոկի արդիականացման և անվտանգության բարձրացման միջոցառումների ներդրում. <br> 3) էներգաբլոկի համակարգերի (տարրերի) փորձարկում. <br> 4) էներգաբլոկի անվտանգության հիմնավորման հաշվետվության մշակում. <br> 5) սթրես-թեստի հաշվետվության հիման վրա մշակված միջոցառումների ներդրում: <br><br> 2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Վերոհիշյալ փաստաթղթերի քննարկման հիման վրա կարգավորող մարմինը համաձայնություն կտա երկրորդ փուլի աշխատանքների արդյունքներին կամ շահագործող կազմակերպությունը կներկայացնի լրացուցիչ աշխատանքների իրականացման պահանջ: <br> Էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների երկրորդ փուլի աշխատանքների վերաբերյալ կարգավորող մարմնի համաձայնությունն ստանալուց հետո շահագործող կազմակերպությունը միջուկային տեղակայանքի շահագործման լիցենզիայի ժամկետի երկարաձգման մասին հայտ կներկայացնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված |

| | |
|---|---|
| | կարգով: |
| 77. | **Ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիայի ստեղծման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին են վերապահված շրջակա միջավայրի հողի, օդի, ջրի ճառագայթային մշտադիտարկման (մոնի-թորինգ) և վերահսկողության իրականացումը, տեսչական ստուգումների ժամանակ ստուգվող օբյեկտ-ներից փորձանմուշներ վերցնելը, հայտնաբերված ռադիոակտիվ նյութերի տիպաճշտումը, երկրի ընդերքից արտազատվող ռադիոակտիվ ռադոն գազի վերահսկումը:<br>Վերոնշյալ աշխատանքները ժամանակակից պահանջներին համապատասխան կատարելու համար անհրաժեշտ է բարձր ճշտության ռադիոմետրիկ ու սպեկտրոմետրիկ սարքերով, ինչպես նաև ռադիո-քիմիական անալիզների կատարման ու փորձանմուշների մշակման համար անհրաժեշտ սարքա-վորումներով հագեցված լաբորատորիա:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիա ունենալու դեպքում կոմիտեն կկարողանա Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստան-դարտների պահանջներին համապատասխան իրականացնել շրջակա միջավայրի կարգավորող վերահսկողությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, բարելավելու շրջակա միջավայրի պահպանությունը: |
| **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** | |
| 78. | **Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբար) ծրագրերի նախապատրաստման և իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br><br>ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի N 33 արձանագրության 18-րդ կետով հավանության է արժանացել «Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը: Միաժամանակ «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված են ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համա-կարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված գերակա խնդրի լուծումն անհրաժեշտ նա-խադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| 79. | **Ոռոգման համակարգերի վերականգնման, վերակառուցման, արդիականացման** |

| | |
|---|---|
| | **ծրագրերի իրականացման ապահովման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը ոռոգման ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը բարձրացնելն է:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Ոռոգման ջրի արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա ոռոգման գյուղատնտեսության արդյունավետության ու կայուն զարգացմանը և բնակչության համար եկամտի ապահովմանը: Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը և հետագա պահպանումը: Միաժամանակ՝ ինքնահոս համակարգերի, հեռացնող ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնել ինքնարժեքի նվազման քաղաքականություն: |
| 80. | **Խմելու ջրի ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման արդյունավետության բարելավման, վարձակալի պայմանագրային պարտավորությունների վերահսկման մեխանիզմների ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ջրային տնտեսության ոլորտում պետական-մասնավոր գործընկերության զարգացմանն ուղղված ջրային համակարգերի կառավարման արդյունավետության հետագա բարձրացմամբ: ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն և N 888-Ն որոշումների համաձայն «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը դիտարկվում են որպես միասնական գույքային համալիր և տվյալ գույքի հետագա օգտագործումն ու պահպանումը 2017 թվականի հունվարի 1-ից իրականացվելու են պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում՝ մեկ կառավարչի կողմից:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող ջրային համակարգերի վարձակալությամբ փոխանցման և հետագա գործընթացի կազմակերպումը հնարավորություն կտա ապահովել ջրային համակարգում մասնավոր կառավարման շարունակականությունը, բարձրացնել խմելու ջրի համակարգերի կառավարման արդյունավետությունը և բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև ջրամատակարար ընկերության ֆինանսական կայունությունը: |
| 81. | **Ջրամատակարար ընկերության պասարկման տարածքից դուրս մնացած 560 համայնքում ջրամատակարարման և ջրահեռացման որակի բարելավման անհրաժեշտության վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | Հայաստանի շուրջ 560 համայնք այսօր ընդգրկված չեն ջրամատակարար ընկերության սպասարկման տարածքում: Չընդգրկվածության պատճառները հիմնականում հետևյալներն են՝<br>- կտրվածությունը ջրամատակարարման սպասարկման տարածքից և դրան միանալու ծախսատարությունը,<br>- ներքին ցանցի բացակայությունը և կառուցման մեծ ծախսատարությունը,<br>- անհրաժեշտ ներդրումների և ակնկալվող օգուտների անհամապատասխանությունը,<br>- սեփական ջրաղբյուրի առկայությունը և ջրի համար գանձվող մատչելի վճարը,<br>- այլ:<br>ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ (բաժին 2.1-ին, կետ 6-րդ, ենթակետ 4-րդ) միաժամանակ նախատեսվում է սպասարկման տարածքից դուրս մնացած համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում:<br>Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կիրառել բարեփոխումների տարբեր գործողություններ: Այս գործողությամբ նախատեսվում է նշված համայնքներից ընտրել այն համայնքները, որտեղ հնարավոր է համատեղել ներդրողի կողմից սպասարկման տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարելավման համար պահանջվող ներդրումների բիզնես հետաքրքրությունները և համայնքների հնարավորությունները սակագնի հետ կապված: Նախնական ուսումնասիրություններով պարզվել է, որ համայնքների 65-75%-ը կնախընտրի պահպանել արդեն իսկ գոյություն ունեցող ծառայությունների մատուցման ձևաչափը և գանձվող սակագինը: Սակայն մոտ ապագայում առավել կսրվեն առկա խնդիրները՝ կապված ծառայությունների որակի, համակարգերի տեխնիկական շահագործման և համայնքներում ծառայությունների մակարդակը հետագայում պահպանելու կարողությունների հետ:<br>Այս համայնքներում ներդրումների գրավչությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է՝<br>- գտնել ներդրումների այնպիսի մեխանիզմներ և աղբյուրներ, որոնք հնարավորություն կտան բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը՝ միաժամանակ հնարավորություն տալով սակագինը մոտեցնել սպասարկման տարածքի սակագնի գոնե 50 %-ին,<br>- ներգրավել գործող համակարգի (սպասարկման տարածքի) բաղադրիչները նոր համայնքներում (միացումներ մայր ջրագծերին, մեծածախ ջրի իրացման ծավալի մեծացում, հավաքագրման համակարգի ներդրում և այլն),<br>- ապահովել բիզնես-ծրագրի հուսալիության երաշխիքներ, երկարատև շահագործման հնարավորություններ,<br>- նպաստել ծրագրի հետագա ընդլայնմանը: |
| **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 82. | **ՀՀ բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի տարածման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բնակչության ֆիզիկական դաստիարակության ամրապնդումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումն է՝ սկսած նախադպրոցական տարիքի երեխաներից մինչև տարեցներ, նրանց շրջանում առողջության ամրապնդումը, ակտիվ հանգստի կազմակերպումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների |

| | |
|---|---|
| | ստեղծումը, ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների խթանումը և կազմակերպումն է բնակչության բոլոր տարիքային խմբերի համար:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բնակչության շրջանում ֆիզիկական դաստիարակության ամրապնդում և զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպում և առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության կենցաղում ակտիվ հանգիստ և առողջ ապրելակերպ վարող անձանց թվի աճ: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության նպատակով Երևան քաղաքի, ինչպես նաև մարզերի քաղաքների պուրակներում և այգիներում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում-ների անցկացում: ՀՀ ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հասարակությանը նրանց ինտեգրման գործընթացի և սոցիալական հավասարության խթանում: Հանրապետության քաղաք-ներում և գյուղերում ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական ծրագրերի անցկացման խթանում և բարելավում՝ բնակչության լայն շերտերի ընդգրկման միջոցով: |
| 83. | **Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայ ազգի մարզական և մշակութային ավանդության ու ժառանգության պահպանում, ֆիզիկա-կան կուլտուրայի և սպորտի զարգացում:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի խմբակների բացում, հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանում, զարգացում և տարածում ՀՀ-ում, Արցախում, Ջավախքում և սփյուռքի հայկական գաղթօջախներում, առողջ, մարզված և ինքնապաշտպանության հնարքներին տիրապետող սերունդների դաստիարակում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում: |
| 84. | **Երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է հասարակա-կան կյանքի բոլոր ոլորտներում որոշումների ընդունման գործում երիտասարդների, երիտասարդա-կան ակտիվ խմբերի, ինչպես նաև երիտասարդական հասարակական կազմակերպությունների անմիջական և միջնորդավորված ներգրավվածության ապահովումը:<br>Տարածքային համաչափ զարգացման, երիտասարդների հիմնախնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության ճանաչելիության, երիտասարդության շրջանում առկա գործա-զրկության կրճատման, երիտասարդների շարժունակության խթանման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել երիտասարդների ներգրավվածությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացների արդյունա-վետության բարձրացման, երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեու-թյան խթանման, փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման միջոցով:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդական ծրագրերի էական ավելացում մարզերում, երիտասարդության հիմնախնդիրների լուծման գործընթացներում մարզային երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրա-ցում, ոչ ֆորմալ կրթության արդյունավետ գործիքների կիրառմամբ երիտասարդական աշխատողների վերապատրաստում, երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում, փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակում և իրականացում, |

| | |
|---|---|
| | միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման և երիտասարդների շարժունակության խթանում, ՀՀ մարզերում երիտասարդության հիմնախնդիրների վերհանում, լուծման ուղղությունների առաջարկում, լավագույն փորձի տեղայնացում: |
| 85. | **Սպորտային տուրիզմի զարգացման հայեցակարգի մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ-ում սպորտային տուրիզմի զարգացումը հնարավորություն կստեղծի ավելի մեծ օժանդակություն բերել ավելի առողջ սերունդ և ազգաբնակչություն ունենալու գործում, ինչպես նաև կօժանդակի տուրիզմի սպորտային ձևի զարգացմանը հանրապետությունում և կներգրավվեն ոչ միայն հանրապետության բնակիչները, այլ նաև մեծ հետաքրքրություն և մասնակցություն կլինի օտարերկրացիների կողմից:<br>Սպորտային տուրիզմի արդյունքն ակնհայտ է լինում շղթայական հետևանքային կապով՝ արդյունքից ստեղծվում է շղթայական արդյունք<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետությունում սպորտային տուրիզմի նկատմամբ արտասահմանցիների և հանրապետության բնակչության հետաքրքրության և մասնակցության ապահովում և արդյունքում տնտեսության զարգացման օժանդակում:<br>Դեռևս մանկական և դպրոցական հասակից երեխաների մոտ բնության ու սպորտի և նորի ձեռքբերման ու բացահայտման հանդեպ հետաքրքրության արմատավորում:<br>Օժանդակում առողջ, ամուր և բարձր դիմադրողականությամբ սերնդի աճին:<br>Սպորտային տուրիզմի ոլորտը կարգավորող իրավական և մեթոդական լիարժեք դաշտի ստեղծում: |
| 86. | **Բակային մարզական միջոցառումների միջոցով Երևանում և ՀՀ մարզերում մասսայական սպորտի զարգացման խթանման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ըստ բնակության վայրի ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորմանը, սոցիալական հավասարության խթանմանը, մարմնակրթական և այլ ընդհանուր հետագա գործունեության զարգացմանն ու իրագործմանը նպաստելն է, ինչպես նաև տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիությունն ապահովելը, հիվանդությունների նվազեցումը և կանխարգելումը, առողջության պահպանման պայմանների ապահովումը, ինչպես նաև ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բակերում ընդհանուր ֆիզիկական պատրաստականության և առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների՝ պարզ տիպի խաղահրապարակների և խաղասենյակների ստեղծում, դրանց արդյունավետ օգտագործում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար մատչելի պայմանների առկայություն, համայնքի տարածքի ֆիզիկական ակտիվության և առողջ ապրելակերպի «քարտեզի» մշակում և տարածում: |
| 87. | **Ֆիզիկական կուլտուրայի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում առողջ ապրելակերպի սերմանման և տարածման վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման բացահայտում և ձևավորում, ինչպես նաև խոստումնալից երեխաների ի հայտ բերում մանկապատանեկան մարզադպրոցների համար: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական ունակությունների զարգացում և բարելավում, տարբեր մարզաձևերում ընդգրկվող երեխաների թվի ավելացում: Նախադպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում, նախադպրոցական հիմնարկների ավագ տարիքի երեխաների համար տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշում: |
| 88. | **Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի դերի կարևորման և տարածման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների շրջանում ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորում, սոցիալական հավասարության խթանում, նրանց հասարակություն ինտեգրման գործընթացի խթանում, բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներին նրանց ներգրավվածության թվի աճ, նրանց մոտ առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում: |
| **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** | |
| 89. | **Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Տարբեր երկրներից սփյուռքահայեր շարունակում են տեղափոխվել Հայաստան, հետևաբար Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման տարաբնույթ ծրագրերի մշակումն ու իրականացումը հնարավորություն կտա նրանց համար ինքնադրսևորման նպաստավոր պայմաններ ստեղծել: Հաշվի առնելով Հայաստան ժամանած սիրիահայերի և իրաքահայերի պահանջներն ու կարիքները, ինչպես նաև նրանց սոցիալական, իրավական, կրթական խնդիրների լուծման համար ընդունել իրավական ակտեր նրանց ինտեգրումը դյուրացնելու նպատակով, միաժամանակ կազմակերպել աջակցություն և իրականացնել համապատասխան ծրագրեր:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ծրագրերի իրականացման արդյունքում կմշակվեն ու կիրականացվեն սփյուռքահայերի, մասնավորապես, սիրիահայերի և իրաքահայերի կրթական, մշակութային ինտեգրմանը նպաստող բազմաբնույթ միջոցառումներ, անհրաժեշտ աջակցություն կցուցաբերվի սիրիահայ դպրոցականների և ուսանողների կրթական գործընթացի կազմակերպմանը, մասնավորապես, ուսման վարձավճարների փոխհատուցմանը: Ակնկալվում է նաև խրախուսել |

| | |
|---|---|
| | Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի ծրագրային նախաձեռնությունները, օժանդակել Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումներին, սփյուռքահայերի հիմնախնդիրներով զբաղվող կառույցների առնվազն 3 միջոցառման կազմակերպմանը, լեզվական հարցերի կարգավորմանը: |
| 90. | **Հայապահպանության համար և ուծացման դեմ պայքարում սփյուռքի երիտասարդության շրջանում մայրենի լեզվի իմացության մակարդակի բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Սփյուռքի հայկական համայնքներում հայապահպանությունը շարունակում է մնալ գերխնդիր: Այսօր աշխարհասփյուռ հայության համար վտանգված է ազգային նկարագրի, մայրենիի իմացությունը, ավանդույթների, սովորությունների, հայկական մշակութային արժեքների պահպանումը: Ինքնության կորուստն սկսվում է լեզվի մոռացությունից: Մայրենի լեզվով չխոսելը, չկարդալը, չստեղծագործելը, չմտածելը հայեցի լեզվական մտածողության կորուստ է: Լեզուն է ազգային ինքնության պահպանման հիմքը, ազգային գոյատևման գլխավոր պատվարը: Սփյուռքի որոշ հատվածներում լեզվամշակութային ինքնության աստիճանական կորուստն այսօր արդեն ուղղակիորեն սպառնալիք է ստեղծում նրա լինելիության համար. համայնքներում աստիճանաբար պակասում է հայերեն խոսող հայերի թիվը, իսկ մի ստվար մասն ընդհանրապես չի տիրապետում մայրենիին: Գերակա խնդրի իրականացումը, որպես համալիր ծրագիր, նպաստելու է սփյուռքի հայկական համայնքներում, հատկապես երիտասարդության շրջանում մայրենի լեզվի (նրա 2 ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի) պահպանմանը և տարածմանը, լեզվական վիճակի բարելավմանը, սփյուռքում հայերենի իմացության մակարդակի բարձրացմանը, հայոց լեզվի զարգացմանը, խոսելու, օտար միջավայրերում և այլ լեզվամշակութային ազդեցությունների պայմաններում հայոց լեզվի գործածության, հաղորդակցության հնարավորությունների շրջանակների ընդլայնմանը՝ օգտագործելով հայրենիքում սփյուռքի համար ստեղծված դասագրքերը, ուսումնական և օժանդակ նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային նյութերը, հեռավար ուսուցման ժամանակակից միջոցներն ու աղբյուրները:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>-Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>-մինչև 1000 սփյուռքահայ պատանու և աղջկա երկշաբաթյա այցելություն Հայաստան,<br>-մայրենի լեզվի և հայրենագիտության 9-օրյա դասընթացի, ճանաչողական շրջայցերի կազմակերպում,<br>- շուրջ 50000 կտոր դասագրքով և ուսումնաօժանդակ նյութով ապահովում սփյուռքի շուրջ 150 կրթօջախին՝ ըստ ներկայացվող պահանջների<br>-սփյուռքահայ 30 ուսուցչի մասնակցություն վերապատրաստման և մինչև 130 երիտասարդի մասնակցություն մայրենի լեզվի առաջնահերթության դասընթացներին: |
| 91. | **Հայաստանի Հանրապետության ներդրումային ծրագրերին սփյուռքահայերի մասնակցության ապահովման գործուն մեխանիզմների ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Բազմաթիվ սփյուռքահայեր ցանկանում են ներդրումներ կատարել Հայաստանում և այդ նպատակով անհրաժեշտ է ձևավորել ներդրումային և գործարար բարենպաստ միջավայր, ապահովել սփյուռքահայ գործարարների իրազեկումը տարբեր ոլորտներում (հյուրանոցային և տուրիզմի, տեղեկատվական, գյուղատնտեսության և այլն)՝ համապատասխան ներդրումներ կատարելու համար:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախարարության կառուցվածքում կստեղծվի «Մեկ պատուհան» սկզբունքով գործող կառույց, որը |

| | |
|---|---|
| | կտրամադրի երաշխավորված անվճար խորհրդատվական ծառայություններ և կստեղծի առցանց խորհրդատվություն տրամադրելու համար համապատասխան կայքէջ, հայկական սփյուռքի ներուժը կօգտագործի հյուրանոցային և տուրիզմի ոլորտում և կապահովի զբոսաշրջության զարգացման և ներդրումների ներգրավման ուղղությամբ հայկական առևտրային ցանցի 5-րդ ժողովին և 3-րդ բիզնես ֆորումին սփյուռքահայ գործարարների և ներդրողների մասնակցությունը: |
| 92. | **Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացին և երիտասարդության շրջանում պատմական հիշողության ամրապնդմանն աջակցության վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացը շարունակելու նպատակով անհրաժեշտ է հայկական և համահայկական նշանակության հարցերն իրազեկել տարբեր միջազգային և պետական իշխանության մարմիններին, տարածել ճշմարիտ և օբյեկտիվ տեղեկատվություն, աջակցել հայ ժողովրդի իրավունքների ու Հայոց ցեղասպա-նության հատուցման իրավական թղթածրարի կազմման աշխատանքներին:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կձևավորվի Ցեղասպանությունը վերապրածների իրավահաջորդ սերունդների տվյալների բազա, ինչպես նաև կամբողջացվեն նյութական, ֆինանսական, մշակութային կորուստների մասին տվյալները: |
| 93. | **«Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» շարժման ձևավորման և զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Սփյուռքում այս շարժման ձևավորման և տարածման համար անհրաժեշտ է քարոզել և տարածել տեղեկատվություն, ակտիվացնել ԼՂՀ-ի անվտանգության և տնտեսության ամրապնդման, ինչպես նաև ԼՂ-ի հիմնախնդրի արդարացի լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Աջակցություն սփյուռքի ջանքերին՝ ուղղված ԼՂՀ-ի միջազգային ճանաչմանը: |
| 94. | **Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնման և մասնագիտական ներուժի օգտագործման վերաբերյալ՝ ՀՀ-ի և Արցախի տնտեսության զարգացման համար**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Խնդրի նպատակը համայնքներում ավելի մեծ թվով մասնագիտական ընկերակցությունների, երիտա-սարդական, կանանց, մշակութային, մասնագիտական միությունների ստեղծման աշխատանքներին աջակցելն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանում և սփյուռքում կկազմակերպվեն և կանցկացվեն մասնագիտական համաժողովներ, մասնագիտական կարողություններն ու կապերը հայրենիքին ծառայեցնելու նպատակով կձևավորվեն համահայկական մասնագիտական ցանցեր և կիրագործվեն համատեղ նախագծեր: |
| **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** | |
| 95. | **Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պետական պատվերի կազմակերպման** |

| | |
|---|---|
| | **մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստացող շահառուների շրջանակի, նրանց մատուցվող բժշկական ծառայությունների փաթեթի ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցներին առկա անհամապատասխանության պատճառով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ոչ բոլոր շահառուներն են անվճար կամ արտոնյալ պայմաններով ստանում բժշկական օգնություն և սպասարկում: Ավելին, շահառուների ցուցակում ընդգրկված են այնպիսի քաղաքացիներ, որոնք կարող են օգտվել վճարովի բժշկական ծառայություններից, իսկ նրանց համար բժշկական ծառայությունների ձեռքբերման համար պետության կողմից ծախսվող գումարները կարող են ուղղվել առավել կարիքավոր խավին: ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների ներկայումս գործող բաշխման համակարգը հնարավորություն չի տալիս պատշաճ կարգով և ամբողջովին մատուցելու բժշկական ծառայություններ պետական պատվերից օգտվող շահառուներին:<br>2. **Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները կուղղվեն հասարակության առավել կարիքավոր խմբերի համար անվճար կամ արտոնյալ պայմաններով նպատակային բժշկական ծառայությունների ձեռքբերմանը: Իսկ որոշ բժշկական ծառայությունների միջինում մոտ 15 տոկոս գների իջեցումը հնարավորություն կտա ձեռք բերել առնվազն 15 տոկոս ավելի բժշկական ծառայություններ, ինչը ենթադրում է, որ ՀՀ պետական բյուջեից հատկացվող նույն գումարների սահմաններում առավել շատ շահառուներ անհրաժեշտ բժշկական օգնություն կստանան: |
| 96. | **Դեղերի շուկայում միջազգային ստանդարտների, այդ թվում՝ պատշաճ արտադրական գործունեության (GMP) ստանդարտների ներդրման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում Պատշաճ արտադրության գործունեության (այսուհետ՝ ՊԱԳ) համակարգի ներդրումը և շարունակական կատարելագործումը որակյալ, արդյունավետ և անվտանգ դեղերի շրջանառության ապահովման կարևորագույն գործիքներից է: Բացի դրանից՝ ՊԱԳ-ի կանոնների առկայությունը երկրում և արտադրողների՝ ՊԱԳ-ի համապատասխանությունն այդ պահանջներին ուղղակիորեն նպաստում է դեղերի արտահանմանը, քանի որ ցանկացած երկիր, որտեղ ներդրված են դեղերի կանոնակարգման տարրական սկզբունքները, ՊԱԳ-ի համապատասխանության հավաստումը դեղի շրջանառության թույլտվության նախապայմաններից է: Միաժամանակ, կայացած ՊԱԳ-ի համակարգի առկայությունը հնարավորություն է ընձեռում ակտիվացնելու համագործակցությունը և անդամակցությունը միջազգային համապատասխան կառույցներին, որը հատկապես կարևոր նշանակություն ունի սահմանափակ հնարավորություններ ունեցող փոքր երկրների համար՝ առկա ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու և տեղական արտադրողների կողմից ՊԱԳ-ի համապատասխանության գնահատմանն ուղղված միջոցները կրճատելու տեսանկյունից:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կիրականացվեն դեղերի արտադրության լիցենզավորված անձանց դեղերի պատշաճ արտադրական գործունեության համապատասխանության գնահատումներ, որոնց արդյունքում արտադրողներին կտրամադրվի թերությունների մանրամասն նկարագրությամբ հաշվետվություն՝ հնարավորություն տալով մշակելու ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների ծրագիր:<br>ՊԱԳ-ի փորձագետների որակավորումը բարձրացնելու, կարողությունները և հմտությունները կատարելագործելու նպատակով կիրականացվեն շարունակական վերապատրաստումներ օտարերկրյա, ոլորտում առաջադեմ փորձ ունեցող պետություններում:<br>ՊԱԳ-ի կանոնների շարունակական ներդրման արդյունքում կստեղծվեն հիմնավոր երաշխիքներ՝ շրջանառվող դեղերի որակի ապահովման և միջազգային համագործակցության |

| | |
|---|---|
| | համար: Հայաստանը կանդամակցի դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային (PIC/S)՝ ստանալով լայն հնարավորություններ՝ դեղարտադրողների և դեղերի որակի վերաբերյալ տեղեկատվության արագ և մշտական փոխանակման, ինչպես նաև տեսչական հաշվետվությունների փոխճանաչման համար: Ստեղծված նախապայմանները զգալիորեն կխթանեն տեղական արտադրության դեղերի արտահանումը: |
| 97. | **Օտարերկրյա առաջադեմ փորձի հիման վրա կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի տեղայնացման և ներդրման վերաբերյալ**<br><br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Արձանագրային մոտեցումները հանդիսանում են բոլոր զարգացած երկրների առողջապահական համակարգերի հիմքը: Անկախ տվյալ երկրի որդեգրած ազգային առողջապահական մոդելներից՝ պատշաճ մշակված և տեղայնացված ուղեցույցները և գործելակարգերը թույլ են տալիս համակարգել արդի բժշկագիտական տեղեկատվությունը, նվազեցնել մատուցվող բուժծառայությունների որակական և ծավալային անհամաչափությունները, ապահովել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, իրականացնել որակի վերահսկման և շարունակական մասնագիտական կրթության  ծրագրեր, նպաստել ոլորտի իրավական դաշտի կարգավորմանը: Օգնելով բժշկին ընդունել իր պացիենտի համար լավագույն կլինիկական որոշումները՝ ուղեցույցները և գործելակարգերն անմիջականորեն ազդում են բուժման և ախտորոշման որակի ու անվտանգության վրա:<br>Նմանատիպ փաստաթղթերի բազան ՀՀ առողջապահական համակարգում խիստ թերի է, առկա օրինակները ոչ լիարժեք են, հաճախ իրարամերժ և հնացած: Իսկ փոքրաքանակ պատշաճ օրինակները կարիք ունեն հիմնավոր խմբագրման և թարմացման: Հետևաբար բացակայում է բուժծառայությունների ստանդարտեցման հնարավորությունը և կախված մատուցողից կամ վայրից այն կրում է գրեթե ամբողջովին կամայական բնույթ: Ավելին՝ գոյություն չունեն ուղեցույցների ներդրման և վերահսկման գործիքներ: Ուստի գերակա խնդրի նպատակն է՝<br>- լրացնել այս բացն առանձին հիվանդությունների և կլինիկական իրավիճակների համար՝ ստեղծելով կարգավորող  ուղեցույցների և գործելակարգերի փաթեթ,<br>- մշակել ուղեցույցների ներդրման, ընթացիկ վերահսկման և պարբերական վերանայման ուղիներ:<br>2015 թվականին ընդունվել և 2016 թվականի մայիսի 4-ից ուժի մեջ են մտնել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությունները և լրացումները, որոնց համաձայն ՀՀ առողջապահության նախարարին վերապահվել է լիազորություն ընդունելու՝<br>ա. կլինիկական ուղեցույցներ (բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների մշակած և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված կոնկրետ խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակը բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ ընդունելուն աջակցելն է,<br>բ. պացիենտի վարման գործելակարգեր (բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությանը, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ):<br><br>2. **Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Ուղեցույցների և գործելակարգերի առկայությունը և գործնական ներդրումը կունենա |

| | |
|---|---|
| | բազմակողմանի ազդեցություն ամբողջ առողջապահական համակարգի վրա: Ծրագրում ընդգրկված կլինիկական մասնագիտություններով առաջնահերթ կմշակվի և կտեղայնացվի մոտավորապես 300 կարգավորող փաստաթուղթ՝ արտահիվանդանոցային և հիվանդանոցային օղակների համար: Ակնկալվում են հետևյալ արդյունքները՝<br><br>- բուժծառայությունների որակական և ծավալային անհամաչափության նվազում: Ասել է թե, պացիենտը, դիմելով մարզային կամ մայրաքաղաքային բուժհաստատություն, վստահ կլինի, որ իրեն կմատուցվի համընդհանուր բնույթի և անհրաժեշտ ծավալի ծառայություններ,<br>- արտահիվանդանոցային ախտորոշիչ հետազոտությունների ոչ նպատակային ուղղորդումների կրճատում,<br>- ոչ հիմնավորված հոսպիտալիզացիաների քանակի նվազում,<br>- տվյալ ախտորոշմամբ հոսպիտալիզացիայի միջին տևողության նվազում,<br>- տարածված ախտորոշումների ուղղություններով միջին ծախսերի նվազում,<br>- կներդրվի որակի գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը՝ ծառայություններ մատուցողի գործընթացների համապատասխանությունն արդի բժշկագիտության նորմերին, որը հնարավոր կլինի կապել ֆինանսավորման ծավալներին,<br>- բուժաշխատողի և պացիենտի հարաբերությունները կարգավորող հիմնավորված և թափանցիկ իրավական դաշտի ձևավորում,<br>- առանձին ուղղություններով սկրինիզային ծրագրերում բնակչության ներգրավվածության մոտ 20% աճ, ինչը կհանգեցնի տվյալ ախտաբանության վաղ հայտնաբերման և լիարժեք բուժման հավանականության ավելացմանը,<br>- շարունակական մասնագիտական զարգացմանն արդյունավետության բարձրացում,<br>- առկա սկզբունքային մեթոդաբանական և նյութատեխնիկական բացերի լուսաբանում՝ օրինակ դեղեր, հետազոտություն, միջամտություն կամ գործելակարգ, որոնք պահանջվում են տվյալ հիվանդության վարման համար, բայց անհասանելի են կամ առկա չեն ՀՀ տարածքում: |
| 98. | **Էլ-առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>**1.Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Էլ-առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ առողջապահական համակարգն ընդգրկող բոլոր միավորների համար միասնական էլեկտրոնային հարթակ ստեղծելու միջոցով համակարգի կառավարման բարելավման և ծախս-արդյունավետության բարձրացման, պացիենտներին առավել որակյալ և ճշգրիտ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, առողջապահական համակարգում անհրաժեշտ բոլոր տվյալների հավաքագրմամբ, ավելի նպատակային և հասցեական քաղաքականության մշակմամբ:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Էլ-առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրման նպատակով սկզբնական փուլում գործընթացն սկսվել է պետական պատվեր իրականացնող շուրջ 500 պետական և ոչ պետական բժշկական հաստատություններում գործող ծրագրային համակարգի փոխարինմամբ էլ-առողջապահական տեղեկատվական համակարգով: 2017 թվականին իրականացվելիք փորձարարական փուլի արդյունքներով պլանավորվում է պետպատվերի բոլոր գործառնությունների (հաստատված ձևանմուշների լրացում, հարցումների ուղարկում ՊԱԳ և այլն) իրականացում էլ-առողջապահական տեղեկատվական համակարգում:<br>Բացի պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններում էլ-առողջապահական տեղեկատվական համակարգի |

| | |
|---|---|
| | ներդրումից՝ նախատեսվում է այն ներդնել նաև լիցենզավորված բոլոր բժշկական հաստատություններում, ինչը թույլ կտա մեկ միասնական հարթակում գրանցել և վարել բնակչության այցելությունների, բժշկական միջամտությունների, բժշկական պատմագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: |
| **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն** | |
| 99. | **Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովման մեխանիզմների մշակմամբ:<br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում: |
| 100. | **Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակմամբ և ներդրմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակում և ներդրում: |
| 101. | **Դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության հաստատման և ներդնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է դպրոցի զարգացման ծրագրի կազմման նոր մեթոդաբանության հաստատմամբ և ներդրմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Դպրոցի զարգացման ծրագրի կազմման նոր մեթոդաբանության հաստատում և ներդրում: |
| 102. | **Նախակրթարանները** 12-**ամյա կրթության համակարգում** (1+11) **ներառելու արդյունավետության ուսումնասիրության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետության ուսումնասիրությամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետության ուսումնասիրության արդյունքների ներկայացում: |

| | |
|---|---|
| 103. | **Գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի, հանրակրթական առարկաների ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռման վերաբերյալ՝ տեսադասերի հասանելիությունն ապահովելու միջոցով**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի, հանրակրթական առարկաների ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի, հանրակրթական առարկաների ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռում՝ տեսադասերի հասանելիությունն ապահովելու միջոցով: |
| 104. | **Բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովման վերաբերյալ՝ առնվազն 7-8 դասարանների համար**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի՝ առնվազն 7-8 դասարանների համար ապահովմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովում՝ առնվազն 7-8 դասարանների համար: |
| 105. | **Կրթական ծրագրերի վերանայման վերաբերյալ՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին՝ ներառելով ձեռնարկատիրության և ֆինանսական կրթության տարրեր**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է կրթական ծրագրերի վերանայմամբ՝ համապատասխանեցնելով դրանք արդի պահանջներին:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կրթական ծրագրերի վերանայում՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին՝ ներառելով ձեռնարկատիրության և ֆինանսական կրթության տարրեր: |
| 106. | **Արարատյան բակալավրիատի և կրթության գերազանցության ազգային ծրագրի ներառմամբ ազգային կրթակարգի վերջնական ձևավորման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Արարատյան բակալավրիատ» կրթության գերազանցության պետական ծրագրի՝ Ազգային կրթակարգում որպես առանձին բաղադրիչ ներառմամբ՝ ճանաչելը և տարածելն է:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրակրթական բովանդակության արդիականացում, Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգի համապատասխանեցում միջազգայնորեն ընդունված չափանիշներին՝ պահպանելով հայկական մտածելակերպը, ավանդույթները, մշակույթն ու արժեքները: |
| 107. | **Համընդհանուր ներառական կրթության ներդրման վերաբերյալ՝ ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման 7-րդ և 11-րդ կետերի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելիությունը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումը իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում: |
| 108. | **Իննամյա կրթությունից 12-ամյա պարտադիր կրթությանն անցման վերաբերյալ՝ ներառյալ մասնագիտական**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման 2.4.3.-րդ կետի պահանջներով, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված օրենքի պահանջն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 1-ից, անհրաժեշտություն է առաջանում կանոնակարգելու նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության գործընթացը՝ պայմանավորված պարտադիր կրթության հենքի վրա 12-ամյա կրթության անցմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի պարտադիր 12-ամյա միջնակարգ կրթության անցման կազմակերպման և իրականացման գործընթացի իրավական կարգավորումը: Նշված խնդրի լուծումը նպաստում է ՄԿՈՒ-ի համակարգում ընդգրկվածության աճին, ստեղծում է կրթության իրավահավասար պայմաններ՝ բոլոր քաղաքացիների համար: |
| 109. | **Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների ստեղծման և բարձրագույն կրթության ֆինանսական նոր մեխանիզմների մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ֆինանսավորման համակարգի բարեփոխմամբ և ուսանողների ֆինանսական աջակցության տրամադրման նոր սկզբունքների մշակմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ֆինանսական համակարգի բարեփոխման արդյունքում բուհական անձեռնմխելի ֆոնդերի գործարկման սկզբունքների և ուսանողների ֆինանսական աջակցության տրամադրման նոր սկզբունքներ մշակում:<br>**<u>Բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման</u>** |

| | |
|---|---|
| | <u>**հնգամյա գործընթացի սկիզբ**</u><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ցանցային համալսարանների ստեղծման տեղական մոդելների մշակմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**.<br>Տեղական մոդելների մշակումը հիմք կհանդիսանա բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի համար: |
| 110. | **Բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի սկզբի վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ցանցային համալսարանների ստեղծման տեղական մոդելների մշակմամբ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տեղական մոդելների մշակումը հիմք կհանդիսանա բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի համար: |
| 111. | **Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությանը և դրա փորձնական ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակը դպրոցական կայուն սննդի համակարգ ստեղծելն է, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով:<br>Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվում է դպրոցական սննդի ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության 6 մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների շուրջ 50000 սովորող: ՄԱԿ-ի ՊՀԾ-ն նախատեսում է շարունակել դպրոցական սննդի ծրագիրը՝ ընդլայնելով ծրագրի աշխարհագրությունը և շահառուների թիվը:<br>Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման ծրագիրն իրականացվում է ՀՀ մարզերի միջոցով, մարզպետարանը գումարն ընթացիկ դրամաշնորհի տեսքով բաշխում է իր ենթակայության տարրական դասարաններ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև, որոնք էլ իրականացնում են ծրագիրը՝ հիմք ընդունելով պետական դրամաշնորհներին վերաբերող օրենքներն ու այլ իրավական ակտերը, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2017 թվականին ՀՀ Տավուշի մարզում կիրականացվի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը, որի արդյունքում |

| | |
|---|---|
| | շահառուների թիվը կկազմի 6157: |
| **Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն** | |
| 112. | **Մշակութային արտադրանքի և ծառայությունների խթանման վերաբերյալ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը ժամանակակից սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական պայմաններում թանգարանային և գրադարանային ոլորտների դերն անհատի, հասարակության մշակութային կրթության, դաստիարակության, ճաշակի, աշխարհայացքի ձևավորման գործում մեծացնելն է: Ժամանակակից տեղեկատվական և տեխնիկական միջոցների զարգացմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջացել վերանայել թանգարանների և գրադարանների կողմից մատուցվող ծառայությունները: Լրջորեն վերանայման կարիք ունի մշակութային ժառանգությանը վերաբերող հուշանվերային արտադրանքի ստեղծման ձևաչափը՝ ժամանակակից նյութերի ու տեխնոլոգիաների կիրառմամբ: Մշակութային օջախներն ավելի գրավիչ, նորովի ներկայացնելու, այցելուների հետաքրքրությունը դրանց նկատմամբ մեծացնելու և այցելությունների կազմակերպումն առավել մատչելի դարձնելու համար անհրաժեշտ է կապի ժամանակակից միջոցների կիրառմամբ ստեղծել վիրտուալ հարթակներ, ներդնել միասնական էլեկտրոնային տոմսային համակարգ: Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը միտված կլինեն հասարակությանը մշակութային ժառանգությանն ու արվեստի նոր զարգացումներին հաղորդակից դարձնելուն, մշակութային ժամանցի նոր ձևերի մշակմանն ու ներդրմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում կապահովվի Հայաստանի մշակութային ժառանգությունն առավելագույնս ներկայացնող թանգարանային հուշանվերային արտադրանքի մատուցումը, կխթանվի մշակութային արդյունաբերությունը, թանգարանների և գրադարանների տնտեսական զարգացման համար կստեղծվեն ֆինանսական միջոցների ձեռքբերման նոր աղբյուրներ, կներդրվի միասնական էլեկտրոնային տոմսային համակարգ, ինչը հնարավորություն կտա յուրաքանչյուր քաղաքացուն կամ զբոսաշրջիկին միանգամից ձեռք բերելու մշակութային օջախների այցելության փաթեթներ: Ժամանակակից կապի և տեղեկատվական միջոցների կիրառմամբ կստեղծվեն մշակութային բջջային հավելվածներ, որոնք կուղղորդեն դեպի մշակութային կազմակերպություններ, կիրազեկեն թանգարաններում կամ այլ մշակութային կազմակերպություններում ընթացիկ և նախատեսվող միջոցառումների մասին: Կրթական ծրագրերի, մտավոր ժամանցի նոր ձևերի կազմակերպման, ժամանակավոր ցուցադրությունների միջոցով կապահովվի հասարակության տարբեր տարիքային խմբերի ներգրավումը մշակութային կյանքին և կստեղծվեն նպաստավոր պայմաններ մշակութային արժեքներին հաղորդակցվելը մատչելի դարձնելու համար: |
| 113. | **Հանրության շրջանում հայրենասիրական ոգու բարձրացմանն ուղղված ստեղծագործական ծրագրերի իրականացման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի հիմնական նպատակը հանրության շրջանում հայրենասիրական ոգու բարձրացումը, հոգևոր-մշակութային արժեքների պահպանումն ու տարածումը, քաղաքացիական գիտակցության բարձրացումը, արժեքային կողմնորոշումների դրական դաշտի ձևավորումը, բանակ-հասա- |

| | |
|---|---|
| | րակություն կապի ընդլայնումն է: Առաջնային խնդիրներից է ազգային և պետական արժեքների արմատավորումը, մատաղ սերնդի և երիտասարդության քաղաքացիական, հայրենասիրական, հոգևոր-մշակութային դաստիարակությունը, հասարակության և պետականության խնդիրների լուծման գործընթացներում երիտասարդության ներգրավվածությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի կատարման արդյունքում նախատեսվում է իրականացնել թատերահամերգային նախագծեր, կինոցուցադրություններ, մշակույթի անվանի գործիչների ստեղծագործական հանդիպումներ, սահմանամերձ համայնքներում նպատակային ծրագրեր և այլ նախագծեր, որոնք ուղղված կլինեն հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմանը, հոգևոր-մշակութային զարգացմանը, հայրենասիրական գիտակցության, բարձր ոգեղենության և քաղաքացիական դիրքորոշման կայացմանը, ազգային հենքով և ավանդական արժեքային համակարգով մատաղ սերնդի ձևավորմանը, հայրենիքի ու պետականության արժեքների նկատմամբ նվիրվածության բարձրացմանը և ազգային հիմնահարցերի շուրջ հասարակության համախմբմանը: |
| 114. | **Մշակութային ժառանգության ոլորտում տնտեսական բաղադրիչի մեծացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը, օգտագործելով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզի կամ համայնքի մշակութային ներուժը, տնտեսական զարգացման համար նոր այլընտրանքային մեխանիզմներ մշակելն է, բոլոր մարզերի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակումն ապահովելն է, ինչպես նաև համայնքներում մշակութային և տնտեսական կյանքի ակտիվացումն է: Վերանորոգված թանգարանների վերաբացման, արգելոց-թանգարանների նոր ցուցադրությունների ձևավորման, հոբելյանական ցուցահանդեսների կազմակերպման, ազգային ավանդական մշակույթի տարրերին նվիրված փառատոների իրականացման միջոցով ստեղծել նպաստավոր պայմաններ համաշխարհային նշանակության հայկական մշակութային արժեքների և միջազգային ճանաչում ունեցող հայ մտավորականների ստեղծագործական ներուժի հանրահռչակման համար: Իրականացվող միջոցառումները նպատակաուղղված կլինեն մարզերի մշակութային գրավչության զարգացմանը, համայնքների բնակչության համար իրենց ավանդույթների և կենցաղի պարզ օգտագործմամբ տնտեսական բարեկեցության ապահովմանը, երկրի մշակութային գործընթացներին լիարժեք ներգրավվմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման արդյունքում կվերաբացվեն անվանի արվեստագետների վերանորոգված տուն-թանգարաններ, կկազմակերպվեն անվանի հայ մտավորականների հոբելյանական միջազգային և հանրապետական ցուցահանդեսներ, կձևավորվի հնագիտական արգելոց-թանգարանի նոր մշտական ցուցադրություն, կանցկացվեն ավանդական փառատոներ, կհրատարակվեն հուշարձանների վերաբերյալ կատալոգներ, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ճանապարհների քարտեզ, կամրակայվեն և կթանգարանացվեն հնագիտական վայրեր: Իրականացվող միջոցառումները կնպաստեն ներգնա և ներքին մշակութային զբոսաշրջության խթանմանը, թանգարանային գործի ընդլայնմանը: Կստեղծվեն նպաստավոր պայմաններ հայ մշակույթի և ազգային ինքնության պահպանման, զարգացման, հանրահռչակման, նորովի ներկայացման, սերունդներին փոխանցման, Հայաստան այցելողների շրջանում հայկական մշակութային ժառանգության ճանաչողության բարձրացման համար: |

**Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

115.

**Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացում, այդ թվում՝ սոցիալ-ժողովրդագրական ուղղվածություն ունեցող պետական կարգավորման նոր մոտեցումների ներդրման վերաբերյալ**

1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացումը, որպես գերակա խնդիր սահմանելը, բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության գործունեության հիմնական ուղղություններից:

Ընտանիքների անապահովության գնահատման նոր մոտեցումների և մեթոդաբանության ներդրումը գործնականում լիարժեք հնարավորություն կստեղծի զբաղվածության պետական աջակցությամբ նպաստառու ընտանիքի աշխատունակ անդամի զբաղվածության (ինքնազբաղվածության) ապահովման համար: Մասնավորապես, աշխատանքային տարիքի աշխատունակ ընտանիքի անդամ ունեցող ընտանիքների անապահովության գնահատման բանաձևում ընտանիքի չզբաղված անդամը կարող է ստանալ օրինակ՝ «0» միավոր, զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնում հաշվառված գործազուրկը՝ «10» միավոր, «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի իմաստով զբաղվածը՝ «15» միավոր, առանձին կատեգորիայի անմրցունակ գործազուրկները՝ «20» միավոր (առաջին խմբի հաշմանդամ, երեք ամսից ավելի հաշվառված գործազուրկ և այլն): Ընտանիքների անապահովության գնահատման նոր մոտեցումների և մեթոդաբանության ներդրումը ենթադրում է ընտանիքի եկամուտների, հատկապես՝ զբաղվածությունից ստացվող, ազդեցության կշռի էապես բարձրացում՝ որպես առանձին կոմպոնենտ:

Կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելու նպատակով նախատեսվում է սահմանել և գործարկել գործատուներին միանվագ փոխհատուցում (պետական սուբսիդիայի) տրամադրելու նոր ընթացակարգ, մասնավորապես, անհրաժեշտ է ըստ գործազուրկների կատեգորիաների միանվագ փոխհատուցման չափերի սահմանում, գործատուների համար հրապարակային առաջարկների ներկայացում, պետություն-գործատու-գործազուրկ եռակողմ պայմանագրերի և դրանց ժամկետների սահմանում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ աշխատանքի ընդունվող գործազուրկի համար վճարվող եկամտային հարկն առնվազն երկու անգամ պետք է գերազանցի միանվագ փոխհատուցման գումարի չափը, պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում՝ որպես միանվագ փոխհատուցում տրված գումարի հետ զանձման ամբողջական մեխանիզմի սահմանում, միանվագ փոխհատուցման տրամադրման համար առաջնահերթությունների սահմանում՝ ըստ գործատուների (փոքր կամ միջին ձեռնարկություն, նոր ստեղծվող, նոր աշխատատեղ ունեցող, բարձր լեռնային, սահմանամերձ բնակավայրում գործող և այլն), ըստ շահառուների կատեգորիաների, արդյունքի վրա հիմնված ամբողջական մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրում:

Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կստեղծվեն զբաղվածության պետական ծրագրերի իրականացման գործընթացներն ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով կազմակերպելու համար անհրաժեշտ տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև կիրականացվեն մի շարք իրազեկման միջոցառումներ, մասնավորապես, պարբերական հանդիպումներ, այցելություններ համայնքներ, ուղեցույցների տրամադրում, ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցով զովազդ և այլն:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացումը կնպաստի գործազուրկների կայուն զբաղվածության ցուցանիշի էական մեծացմանը, ինչպես նաև զբաղվածության պետական քաղաքականության

| | |
|---|---|
| | իրականացման գործընթացում գործատուների մասնակցության շրջանակների ընդլայնմանը: |
| 116. | **Կամավոր աշխատանքի բազմոլորտ ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կամավոր աշխատանքի բազմոլորտ ներդրմանն անհրաժեշտ հիմքերի ապահովումը ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության գործունեության հիմնական ուղղություններից է: Կամավորական գործունեությունն ու կամավոր աշխատանքը, հանդիսանալով կամավորության վրա հիմնված, անվարձահատույց, սոցիալական ուղղվածությամբ հանրօգուտ գործունեություն, մշտապես եղել և մնում են քաղաքացիական հասարակության ուշադրության ներքո: Նմանատիպ գործունեության և աշխատանքի հիմքում ընկած է ոչ թե նյութական, այլ սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարումը:<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները որոշակիորեն կարգավորված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:<br>Սակայն, ոլորտի ոչ ամբողջական կարգավորումն ու դրանում առկա մի շարք խնդիրները խոչընդոտում են ոլորտի կայացմանն ու հետագա զարգացմանը՝ պահանջելով համապատասխան լուծումներ:<br>Կամավոր աշխատանքի բազմոլորտ ներդրումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ցանկում ներառված են «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի և «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծերի մշակումը:<br>Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի բազմոլորտ ներդրման կարգավորումների ամրագրմամբ կսահմանվեն կամավորական աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու մեխանիզմները, կամավորական գործունեության սկզբունքները, նպատակները, ոլորտներն ու ձևերը, կապահովվեն կամավորի ինստիտուտի կայացման և զարգացման, կամավոր աշխատանքների խթանման, քաղաքացիական հասարակության կյանքում վերջինիս դերի բարձրացման նախապայմանները:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է<br>1) կամավորական գործունեության ու կամավոր աշխատանքի բնագավառի օրենսդրության կատարելագործում, մասնավորապես, «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգի, ապա նաև «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում.<br>2) կամավորի ինստիտուտի ձևավորման, կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ոլորտների ամրագրման, կամավոր աշխատանքի հետ կապված իրավական, սոցիալական, ինչպես նաև այլ երաշխիքների սահմանման, կամավորի ինստիտուտի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման արդյունքում կամավոր աշխատանքում քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակների ներգրավում: |
| 117. | **Աշխատավարձի և սոցիալ-աշխատանքային նվազագույն երաշխիքների համակարգի արմատական վերանայման վերաբերյալ՝ ներդրումային միջավայրի և կայուն զբաղվածության պայմանների բարելավման նպատակով**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդիրը նպատակը ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4.2-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված աշխատանքային հարաբերու- |

| | |
|---|---|
| | թյունների ձևավորման, փոփոխման և դադարման նոր ճկուն մեխանիզմների նախատեսումն է՝ հատկապես փոքր և գերփոքր ձեռնարկությունների համար:<br>ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և սոցիալ-տնտեսական զարգացման միտումների համալիր հաշվառմամբ նախատեսվում է օրենսդրական կարգավորումների համալիր վերանայում հետևյալ ուղղություններով՝<br>1) նվազագույն աշխատավարձ.<br>2) հավելումներ, հավելավճարների, լրավճարներ.<br>3) լրացուցիչ և երկարացված արձակուրդներ.<br>4) աշխատողի համար սահմանված նվազագույն երաշխիքներ և հատուցումներ:<br>Մասնավորապես, նախատեսվում է ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի սահմանման գործընթացը համապատասխանեցնել միջազգային գործարար փորձում կիրառվող մոտեցումներին, որը կընդգրկի պետության, գործատուների և աշխատողների ներկայացուցիչների հավասար ներգրավվածությունը՝ եռակողմ համաձայնեցման կոմիտեներում բանակցային լուծումներ որոնելու և գտնելու լիարժեք հնարավորություններով:<br>Բացի դրանից՝ կվերանայվեն աշխատավարձի լրացուցիչ մասի՝ հավելումների, հավելավճարների և լրավճարների սահմանման կարգավորումները՝ նպատակ ունենալով առանձնահատուկ կարգավորումներ նախատեսել  հատկապես փոքր և գերփոքր ձեռնարկությունների համար:<br>Հավասարապես կարևոր է նաև աշխատողներին տրամադրվող արձակուրդի, այդ թվում՝ նվազագույն, լրացուցիչ և երկարացված, տևողությունների գնահատումը, ինչպես նաև այդպիսի իրավունք ունեցող մասնագիտությունների և պաշտոնների ցանկի վերանայումը՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:<br>ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ աշխատողների համար սահմանված հատուցումները և երաշխիքները որոշ դեպքերում թերի են դրանց հասցեատերերի ոչ ամբողջական ընդգրկվածության կամ այդպիսի երաշխիքների տրամադրման համար ոչ արդարացի պայմանների առկայության պատճառով:<br>Գերական խնդրի լուծման շրջանակներում նախատեսվում է նաև բարեփոխումների վերաբերյալ հանրային լայն իրազեկում, այդ նպատակով անհրաժեշտ և արդյունավետ գործիքների ձևավորում, հատկապես՝ աշխատանքային հարաբերությունների կողմերի համար:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է՝<br>1) միջազգային փորձին և ՀՀ-ի կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին համապատասխանող՝ նվազագույն աշխատավարձի սահմանման գործիքակազմի առկայություն.<br>2) լրացուցիչ աշխատավարձերի, աշխատողներին տրամադրվող հատուցումների և երաշխիքների գործող կարգավորման ավելորդ սահմանափակումների վերացում, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքների իրացման համար առավել ճկուն և կայուն զարգացման համար առավել լայն հնարավորություն ապահովող իրավական հիմքերի առկայություն.<br>3) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրազեկվածության և իրավագիտակցության մակարդակի բարձրացում: |
| 118. | **ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի  և ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու) վերաբերյալ  տեղեկատվության փոխանակության համակարգի մշակման և ներդրման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետական կենսաթոշակների և նպաստների իրավունքն իրացնելիս անհրաժեշտ է, որ անձը |

| | |
|---|---|
| | ներկայացնի ՔԿԱԳ-ի մարմինների կողմից գրանցված՝ ծննդյան ակտի, ինչպես նաև ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու) վերաբերյալ տեղեկատվություն:<br>Ի կատարումն ՀՀ կառավարության ծրագրի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման վերաբերյալ դրույթների, նախատեսվում է մշակել և ներդնել ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու) վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՔԿԱԳ-ի մարմինների հետ գրանցված ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու) վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգի մշակումն ու ներդրումը հնարավորություն կտա պետական կենսաթոշակների և նպաստների իրավունքն իրացնելիս անհրաժեշտ տեղեկատվությունն ստանալ նշված համակարգի միջոցով, ինչն իր հերթին նշանակում է, որ կկրճատվի քաղաքացիների կողմից ներկայացման ենթակա փաստաթղթերի թիվը, կբարձրանա կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու գործընթացի արդյունավետությունը: |
| 119. | **Գնահատված սոցիալական կարիքի հիման վրա ծառայությունների տրամադրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 35-րդ, 36-րդ հոդվածներով սահմանված է անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքների համալիր գնահատման հիման վրա՝ միջգերատեսչական և սոցիալական համաձայնագրի շրջանակներում աջակցող ցանցի համագործակցության արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը:<br>Սակայն, գործընթացին մասնակից տարբեր գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները դեռևս չեն կարողանում գործակցել համաձայնեցված աշխատաոճով՝ ծառայության մատուցման ընթացքում նրանց միջև կապի խզումը և (կամ) տեղեկատվության չտրամադրումը բերում է ակնկալվող արդյունքների նվազեցման կամ դրանց իսպառ բացակայության:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ընտանիքի սոցիալական կարիքների գնահատումը, դրա հիման վրա անհատական սոցիալական ծրագրի կազմումը, համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրումն աշխատողներից պահանջում է սոցիալական աշխատանքի պրոֆեսիոնալ գործունեություն և համապատասխան գիտելիքներ, ուստի նրանց կարողությունների հզորացման՝ վերապատրաստումների ընթացքում, մասնավորապես, աշխատատեղում, կոնկրետ օրինակներով, կունենանք վերապատրաստված մասնագետներ, որոնք բնակչությանը կտրամադրեն որակյալ սոցիալական ծառայություններ:<br>Հանդիպումների, քննարկումների, տեղերում ուսուցման դասընթացների կազմակերպումը հնարավորություն կտա բարձրացնելու սոցիալական աշխատողների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները՝ դեպքերի սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառման վերաբերյալ, որն էլ կբերի սոցիալական կարիքներին համապատասխան տրամադրվող ծառայությունների տրամադրման արդյունավետության բարձրացմանը:<br>«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի 4.1.9-րդ կետով սահմանված է, որ աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորումում կարող են քննարկվել տվյալ տարածաշրջանի սոցիալական բնույթի էական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց ընթացքում կձևավորվեն տվյալ շրջանին բնորոշ խնդիրների օպտիմալ լուծումներ:<br>Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը ենթադրում է համագործակցության և |

| | |
|---|---|
| | հասանելի ռեսուրսների որոնման միջոցով և անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման հիման վրա իրականացվող գործընթաց, և համապատասխան սոցիալական ծառայությունները տրամադրելու են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածի կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված)՝ համագործակցության համաձայնագրի շրջանակներում, այդ թվում՝ պետական և տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում: Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրով սահմանված են համակարգող խորհրդի լիազորություններին և գործառույթներին վերաբերող դրույթներ: Մասնավորապես, համակարգող խորհուրդն ապահովում է ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում համագործակցող կողմերի արդյունավետ փոխգործակցությունը: Իրականացվելիք աշխատանքները հնարավորություն կտան իրականացնել սոցիալական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիթորինգի մասնակցային գործընթացի ապահովումը: |
| 120. | **Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արմատական փոփոխությունների և հաշմանդամության սահմանման նոր՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված մոդելի ներդրման համար նախադրյալների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփոխումները հիմնված են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) պահանջների վրա, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականին:<br>Բարեփոխումներն ուղղված են մի կողմից բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արմատական փոփոխություններին, մյուս կողմից հաշմանդամության գնահատման մոդելի վերանայմանը:<br>Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արդյունավետության և օբյեկտիվության բարձրացման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով անհրաժեշտ է կատարել համակարգի արմատական փոփոխություններ՝ վերանայելով բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմինների գործառույթները և փոխհարաբերությունները, հնարավորինս սահմանափակելով քաղաքացիների և փորձաքննական որոշում կայացնողների ուղղակի շփման հնարավորությունը: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ձևավորել որոշումների կայացման կենտրոնացված համակարգ, ներդնել անկախ վերահսկողական մեխանիզմ, սահմանել անձի առողջության վերաբերյալ բժշկական տվյալների ստացման հստակ մեխանիզմներ՝ դրանց հավաստիության վերաբերյալ պատասխանատվությունը վերապահելով բժշկական կազմակերպություններին:<br>Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արմատական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի ժամանակ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականից:<br>Նոր մոդելի մշակման պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի նիստի N 1 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգում: ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի N 1139-Ն հրամանով ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության դասակարգիչը հաստատվել է որպես ազգային ստանդարտ:<br>Հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման ուղղությամբ 2015-2016 թթ. ընթացքում մշակվել են հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչները (գործիքներ), որոնց հիմքում ընկած են ԱՀԿ ՖՄԴ-ի սկզբունքները: Մշակված գործիքները փորձարկվել են բժշկա- |

| | |
|---|---|
| | սոցիալական փորձաքննական տարբեր հանձնաժողովներում, որի արդյունքում վեր են հանվել որոշակի խնդիրներ, քննարկվել են դրանց կարգավորման ուղիները: Հնարավոր ռիսկերից խուսափելու և սոցիալական լարվածություն չառաջացնելու համար նպատակահարմար է մոդելը փորձնական կիրառել բժշկասոցիալական փորձաքննության համար առաջին անգամ դիմած անձանց նկատմամբ: Այս գործընթացում ուշադրության կենտրոնում են լինելու անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա վերականգնողական անհատական ծրագրերը:<br>2017 թվականին, որպես նոր մոդելի ներդրման առաջին փուլ, նախատեսվում է գործընթացում ներգրավել առողջապահության ոլորտը: Նոր մոդելի շրջանակներում հաշմանդամ չճանաչված անձանց կտրամադրվի անհատական վերականգնողական ծրագիր՝ համապատասխան ծառայություն ստանալու համար: Առաջին փուլի ավարտից հետո կիրականացվի վերլուծություն՝ ֆինանսական գնահատական տալու նպատակով:<br>Փորձնական կիրառման ամբողջական արդյունքների վերլուծության հիման վրա կմշակվեն առաջարկություններ՝ մոդելի ամբողջական ներդրման համար:<br>Անհրաժեշտ է նաև վերապատրաստումների կազմակերպումը՝ գործընթացում ներգրավված մասնագետներին համապատասխան գիտելիքներ տրամադրելու նպատակով: Տարվա ընթացքում տարբեր զանգվածային լրատվամիջոցներով բնակչությանը կտրամադրվի տեղեկատվություն իրականացվող աշխատանքների վերաբերյալ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) բժշկասոցիալական փորձաքննութան նոր համակարգի ձևավորում.<br>2) հաշմանդամության սահմանման հստակ՝ հիվանդությունները հաշմանդամությունից տարանջատող չափորոշիչների առկայություն.<br>3) հաշմանդամության սահմանման գործընթացում նոր մոդելի փորձնական կիրառման հիման վրա վերլուծությունների իրականացում և մոդելի ներդրման համար առաջարկությունների ներկայացում.<br>4) անձի կարիքների գնահատման արդյունքում հասցեական վերականգնողական ծառայությունների տրամադրման ապահովում: |
| 121. | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպում երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների վերակազմակերպելու գործընթացը պայմանավորված է խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների ցանցի զարգացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև այն բխում է ՀՀ կառավարության ծրագրի հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 5-րդ կետի դրույթից:<br>Գործընթացի նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումն է, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի, երեխայի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանության երաշխիքների, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելման ապահովումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող, մասնավորապես, 0-6 տարեկան երեխաների խնդիրների հայտնաբերումը, կանխարգելումը և վաղ միջամտությունը:<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության 12 հաստատություն, որից՝ 6-ը երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատություն (մանկատուն) է, իսկ 6-ը՝ երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններ: Վերջիններիս գործունեության նպատակն ընտանիք- |

| | |
|---|---|
| | ների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումն է: Ներկայումս նախարարության համակարգի երեխաների խնամքի գիշերօթիկ 6 հաստատություններում իրականացվում է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 540 երեխայի խնամք: Վերջին տարիներին մոնիթորինգային դիտարկումները պարզում են, որ այդ հաստատություններում խնամվող երեխաների մի մասը, պայմանավորված հաստատության գտնվելու վայրով, հնարավորություն ունեն գիշերելու տանը (ընտանիքում)՝ շարունակելով ստանալ աջակցության ծառայություններ տվյալ հաստատությունում: Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հանրապետությունում դեռևս բավարար չեն երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալական աջակցության ծառայություններ տրամադրող կառույցները, նպատակահարմար է գործող հաստատությունները վերակազմակերպել այլընտրանքային ծառայություններ տրամադրող կառույցների: Նոր ստեղծվող կառույցները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին, ըստ գնահատված կարիքների, կտրամադրեն մասնագիտական ծառայություններ, այդ թվում՝ աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին: Նախատեսվում է ուսումնասիրել և գնահատել հաստատությունների բեռնաթափման հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, մշակել դրանց վերակազմակերպման վերաբերյալ առաջարկներ և ձեռնարկել դրանց իրականացմանն ուղղված համապատասխան միջոցառումներ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կիրականացվի նախարարության համակարգի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների գնահատում, արդյունքում կներկայացվեն նրանց հետագա խնամքի կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ: Կմշակվեն և կհաստատվեն երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների ստեղծման պլան-ժամանակացույցը և հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպմանն ուղղված իրավական ակտերը: Կվերակազմակերպվեն և կբեռնաթափվեն նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն, Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն), դրանցում խնամվող երեխաները կվերադառնան կենսաբանական ընտանիքներ, կստեղծվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող այլընտրանքային կառույցներ: Կմշակվեն հաստատությունների աշխատողների վերապատրաստման մոդուլները, կիրականացվեն վերապատրաստման ու վերաորակավորման միջոցառումներ: |
| 122. | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մասնագիտացված մանկատներ) ծառայությունների դասակարգման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մասնագիտացված մանկատներում մատուցվող ծառայությունների դասակարգման գործընթացը պայմանավորված է ՀՀ երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, երեխաների խնամքի հաստատություններում երեխաների խնամքի բարելավման, ըստ երեխաների |

| | |
|---|---|
| | առողջական վիճակի՝ խնամքի ծառայությունների տարանջատման անհրաժեշտությամբ:<br>Նախարարության համակարգի մանկատներից 3-ը՝ հատուկ տիպի (մասնագիտացված), իրականացնում են ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռք բերովի ֆիզիկական ու մտավոր խնդիրներով երեխաների խնամքը: Մասնագիտացված մանկատներում խնամվում է շուրջ 350 երեխա և 18 տարեկանը լրացած՝ շուրջ 100 չափահաս անձ: Մանկատներում երեխաները հիմնականում ստանում են միասնական խնամք և, ելնելով նրանց առողջական վիճակից, համապատասխան ծառայություններ:<br>Մանկատանը խնամվող երեխաներին տրամադրվող խնամքը և ծառայություններն անհրաժեշտ է դասակարգել՝ հաշվի առնելով խնամվողների բժշկական, վերականգնողական, ուսումնադաստիարակչական և շուրջօրյա ընդհանուր բնույթի խնամքի առանձնահատկությունները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի մասնագիտացված մանկատներում տրամադրվող ծառայությունների տեսակների տարանջատում՝ ըստ երեխաների առողջական վիճակի, ըստ նրանց գնահատված կարիքների և համապատասխան չափորոշիչների մշակում:<br>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում (մասնագիտացված մանկատներում) խնամվող երեխաների խնամքի, կյանքի որակի բարելավում, նրանց ինտեգրում հասարակություն, երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցում միջազգային չափանիշներին: |
| 123. | **Ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ուղղությամբ բարեփոխումների իրականացման վերաբերյալ**<br><br>1.**Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության ծրագրի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 1-ին կետից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակից, երբ երկիրը թևակոխել է ծերացող բնակչություն ունեցող երկրների շարքը՝ իր տնտեսական ու սոցիալական բոլոր հետևանքներով: Այն համապատասխանում է նաև ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական խորհրդի կողմից ընդունված՝ Ծերության խնդիրների վերաբերյալ Մադրիդի միջազգային գործողությունների պլանի ռեգիոնալ իրականացման ռազմավարության դրույթներին:<br>Բնակչության ծերացումը գլոբալ, անխուսափելի և կանխատեսելի գործընթաց է, որը նաև լրջագույն ազդեցություն է թողնում սոցիալական ապահովության, սոցիալական ծառայությունների և հանրային առողջապահական ծառայությունների մատուցման գործընթացի վրա: Այս փոփոխությունները նպաստում են նաև սոցիալական և առողջապահական ծառայությունների նկատմամբ մարդկանց պահանջարկի ավելացմանը՝ միաժամանակ նվազեցնելով աշխատող և եկամուտ ստեղծող բնակչության քանակը:<br>Հայաստանի առջև ծառացած է երկրի ծերացման հետ կապված և դրանից բխող հիմնախնդիրները լուծելու մարտահրավեր:<br>Պայմանավորված ծերացման հիմնախնդիրները լուծելու և տարեց մարդկանց համար գոյության արժանապատիվ պայմաններ ապահովելու նոր մոտեցումներ որդեգրելու, երկրի առջև ծառացած նոր մարտահրավերներին պատասխանելու, նոր առաջնահերթություններ ուղենշելու անհրաժեշտությամբ, մշակվելու և իրականացվելու են մի շարք միջոցառումներ, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում բնակչության ծերացման հետևանքների |

| | |
|---|---|
| | հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 31 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ, որը կուղենշի տարեցների հիմնահարցերի ոլորտում սոցիալական քաղաքականության տեսլականն առաջիկա տարիների համար: Գործողությունների ծրագրի նպատակը տարեցների կյանքի արժանապատիվ կենսապայմանների ապահովումն է, այս ոլորտում համագործակցության զարգացումը, ծառայությունների պատվիրակումը ոչ պետական կազմակերպություններին՝ մրցակցային սկզբունքով, տարեցներին ծառայությունների տրամադրման այլընտրանքային մոդելների ներդրումը, վճարովի ու համավճարի հիմունքներով տարեցներին տրամադրվող այլընտրանքային ծառայությունների իրականացման ներդրումային ծրագրերի մշակումը և իրագործումն է և այլն:<br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի շրջանակում իրականացվելիք միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ կբարեփոխվի Հայաստանի Հանրապետությունում տարեցների սոցիալական պաշտպանության համակարգը՝ ընդլայնելով տարեցներին ու հաշմանդամներին տրամադրվող սոցիալական ծառայությունների շրջանակը, կներդրվեն նոր ծառայությունների մոդելներ, կորդեգրվեն ծառայությունների տրամադրման նոր մոտեցումներ՝ հիմնված տարեցների գնահատված կարիքների վրա, այդ թվում նաև՝ վճարովի ծառայություններ:<br>Կմշակվեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ծերացման հետևանքների հաղթահարմանն ու տարեցների կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ ուղղված տարեց մարդկանց համար գոյության արժանապատիվ կենսապայմաններ ունենալու՝ նրանց սահմանադրական իրավունքի իրացմանը: |
| 124. | **Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ամբողջական ներդրման համար նախադրյալների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 30 տոկոսն ուղղվում է սոցիալական պաշտպանության ոլորտին, որի շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվում է շուրջ 83 ծրագիր, խիստ կարևորվում է մշտադիտարկման և գնահատման ամբողջական համակարգի առկայությունը:<br>Գերակա խնդիրը բխում է նաև ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման հավելվածի 1.4-րդ կետի «Սոցիալական քաղաքականություն» բաժնի 7-րդ ենթակետի դրույթից:<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման համակարգի հիմնական նպատակներն են՝<br>• սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունները սահմանելու նպատակով առկա խնդիրների բացահայտումը,<br>• իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը,<br>• շահառուների և այլ շահագրգիռ կողմերի ծրագրերից բավարարվածության աստիճանի գնահատումը,<br>• ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Դեռևս 2013 թվականից սկսվել է մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացը, որի շրջանակում մշակվել է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (ծառայությունների) ՄԳ-ի համակարգի ներդրման հայեցակարգը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է ծրագրերի ՄԳ-ի կարգը և մեթոդաբանությունը: Նշված մեթոդաբանությամբ իրականացվել է շուրջ 20 ծրագրի (զբաղվածության, տարեցների և երեխաների հիմնահարցերի բնագավառներ) ՄԳ, որի արդյունքներով կազմված հաշվետվությունները ներկայացվել են բոլոր շահագրգիռ կողմերի քննարկմանը:<br>Մշտադիտարկման և գնահատման գործընթացում մեթոդաբանության կիրառման և միջազգային փորձագետների հետ համագործակցության արդյունքում ՄԳ-ի կարգը և մեթոդաբանությունը լրամշակվել են և համապատասխան իրավական ակտով սահմանվել են ՄԳ-ի իրականացման հետևյալ հիմնական փուլերը՝<br>• ծրագրերի (ծառայությունների) մասին տեղեկանքների, ՄԳ-ի անձնագրերի և ցուցանիշների (քանակական և որակական) մշակում,<br>• համակարգում առկա տեղեկատվական շտեմարաններից քանակական ցուցանիշների առցանց ստացում, որակական ցուցանիշների հավաքագրման նպատակով ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացում,<br>• ՄԳ-ի ցուցանիշների վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծություն և ծրագրերի գնահատում<br>• ամփոփ հաշվետվության կազմում և գնահատման արդյունքներով ի հայտ եկած խնդիրների և թերությունների լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում,<br>• ծրագրերի ՄԳ-ի արդյունքների հրապարակում:<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է 2017 թվականի ավարտին ունենալ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող՝ գնահատված 41 ծրագիր, մնացած 41 ծրագրերի համար կմշակվեն ՄԳ-ի իրականացման համար գործիքակազմը, ինչպես նաև ՄԳ-ի էլեկտրոնային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը:<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի համապատասխան բնագավառներում ՄԳ-ի արդյունքներով ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակել ծրագրերի կիրարկումն ապահովող իրավական ակտերը, բարձրացնել այդ ծրագրերի արդյունավետությունն ու հասցեականությունը, ապահովել շահառուների գնահատված կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցումը, ինչպես նաև կանխել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը: |
| 125. | **Սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի («Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգ) ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությունը 2015 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի N 47 արձանագրության 1-ին կետով հավանության է արժանացրել սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգ) ներդրումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:<br>Համաձայն հաստատված ժամանակացույցի՝ նախատեսվում է նախ նկարագրել «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի կառուցվածքային-գործառութային մոդելը, ապա մշակել համապատասխան տեխնիկական առաջադրանք և սկսել համակարգի ներդրման աշխատանքները:<br>Միաժամանակ, ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից հատկացվել է դրամաշնորհ՝ «Այ Բի Էմ» ընկերության հետ |

| | |
|---|---|
| | համապատասխան համագործակցության նպատակով:<br>Իսկ համաձայն «Այ Բի Էմ» ընկերության հետ ձեռք բերված պայմանավորվածությունների՝ նախատեսվում է, որ «Այ Բի Էմ» ընկերությունը կուսումնասիրի ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի տեղեկատվական համակարգերը և առաջարկություններ կներկայացնի դրանք «Այ Բի Էմ» ընկերության տեխնոլոգիաների հիման վրա կատարելագործելու վերաբերյալ:<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է համադրել վերը նշված գործընթացները:<br>Մասնավորապես, նախատեսվում է ԱՄՆ ՄԶԳ-ի հատկացրած դրամաշնորհի շրջանակներում համապատասխան պայմանագիր կնքել «Այ-Բի-Էմ» ընկերության հետ, որի հիման վրա էլ իրականացնել համապատասխան ուսումնասիրություն (վերլուծություն):<br>Այնուհետ, հիմք ընդունելով ուսումնասիրության արդյունքները, կտրվի «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի կառուցվածքային-գործառութային մոդելի նկարագրություն՝ ներառյալ տեղեկատվական համակարգի միջոցով ծառայությունների մատուցման բիզնես-գործընթացների նկարագրությունը, որից հետո կմշակվի համապատասխան տեխնիկական առաջադրանք:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում ակնկալվում է՝ առանց ՀՀ պետական բյուջեից որևէ գումար ծախսելու, ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցների հաշվին «Այ Բի Էմ» ընկերության հետ ծավալված համագործակցության արդյունքում մշակել «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի տեխնիկական փաստաթղթերի փաթեթը: |
| **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն** | |
| 126. | **Դատական գործընթացներում էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման համակարգի զարգացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման, դատարանի մատչելիությունը ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովելու նպատակով առաջարկվում է զարգացնել դատական գործընթացներում էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման համակարգը:<br>Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում կներդրվի էլեկտրոնային ծրագիր՝ էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու և էլեկտրոնային դատական գործ ստեղծելու համար, կապահովվի էլեկտրոնային ծրագրով առցանց եղանակով գործի նյութերին ծանոթանալը, պատճեններ ստանալը, ապացույցներ ներկայացնելը, դատավարական միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը: Բացի դրանից, կապահովվի էլեկտրոնային ծրագրով առցանց եղանակով դատական նիստերին հետևելը և հեռահար դատավարություն իրականացնելը: Սրան զուգահեռ կուսումնասիրվի ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրությունը և անհրաժեշտության դեպքում կմշակվեն համապատասխան իրավական ակտերի նախագծեր, որոնք ուղղված կլինեն դատական գործընթացներում էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման համակարգի իրավական հիմքերի նախատեսմանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Դատարան դիմելն առավել դյուրին կդառնա և արագ, այլևս անհրաժեշտություն չի լինի ժամանակ ծախսել փոստային ծառայությունների վրա կամ թուղթ վատնել: Դատական գործի նյութերին ծանոթանալը ևս կդյուրացվի, իսկ անձն այլևս հարկադրված չի լինի երկար ժամանակ վատնել նյութերին ծանոթանալու համար միջնորդությունը թղթային եղանակով ներկայացնելու, ապա գործի նյութերին ծանոթանալու նպատակով դատարան այցելելու համար: Հեռահար դատավարության միջոցով |

| | |
|---|---|
| | հնարավոր կլինի դատական նիստին ապահովել գործին մասնակցող անձանց և անհարկի չհետաձգել գործի քննությունը: |
| 127. | **Դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի «Մարդու իրավունքներ, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի «Մարդու իրավունքներ և արդարադատություն» ենթաբաժնի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված է վեցամսյա ժամկետում բարելավել դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը, մասնավորապես, առավել հստակեցնելով դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետները, նվազեցնելով հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունները: Այս կապակցությամբ նախատեսվում է դատական ակտերի հարկադիր կատարման համակարգում կատարել համապատասխան ուսումնասիրություն և վերհանել հարկադիր կատարման գործընթացում, մասնավորապես, հարկադիր և հարկադիր էլեկտրոնային աճուրդների կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցերում (աճուրդի ենթակա գույքի հերթականության որոշում, գույքի գնահատում, աճուրդի իրականացման ժամկետների որոշում) առկա հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, իրավական բացերը և առկա այնպիսի իրավական կարգավորումները, որոնք իրենց բովանդակային անհստակության, անորոշության, թերի կամ ոչ լիարժեք լինելու պատճառով հարկադիր կատարողներին հնարավորություն են տալիս կիրառել հայեցողական բնույթի լիազորություններ՝ գործընթացը դարձնելով անկանխատեսելի:<br><br>**2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Համապատասխան բարեփոխումների իրականացման արդյունքում նախատեսվում է առավել հստակեցնել դատական ակտերի հարկադիր իրավական կարգավիճակը՝ հնարավորինս նվազեցնելով, իսկ հնարավորության դեպքում՝ իսպառ բացառելով հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների շրջանակները: Բացի դրանից՝ բացահայտված իրավական խնդիրների հաղթահարմանն ուղղված նոր իրավական լուծումներով դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը կդառնա առավել կանխատեսելի՝ նպաստելով անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ դատական պաշտպանության ապահովմանը: |
| 128. | **Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմանների բարելավման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմանների բարելավումը և քրեակատարողական հիմնարկների ենթակառուցվածքների շարունակական զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ավարտին հասցնել էներգախնայողության ծրագրի իրականացումը: Ծրագիրը հնարավորություն կտա կրճատել քրեակատարողական հիմնարկների կողմից սպառվող էներգիայի քանակը: Բացի դրանից՝ ծրագրի շրջանակներում քրեակատարողական հիմնարկների պատուհանները և դռները կփոխարինվեն, կենցաղային տաք ջուրը կապահովվի արևային ջրատաքացուցիչների միջոցով, պատերը և ծածկը կջերմամեկուսացվեն, գազատարները և կաթսայատները կկառուցվեն և կվերազինվեն, ներքին և արտաքին ջերմային ցանցերը կկառուցվեն, արտաքին լուսատուները կփոխարինվեն էներգաարդյունավետ լուսատուներով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քրեակատարողական հիմնարկներում, էներգախնայողության ծրագրի իրականացման արդյունքում ոչ միայն կնվազեն քրեակատարողական համակարգի էներգետիկ ծախսերը, այլ կապահովվեն դատա- |

| | |
|---|---|
| | պարտյալներին պահելու առավել բարենպաստ պայմաններ: Քրեակատարողական հիմնարկներում դեռևս առկա են խնդիրներ՝ կապված անվտանգության և պահպանության ապահովման ինժեներա-տեխնիկական սարքավորումների հետ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեակատարողական հիմնարկ-ներում ձեռնարկել համապատասխան  քայլեր՝ անվտանգության համակարգի կատարելագործմանն ուղղված նոր տեխնոլոգիաների ձեռքբերման և գործարկման համար: |
| 129. | **Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական ծառայությունների տրամադրման ընդհանուր կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախա-րարության քրեակատարողական վարչությունը, իսկ քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների տրամադրումն իրականացնում են հիմնարկների կառուցվածքային ստորա-բաժանում հանդիսացող բժշկական սպասարկման կամ բժշկական մասնագիտացված բաժինները կամ բաժանմունքները կամ խմբերը: Քրեակատարողական համակարգում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ են մատուցվում 12 քրեակատարողական հիմնարկում, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում: Քրեակատարողական հիմնարկներում առողջության առաջնային պահպանման գործող բաժանմունքները կամ միավորները, կախված քրեակատարողական հիմնարկների չափից և հիմնարկում պահվող անձանց թվից, հիմնականում ունեն մեկ բժիշկ (որպես կանոն ընդհանուր պրակտիկայի բժիշկ), բուժքույրեր, բաժանմունքների պետեր: Որոշ քրեակատարողական հիմնարկ-ներում գործում են նաև ստացիոնար (հիվանդանոցային) բաժանմունքներ: Երկրորդային (հիվանդանոցային) մակարդակի բժշկական օգնության տրամադրումը հիմնականում իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարո-ղական հիմնարկում: Քրեակատարողական համակարգում առողջապահական ծառայությունների որակը միջազգային չափանիշների, օտարերկրյա քրեակատարողական համակարգերի առողջապա-հական ծառայությունների և ՀՀ հանրային առողջապահական ծառայությունների համեմատությամբ զգալիորեն ցածր է: Դրա պատճառներից են նյութատեխնիկական և կադրային հագեցվածության անբավարար մակարդակը, առողջապահական ծառայությունների իրականացմանը ներկայացվող պահանջների բացակայությունը, բժշկական անձնակազմի կարգավիճակին, որակավորմանը և սոցիալական երաշխիքներին առնչվող խնդիրները, քրեակատարողական առողջապահության անարդյունավետ ինստիտուցիոնալ համակարգը, այդ թվում՝ առողջապահական սպասարկման ծառայությունների մասնագիտական անկախության բացակայությունը, հիվանդի իրավունքների իրացման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը, խոցելի խմբերին առնչվող առանձնա-հատուկ կարգավորումների բացակայությունը:<br>Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է բարեփոխել քրեակատարողական առողջապահական համակարգը, նախ և առաջ նախատեսելով համապատասխան  օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումներին, մասնավորապես, քրեակատարողական բուժօգնու-թյան ծառայության մասնագիտական անկախության ապահովմանը: Ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումները պետք է ներառեն նաև համապատասխան միջոցառումներ ուղղված քրեակա-տարողական առողջապահական համակարգի և հանրային առողջապահական համակարգի շարու-նակական համագործակցության ապահովմանը, այդ թվում՝ պետք է միջոցներ ձեռնարկվեն ազա-տությունից զրկված անձանց կառավարության կողմից ֆինանսավորվող առողջապահական ազգային ծրագրերում ներառելու և քրեակատարողական համակարգի բուժաշխատողներին պարբերական վերապատրաստման դասընթացներում ներառելու համար: Բարեփոխումները պետք է ներառեն նաև քրեակատարողական հիմնարկների բուժմասերի նյութատեխնիկական պայմանների բարեփոխումը և առողջության առաջնային պահպանման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ապահո- |

| | |
|---|---|
| | վումը (մասնավորապես, հետևյալ սարքավորումներով՝ տոմոնետր, ֆոնենդոսկոպ, ԷՍԳ, օտոսկոպ, օֆտալմոսկոպ, գլյուկոմետր, մանրէազերծիչ լամպ, ԲԿԱ-ի գործիքների հավաքածու, վիրաբուժական գործիքների հավաքածու, ատամնաբուժական հավաքածու, մանրէազերծիչ, ավտոկլավ):<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համապատասխան բարեփոխումները կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների վերաբերյալ իրավական կարգավորումների կատարելագործմանը, ազատությունից զրկված անձանց որակյալ բժշկական ծառայությունների տրամադրման ապահովմանը, արդյունքում նաև՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքների երաշխավորմանը: |
| 130. | **ՀՀ-ում պրոբացիայի պետական ծառայության գործառույթների ամբողջական իրականացման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության կազմում ստեղծվել է պրոբացիայի պետական ծառայությունը: Պրոբացիայի ծառայության ներդրմանը հաջորդող փուլը ծառայությանը վերապահված գործառույթների լիարժեք իրականացման ապահովումն է, որը խթան կհանդիսանա քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման համար: Պրոբացիայի ծառայության գործունեությունն արդյունավետորեն կազմակերպելու գրավականներից է համապատասխան տեխնիկական հագեցվածությունը և գիտելիքներով ու կարողություններով օժտված ծառայողների առկայությունը: Վերջինս հնարավոր է ապահովել պարբերաբար վերապատրաստումների միջոցով: Վերապատրաստումները պետք է ուղղված լինեն մասնագիտական գործառույթներից բխող և անհրաժեշտ վարքագծային, միջանձնային հաղորդակցության և վերլուծական կարողությունների զարգացմանը:<br>Պրոբացիայի կարևոր տարրերից է էլեկտրոնային հսկողությունը: «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով սահմանվում է էլեկտրոնային հսկողության հասկացությունը: Մասնավորապես, «էլեկտրոնային հսկողություն՝ ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ այլ միջոցներով հսկողություն անձի գտնվելու վայրի, տեղաշարժի և վարքագծի նկատմամբ»: 2014 թվականի փետրվարի 19-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է (թիվ 1192 հանդիպում) CM/Rec(2014)4 հանձնարարականն անդամ-երկրներին էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ: Սույն հանձնարարականի համաձայն էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կիրառվել մինչդատական, դատական և պատժի կատարման փուլերում: Հանձնարարականը ներառում է նաև էթիկայի կանոններ էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ: Հիմք ընդունելով սույն հանձնարարականը՝ անհրաժեշտ է ներդնել էլեկտրոնային մոնիթորինգի համակարգը, որը մեծապես կնպաստի ՀՀ պետական բյուջեից խնայումներ կատարելուն:<br>Պրոբացիայի ծառայության գործառույթներից է շահառուին զբաղվածությամբ ապահովելուն նպաստելը, որը հնարավոր է ապահովել վերապատրաստման դասընթացների անցկացման միջոցով: Պրոբացիոն ծառայության ներսում մասնագիտական վերապատրաստման սենյակների (կանանց համար՝ վարսահարդարման և մատնահարդարման, տղամարդկանց համար՝ էլեկտրիկի, սալիկապատողի և ներկարարի) ստեղծումը հնարավորություն կընձեռի շահառուին անցնել վերապատրաստում, ստանալ պահանջարկ ունեցող մասնագիտություն: Մասնագիտության ընտրությունը հնարավոր կլինի ավելի հստակեցնել 2017 թվականի ընթացքում շահառուների կարիքների գնահատումից հետո:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պրոբացիայի ծառայության գործառույթների ամբողջական իրականացման արդյունքում հնարավոր կլինի ապահովել տեխնիկական համապատասխան հագեցվածություն, իսկ պարբերաբար իրակա- |

| | |
|---|---|
| | նացվող վերապատրաստումների միջոցով հնարավոր կլինի ապահովել մասնագիտական բարձր կարողություններով օժտված ծառայողների առկայությունը: Միաժամանակ, էլեկտրոնային մոնիթորինգի համակարգի ներդրման շնորհիվ հնարավոր կլինի էականորեն խնայել ՀՀ պետական բյուջեի ծախսերը: Նախատեսվող մասնագիտական վերապատրաստումների շնորհիվ հնարավոր կլինի արդյունավետորեն իրականացնել պրոբացիայի շահառուին հասարակությունում վերաինտեգրելու գործընթացը: |
| 131. | **Իրավաբանական անձանց պետական գրանցման բնագավառում մատուցվող ծառայությունների բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հասարակական միավորումների, հիմնադրամների և վերակազմակերպումների (բացառությամբ վերակազմավորման եղանակով վերակազմակերպման) պետական գրանցման հետ կապված դիմումներն ընդունվում են միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության սպասարկման բաժնի՝ Երևան քաղաքի գրասենյակի կողմից: Ընդ որում, դիմումները ներկայացվում են միայն թղթային եղանակով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ e-register.am էլեկտրոնային համակարգը հնարավորություն չի ընձեռում այդ գործառույթն իրականացնել նաև սպասարկման բաժնի՝ Երևանից դուրս տեղակայված գրասենյակների միջոցով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համապատասխան բարեփոխումների արդյունքում նախատեսվում է փոփոխություններ կատարել e-register.am էլեկտրոնային համակարգում, որը հնարավորություն կտա հասարակական միավորումների, հիմնադրամների և վերակազմակերպումների (բացառությամբ վերակազմավորման եղանակով վերակազմակերպման) պետական գրանցման հետ կապված դիմումներ ընդունել նաև սպասարկման բաժնի՝ Երևանից դուրս տեղակայված գրասենյակների միջոցով՝ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու և համապատասխան փաստաթղթերի կազմման գործում աջակցելու համար նմուշային փաստաթղթերը կհրապարակվեն կայքում: |
| **Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն** | |
| 132. | **Ռազմավարական զսպման համակարգի զարգացման գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը Հայաստանի Հանրապետության նկատմամբ ցանկացած բնույթի զինված ոտնձգության կանխման հնարավորություններն ավելացնելն է, իսկ ռազմական գործողությունների ծավալման դեպքում ապահովել դրանց հնարավորինս վաղ փուլում դադարեցմանը՝ Հայաստանի Հանրապետության համար շահավետ պայմաններով: Գերակա խնդրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է հակառակորդի կողմից հրադադարի խախտումների ավելացման և հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու քաղաքական կամքի բացակայության, ինչպես նաև պաշտպանության համակարգը ՀՀ Սահմանադրության 2016 թվականի փոփոխություններին համահունչ կատարելագործելու հանգամանքով: Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլեր են հանդիսանալու ՀՀ զինված ուժերի հարվածային և կրակային խոցման հնարավորությունների ավելացումը, հետախուզական հնարավորությունների ավելացմամբ վաղ հայտնաբերման համակարգի ընդլայնումը, պետական և ռազմական կառավարման համակարգի կատարելագործումը, միջազգային դաշնակցային, գործընկերային և իրավապայմանագրային հարաբերությունների զարգացումը, պաշտպանության ոլորտի օրենսդրական ակտերի վերանայումը: |

ՀՀ զինված ուժերի հարվածային և կրակային խոցման հնարավորությունների ավելացման ու հետախուզական հնարավորությունների ավելացմամբ վաղ հայտնաբերման համակարգի ընդլայնման շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել համապատասխան սպառազինություն և սարքավորումներ, անհրաժեշտ մատակարարումների պայմանագրերի կնքման և կատարման ժամկետ է նախատեսվում տարվա 2-րդ կիսամյակը, պետական և ռազմական կառավարման համակարգի կատարելագործման շրջանակներում նախատեսվում է պաշտպանության ուղղությամբ պետական համակարգի խնդիրների և գործառույթների հստակեցումն ապահովել սեպտեմբերի 1-ին տասնօրյակում ՀՀ կառավարություն ներկայացման ենթակա <<Պաշտպանության մասին>> ՀՀ նոր օրենքի նախագծով, իսկ ռազմական կառավարման համակարգի կատարելագործումը՝ պաշտպանական կառույցի օպտիմալացման և <<Հրամանատարի առաջադրանքով>> սկզբունքի ներդրման գործընթացի միջոցով, որն ավարտին կհասցվի տարվա վերջում, ինչպես նաև միջազգային դաշնակցային, գործընկերային և իրավապայմանագրային հարաբերությունների զարգացումը ներառելու է տարվա ընթացքում բազմակողմանի աշխատանքը միջազգային կառույցների և շահագրգիռ պետությունների հետ:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Գերակա խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության մակարդակը, ՀՀ ռազմական անվտանգության համակարգը համապատասխանեցնել ռազմական սպառնալիքների գնահատված (կանխատեսված) զարգացումներին և ՀՀ Սահմանադրության փոփոխություններին, ընդլայնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովման միջազգային ռազմաքաղաքական և ռազմական երաշխիքները, ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու եղանակը հակառակորդին պարտադրելու համար:

**Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն**

133.

**Կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի հիմնման վերաբերյալ**

1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)

Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղական բնակավայրերում ծագած արտակարգ իրավիճակների դեպքերին՝ բարդ ռելիեֆի և տարածքներն սպասարկող հրշեջ-փրկարարական ջոկատներից մեծ հեռավորության վրա գտնվելու պատճառով, արձագանքումն իրականացվում է զգալի ուշացումներով: Որոշ դեպքերում արձագանքումն ընդհանրապես ապարդյուն է լինում, արդյունքում վտանգվում է բնակչության կյանքն ու առողջությունը՝ ստեղծելով անպաշտպանվածության զգացում: Դեռևս խորհրդային տարիներին մի քանի հարյուր հեռավոր գյուղական բնակավայրերի պաշտպանության նպատակով ստեղծվել և բավական արդյունավետ գործում էին մի քանի տասնյակ հրշեջ կամավորական խմբեր, որոնք դադարեցին գործել:

Ինչպես ցույց է տալիս հրդեհների և այլ արտակարգ իրավիճակների դեպքերի բազմամյա վերլուծությունը, բնակավայրերը պահպանող հրշեջ-փրկարարական ջոկատներից 10-15 կմ-ից հեռու գտնվող գյուղական բնակավայրերում հրդեհներն ուղեկցվում են զգալի նյութական վնասներով: Արտասահմանյան զարգացած երկրներում կամավորականների հրշեջ հենակետերի թիվը մի քանի տասնյակ անգամ գերազանցում է պետական բյուջեի միջոցներով ծառայություն իրականացնող ստորաբաժանումների և հրշեջ-փրկարարների թիվը:

Գերակա խնդրի նպատակը ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժայի և ՀՀ Սյունիքի մարզի Գորիսյքի գյուղական համայնքներում կամավորական հրշեջ-փրկարարական միավորներ ունենալն է, որոնք կհամալրվեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, կամավոր հրշեջ-փրկարարները կուսուցանվեն և կունենան անհրաժեշտ հմտություններ, պատրաստ կլինեն արձագանքելու արտակարգ դեպքերին:

| | |
|---|---|
| | Հենակետերի հիմնման համար անհրաժեշտ տարածքները կտրամադրվեն համայնքների կողմից, իսկ անհրաժեշտ տեխնիկան, սարքավորումները և համդերձանքը կտրամադրվի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>2017 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժայի և ՀՀ Սյունիքի մարզի Գորիսյքի գյուղական համայնքներում կհիմնվեն կամավորական հրշեջ-փրկարարական երկու հենակետեր: Նշված գյուղական բնակավայրերի պահպանության համար կամավորական հրշեջ հենակետերի ստեղծումը հնարավորություն կտա էականորեն կրճատել հրդեհների և այլ արտակարգ իրավիճակների դեպքերի արձագանքման ժամանակը, նվազեցնել բնակչությանը պատճառվող նյութական վնասների չափը, բարելավել բնակչության պաշտպանվածության վիճակը: Համապատասխան պատրաստություն անցնելու, տեխնիկայով, գործիքներով և համդերձանքով ապահովվելու դեպքում, հրշեջ փրկարարական միավորներին հնարավոր կլինի ընդգրկել հրդեհաշիջման, տրանսպորտային վթարների, որոնողափրկարարական և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հետ կապված այլ աշխատանքներում: |
| 134. | **Աղետների բժշկության կրեդիտավորման ուսումնական կենտրոնի հիմնում՝ առողջապահության բնագավառի ավագ և միջին խմբի բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br><br>Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում աշխատող բարձրակարգ մասնագետները մասնագիտացված են բժշկական ոլորտի նեղ մասնագիտություններով և իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են հիվանդանոցային կամ ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններում ստանդարտ չափորոշիչներով և չունեն համապատասխան փորձ և հմտություններ աղետի գոտում, արտակարգ իրավիճակների դեպքում դաշտային հոսպիտալներում և բուժկետերում բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպելու գործում: Ուստի անհրաժեշտություն է առաջացել հիմնելու առողջապահության բնագավառում ավագ և միջին խմբի բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման աղետների բժշկության կրեդիտավորման ուսումնական կենտրոն:<br>Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և այլ միջոցները տրամադրվել են Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության «Արձագանք. բուժմիավորումներ» ծրագրի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության միջև կնքված «Բժշկական ստորաբաժանումներ» համաձայնագրի շրջանակներում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Հայաստանի Հանրապետությունում ձևավորել արտակարգ իրավիճակներում բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպելու համար անհրաժեշտ հմտություններով օժտված ավագ և միջին խմբի բուժաշխատողների անձնակազմ, ովքեր աղետի գոտում փրկարար ուժերի հետ համատեղ արհեստավարժորեն կկատարեն իրենց առջև դրված խնդիրները: |
| 135. | **Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը) |

| | |
|---|---|
| | Նախատեսվում է վաղ ազդարարման համակարգերի տեղադրում և շահագործում Երևանի փոքր կենտրոնում (ամբողջությամբ), ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքներում և ՀՀ Տավուշի մարզի Հաղարծնի, Թեղուտի, Գոշի, Աղավնավանքի, Խաչարձանի, Հովքի գյուղական համայնքներում: Վերոնշյալ համայնքների ընտրությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես, Երևանի դեպքում փոքր կենտրոնը խիտ բնակեցված է և հիմնականում այդտեղ են կենտրոնացված պետական կառավարչական հիմնարկները և բարձրագույն ուսումնական հաստատությունները: Ստեփանավանի քաղաքային համայնքը դիտարկվում է որպես ՀՀ Լոռու մարզի ճգնաժամային կառավարման կենտրոնի պահուստային տարբերակ և արտակարգ իրավիճակներում, մասնավորապես Պուշկինի լեռնանցքի թունելի փլուզման դեպքում, ազդարարումը կիրականացվի Ստեփանավանից: Դիլիջանը համարվում է հանրապետության երկրորդ ֆինանսական կենտրոնը, և Դիլիջանում են գտնվում միջազգային ուսումնական կենտրոններ: Կապանում զարգացած է լեռնահումքային արդյունա-բերությունը և առկա են պոչամբարներ: Հաղարծնի, Թեղուտի, Գոշի, Աղավնավանքի, Խաչարձանի, Հովքի գյուղական համայնքները հանդիսանում են համայնքների խոշորացման պիլոտային ծրագրով միավորված համայնքներ:<br>Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ապահովումն իրականացվելու է ՄԱԶԾ-ի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ իրականացվող «Աղետների ռիսկի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացումը թույլ կտա ապահովել ազդարարման համակարգերի մշտական պատրաստականությունը, կբարձրացնի բնակչության պաշտպանվածու-թյան մակարդակը և ազդարարման կազմակերպման արդյունավետությունը: |
| 136. | **Համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի փուլային ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի ներդրման նպատակն աղետա-կայուն համայնքների ստեղծումն է՝ նվազեցնելով աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը՝ աղետներին դիմակայելու համայնքի կարողությունների զարգացման միջոցով: Համակարգի ներդրումը հնարավորություն կտա բացահայտել և գնահատել համայնքներում աղետների առկա ռիսկերն ու վտանգները, համայնքի խոցելիությունը և կարողությունները, մշակել ու իրականացնել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ դրանք ներառելով համայնքների զարգաց-ման ծրագրերում:<br>Աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի ներդրման գործընթացն իրականացվելու է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Աղետների ռիսկի նվազեցման ծրագրերի և «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի աջակցությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի ներդրմամբ ակնկալվում է աջակցել համայնքներին սեփական ուժերով ձեռնարկելու և իրականացնելու աղետների ռիսկի, համայնքի խոցելիության կարողությունների բացահայտում և գնահատում, որոշելու, պլանավորելու և իրականացնելու աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները: |
| 137. | **Սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի** |

| | |
|---|---|
| | **փորձնական ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի ներդրման անհրաժեշտությունը բխում է բնակչության և տարածքների պաշտպանության ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթներից, ինչպես նաև ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգի դրույթներից:<br>Սողանքային աղետի կառավարման համակարգի ներդրումն իրականացվում է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջև ստորագրված Սողանքային աղետի կառավարման վերաբերյալ արձանագրության և «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարում» ծրագրի շրջանակներում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է 2 համայնքում սողանքային լանջի կայունացում և սողանքի ակտիվացման մասին իրական ժամանակում առցանց տեղեկատվության ստացում համայնքապետարանում և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում: |
| 138. | **Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում թվային կապի ամբողջական համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս օգտագործվող անալոգային կապը չի բավարարում ծառայությունների մատուցման ամբողջական պահանջները, քանի որ վերջինիս սփռվածությունն ունի լոկալ բնույթ՝ ելնելով հանրապետության տարածքի ռելիեֆային առանձնահատկություններից: Ուստի անհրաժեշտություն է առաջացել նորագույն տեխնոլոգիաների և ցանցային ենթակառուցվածքների համադրմամբ ստանալ արդիական, բարձր հասանելիությամբ թվային ռադիոցանց: Համակարգի ներդրումն իրականացվելու է միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ժամանակ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության թվային ռադիոկապը կապահովի արագ արձագանքման, օպերատիվ և արդյունավետ կառավարման իրականացումը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 139. | **Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը, որպես 2017 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից իրականացվելիք գերակա խնդիր ներառելը, պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2015-2017 թվականների բարեփոխումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու |

| | |
|---|---|
| | մասին» N 871-Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված լինելու համգամանքով և միջոցառման շարունակական իրականացումն ապահովելու կարևորությամբ: Բացի դրանից՝ համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրով (1.3-րդ բաժնի «Անվտանգություն և հասարակական կարգ» գլխի 9-րդ կետ):<br>Որպես 2017 թվականի գերակա խնդիր ներառելով համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը նպատակ ունի կատարելագործելու համայնքային ոստիկանության գործունեությունը խթանող սոցիալ-իրավական անհրաժեշտ պայման-ներն ու նյութատեխնիկական բազան: Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում նախատեսվում է ստեղծել համայնքային ոստիկանության ևս 2 նոր հենակետ՝ Երևան քաղաքի Նոր Նորքի և Մալաթիա-Սեբաստիայի վարչական շրջաններում, ապահովել դրանք անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով և իրականացնել վերապատրաստումներ՝ համայնքային ոստիկանության ծառայողների համար:<br>Նշված 2 հենակետի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կկազմեն 34 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվին: Լրացուցիչ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից չի ակնկալվում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի համակողմանի իրագործման արդյունքում ակնկալվում է համայնքային ոստի-կանության նոր հենակետերի ստեղծում՝ տեխնիկական միջոցների ու գույքի ապահովմամբ և համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում: |
| 140. | **ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման ոլորտում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից քաղաքացիներին առավել որակյալ, հնարավորինս կարճ ժամկետում և պարզեցված ընթացակարգով ծառայություններ մատուցելու նպատակով անհրաժեշտ է բարելավել ՀՀ մարզերում տեղակայված վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանումների շենքային պայմանները, ինչպես նաև վարորդական վկայական ստանալու համար գործնական քննություն հանձնելու համար կառուցել առանձին հարմարեցված ավտոդրոմ:<br>ՀՀ Տավուշի մարզում ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանման համար անհրաժեշտ շենքային պայմանների և ավտոդրոմի բացակայության պատճառով վարորդա-կան վկայական հատկացնելու և տրանսպորտային միջոցները հաշվառելու գործընթացները քաղա-քացիների համար ուղեկցվում են բազմաթիվ անհարմարություններով, ինչն ուղղակիորեն բացասա-բար է անդրադառնում քննությունների անցկացման որակի, ինչպես նաև վարորդական վկայականի և հաշվառման վկայագրի հատկացման ժամկետների վրա:<br>Որպես 2017 թվականի գերակա խնդիր՝ առաջարկվում է ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման ոլորտում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավումը: Մասնավորապես, նախատեսվում է 2017 թվականին շարունակել ՀՀ Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի ու քննական ավտոդրոմի կառուցմանը, ինչպես նաև հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման՝ «հոսքագծի» եղանակով իրականացնելուն ուղղված աշխատանքները:<br>ՀՀ Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի կառուցմանն ուղղված աշխատանքներն սկսվել են դեռևս 2015-16 թթ., և ըստ |

| | |
|---|---|
| | նախահաշվի դրանք ավարտին հասցնելու համար կպահանջվի 199 մլն դրամ: Գերակա խնդիրն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան արտաբյուջետային միջոցների հաշվին 2017 թվականին նախատեսվում է հատկացնել 99,5 մլն դրամ: Լրացուցիչ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից չի ակնկալվում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումը կբարելավի Հայաստանի Հանրապետության մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման ոլորտում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը: |
| 141. | **Կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ծրագրային ապահովումն ու սպասարկումն իրականացնելու համար համապատասխան ընկերության ընտրության գործընթացի իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Լեհական արժեթղթերի արտադրամաս ՊՎՊՎ» բաժնետիրական ընկերության հետ 2011 թվականին կնքված՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման աշխատանքների (ծառայությունների) կատարման գնման պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի շահագործումը, այդ թվում՝ կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի մատակարարման, կենսաչափական համակարգի ծրագրային և տեխնիկական սպասարկման հետ կապված բոլոր աշխատանքները: Նշված պայմանագիրը գործելու է մինչև 2017 թվականի ավարտը և հետևաբար անհրաժեշտություն է առաջացել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով կազմակերպել կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի շահագործումն իրականացնող համապատասխան ընկերության ընտրության գործընթացը 2017 թվականի ընթացքում:<br>ՀՀ վարչապետի 2016 թվականի սեպտեմբերի 30-ին N 894-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի ավտոմատացված համակարգի, ինչպես նաև հավաստագրման կենտրոնի, բնակչության պետական ռեգիստրի համակարգերի տեխնիկական վիճակը և մատակարար կազմակերպության հետ իրավապայմանագրային դաշտն ուսումնասիրելու, հիշյալ համակարգերի հագեցվածությունը գնահատելու, դրանց հետագա վերազինման, արդիականացման և (կամ) նոր համակարգերով փոխարինելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Միաժամանակ, հանձնարարվել էր ներկայացնել համակարգերի հետագա վերազինման, արդիականացման և (կամ) նոր համակարգերով փոխարինելու մասին առաջարկություն, ինչպես նաև մշակել տեխնիկական առաջադրանք՝ մրցութային եղանակով կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի նոր մատակարար ընտրելու նպատակով:<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնիկական առաջադրանքը մշակվելու է աշխատանքային խմբի կողմից, որպես ՀՀ կառավարության 2017 թվականի գերակա խնդիր, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից նախատեսվում է իրականացնել կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ծրագրային ապահովումն ու սպասարկումն իրականացնելու համար համապատասխան ընկերության ընտրության գործընթացը: Մասնավորապես, կապահովվի մրցույթի հայտարարումը, կազմակերպումը և անցկացումը՝ միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքին համապատասխան, կամփոփվեն մրցույթի արդյունքները, կընտրվի կապալառու կազմակերպությունը, |

| | |
|---|---|
| | մինչև 2017 թվականի ավարտը կկնքվի նոր պայմանագիր:<br>Գերակա խնդրի իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից չի ակնկալվում:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումը կերաշխավորի կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի շահագործումն իրականացնող համապատասխան ընկերության ընտրության գործընթացը 2017 թվականի ընթացքում: |
| **Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն** | |
| 142. | **Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարման աշխատանքների վերաբերյալ**<br><br>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքականության ուղենիշների և տրված հանձնարարականների հիման վրա ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, Հայաստանի արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, երկրի հեղինակության ամրապնդմանը, արտերկրում Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումները ներկայացնելուն, միջազգային կազմակերպություններում ու գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:<br><br>Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորացման, արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման, տնտեսական կառույցների այժմեականացման, Հայաստանի տնտեսական ներուժի բազմապատկման և կայուն զարգացման նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ հարաբերությունների զարգացմանը, Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովմանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու դիվերսիֆիկացմանը, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտմանը և արտաքին ներդրումների խրախուսմանը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

